

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

ՀԱՅԵՐԵՆ ԽԱՂԵՐ









АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ им. М. АБЕГЯНА

САЯТ-НОВА

АРМЯНСКИЕ ПЕСНИ



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1984

91.99

U-18

208

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

ՀԱՅԵՐԵՆ ԽԱՂԵՐ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԳՐԵՎԱՆ

1984

208

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվ.
գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների քեկնածու
Վ. Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
բանասիրական գիտությունների քեկնածուներ
Հ. Ս. ՍԱՀԱԿՅԱՆ, Պ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

72996-Ա. 7.

Սայաթ-Նովա

Ս 181

Հայերեն խաղեր լեզվատառասիրությամբ Հ. Թախչին-
յանի; Պատ. խմբ.՝ Վ. Ս. Ներսիսյան.—Եր.: ՀՍՍՀ ԳԼԽ
հրատ., 1983. 244 էջ:

Ժողովածուն ընդգրկում է Սայաթ-Նովայի մինչև այժմ հայտնի
բոլոր հայերեն խաղերը՝ բնագրագիտական, բանասիրական ման-
րամասն ծանոթագրություններով և բառարանով: Խաղերը ներկա-
յացված են մի շարք տեքստային և տաղաչափական շտկումներով:
Գրքում տեղ են գտել նաև հետադայում գրի առած հայերեն խա-
ղերի 37 տարրերակներ, որոնց մեծ մասը հրապարակվում է առա-
ջին անգամ: Ժողովածուն ստեղծվել է գուստն-բանաստեղծի հայե-
րեն խաղերի ձեռագրերի քննությամբ և ստաթնությունագիտական կա-
րևոր ուսումնասիրությունների օգտագործմամբ:

Գիրքը նախատեսված է բանասերների և ընթերցող լայն հասա-
րակայնության համար:

703 (02)—84

Ս ————— 43—83

703 (02)—84

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984

Առաջաբանի և ծանոթագրությունների համար:

ԳՄԴ 84 Հ 3

Ար 1



2003

727-84

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Սայաթ-Նովայի հայերեն խաղերի ուսումնասիրությունն սկսվել է անցյալ դարի 40-ական թվականներին, երբ գուսան-բանաստեղծի ինքնագիր երգարանը՝ Դավթարը՝ անցավ Գ. Ախվերդյանի ձեռքը: Վերջինիս անշխատառնությամբ 1852 թվականին Մոսկվայում, Մ. Էմինի անմիջական օժանդակությամբ լույս է տեսնում Սայաթ-Նովայի հայերեն խաղերի առաջին ժողովածուն, որով և հիմք է դրվում բանաստեղծի երգերի հրատարակություններին և առհասարակ՝ սայաթնովագիտությանը:

Ժողովածուն սկսվում է 25 էջից բաղկացած «Յառաջաբանով», որտեղ հեղինակը խոսում է ժողովրդական երգիչ-աշուղների մասին, ապա համառոտակի շարադրում Սայաթ-Նովայի կենսագրությունը: Այնուհետև անդրադառնում է Դավթարի նկարագրությանը, թիֆլիսահայ բարբառի հնչյունաբանական առանձնահատկություններին, իր բնագրագիտական սկզբունքներին և կատարում հայտնի լեզվի պատմությանը վերաբերող որոշ ուշագրավ դիտողություններ:

«Յառաջաբանին» հետևում է «Թիֆլիզու բարբառի մե քանի հատկություններու վրա» խորագրով ուսումնասիրությունը, որին հաջորդում են Դավթարի 46 հայերեն խաղերը՝ Գ. Ախվերդյանի հմտալից վերծանությունամբ (ժողովածուում տեղ չի գտել միայն «Հիմքտ վերստին նուրեցին» թերի խաղը):

Ինչպես երևում է Մ. Էմինին գրած նամակներից, Ախվերդյանի ձեռքի տակ եղել են նաև այլ աղբյուրներից հասած որոշ սայաթնովյան խաղեր: Սակայն նա հրատարակության է պատրաստել միայն Դավթարում

1 Սայաթ-Նովայի հայերեն և աղբիջաններն խաղերի հիմնական աղբյուրը հանդիսացող այդ ձեռագիրն այժմ գտնվում է Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Սայաթ-Նովայի ֆոնդ, № 1): Հմմտ. Սայաթ-Նովա, խաղեր, նմանահանություն, Երևան, 1963: Զեռագրի մասին տե՛ս Գ. Ասատուր, Սայաթ-Նովայի ձեռագիր մատյանը, «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», Վաղարշապատ, 1921—22, V. Հասրաթյան, Սայաթ-Նովայի Դավթարը, «ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր», 1963, № 10—11:

եղածները, մնացածի ուսումնասիրումն ու հրապարակումը թողնելով հետազային:

Իր նամակներում Գ. Ախվերդյանը խոսել է նաև այն անասելի դժվարությունների մասին, որոնց հանդիպել է երգչի վրացատառ հայերեն խրթին ձեռագիրը վերծանելիս: Այն բառերը և բառակապակցությունները, որ չի կարողացել ճշտությամբ վերծանել կամ մեկնաբանել, նա ներկայացրել է ընդգծված (նոտրորով): Ձգտելով հարապատ մնալ թիֆլիսահայ բարբառի արտասանությանը, Ախվերդյանն, իրավացիորեն, բառերը տպագրել է այնպես, ինչպես դրանք հնչում են: Յուրաքանչյուր խաղից հետո Ախվերդյանը վրացերեն լեզվով և հայերեն թարգմանությամբ բերել է հեղինակային հիշատակարան-ծանուցումները և ապա կատարել իր ծանոթագրությունները, որտեղ մեկնել է «թե՛ երգչի միտքն, թե՛ լեզվի կազմն»: Ծանոթագրություններում նա «զիտնականներու ու բառգիրքներու օգնութենով» բացատրում է երգչի առատորեն դործածած օտար բառերը, ցույց տալով, թե դրանք որ լեզվից են փոխառված: Նա բացատրել է նաև բարբառային բառերն ու ձևերը, բերելով դրանց ֆրանսերեն կամ լատիներեն համարժեքները:

Ախվերդյանը խաղերը հրատարակել է ո՛չ ժամանակագրական և ո՛չ էլ Դավթարի հաջորդականությամբ: Նա ավելի շատ հետևել է տաղաչափությանը, ձգտելով ներդաշնակել տարբեր շափ ու ութմ ունեցող երգերը:

Անհրաժեշտ է նշել, որ Գ. Ախվերդյանից հետո Դավթարից ընկել են հայերեն 7 երգ ընդգրկող թերթեր, որոնք նրա ժամանակ արդեն «պատըռտած, գլխած, մաշած» են հղել: Այդ երգերից չորսը (20, 30, 35, 43) որոշ աղավաղումներով արտագրված են երգչի որդու՝ Օհանի ձեռագրում, իսկ երեքը (19, 26, 38) պահպանվել են Գ. Ախվերդյանի հրատարակությամբ, որն այժմ, փաստորեն, այդ խաղերի միակ աղբյուրն է:

Դժվար է ասել, թե ինչ ճակատագիր կունենային Սայաթ-Նովայի ձեռագիր Դավթարում պահպանված հայերեն խաղերը, եթե դրանք մեղանից 130 տարի առաջ չվերծանվեին և չհրապարակվեին Ախվերդյանի նման հմուտ բանասերի կողմից: Մ. Հասրաթյանի կարծիքով, եթե անգամ որևէ պատահարով կորստի մասնակի մեղ հասած ձեռագիր Դավթարը, Սայաթ-Նովան (որոշ շափով պակաս, իհարկե) կրկին կճանաչվեր որպես Սայաթ-Նովա, հեղինակային ձեռագրերից դուրս պահպանված խաղերով: Մեր կարծիքով, այլ աղբյուրներից մեղ հասած խաղերը, որոնք քանակով շատ չեն և բավական աղավաղված են, ճիշտ է՝ մոռացումից կփրկեն Սայաթ-Նովայի անունը, բայց բավարար չափով ու փայլով

չէին ներկայացնի Սայաթ-Նովա բանաստեղծի իրական ու ամբողջական պատկերը: Հետևաբար, Գ. Ախվերդյանը, հիրավի, այն երախտավորն է, որ իր հրատարակութեամբ հարուստուն տվեց հայ մեծ քնարերգուին:

Սայաթ-Նովայի հայերեն խաղերի երկրորդ ժողովածուն, որ 1882 թվականին հրատարակեց Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակության ընկերությունը, Գ. Ախվերդյանի գրքի խիստ մասնակի արտատպությունն է և առանձին արժեք չի ներկայացնում սայաթնովագիտության համար:

1914 թվականին Կովկասյան Հայ Գրողների Ընկերությունը հրապարակ է հանում երգչի խաղերի մի նոր ժողովածու, որի մեջ, Գ. Ախվերդյանի հրապարակած խաղերից բացի, տեղ են գտնում նաև այն ութ նորահայտ խաղերը, որոնք գտել էր Գ. Ասատուրը Օհանի կազմած ժողովածուից² և 1903 թվականին հրապարակել «Ազգագրական հանդեսում» (գիրք 10): 1914 թվականին Բաքվում Բ. Հ. Կովտուրական միության կողմից հրապարակվում է Սայաթ-Նովայի մեկ այլ ժողովածու՝ փոքրիկ ներածականով և 20 ընտիր խաղերով:

1922 թվականին խորհրդային Հայաստանի Գեղարվեստական գրականության աշխատողների միությունը հրատարակում է մի գրքույկ, որտեղ ղեկավարված են երգչի խաղերից տասը (մեկը՝ վրացերենից թարգմանված): Սա Սայաթ-Նովայի երևանյան առաջին և երգչի հայերեն խաղերի հինգերորդ ժողովածուն է:

1930-ական թվականներին հրապարակ է հանվում Սայաթ-Նովայի հայերեն երգերի հինգ ժողովածու: Ամենաարժեքավորը Գ. Լևոնյանի աշխատասիրությամբ 1931 թվականին Նրևանում լույս տեսած հայերեն խաղերի լիակատար ժողովածուն է: Այն սկսվում է Պ. Մակինցյանի առաջաբանով, որին հաջորդում է Գ. Լևոնյանի՝ Սայաթ-Նովայի կյանքին ու գործին նվիրված ծավալուն ուսումնասիրությունը, որտեղ հմուտ աշուղագետը կատարել է մի շարք ուշագրավ գիտողություններ ու մեկնաբանություններ: Գ. Լևոնյանը ձեռքի տակ չունենալով Դավթարը, բնագրերի բաժնում առանց էական սրբագրումների վերահրատարակել է Գ. Ախվերդյանի ժողովածուի 46 հայերեն խաղերը, որոնց ծանոթագրությունների մեջ առաջարկել է իր ուղղումներն ու բացատրությունները: Ժողովածուն ընդգրկում է նաև Գ. Ասատուրի հրապարակած խաղերը, ինչպես և վեց

2 Սայաթ-Նովայի ստեղծագործության այս երկրորդ կարևոր աղբյուրը գտնվում է ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքում (վրաց ձեռագրերի ֆոնդ, ձեռ. H—21): Ձեռագրի մասին տե՛ս Մ. Հասրաթյան, Սայաթ-Նովայի հայերեն մի քանի խաղերի մասին, «ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր», 1943, № 3:

խաղ դանազան աղբյուրներից. ընդհանուր հաշվով՝ 59 հայերեն և մեկ հայերեն-թուրքերեն խաղ:

Գ. Լեոնյանի այս ժողովածուն առանց ներածական ուսումնասիրության ու ծանոթագրությունների վերահրատարակվում է չորս տարի անց՝ 1935 թվականին: Այդ նույն թվականին Նրեանում լույս է տեսնում նաև Սայաթ-Նովայի երգերի մի փոքրիկ ժողովածու՝ Ս. Բարխուդարյանի երաժշտական մշակումով:

Սայաթ-Նովայի երգերի ժողովածուներ են հրապարակվում նաև սփյուռքում: Միայն 1931 թվականին Բեյրութում «գաղութահայ անհաջող պայմաններու մեջ» լույս է տեսնում սայաթնովյան խաղերի երկու ժողովածու:

1937 թվականին «Հայ աշուղներ» անսխալ երգերի ժողովածուի մեջ և 1938 թվականին պատմություն և գրականության ինստիտուտի «Տեղեկագրում» աշուղ-բանահավաք Գ. Թարվերդյանի միջոցով հրապարակ են հանվում Սայաթ-Նովային վերագրվող վեց հայերեն և մեկ հայերեն-թուրքերեն նորահայտ խաղեր:

Սայաթ-Նովայի հայերեն խաղերի 11-րդ ժողովածուն լույս է տեսնում Թեհրանում, 1943 թվականին՝ Ռ. Աբրահամյանի աշխատասիրությամբ: Գ. Լեոնյանի հրատարակած 60 խաղերից բացի, Աբրահամյանն իր ժողովածուի մեջ ղեկավարում է նաև «Յար քու կարոտն քաշում իմ» խաղը և մինչ այդ հրապարակ հանված որոշ տարբերակներ: Ռ. Աբրահամյանը ևս բնագրերի մեջ ուղղումներ չի մտցրել, այլ միայն վերջում կատարել է իր դիտողությունները: Արժեքավոր է հատկապես Ռ. Աբրահամյանի կազմած բառարանը, որտեղ նա մեջ է բերել Սայաթ-Նովայի գործածած օտար բառերի անմիջական աղբյուրները, ձգտելով լրացնել ու ճշգրտել Ախվերդյանի և մյուսների բացատրությունները: Ռ. Աբրահամյանը ձգտել է սայաթնովագիտության մեջ ստեղծված որոշ վերացականությունից ու խճողումից վերադարձ կատարել դեպի Ախվերդյանը, այն է՝ դեպի կոնկրետ գիտական վերլուծությունը: Այդ մոտեցմամբ է նա շարադրել Սայաթ-Նովայի կենսագրականը և հատկապես երգչի լեզվին նվիրված ուսումնասիրությունը: Ներածության մեջ Ռ. Աբրահամյանը քննել է նաև սլարսկերենի տարրը Սայաթ-Նովայի երգերում, նրանց դեղարվեստական հիմնական առանձնահատկությունները, ինչպես նաև երգչին վերագրված անհարազատ խաղերը (իմիտացիաները), որոնցից մի քանի նմուշ ընդգրկել է իր ժողովածուի մեջ:

Սայաթ-Նովայի հայերեն խաղերի մյուս սփյուռքահայ հրատարակությունն իրադրծվել է մեկ տարի հետո (1944) Ալեքսանդրիայում,

Հ. Շեմսի (Արեգենց) կողմից: Վերջինիս հիմնական նպատակն է եղել մասսայականացնել Սալյաթ-Նովային, որը «տակավին անժանոթ կը մնա արևմտահայ գաղթաշխարհին»: Ժողովածուն օժտված է ծավալուն ներածական ուսումնասիրությամբ և ընդարձակ բառարանով: Մինչ այդ հայտնի հայերեն խաղերից բացի ժողովածուի մեջ տեղ են դրել նաև քսան ընտիր խաղերի արևմտահայերեն փոխադրությունները, ինչպես նաև Ս.- Բարխուդարյանի ութ երգերի մշակումների նոտաները:

1945 թվականին նշվում է Սալյաթ-Նովայի մահվան 150-ամյակը, և այդ առթիվ հրատարակվում են սալյաթնովյան նոր ժողովածուներ, որոնցից ամենանշանակալիցը Մ. Հասրաթյանի կազմած ժողովածուն էր՝ Հ. Կոշոյանի նկարադարձումներով: Այս նոր հատորի մեջ 56 հայերեն խաղերից բացի, Մ. Հասրաթյանի թարգմանությամբ (թիֆլիսահայ բարբառով) լույս են տեսնում նաև երգչի 25 վրացերեն, 57 ադրբեջաներեն, մեկ երկլեզվյա և մեկ քառալեզու խաղեր: Այդպիսով, այդ հրատարակությամբ, ինչպես գրում է Հասրաթյանը գրքի «Երկու խոսքում». «առաջին անգամ Սալյաթ-Նովան լույս է ընծայվում, համեմատաբար, որպես ամբողջական Սալյաթ-Նովա, մի բան, որի առաջարկն ու պահանջը բաղմիցս դրվել է շատ վաղուց»: Գրքի ոչ այնքան ծավալուն ծանոթագրությունները և հատկապես ընդարձակ բառարանի մեջ արտահայտվել է սալյաթնովագետի երկար տարիների բանասիրական, տեքստաբանական աշխատանքը: Խաղերը հրատարակելով անմիջապես բնագրերից, Մ. Հասրաթյանը կատարել է բաղմաթիվ շտկումներ ու սրբագրումներ: Նա առավել ճշգրտել է խաղերի ուղղագրությունը՝ հարազատ մնալով թիֆլիսահայ բարբառի հնչյունաբանությանը:

Հոբելյանի առթիվ, 1946 թվականին մի փոքրիկ ժողովածու է լույս տեսնում Կ. Պոլսում (կազմող Թ. Աղաալյան): Նույն թվականին Երևանում լույս են տեսնում Սալյաթ-Նովայի 22 հայերեն երգերը Մ. Աղաալյանի և Շ. Տալյանի ձայնագրությամբ: Խաղերն ընտրված են երգչի բանաստեղծական և երաժշտական՝ տեքստի ու խոսքի միասնականության պահպանման սկզբունքով: Հոբելյանի առթիվ Բեյրութում ևս առանձին գրքով լույս է տեսնում մի երաժշտական ժողովածու (մշակող Հ. Պերպերյան): Հայերեն խաղերի հաջորդ ժողովածուն նույնպես լույս է տեսնում Թեյրութում, 1952 թվականին: Այն, ըստ էության, Մ. Հասրաթյանի հրատարակած ժողովածուի արտատպությունն է:

1959 թվականին Երևանում վերահրատարակվում է Մ. Հասրաթյանի կազմած ժողովածուն՝ առավել հարստացած և ճշգրտված: Հայերեն խա-

ղերի բաժինը Մ. Հասրաթյանը համալրել է մամուլում և այլ ժողովածուներում հրապարակված ինը նոր խաղերով, որոնցից երեքը զրեւ է հալելվածի մեջ: Բացի այդ, նա առանձին համարներով հրատարակել է նաև «Հուր իս էշխով կրակած» և «Քի սաղ գուրա» խաղերը, համապատասխանաբար անջատելով «Խոսկիրտ մալում իմ արի» մուխամմազ-բայաթիից և «Յիս կանչում իմ լալանին» բարդ թասլիբից: Այդպիսով Մ. Հասրաթյանի ժողովածուի մեջ հայերեն խաղերի թիվն է 65, չհաշված երկու երկլեզվյա և մեկ քառալեզու խաղը: Մ. Հասրաթյանը հարստացրել է նաև վրացերեն ու ադրբեջաներեն խաղերի բաժինը, հրապարակ հանելով 32 վրացերեն և 71 ադրբեջաներեն երգերի իր թարգմանությունները: Նա հանրության դատին է ներկայացրել նաև մասամբ գրականացված չորս հայերեն խաղեր, երգչի ողջ ժառանգության գրական հայերեն թարգմանությունը թողնելով հետադային: Ժողովածուի վերջում ներկայացված է մի հակիրճ կենսագրական, որոշ չափով ընդարձակված են ծանոթագրությունները և վերանայված է բառարանը:

1963 թվականին, երբ նշվում է դուստն-բանաստեղծի ծննդյան 250-ամյակը, երրորդ անգամ, շքեղ հրատարակությամբ լույս է տեսնում Մ. Հասրաթյանի կազմած ժողովածուն: Այս հրատարակությունն էլ ղգալիորեն աւարբերվում է նախորդից: Սայաթնովագետը հայ ընթերցողի սեփականությունը դարձրեց Երգչի ևս 14 ադրբեջաներեն խաղեր, զրանց ընդհանուր թիվը հասցնելով 85-ի: Ընդարձակված է երգչի կենսագրական ակնարկը, մասամբ լրացված, սրբագրված են ծանոթագրությունները, բառարանը և նախկինում թարգմանված որոշ խաղեր:

Սայաթ-Նովայի հայերեն խաղերի մի ժողովածու է լույս տեսնում 1969 թվականին (կազմող Ս. Պայազատ): Այն ընդգրկում է 67 հայերեն խաղեր, դուրկ է առաջաբանից, ծանոթագրություններից և բառարանից:

Եթե հաշվի առնենք նաև երաժշտական ժողովածուները, ապա Սայաթ-Նովայի հայերեն խաղերը 117 տարվա ընթացքում (1852—1969) առանձին զրքերով լույս են տեսել ուղիղ քսան անգամ: Ընդ որում այդ հրատարակություններից յոթը եղել է սփյուռքում՝ 1931—1952 թվականների մեջ (չորսը՝ Բեյրութում, մեկը՝ Թեհրանում, մեկը՝ Ալեքսանդրիայում և մեկը՝ Կ. Պոլսում): 1922—1969 թվականների ընթացքում Սայաթ-Նովայի հայերեն երգերը Երևանում լույս են տեսել ինը անգամ, երկու հրատարակություն եղել է Թիֆլիսում (1882, 1914), մեկ հրատարակություն Բաքվում (1914) և առաջինն ու ամենանշանավորը՝ Մոսկվայում (1852):

ԱՄՅԵՆՆԻՍ-ՆՈՒՆԻՍ

Ի խո գրած ուղիստութեամբով

ԳԵՌԻԳԻԱՅ ԱՆՅԵՐԳԻԱՆ

Ինչով չ'կրաւ, չը ռոտու կ'ար թ, չնաւ կ'արին, Բայեօն-Երօթյ

Իսկ Յգ

ԱՄՍՈՒՆ

Ի խո գրած ուղիստութեամբով
1882.

Ներկա ժողովածուն ընդգրկում է Սայաթ-Նովայի և նրա որդու ինքնագրերով հայտնի հայերեն ժառանգությունը (այդ թվում մեկ քառալեզու և երկու երկլեզվյա խաղերը), ինչպես և Սայաթ-Նովայի անունը կրող բոլոր հայերեն երգերը, որոնք հասել են այլ աղբյուրներից: Ընդամենը 72 խաղ: Ժողովածուի մեջ չենք ընդգրկել Սայաթ-Նովայի խաղերի բացահայտ իմիտացիաները: Ինքնուրույն խաղեր չենք համարել «Հուր իս էշխով կրակած» բայաթի տները («Խոսկիրտ մալում իմ արի» մուխամմազից) և «Քի սալ գուբա» վարսաղը («Յիս կանչում իմ լալանին» բարդ թասլիխից), որոնք, ինչպես նշեցինք, Մ. Հասրաթյանը հրատարակել է առանձին համարներով: Ըստ այսմ, Մ. Հասրաթյանի վերջին ժողովածուի հայերեն բաժնի համեմատ սույն ժողովածուն վեց խաղով ավելի է:

Խաղերը ղետեղված են երեք բաժիններում՝ հիմնական և Ա, Բ հավելվածներ: Հիմնական բաժնում ընդգրկված են 49 ամբողջական խաղեր, որոնք անվերապահորեն պատկանում են Սայաթ-Նովայի գրչին: Դրանք այն խաղերն են, որոնք գտնվում են երգչի և նրա որդու ձեռագրերում:

Ա հավելվածն ընդգրկում է 9 խաղ. դրանք նույնպես անվերապահորեն պատկանում են Սայաթ-Նովային, միայն թե դրանցից առաջին վեցը թերի են, ոչ ամբողջական, իսկ մյուս երեքը մասամբ են վերաբերում երգչի հայերեն ժառանգությանը. դրանք քառալեզու և երկլեզվյա խաղերն են: Բոլոր այս խաղերը ևս պահպանվել են երգչի և նրա որդու ձեռագրերում:

Բ հավելվածում ընդգրկել ենք բոլոր այն 14 խաղերը, որոնք վերագրվում են Սայաթ-Նովային, բայց որոնց հեղինակային պատկանելությունը այս կամ այն չափով կասկածելի է: Դրանք այլ աղբյուրներից հասած խաղեր են, որոնցից հինգը տեղ չեն գտել նախորդ ժողովածուների մեջ: Այս հավելվածի խաղերից մի քանիսը մեր համոզմամբ պատկանում է Սայաթ-Նովային: Այստեղ խաղերը դասավորել ենք այնպիսի հաջորդականությամբ, որ երգից երգ նվաղում է նրանց՝ Սայաթ-Նովային պատկանելու հավանականությունը:

Հիմնական բաժնում խաղերը դասավորել ենք ժամանակագրական հաջորդականությամբ, բացառությամբ քամանչային ձոնված երգի, որն ավանդաբար գրվում է ժողովածուների սկզբում: Աշխատել ենք հնարավորին չափ հարադատ մնալ Դավթարում խաղերի ունեցած հաջորդականությանը:

Յուրաքանչյուր խաղի տակ, ընդունված կարգով, դրել ենք հեղինակային հիշատակարան-ծանուցումները: Դրանց մեծ մասը վրացերեն են. բերել ենք Գ. Ախվերդյանի թարգմանությամբ և մեր որոշ շտկումներով: Օհանի ընդօրինակությամբ հայտնի խաղերի վերջում բերված են երգչի որդու ծանուցումները:

Խաղերը հրատարակել ենք բնագրերից, մեր ուղղումներով ու սրբագրումներով, հաշվի առնելով տարբեր սայաթնովագետների կատարած բնագրագիտական զիտողություններն ու առաջարկները, որոնք հիշատակել ենք ծանոթագրություններում:

Խաղերը ներկայացրել ենք արդի գրական արևելահայերենի ուղղագրության հիմքի վրա, հաշվի առնելով երգչի գործածած բարբառի հընչյունաբանական առանձնահատկությունները:

Թիֆլիսահայ բարբառում բառասկզբի Ե-ն դարձել է կամ յի (յիս, յիփ, յիրգիր) կամ է (էրանի, էղիվն), բառասկզբի ո-ն դարձել է վու (վուր, վունց), երբեմն՝ օ (օսլի, օխար), բառամիջի Ե-ն հաճախ դարձել է ի (դիո, միւ, վանֆիւ), բառամիջի ո-ն շատ դեպքերում դարձել է ու (թուղ, քափալուր), ություն ածանցի յու-ն դարձել է ի (սիրունութին): Սայաթ-Նովան, չնչին բացառություններով, պահպանել է բարբառի հնչյունաբանական այս առանձնահատկությունները, և ինչպես մյուս հրատարակիչները, մենք ևս հետևել ենք նրա գործածած ձևերին, համապատասխանաբար ցույց տալով նրա որոշ շեղումները:

Երգչի գործածած մի շարք բառեր ունեն իրենց հատուկ բարբառային կազմությունը, ուստի և՛ իրենց հատուկ գրության ձևերը, ինչպես. կանանչ, ախսյուր, ախսյեւ, ասաուծ, շնուֆ, շնովսկ (շնորհք), ալիբբիւ (այբուբեն), գոգալ, բագա (բաղե), մեծըրվիլ (մեծարվել), խուղ (հող), էրծաթ, ննգնիլ, աւաասունֆ և այլն: Այս բառերն էլ, բնականաբար, ընդունել ենք ալնպես, ինչպես հնչում են բարբառում, և ինչպես ներկայացրել է երգիչը Դավթարում:

Մարդ, վարդ, մեշ, քագավուր և նման բառերը, որտեղ ձայնեղները հնչում են որպես շնչեղ խուլեր, երգիչը իր վրացատու հայերեն ձեռագրում գրել է ըստ հնչողության (մարք, վարք, մեշ, քափալուր): Հայերեն տառադարձելիս, մենք կարող էինք ընդունել այդ բառերի ճիշտ ուղղագրական ձևերը, քանի որ արդի գրական արևելահայերենում էլ դրանք հնչում են մարք, վարք, մեշ, քափալուր: Սակայն մենք թողել ենք երգչի գործածած ձևերը, հաշվի առնելով հատկապես այն հանգամանքը, որ Դավթարում հայատառ երկնեղվյա խաղերի մեջ էլ երգիչը մարդ-ը գրել

է մարթ, մեջ-ը՝ մեշ, վարդապետ-ը՝ վարքապիտ, երուրդություն-ը՝ եր-
րորութիւն, աղշիկ-ը՝ ախշիկ:

Նույն ձևով դ գիմորոշ հոգը (ինչպես և էդ դերանվան դ-ն) թողե՛
ենք ա, ինչպես գործածել է երգիչը թե՛ վրացատառ և թե՛ հայատառ
բնագրերում:

Անհրաժեշտ է նշել նաև, որ Սայաթ-Նովա անվան գրության ճիշտ
ձևն էլ Սայադ-Նովա է: Այսպես է երգիչն իր անունը գրել Դավթարի հա-
յատառ աղբբեջաններն բաժնում, ինչպես և իր ընդօրինակած ձեռագիր-
ժողովածուի հիշատակարանում: Բայց քանի որ բարբառում Սայադը (որ
նշանակում է որսորդ) հնչել է Սայաթ, ուստի և վրացատառ հայերեն
բաժնում երգիչն իր անունը գրել է Սայաթ-Նովա: Հիմք ընդունելով երգ-
չի հայատառ գրությունները, մենք կարող էինք վերականգնել Սայադ-
Նովա ձևը, սակայն գերադասեցինք պահպանել ավանդաբար ընդունված
և տարածում գտած Սայաթ-Նովա անունը, հաշվի առնելով նաև այն, որ
այսօր արևելահայ ընթերցողը Սայադ անվան դ-ն չի կարդա թ, ինչպիս
հնչել է թիֆլիսահայ բարբառում:

Աչք, խոսք, մեղք, քերթերումք և նման բառերի ք-ն թիֆլիսահայ
բարբառում հնչել է կ (աչկ, խոսկ, միխկ, քերթերուկ), և քանի որ երգի-
չը թե՛ վրացատառ և թե՛ հայատառ խաղերում գրել է կ, մենք ևս ընդու-
նում ենք գրության այդ ձևերը:

Արեգակ, մոտ, հետ, բարկ, ճիտ, երկիր, դատ, աստված բառերը՝
թիֆլիսահայ բարբառում հնչել են արեգագ, մոդ, հիդ, յիրգիր, դադ,
աստված, ալսինքն՝ խուլերն արտաբերվել են որպես ձայնեղներ, և Սա-
յաթ-Նովան այդ բառերը իր ձեռագրում ներկայացրել է ըստ արտաբեր-
ման: Մենք ևս հետևել ենք երգչի ընդունած սկզբունքին, որով հարա-
զատորեն է ներկայացվում բարբառի հնչյունաբանական պատկերը: Ի՞
դեպ կու բայական մասնիկը թիֆլիսահայ բարբառում շատ դեպքերում
նույնպես հնչել է գու ինչպես՝ գուզիմ, գու լա, գուֆա: Վերջինիս մեջ էլ
գալ բայի գ-ն հնչել է ք, և երգիչն այդպես էլ գրել է: Շատ դեպքերում
էլ, սակայն, կու մասնիկը չի ձայնեղացել (կու հաֆնիմ, կու տեսնիս), և
երգիչը թողել է կու ձևը: Ըստ էության, Սայաթ-Նովայի ընդունած ուղ-
ղագրական սկզբունքը իր գործածած բարբառի համար ամենից ճիշտն է:

Այն բառերը, որոնք բնագրերում և հրատարակություններում տըր-
ված են երկու (կամ ավելի) ձևով, և այդ ձևերը որպես հնչական արժեք
նոր երանգ չեն հաղորդում տողին, ներկայացրել ենք մեկ գրությամբ:
Նախադատվությունը տվել ենք այն ձևերին, որոնք առավել հաճախա-
դեպ են խաղերում և որոնք առավել հարազատ են երգչի լեզվին: Նշենք

այդ բառերը, փակագծում ցույց տալով մեր կողմից չընդունված ձևերը. ամառ (ալմազ), միտկ (միթկ), դուն (դու), քեզուզ (թեկուզ), բարզ (բարկ), նմախ (նահախ), քիզիդ (քիզիտ), յիրզիւր (յիրկիր), բլբուլ (բուլբուլ), ջալահիր (ջալալիր)։

Այն բաղադրյալ բառերը, որոնք թիֆլիսահայ բարբառում առանձին բառերի արժեք ունեն, բայց հրատարակվել են անջատ-անջատ, ներկայացրել ենք կից գրությամբ, ինչպես քվուր (թե վուր), ահուգար (ահ ու զար), քեզուզ (թե գուզ), մեմեկ (մե մեկ) և այլն։

Այն հարադիր բառերն ու բառակապակցությունները, որոնք հրատարակվել են կից, ներկայացրել ենք անջատ գրությամբ, ինչպես. անգին ական (անգինական), անց կենալ (անցկենալ), զար ու զարբար (զարուզարբար), ֆալաֆ տիդ (քաղաքտիդ) զար-ղալամֆար (ղարղալամֆար) և այլն։

Գաղտնավանկի ը-ն պահպանել ենք տաղաչափական և իմաստային խճողումներից խուսափելու համար։

Որոշյալ հոդն ամենուրեք արտահայտել ենք միայն ն-ով։

— Ի տարբերություն Գ. Ախվերդյանի, վրացական ց տառը տառադարձել ենք դ, խուսափելով հայերենի հնչյունաբանությունն անհարազատ կոկորդային դ-ից (դ)։

Ժողովածուի մեջ ընդգրկել ենք նաև հայերեն խաղերի 37 տարբերակներ (հետագա գրառումներ), որոնք գտնվում են Օհանի ձեռագրում և այլ աղբյուրներում։ Արժեքավոր են հատկապես երգչի որդու գրի առած տարբերակները, որոնք, Մ. Հասրաթյանի ենթադրությամբ, «կարող են մասամբ խմբագրված լինել նաև իրեն՝ հեղինակի կողմից, որովհետև այս փաստերը փոքր չափով նկատելի են և իր՝ Սայաթ-Նովայի անձնական ձեռագրում»³։ Հատկանշական է, որ երկու հայերեն խաղի՝ «Թաքավոր իս» և «Գեղն ու չոբանն», բնագրերը հնարավոր է լինում վերականգնել միայն նրանց տարբերակների միջոցով։ Տարբերակների մեծ մասը հրապարակվում է առաջին անգամ։ Նրանց ուղղագրությունը թողել ենք նույնությամբ։ Որոշ դեպքերում անհրաժեշտ ենք համարել անկյունավոր փակագծերի մեջ վերականգնել պակասող տառերը կամ վանկերը։

«Մանտիագրություններ և բանասիրական դիտողություններ» բաժնում նշել ենք խաղերի աղբյուրները և տողերի թվահամարների համաձայն կատարել մեր տեքստաբանական և բանասիրական դիտողություն-

³ «Տեղեկագիր» , 1943, № 3, էջ 25։

ները: Զգտել ենք ցույց տալ ձեռագրերի և նախորդ հրատարակությունների պատկերը, դանց առնելով: Բացահայտ տառասխալներն ու վրիպակները:

Աշխատել ենք հնարավորին չափ հանգամանորեն պատասխանել բացատրության ու պարզաբանման կարոտ յուրաքանչյուր հարցի: Մեկնաբանել ենք դժվար հասկանալի բառերը, դարձվածքներն ու պատկերները: Մեծապես հենվել ենք Գ. Ախվերդյանի, Գ. Լևոնյանի և Մ. Հասրաթյանի ծանոթագրությունների վրա, համաձայնելով կամ հակադրվելով նրանց: Ի դեպ, Բ հավելվածում ղետեղված որոշ խաղեր առաջին անգամ առյժ ժողովածուի մեջ ենթարկվել են բանասիրական քննության:

Բառարանը կազմելիս օգտվել ենք հատկապես Ա. Քոչոյանի «Սայաթ-Նովայի հայերեն խաղերի բառարանից», ինչպես նաև նախորդ ժողովածուների բառարաններից, քննելով ու համեմատելով դրանք մեք ձեռքի տակ եղած պարսկերեն, թուրքերեն, արաբերեն, վրացերեն, հայերեն մի շարք բացատրական բառարանների ու բառացանկերի հետ: Անհրաժեշտության դեպքում բացատրություններից հետո, խաղերից բերել ենք օրինակներ, իսկ ավելի հաճախ ցույց տվել այն խաղերի թվահամարները, որտեղ գործածված է տվյալ բառը: Բառարանում նշված են նաև Սայաթ-Նովայի գործածած աշուղական երգերի տեսակները:

Ծանոթագրություններում գործածել ենք հետևյալ համառոտագրությունները.

ԱՔ—Ա. Քոչոյան, Սայաթ-Նովայի հայերեն խաղերի բառարան, Երեւան, 1963:

ԳԱ—Գուսանք Ա, Սայեաթ-Նովայ, լուս դրած աշխատասիրութէնով Գէարգեայ Ախվերդեան, Մոսկվա, 1852:

ԳԼ—Սայաթ-Նովա, հայերեն խաղերի լիակատար ժողովածու, ներածական տեսությամբ, ծանոթագրություններով, բառարանով և խմբագրությամբ Գ. Լևոնյանի, Երևան, 1931:

ԻՄ—Ի. Միրզոյան, Սայաթ-Նովայի խաղերում օգտագործված մի շարք օտարազգի բառերի մեկնաբանման փորձ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1967, № 3:

ՄՀ—Սայաթ-Նովա, հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մորուս Հասրաթյան, Երևան, 1963:

ՆԱ—Ն. Աղբալյան, Սայաթ-Նովայի հետ, «Ամբողջական երկեր», հ. 2, Բեյրութ, 1966:

ՊԲՀ—Պատմաբանասիրական հանդես:

ՊՄ—Պ. Սևակ, Սայաթ-Նովա, Երևան, 1969:

ՌԱ—Ռ. Աբրահամյան, Սայաթ-Նովայի տաղերը, Թեհրան, 1943:

ԲՆԱԳՐԵՐ



727-84



մեն սազի մեշըն գոված, դուն թամամ տասն իս, քամա՛նչա,
Նաքազ մարթ քիղ շի կանա տեսնի՝ դուն նըրա պասն իս, քամա՛նչա,
Ղա՛ստ արա՝ է՛լ լալ օրերուն էդիւլըն հասնիս, քամա՛նչա.
Քիղ ինձնից ո՞վ կանա խելի՝ աշուղի բասն իս, քամա՛նչա:

- 5 Անգաճըտ էրծաթեն պիտի, գըլուխըտ ջաւահիր քարած,
Կութըտ շիրմայեմեն պիտի, փուրըտ սաղափով նաղշ արած,
Սիմըտ օ՛սկեն քաշած պիտի, էրկաթըտ փանջարա արած,
Օշով դիմեթըտ չի գիղի. լալ ու ալմասն իս, քամա՛նչա:

Ճիպուտըտ վարաղնած պիտի՝ թահր ունենա հազար ոանգով.

- 10 Ջարըտ ռաշի կուղեն պիտի, վուր դուն խոսիս քաղցըր հանգով.
Շատին դարթուն կու լուսացնիս, շատին կու քընեցնիս բանգով.
Անուշահամ գինով լիքըն դուն օսկե թասն իս, քամա՛նչա:

Ածողիտ է՛րկու կու շինիս. առաշ չայի, դափա գուզիս,
Կու մեճըրվիս այլընումըն, պարապ վախտի ռափա գուզիս,

- 15 Յիփ վեր գու քաս մեջլիսումըն, քաղցըր վոդ ու սափա գուզիս.
Բոլորըտ գողալնի շարած, մեջլիսի կեսն իս, քամա՛նչա:

Շատ տըխուր սիրտ կու խընդացնիս, կու կըտրիս հիւլընդի դողըն.
Յիփ քաղցըր ձայնըտ վիւր կոնիս, բաց կուլի հիղըտ խաղողըն.
Խալիսին էս իլթիմազն արա՝ ասին. «Ա՛պրի քու ածողըն».

- 20 Փանի սաղ է Սալայթ-Նուլեն, շատ բան կու տեսնիս, քամա՛նչա:

Էսպես Արութիճի ասած, Բոնիկոնի 447-ին (1759):



ատ սիրուն իս, շախաթայի ասողին խար չիս անի:

Անշաղ գըցիս էշխի մեշըն, հիդ կեհաս՝ քար չիս անի:

էշխըն հե՛ստի կըրակ ունի՝ վո՛ւնց կու էրվի վո՛ւնց կերթա.

Թեգուղ նընդնիմ ծովի մեշըն՝ հովնալու ճար չիս անի:

5 Բաս աշուղըն վո՛ւնց դիմանա էտ քու տըված կեծակուն.

Դուն ինքնակալ թաքավոր իս՝ բեհուբաղար չիս անի:

Թե՛վուր սարերուն հանդիբիս, կու հալիս մումի նըման.

Թե՛վուր քաղաք տիղ հանդիբիս, կու քանդիս՝ վար չիս անի:

Իսկի բեհուբաղար շունի շախաթայի շասողըն.

10 է՛նդու համա, Սա՛յաթ-Նովա, շատ էյթիբար չիս անի:

Էս դիվանի խիստ լավն (է). ովոր սովրի, օղորմի ասե: Հիմի գուզիմ թե հա-
յեվար ասիմ. ամեն աստուած: Յիս մղղսու վուրի Արուքինս, պսաուց ինչորի յա-
սուն տարին գլուխ դրի ամենան խաղին, ամա սուրբ Կարապիտի կարազուրեհով
սովրեցա քամանչեն ու շո(ն)գուրն ու (թ)ամբուրեն:



արդ մի՛ անի, ջա՛ն ու ջիգար, միտկըտ դիվաց չըտեսնե,
Ա՛շկ խավրի, ա՛նգաճ խուլանա՝ էրեսըտ թաց չըտեսնե:

Վո՛ւնց արեգագըն շուղկըն տա, վո՛ւնց լուսինըն լուս անե.
Ա՛վալ քու տեսնողըն միռնի՝ քիզ գըլխիբաց չըտեսնե:

5 Դուն գըլուխըտ մահի կու տաս, յիս էլ քիզիդ կու միռնիմ.
Մի՛ր էդնեն թամամ աշխարըս սով քաշե՝ հաց չըտեսնե:

Թե՛ վուր չըգամ ու չըտեսնիմ, հազար բաբաթ բան կոսիս.
Քաշկա մարթ վո՛ւնց գա, վո՛ւնց խոսի, վո՛ւնց քի տըխրած չըտեսնե:

Աստուծու բերնեմեն առնիս մըխիթարիչ սուրփ հոքին.
10 Է՛լ վաղ միռնի Սայաթ-Նովեն՝ ճիղըտ գըցած չըտեսնե:

Էսպես դիվանի, լավ տեղ ասած, որն գրոց հայերեն տառ է, որն վրաց, քաւ-
ֆերեն էլ ուզում էի նետն խառնել, բայց չխառնեցի:



նգան առա բարիքավոր.

Գընա՛, հիղըն խաղ մի՛ անի,
Յարի սիրտըն դաղ մի՛ անի,
էտ կըրակըն չաղ մի՛ անի.

5

Չաղ շուռ արի
Յարսուն տարի,
Յարին բեղամաղ մի՛ անի:

Բեղամաղ չըլի միղանից,
Զըհիռանա անմիղ բանից.

10

Յարըն նազով հոքիս հանից.
Հանած ծառ է,
էշխով վառ է,
Զի վախենա սուլթան-խանից:

Խանի պես դիվան իս անում,
15 Շահզադի պես սան իս անում,
էտ Ի՞նչթաւիւր բան իս անում.

Բանըտ բանդ է,
Պռոշըտ դանդ է,
Քաղցըր իրզլով շան իս հանում:

20

Ձան չունիմ յարի ձեռնեմեն,
Հիվանդ իմ էշխի կըռնեմեն,
Դիղ անիս ծուցիտ նըռնեմեն.
Նըռիտ օսկով,

Քաղցըր խոսկով

25

Կրակ իս վեր ածում բերնեմեն:

Բերնիտ մեչըն լալ է, գո՛ղալ,
Հաքիտ զարըն ալ է, գո՛ղալ,

էտ ի՞նչպես խիալ է, գո՛ղալ,
էտ խիալով նազ իս անում,
յա՛ր, ա՛ման:

* * *

30 Նազ իս անում, իխտի՛ար իս,
Հիդ աշխարհս բարե՛բար իս.
Հընդու էկած դալա՛մքար իս.

Ղա՛լամ քաշած,
Ջանս է մաշած,

35 Ջանս հանեցիր՝ ջադո՛ւֆար իս:

Ջադո՛ւֆար իս փել ու փանդով,
Շիրազու շուշա իս դանդով,
Այնաբանդ իս խաթաբանդով,
Ջամ-հալիլա,

40 Հալ ու թիլա,
Ջանս հանեցիր էտ փըսանդով:

էտ փըսանդով համ իս անում,
Դաստամազըտ նամ իս անում,
Աբա խաթրըտ ջամ իս անում.

45 Ջամ իս չինի,
Դոշտ է սինի,
Շամամնիրըտ դամ իս անում:

Դամ ու դովրան իս համաշա,
Դաստա-դաստա մազըտ քաշ ա,
50 Հաքածըտ դար ու դումաշ ա.

Ղո՛ւմաշ դարով.

Գու լա տարով,

Ուլ քիզի գուքա քամաշա:

Թամաշա իս, վարթի ոանգ իս,
55 Ծով տեսած օսկու մահանգ իս,
Սանթուր ու քամանշա, շանգ իս՝
Բարակ ձենով սագ իս անում,
յա՛ր, ա՛ման:

Սազ իս անում, դուր իս գալի,
 Բաղլի մեշքն ջուր իս գալի,
 60 Փունջ մանուշակ նուր իս գալի.
 Նուր գովելի,
 Անպատմելի.

Վարթի մեշքն շուռ իս գալի:

Շուռ իս գալի բըլբուլի պես
 65 Հուտըս գու քա սընբուլի պես,
 Սուփրի մեշքն թայգուլի պես
 Դաստա կապած,
 Իեհնին կըպած,
 Բաց իս էլի դուն գուլի պես:

70 Դուլ իս կոկոր՝ տերիվակալ,
 Չիս թառամի՝ արիվակալ,
 Թաքավուր իս բարիվակալ.
 Բա՛րուլ տամ քիզ.
 Մըտիկ տու միզ.

75 Չէ թե ամսով՝ օրիվակալ:

Օրն ի օրըն շատանում իս,
 էշիս մեշքն մողանում իս,
 Սըրտի դարդըս հիդ անում իս.
 Հի՛դ արա, տի՛ս,
 80 Թե թաբիբ իս.

Խիլքըն գըլխես հա՛ տանում իս:

Տարաւ խիլքըս, հեյրան արիբ.
 Բարակ միչկըտ սեյրան արիբ,
 էտ կըրակով բիրյան արիբ.
 85 Հալբաթ մահիս հազ իս անում,
 յա՛ր, ա՛ման:

Հազ շունիմ իսային յարեմեն,
 Չիս ջոզվում անգին քարեմեն,

- Բաք շանցկենաս իղրարեմեն.
 Իղրար անիս,
 90 Հոքիս հանիս,
 Պըրծընիմ ահուզարեմեն:
- Ահուզար իմ քաշում, ամա՛ն.
 Քիզնից ուրիշ չունիմ գուման.
 Ծուցիտ մեջըն շայիր-չիման,
 95 Զի՛ման ասիմ,
 Մուրախասս իմ,
 Սըրտումս ունիմ իղրար-իման:
- Իղրար-իմանեն շանցկենամ.
 Առանց քիզ մին օր վո՛ւնց կենամ.
 100 Բերնումըս դընիմ սանձ՝ կենամ.
 Սանձահարիմ,
 Սիրտըս վարիմ՝
 Անհընանալու գանձ կենամ:
- Գանձ իս սիրով ու սիրեկան,
 105 Ղիմեթ ունիս անգին աղան,
 Էալ ու ջալահիր պատվական.
 Պատիվ անիմ,
 Քանի ջան իմ,
 Զուն աշխարս է անցողական:
- 110 Անց մի՛ կենա, թե հալալ իս,
 Մի մոր ծըծած, մի մոր դալ իս.
 Ղաբուլ ունիմ, թեգուզ հալիս,
 Զունքի իլքիմազ իս անում,
 յա՛ր, ա՛ման:

* * *

- Իլքիմազըս է՛ս է, ջա՛նում,
 115 Օրըս հիդըտ կես է, ջա՛նում,
 Էշխըն է՛ստու պես է, ջա՛նում,
 Զա՛նում, ջա՛ն իս,
 Աննըման իս.

Աշխարս ուս ու տես է, ջա՛նում:

- 120 Ուս ու տես արա, իմա՛ցի.
Մըսիկ արա աղ ու հացի.
Թաք իղրարին դըրուստ կացի.

Կա՛ց իղրարին,
Ահլի շարին,

- 125 Յիփ միռանիմ, վըրես լացի:

Լացիս, աչկըտ զայի անիս,
Դաստա ուհան փայլի անիս
Արտասունքըտ շայի անիս.

- Չայու ջուր իս,
130 Խիստ տըխուր իս.
Ադալաթըտ շահի անիս:

Շահի զուրիաթ թաբաղըն
Զի հարցընի դուգուն-դաղըն.
Վա՛յ թե էլ չը խոսիս վաղըն.

- 135 Վաղըն գու բամ,
Նըստիմ ու լամ,
Ասիմ բարիթավուր խաղըն:

Խաղ իս էլի, Սա՛յաթ-Նուվա.
Դաղ իս էլի, Սա՛յաթ-Նուվա.

- 140 Բաղ իս էլի, Սա՛յաթ-Նուվա.
Գլուխըտ փիանդաղ իս անում,
յա՛ր, ա՛ման:

Էսպես լավ բարիքավուր յարանա: Արուրինի ասած: Էսպես լավ բարիքավուր
յարանա, որ (ինչ որ) աշուղ օղանի ճես պատահելու է, քալորք սրա մեջ է գրած:



Իբա ու ենգիդունիա, դարբաբ ու դար իս, գովե՛լի.
Հընդու դիարեմեն էկած դար-դալամբար իս, գովե՛լի.
Շատ սովդաքար քիզ կու պըտոնե՝ դուն անգին քար իս, գովե՛լի.
Անտակ ծովի միշեն հանած անգին գովհար իս, գովե՛լի:

5 Զիփ դու բաղենն սեյրան կեհաս՝ ծովի նըման գուքա ալիտ,
Գըլուխըտ պահելով արա՝ նամ չըղիբչի խաթուխալիտ,
Տեսնողըն հեյբաթ կու մընա էտ քու սիրուն մահ-ջամալիտ,
Աշխարումըս նուր դուս էկած թալա նուգբար իս, գովե՛լի:

Ա՛րի, միզիդ մե լավ կացի, դուրբան ըլիմ մուրվաթումըն
10 Ման էկա յիրգիր՝ չըտեսսա էտ քու նըման ջուրաթումըն,
Վո՛ւնց Հընդու դիարումըն կա, վո՛ւնց Փըռանգի սուրաթումըն.
Քաշվիլ իս քարգահի մեշըն. ուրիշ թահար իս, գովե՛լի:

Թարիփըտ դավթար իմ արի, փիլ պիտի, վուր գիրքըն տանն.
Դուն քու մըտկի հիդ մի՛ էհա, էտ խիալըն սըրտետ հա՛նե.
15 Մեշկըտ՝ հադիդեմեն քաշած սիրմա մավթուլի նըման է,
Աշխարիս շըվաք իս անում՝ սալբու-չինար իս, գովե՛լի:

Յիս քիզանից չիմ հիռանա, թե չհասնի մահիս վաղեն.
Յիփ միռանիմ, շա՛ղ տու վըրես դաստամադի թիլի շաղեն.
Հենչաք ըլի՝ ո՛ւրախ կենաս. Սայաթ-Նուլեն առնե դաղեն.
20 Շատ մարթ կոսե, թե յար ունիմ, դուն ո՛ւրիշ յար իս, գովե՛լի:

էս դաստա բեդաստա երգի հանգով:



իս մե ղարիբ բըլբուլի պես, դուն օսկե ղափաղի նըման.

ձրենսքս դի վուտիտ տակըն՝ ա՛նց կաց փիանդաղի նըման.

Յա՛ր, քիզիդ խոսիլ իմ ուզում՝ շահի իլթիմաղի նըման.

Աջայիբ սուրաթի տեր իս՝ ուանգըտ է գուլգաղի նըման:

5 Յա՛ր, մըտիլ իս բաղչի մեշըն, աջայիբ սեյրան իս անում.

Շուխկըտ արեգաղի նման է՝ տեանողին հեյրան իս անում.

Ջիգարըս կըրակ իս տըվի, էրվում իմ՝ բիրյան իս անում.

Վո՛ւնց մե գողալ չէ ունեցի էտ քու արած նաղի նըման:

Հենց իմացի, լա՛ր, քու ղուլն իմ, թանգ հախով գընած չըրաղ իմ.

10 Քու ղըռանըտ նընգած ըլիմ, ով տեսնե, ասե՛ տուսաղ իմ.

Ջշխեմետ հիվանդացիլ իմ, վո՛ւնց միռնում իմ, վո՛ւնց թե սաղ իմ.

Մովի պես ուրդան իմ տալիս. գըծվիլ իմ Արաղի նըման:

Ով կու տեսնե, ջունուն կուլի՝ բարգ էրեսիտ խալ իս անում.

Ճլ ջուքամըն դո՛ւն կու քաշիս, շուն մահիս խիալ իս անում.

15 Յա՛ր, լիս քիզ բարով իմ տալիս. շուռ իս գալի՝ ղալ իս անում,

Չունքի խոսկըտ անց է կենում բելլու շահ-անդաղի նըման:

Մալաթ-նովեն ասաց՝ դու լամ. չիմ լացլի, թե ճար ունենամ.

Ճլ յի՛ս կու քաշիմ էս ղուսեն՝ թուղլի ահուղար ունենամ.

Յա՛ր, քիզ վըրեն արբ ունենամ, մե լալ իխոխար ունենամ՝

20 Առնում, տանիմ մեջլիսնիրըն՝ օսկեջըրած սաղի նըման:

Էս Արուքինի ասած է: Ղազարի:

Ճս էրկու երգերն մի հանգով են, ովոր սովորի, Դոստիի երգի ձայնով քոզ
ասե, քե որ չիմանաս, հարցրու. քե Դոզալլար յրդնաղինա բախ դաստա բեղա-
ռա քարփանուր:



ըլբուլի հիդ լաց իս էլի,
վարթի նըման բաց իս էլի,
վարթաջըրուլ թաց իս էլի.
թա՛ց իս էլի.

2 Զըկա քիզի նըման
5 Զըկա քիզի նըման.
Քիզ նըման
Քիզ նըման
Դո՛ւն իս, աննըման:

10 Միրունութին: Ետ էլավ արբաբ,
Մազիր ունիս սիմ ու շարբաբ.
Քի սազ գուբա ղուշլու ղալբաբ.
Դո՛ւշլու ղարբաբ:

Զըկա քիզի նըման,
Զըկա քիզի նըման.
Քիզ նըման,
15 Քիզ նըման
Դո՛ւն իս, աննըման:

Քրեսըտ է շամշ ու ղամար,
Ջանքս դուս գուբա քիզ ամար.
Միշկիտ ունիս օսկե քամար.
Օ՛սկե քամար.

20 Զըկա քիզի նըման,
Զըկա քիզի նըման.
Քիզ նըման,
Քիզ նըման
Դո՛ւն իս, աննըման:

25 Հաքիտ զարըն ալ իս արի.
Բըլբուլի հիդ լալ իս արի.
Բարգ էրեսիտ խալ իս արի.
 խալ իս արի.

 Չըկա քիդի նըման,
 Չըկա քիդի նըման,
30 Քիզ նըման,
 Քիզ նըման
 Դո՛ւն իս, աննըման:

 Դարգըս ասիմ՝ զուլան սարիր.
 էս ի՞նչ բան էր, վուր դուն արիր.
35 Սալաթ-նովուն ջունուն արիր.
 ջո՛ւնուն արիր.

 Չըկա քիդի նըման,
 Չըկա քիդի նըման,
 Քիզ նըման,
 Քիզ նըման
 Դո՛ւն իս, աննըման:

Քրոնիկոնի 440-ին (1752), մաւտի վերջին: Էսպէս բելիւ դափի ճանգով
թասլիթ՝ օսմանցոց մօտամ:



- ահրադրն միռած, Շիրինն ասաց՝ ղարեն էրված իմ.
Քաշվիլ է վարթըն, մոդ չի թողնում, շարեն էրված իմ.
Բըլբուլըն ասաց՝ վարթիս խաթրի խարեն էրված իմ.
Տասնումեկ ամիս մունջ իմ կացի՝ տարեն էրված իմ.
- 5 Աստված կու սիրիս, ղար մի՛ հաքնի, ղարեն-էրված իմ,
Մեջլումի նըման ման իմ գալի, յարեն էրված իմ:
- Զըկա փաշայի խազինումըն մալ քիզի լայիղ.
Հալա չին գործի Քիրմանումըն շալ քիզի լայիղ.
Օսկե մատնումըտ դըրիլ իս դուն լալ քիզի լայիղ.
- 10 Հաքիլ իս աուլաս՝ ոանգն է գուզազ—ալ քիզի լայիղ.
Աստված կու սիրիս, ղար մի՛ հաքնի, ղարեն էրված իմ,
Մեջլումի նըման ման իմ գալի, յարեն էրված իմ:
- Խոսկիրըտ քաղցըր, լիվուտ շաքար-շարթի միշումըն.
Գարունքվան ծաղիկ, բաց իս էլի մարտի միշումըն.
- 15 Մազիրըտ ռեհան՝ փաթըթած է վարթի միշումըն՝
Կանանշ տերեւեն նամ չըկաթի ղարթի միշումըն.
Աստված կու սիրիս, ղար մի՛ հաքնի, ղարեն էրված իմ,
Մեջլումի նըման ման իմ գալի, յարեն էրված իմ:
- Սալաթ-նովեն իմ, էնդուր գու լամ, դարդիրըս արբաբ.
- 20 Մազիրըտ ռեհան, կլապիտոն է, հուսիրըտ շարբաբ.
Բարակ դամաթիտ խիստ սաղ գու քա ղիբա ու ղարբաբ.
* * * * *
Աստված կու սիրիս, ղար մի՛ հաքնի, ղարեն էրված իմ,
Մեջլումի նըման ման իմ գալի, յարեն էրված իմ:

Էս մուստազաթի ձեռով է, շատ լավն է, Սալաթ-նովայի ասած (ծանոթ-
Ոհանի):



իս քու ղիմեթըն չիմ գիգէ՝
Ջավահիր քարի նըման իս.
Տեսնողին Մեշլում կու շինիս՝
Լեյլու ղիգարի նըման իս:

5 Աշխարումըս իմըն դո՛ւն իս,
Բեմուրվաթ իս, մուրվաթ չունիս,
Պըռոշնիրըտ նաբաթ ունիս՝
Ղանդ ու շաքարի նըման իս:

Դադա պիտի թարիփտ ասե,
10 Ակոեքըտ յաղութ-ալմաս է,
Ռանգըտ փըռանգի ատլաս է՝
Ջար-ղալամքարի նըման իս:

Մագիրըտ նըման ռեհանի,
Դուն ուրիշ խիալ մի՛ անի,
15 Ռա՛հմ արա, հոքիս մի՛ հանի՝
Մուրվաթով յարի նըման իս:

Վո՞ւնց ղիմանամ էսչափ շարին՝
Աչկեմես կաթում է արին.
Սա՛յաթ-Նովա, նաղլու յարին
20 Գընաթ նոքարի նըման իս:

Էսպես Արուր (իւնի ասած) բասլիր:



ստի՞ գութաս, դարիբ բըլբուլ,
Դու մի՛ լացլի, յի՛ս իմ լալու.
Դու վարթ պըտոե, յիս՝ գողալին.
Դու մի՛ լացլի, յի՛ս իմ լալու:

5 Ա՛րի, բըլբուլ, խո՛սի բառըն,
Օխնըվի քու էկած սարըն.
Քի վարթն էրից, ինձ՝ իմ յարըն.
Դու մի՛ լացլի, յի՛ս իմ լալու:

Ման իմ գալի դիդարի հիդ,
10 Վունց դարիբ բըլբուլ խարի հիդ.
Դու վարթի հիդ, յիս յարի հիդ.
Դու մի՛ լացլի, յի՛ս իմ լալու:

Սալբուի նըման կանանչ իմ,
Ե՛կ, խո՛սի, ձայնիտ ճանանչ իմ,
15 Դու վարթ կանչե, յիս յա՛ր կանչիմ.
Դու մի՛ լացլի, յի՛ս իմ լալու:

Ղարիբ բըլբուլ՝ ձայնըտ մալում,
Յիս ու դուն էրվինք մե հալում,
Սալաթ-նովեն ասաց՝ գա՛լում,—
20 Դու մի՛ լացլի, յի՛ս իմ լալու:

Առուրիւնի ասած երկու քասիք:



ոսկիրըտ մալում իմ արի՝ անարատ, մաքուր իս, ա՛խպեր-
 Օսկե փարշումըն լըցըցած անմահական ջուր իս, ա՛խպեր,
 հըմողըն վո՞ւնց կու կըշտանա՝ դուն կաթնե ախպուր իս, ա՛խպեր,
 Աշխարքըն ծով՝ դուն մեշըն նալ, ման գուքաս, փըրփուր իս, ա՛խպեր-
 5 Վախում իմ, թե ինձ էլ էրիս՝ անհանգչիլի հուր իս, ա՛խպեր:

Հուր իս՝ էշխով կըրակած,
 հոսկ իմ ասում առակաց,
 իմ սիրմա էրծաթ ա՛խպեր՝
 Օսկե ջըրով վարակած:

10 Աջաբ միգիդ ի՞նչ իս կամում, ի՞նչ է ասում էտ քու փալըտ.
 Իսկի չի՛ս գալի, չի՛ս ասում՝ «Աջաբ ի՞նչ է, բա՛նդա, հալըտ».
 Ա՛սոված վըկա, սիրտըս էրից ջեշրանի նըման ման գալըտ.
 Յիս քիզանից չի՛մ հիռանա թեզուզ դուս զա խաթուխալըտ.
 Թեզուզ սիրիս, թեզուզ ատիս, թե գուղե համբուրիս, ա՛խպեր:

15 Համբուրիմ սիրով համբուր,
 Վունցոր խեչին է դասսուր.
 Ուլ քիզ խաչան մըտիկ տա՝
 Դառնա էրկու աշկով կուր:

Քիզիդ բաս ո՞վ կարա բըռնի՝ հաղար բաբաթ բառ իս էլի.
 20 Խոսկիրըտ անդին ջավահիր՝ Ասմավուրու ճառ իս էլի.
 Հուտըտ աշխարրս է դավթի՝ բալասանի ծառ իս էլի.
 Չըկա քիզ պես էշիս ջունուն՝ կըրակ նընգած վառ իս էլի.
 Շատ մարթիք քիզիդ կու էրիս. էտ լեզվի տեր վուր իս, ա՛խպեր:
 Վուր յիս ասիմ՝ իմացի,

25 էշիս մեշըն հիմացի.
 Ինձ հուրյան-բիրյան արիր,
 Ասում իս, թե դիմացի:

Խիլքըս գըլխեմեն տարիլ իս, լիբ ու թոքըս զարդ իս արի,
Սիրտըս փուրումըս սպանեցիր, էշխըտ քիզի նարդ իս արի,
30 Ինձ հուրյան-բիրյան շինեցիր. աջա՞ք դուն էլ դարդ իս արի.
Յիփ քի սիրով մեհման անիմ, վի կացի, թե մարդ իս, ա՛րի,
Ուրախա՛ցի, ուրախացո՛ւ, շունքի միզ մոդ հուր իս, ա՛խպեր:

Հո՛ւր իս, սիրով սիրական,
Քիզի դուռդ պատվական
35 Հաղար թուրու կերակուր,
Սուրփի գինի անապական:

Համաշա իմ յարի ճամփին կանգնած իմ՝ տալիս իմ դովա.
Աշխարքըն աշխարով կշաւացավ, իմ սիրտըն քիզանից սով ա.
Յըրե՛, շա՛ղ տու վոտիտ տակըն, էշխետ դառա հավաջովա.
40 Իսկի չի՛ս գալի, չի՛ս սսում. «Խիստ իս լալի, Սա՛յաթ-նովա».
Զըլի՞ միտկըտ մուրըլիլ է, սըրտումըտ պըխտուր իս, ախպեր:

Պըխտուր սիրտըտ պարզ արա,
Բըլբուլի պես փարզ արա,
Աստըձուն փառք, Քաղկումն իս՝
45 Դարդըտ հանին արզ արա:

Արզ իմ անում հաղարին,
Հա՛ղարբաբին, հա՛ղարին.
Սիրտըս յարալու արիլ՝
Աշկըս դու լա հա՛ղ Գարին:

50 Հաղարին հաղար պիտի,
Էրած սըրտին ճար պիտի,
Յիս մե էշխի ջունուն իմ՝
Ինձ մե դողրու յաւ պիտի:

Յարի լիդուն բըլբուլ է,
55 Դաստամաղըն սընբուլ է.
Սայաթ-նովեն լալիս է,
Մակա՞մ դարիբ բըլբուլ է:

Հսպես մոխամազ բայաքիով, Արուսիկի ասած:



սօր իմ յարին տեսա բաղչի մեշըն ման դալով,
Գեդինըն դարթարվեցավ իմ յարի օսկե նալով.

Բըլբուլի պես պըտուտ էկա վարթի վըրա՝ ձեն տալով,
Ջունուն էլավ խիլքըս գըլխես, սիրտըս տըխուր, աչկըս լալով:

5 Հույս ունիմ իմ ստիղծողիմեն միր գուշմանն ըլի էս հալով:

Յա՛ր, էտ քու նազ ու դամդով ջանըս փիկ ու փանդ իս արի,
Խըմիլ իս էշխով շարբաթըն՝ պըռռռնիրըտ դանդ իս արի.

Խաթուխալով, քաղցըր լիզվով շատ ինձ պեսին բանդ իս արի.

Տո՛ւր դանակըն, ինձի սպանե. մի՛ ասի՝ ուշխանդ իս արի.

10 Ջունքի մահըս յարիմեն է, թուղլի միռնիմ լավ գողալով:

Տարին տասներկու ամիս մաղիրըտ հուսած կուլի.

Պըռռռեմետ միդր է կաթում, թողնիս՝ յախետ թաց կուլի.

Գարնան շընչի [ծաղկի] նըման կարմիր վարթըտ բաց կուլի.

Ի՞նչ օքուտ է քու բաղմընչուն՝ զարիբ բըլբուլըն լաց կուլի.

15 Մուրվաթ շունիս, պըտուտ գուրա՝ բաղչի վըրա ճըկճըկալով:

Յիփ քու սուրաթըն կու քաշին՝ նաղշումըն շընուք կու տաս.

Կու վըռվըռաս ճըրարի պես՝ սաղշումըն շընուք կու տաս.

Մըշկով լիքըն բըրուլի պես թաղշումըն շընուք կու տաս.

Բաց կուլիս կարմիր վարթի պես՝ բաղշումըն շընուք կու տաս.

20 Քամին դիբչի փոթլիս մեշըն՝ հուտըտ գուրա վըռվըռալով:

Յիս էլ ուրիշ յար շունիմ, էս գըլխեն վա՛ղ իմացի.

Ա՛նգաճ արա, մա՛տաղ իմ քիզ, էս խոսկըս սա՛ղ իմացի.

Մըտիկ արա քու ստիղծողին՝ տուզ-նամագ-ա՛ղ իմացի.

Սայաթ-Նովին մի՛ ջըգընցնի՝ էշխեմետ տուսաղ իմացի.

25 Խիլքըս գըլխեմես տարիլ իս քու, բե՛մուրվաթ, գարդիշ տալով:

էսպես լավ մոխամմագ, Արուրինի ասած:



- ուզիմ ումբըս հենց անց կացնիմ՝ օրըս մունաթ չըքաշե.
Թեզուղ հագար դարդ ունենամ՝ դարըս մունաթ չըքաշե.
Ղաստ անիմ, բարու հանդիբիմ՝ շարըս մունաթ չըքաշե.
Գըլուխըս շարեն ուղ անիմ՝ սարըս մունաթ չըքաշե.
5 Էրեսըս հայալու պահիմ՝ արըս մունաթ չըքաշե:

- Հիռու տիղացեն դարիս իմ՝ խիլքի վարար շահ իմ բերի.
Հուջրես լիքն է անդին լալով, ջալահիրչուն ահ իմ բերի.
Հընդու միշեմեն դուս էկած դիմեթով մաթահ իմ բերի.
Տեսնողըն թահրըն չի գիդի՝ մե հեստի քարգահ իմ բերի.
10 Հեստի տիղ դուքան բաց անիմ՝ զարըս մունաթ չըքաշե:

- Մե բիռըս փռանգի ատլաս է, տալիս է շովղ ու շափաղաթ.
Մե բիռըն՝ դար-դալամքարի, տիղ ունե վունցոր մաքաղաթ.
Մե բիռըս Զինումաշինին կու առնե թամամ, փարաղաթ.
Մե բիռըն ենգիդունիա է, մե բիռըն՝ փարշալի խալաթ.
15 Վո՛ւնց ձեիլ գուզե, վո՛ւնց կըտրիլ՝ կարըս մունաթ չըքաշե:

- Մե բիռըն զըմըզ ու զափռանգ, մե բիռըն էլ զանջափիլ ա.
Մե քանի բիռըս դարիչին, մե բիռըն էլ զարանփիլ ա,
Բերնիրըն վըրա չէ դալիս, հակնիրըս է սիլա-սիլա.
Անտակ ծովի միշեն հանած ակնիր ունիմ՝ լալ ու թիլա.
20 Մարըարիտըս շաղա-շաղա՝ շարըս մունաթ չըքաշե:

Շատ մարթ էստունք կու իմանա, կոսե. «Հալբաթ սա զանգին ա».
Զին գիդի, թե ուշկ ու միտկըս հաղար մե բաբաթ հանգին ա.
Մարիփաթով քաղցըր լիզուն դիփունի վըրա անգին ա.
Սայաթ-նովեն էնդուր գու լա՝ գըլուխըն մահու ճանգին ա.
Ասավաճ սիրողն ինձ աղատե՝ յարըս մունաթ չըքաշե:



ուն էն հուրին իս, վուր գեմի կու զավթե,
Զունքի ինձ զավթեցիր խափով, նազա՛նի.
Արիվիւք, արիվմուտ, հարավ ու հյուսիս
Զըկա քիզի նըման շափով, նազա՛նի:

5 Շատ մարթ քու էշխեմեն կու դառնա յիզիդ,
Արի մե ու՛հմ արա, լա՛վ կացի միզիդ.
Գուզիմ, թե համաշա դամ անիմ քիզիդ՝
Սանթուրով, քամանշով, դափով, նազա՛նի:

Դարդիրըս շատացավ՝ ասիլ իմ ուզում.

10 Աչկեմես արտասունք հուսիլ իմ ուզում.
Համաշա, յա՛ր, քիզիդ խոսիլ իմ ուզում.
Սիրաըս չէ կըշտանում գափով, նազա՛նի:

Հայալու իս՝ ադաբ ունիս, ա՛ր ունիս,
Զեռիտ դաստա կապած սուսանբար ունիս.

15 Տուր ինձի սըպանն՝ իխտիար ունիս.
Հենշաք ըլի՝ կենաս բափով, նազա՛նի:

Սայաթ-Նովեն ասաց՝ արզ անիմ խանին.

Ղաբուլ ունիմ՝ քու խաթրու ինձ սըպանին.

Հենշաք ըլի, յա՛ր, գաս իմ գերեղմանին,

20 Ածիս խուղըն վըրես ափով նազա՛նի:

Ղափիա, յառանա Արուրինի ասած:



- շխըն վառ կըրակ է՝ էրվելով գուքա.
Շատ մարթ կոսե՝ յիս յարի հիդ ման գուքամ...
էս դարդեմեն ու չէ քաշի՝ վո՛ւչ քաշե.
Ու վ յար սիրե, էլ շասե թե՝ ջան գուքամ:—
- 5 Շատ մարթ կա՝ էն գըլխեն սըրտում ունե դամ.
Բադի մարթ չէ քաշի՝ էշխեմեն է խամ.
Ինչ ասիս կոնիլ տա՝ սերն է անըսկամ.
Հալվեցա, մաշվեցա. էլ ի՛նչ ջան գուքամ:
- էշխըն վուր կա՝ հազար բաբաթ հանգ ունե.
10 Ուշկ ու միտկըն կու քընեցնե՝ բանգ ունե.
Բըռնածըն չի թողնի՝ դայիմ շանգ ունե.
էնդու համա խան հիդ կեհամ, խան գուքամ:
- Թե դուն էշխի հիդ մանգալըն հարցընիս՝
Ձի դիմանա Ռոստոմ Զալըն՝ հարցընիս.
15 Թե բեմուրվաթ յարի հալըն հարցընիս,
Ասում է թե՝ սուլթան գու քամ, խան գուքամ:
- Սայաթ-Նովեն ասաց՝ շատ ի ջանք դըրի,
Մե բափա չըտեսս հում կաթնակիրի.
Ուլոր ինձ չի սիրի՝ յիս է՛լ չիմ սիրի.
20 Սերըն սեր կու բերե՝ սիրեկան գուքամ:

Ղափիս, էսպես աշուղ օղլսնի օգութլամա, Արուսիքի առած,
լավն է:



ենըտ քաղցրը ունիս՝ լա՛մ գող վո՛ւ խոսիս,
նա պահէ քիզ, ումնոր ծա՛ռա ին, գո՛ղալ՛:

Մեչկըտ ջեյրանի է, ռանգըտ՝ շաքարի,
Փռանգըստանու էկած խա՛րա իս, գո՛ղալ:

- 5 Ղո՛ւմաշ ասիմ՝ շուրեղեն է, կու մաշվի,
Սա՛լբի ասիմ՝ ախըր մին օր կու տաշվի,
Ջե՛յրան ասիմ՝ շատ մարթ քիզիդ կու յաշվի,
Բաա վո՛ւնց թարիփ անիմ՝ մա՛րա իս, գո՛ղալ:

- Թե մանիշակ ասիմ՝ սարեմեն կոսին,
10 Թե ջավահիր ասիմ՝ քարեմեն կոսին,
Թեվուր լուսին ասիմ՝ տարեմեն կոսին.
Արեգագի նըման փա՛րա իս, գո՛ղալ:

- Գո՛ւղիմ թե համաշա դըռանըտ գամ ուխտ՝
Աչկիրըտ, կա՛րմիր վարթ, նուր բացարած տուխտ,
15 Լիզուտ գըրիշ ունիս, ձեռըտ՝ գուզազ թուխտ.
Մովեմեն դուս էկած դա՛րա իս, գո՛ղալ:

- Սիրասիրմըտ սըրտիս մեչըն ցանեցիր,
նազ ու դամզով, յա՛ր, իմ հոքիս հանեցիր,
էս քու Սայաթ-նովուն դո՛ւն սըսպանեցիր.
20 Գըլխիտ էկած դադեն ա՛ռա յիս, գո՛ղալ:

Ղափիս, էսպես լավ յարի վրա, Արուրինի ասած է:



ատ մարթ կոսե՝ յիս յարիմեն հասրաթ իմ՝
Լեյլի-Մեջլումն էլ չէ էլի էս հալով.
Մարթ սլիտի համաշա բերանըտ տընդդե.
Խոսկ իս ասում առականվուր-մասալով:

5 Լիլուտ քաղցըր ունիս՝ շաքար ու շարթին.
Մաղիրըտ ռեհան է՝ փաթըթած վարթին,
Քի ղարթարած տեսնիմ հիդ ծաղկաղարթին՝
Հաքիլ ըլիս զար-զարբաբըն՝ խաս ալով:

3ա՛ ինձ կորցըցեք, յա՛ մե բան արեք,
10 Խըփեցեք մե տիղըս, մե նըշան արեք,
Թեգուզ էստու համա քարասպան արեք՝
Զի՛մ կըշտանում գողալի հիդ խոսալով:

Աջաբ վո՞նց դիմանամ յիս էսչափ դարին,
Աչկեմեա արտասունք դուս գութա՝ արին,
15 Օրըն իր շափաթով կարոտ իմ յարին,
Վունցոր դարիբ բըլբուլ՝ վարթին տիսալով:

Խիլքըս տարավ՝ ջադութարին չի՛մ տեսի.
Բեմուրվաթին, բեիդրարին չի՛մ տեսի.
Սաչաթ-Նուլեն ասաց՝ յարին չի՛մ տեսի,
20 Ման իմ գալի, արտասունքըս հուսալով:

Ղափիա, էսպես վարսաղ. Արուրիմի ասած մե
սիրունի վրա:



ռանց քիզ ին՞չ կոնիմ սոյբաթն ու սազըն.

Ձեռնեմես վեր կոծիմ շանգիրըն մեմեկ.

Չունքի ուշկ ու միտկըս իրար շաղեցիր՝

Փահմես կու հիռացնիմ հանգիրըն մեմեկ:

- 5 Մե դուգունըն էրկու դադին ի՞նչ անե,
Մե նոքարըն էրկու աղին ի՞նչ անե,
Մե բաղմանչին էրկու բաղին ի՞նչ անե,
Փեյվանդ գուզե թաղա տընգիրըն մեմեկ:

Ղուրթ ին ասի փիր ուստաքար դադիրըն.

- 10 «Բաղ շինեցի, վարթըն քաղից վադիրըն».

Ջափեն յիս քաշեցի, սափեն՝ յադիրըն.

Ռադիփեն էկավ միզ էս ունգիրըն մեմեկ:

Առանց քիզ ի՞նչ կոնիմ աշխարիս մալըն.

Չիմ անի քալագըն, չիմ անի դալըն,

- 15 Կու հաքնիմ մաղեղեն, կու հաքնիմ շալըն.

Կերթամ ու ման դուքամ վանքիրըն մեմեկ:

Բըլքամ մե մարթ ուստ դա, վուր ինձ խըրատե,

Գո՛ղալ, քու էշխեմեն սիրտըս աղատե.

Կանց յոթըն իմաստնասիրացըն շատ է

- 20 էս քու Սայաթ-Նովու բանքիրըն մեմեկ:

Արուփինի (ասած) յաբանա, լավ դափիա:



րի ինձ անգաճ կալ, ա՛յ դիվանա սիրտ,
Հայա սիրե, ադաբ սիրե, սոր սիրե.

Աշխարքըս քունն ըլի, ի՞նչ պիտիս տանի՝
Աստված սիրե, հոքի սիրե, յար սիրե:

5 էն բանն արա, վուր Աստըծու շարքումն է,
Խըրատնիրըն գըրած Հարանց վարքումն է.
Յիրիք բան կա՝ հոքու, մարմնու կարքումն է՝
Գիր սիրե, դալամ սիրե, դավթար սիրե:

Ե՛կ, ա՛րի, սի՛րտ, մընա դուն մե դամաղի,
10 Հալալ մըտիկ արա հացի ու աղի.
Հենց բան արա՝ մարթ վըրետ չըծիծաղի.
Խըրատ սիրե, սաբըր սիրե, շար սիրե:

Հընպարտութին շանիս՝ դուր գուքաս Տեբիտ,
Խոնարութին արա կանց քիզ դեվերիտ,
15 Աստված դիպունանցըն մին հոքի էրիտ.
Աղկատ սիրե, դոնաղ սիրե, տար սիրե:

Սա՛յաթ-Նուլա, էրնեկ քիզ թե է՛ս անիս՝
Հոքուտ խաթրի մարմնուտ ումբըն կես անիս.
Թե գուզիս, վուր դադաստան չըտեսանիս՝
20 Վանք սիրե, անապատ սիրե, քար սիրե:

Ուլամա, Արուքինի ասած, մայիսի 1-ին, Բոնեիկոնի
441-ի (1753):



ուն է՛ն գըլխեն իմաստուն իս, խիլքտ հիմարին բաբ մի՛ անի,
էրազումըն տեսածի հիդ միղի մե հեսաբ մի՛ անի,
Յիս խոմ է՛ն գըլխեն էրած իմ, նուրմեկանց քաբաբ մի՛ անի,
Թեվուր գիդիմ բեզարիլ իս, ուրիշին սաբաբ մի՛ անի:

5 Ջըկա քիզ պես հուքմի-հեքիմ. դուն Ռոստոմի Զալ՝ թաքա՛վուր.
Ասկըտ ասկերումըն գոված՝ հա՛մդ ունիս, գողալ թաքա՛վուր.
Թե էսանց էլ սուշ ունենամ՝ դլուխըս արա տալ, թաքա՛վուր.
Մըտիկ արա քու Ստիղծողին՝ նըհախ տիղ ղազաբ մի՛ անի:

Յարալուն հեքիմն էնդուր գուզե՝ դի՛ղ տալու է, ցա՛վ տալու չէ.
10 Քանի գուզե արբաբ ըլի՝ դուլըն աղին դավ տալու չէ.
Դու քու սիրտըն իստակ պահե, յադի խոսկըն ավտալու չէ.
Աստծու սերըն կանչողի պես դըռնեմետ ջուղաբ մի՛ անի:

Ամեն մարթ չի կանա խըմի՝ իմ ջուրըն ո՛ւրիշ ջըրեն է.
Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ո՛ւրիշ գըրեն է.
15 Բունիաթըս ավազ չիմանաս՝ քարափ է, քարուկըրեն է՝
Սեւավի պես առանց ցամքիլ, դուն շուտով խարաբ մի՛ անի:

Քանի գուզե քամին տանե՝ ծովեմեն ավազ չի պակսի.
Թեգուչ ըլիմ, թեգուզ չըլիմ՝ մեջլիսներուն սաղ չի պակսի,
Թե կու պակսիմ, քիզ կու պակսիմ՝ աշխարիս մե մաղ չի պակսի.
20 Սալաթ-նովու գերեզմանըն Հինդ, Հաբաշ, Արաբ մի՛ անի:

Էսպես Արուիքնի ասած, Բռնիկոնի 441-ին (1753):



3իս կանչում իմ լալանին
Բադեշխանեն լալ անին.
Վա՛յ թե հասրաթետ միռնիմ,
Բըլբուլ լիզուս լալ անին.
5 Դոստիրըս հիռու կանգնին,
Յադիրըն գան լալ անին:

Քիղ սազ դու քա ալ դումաշըն, նազանի.
Ե՛կ ճակատիտ կապկ դարլու մուղայիշ.
Ձեռիտ բըռնե օսկեջըրած մըկրատըն,
10 Խուճուճ-խուճուճ կալկերուտ տուր արայիշ:

Յիս կանչում իմ յարանին.
Թեջնիս, վարսաղ, յարանին.
Ո՞վ ասալ, թե նըհախ տիղ
Յարիտ մեշըն յար անին.
15 Ալիտարանըն կու տա
Խոնար մարթուն երանին:

Պատվական տեսնելու նուլարու նաջար.
Բըլբուլին գըծվեցնող թոփ վարթի սաջար.
Աշկիրուտ ունքիրըտ էլավ մուհաջար.
20 Թերթերուկիտ մաղըն՝ զար, օսկու զարնիշ:

Յիս կանչում իմ զայանին.
Նու [ու] Այիք զայ անին.
Դո՛ւն իս ասի՝ նըհախ տիղ
Յարի սիրտըն զայ անին.
25 Շա՛հն էր քաշի, չէր դիմա
էս իմ քաշած զայանին:

Հոտորտ աշխար բըռնից, Փըռա՛նգի մաջում,
Դաստամաղըտ դառաւ սիմ ու աբրեշում.
Կըռնիրըտ շիմշատ է, մատնիրըտ է մում.
30 Ծուցըտ բաղլա ունիս, մեշկըտ է դամիշ:

Յիս կանշում իմ մեռանին,
Ըսկըսպնական մերանին.
Թուղ դոստիրըն շատանան,
Թըշնամիքըն մեռանին.
35 Ասի, թե յիս քու ախպեր՝
Քու մերն ինձի մեր անին:

Բեմուրվաթ յա՛ր, խիլքըն գըլխես մի՛ տանի.
Դարդիրըս շատացաւ քա՛նի մե քանի.
Գիդիմ վուր, յա՛ր, դուն ինձ լայիղ շիս անի՝
40 Դուն մե թաքավուր իս, յիս մե խիղճ դավըիշ:

Յիս կանշում իմ մասանին.
Սե ու Այիբ մաս անին.
[Յիս քիզնից չիմ հիռանա,
Գուղե ինձ անմաս անին].
45 Սալաթ-Նովեն քու յարն է,
Թեգուղ մասնեմաս անին:

Դաստամաղըտ նըման սընբուլ սուսանի.
Վախում իմ, թե սերըտ սիրտըս կես անի.
Կու միռնիմ. էլ ինձի պես չիս տեսանի.
50 Քու Սալաթ-Նովեն իմ, մի՛ անի ղիմիշ:

Քրոնիկոնի 141-ին (1753), Արուրինի (ասած) ռուբայի-բայաթի-բասիթ-



- աստամազըտ սիմ ու շարբաբ, նամ շաղ էկած ոեհան է.
 Ունքիրըտ զալամով քաշած, էրեսըտ զարնըշան է.
 Ակըռքնիրըտ լալ ու մարքրիտ, ուանգիտ մարթ կու երանհ.
 Թաք յիս միռնիմ՝ դուն սաղ ըլիս, էշխըտ իմ գերեղման է.
 5 Նազիտ միռնիմ, նազ մի՛ անի. նազըտ ինձ կու սըպանհ:
 Վուր բըլբուլին վարթըն [խափե, աբա] խարին թամա՛մե.
 Ումնոր կանց միզի լավ սիրիս՝ աստված շարին թամա՛մե.
 Դիդարեստ կարոտ մընացի. էրկու տարին թա՛մամ է.
 Թաք յիս միռնիմ՝ դուն սաղ ըլիս, էշխըտ իմ գերեղման է.
 10 Նազիտ միռնիմ, նազ մի՛ անի. նազըտ ինձ կու սըպանհ:
 Թառամեցավ կարմիր վարթըն, բաղըն բըլբուլ չէ գալի,
 Սիրտըս յարալու շինեցիր, էրվում իմ մըրմընջալի.
 էշխեմեստ հիվանդացիլ իմ, պառկած իմ դըժար հալի.
 Թաք յիս միռնիմ՝ դուն սաղ ըլիս, էշխըտ իմ գերեղման է.
 15 Նազիտ միռնիմ, նազ մի՛ անի. նազըտ ինձ կու սըպանհ:
 Մեջլումի պես սարն իմ նընգի, կեյլումեն խաբար շունիմ.
 էշխեմեստ սիրտըս էրվում է, հովանալու ճար շունիմ.
 Աստված վըկա, աշխարումըս յիս քիզ ավել յար շունիմ.
 Թաք յիս միռնիմ՝ դուն սաղ ըլիս, էշխըտ իմ գերեղման է.
 20 Նազիտ միռնիմ, նազ մի՛ անի. նազըտ ինձ կու սըպանհ:
 Սալաթ-Նովեն ասաց՝ դա՛լում, աշկըս լալիս է արին.
 Հում կաթնա՛կիր՝ Աթա՛մի զաթ, նա՛լաթ քու էյթիբարին.
 Իղրարեմին շուտ անցկացար, ու՛ր է յարասուն տարին.
 Թաք յիս միռնիմ՝ դուն սաղ ըլիս, էշխըտ իմ գերեղման է.
 25 Նազիտ միռնիմ, նազ մի՛ անի. նազըտ ինձ կու սըպանհ:

Էսպես քասիբ-մուսալիփի հանգում, հինգ յարփալլի (տեհեալուր), քոնք-կոնի 442-ին (1754):

Էսպես Արուփինի ասած, մարտի 1-ին, քոնիկոնի 442-ին (1754):



իս ասում, թե լաց իս էլի.
Բա՛րով տեսա, ի՛մ սիրեկան.
Վարթի նըման բաց իս էլի
խարերով,
խարերով.
Բա՛րով տեսա, ի՛մ սիրեկան:

5 Ա՛րի, մե դարդըս իմացի,
էշխեմեստ հա՛ման իմ լացի.
Օրըս էսպես անց է կացի
դարերով,
դարերով.
Բա՛րով տեսա, ի՛մ սիրեկան:

Յի՛փ կու հաքնիս ալ ու ատլաս,
10 Տեսնողին կու շինիս մաս-մաս.
Դռշիտ պիտի լալ ու ալմաս
շարերով,
շարերով.
Բա՛րով տեսա, ի՛մ սիրեկան:

Յիս քիզ գովիմ խաղի մեշըն.
Շամամնիրըտ թաղի մեշըն.
15 Ման իս գալի բաղի մեշըն
շարերով,
շարերով.
Բա՛րով տեսա, ի՛մ սիրեկան:

Սալաթ-նովեն վո՞նց դընջանա.
Աչկիրըտ օսկե փընջան ա.

Դուշմանի լիզուն մընջանա
չարերով,
չարերով.

20 Բա՛րով տեսա. ի՛մ սիրեկան,

Էսպես թասլիք:



շխարումըս ասի չիմ քաշի, քանի վուր ջա՛ն իս ինձ ամա.
Անմահական ջըրով լիքըն օսիկ փընջան իս ինձ ամա.
Նըստիմ, վըրես շըվաք անիս՝ դարբաբ վըրան իս ինձ ամա.
Սուշս իմացի է՛նենց սպանե՛ սուլթան ու խան իս ինձ ամա:

- 5 Մեղկըտ սալբու-չինարի պես, ռանգըտ Փըռանդի ատլաս է,
Հիզուտ շաքար, պըռռշըտ դանդ, ակռեքըտ մարքրիտ ալմաս է.
Օսկու մեղըն մինա արած, աշկիրըտ, ակնակապ թաս է.
Պատվական անդին ջավահիր, լալ-Բադեշխան իս ինձ ամա:

- 3 իս էս դարդին վո՛ւնց դիմանամ, մակա՛մ սիրտըս ունիմ քարած,
10 Արաա՛սունքս արուն շինեցիր, խիլըն գըլիես ունիմ տարած,
Նուր բաղ իս, նուր բաղչի մեղըն՝ բոլորքըտ վարթով չափարած.
Վըրես շուռ գամ բըլբուլի պես՝ սիրով սեյրան իս ինձ ամա:

- Քու էշխըն ինձի մասս արավ. յիս դարթուն իմ, սիրտս է քընած.
Աշխարս աշխարով կըշտացալ, իմ սիրտըս քիզնից սով մընաց.
15 Յա՛ր, քիզ ինչո՛ւլ թարիլի անիմ՝ աշխարումըս բա՛ն չը մընաց.
Կրակի, ծովեմեն դուս էկած, ռաշ ու ջեյրան իս ինձ ամա:

- Ի՞նչ կուլի մեկ հիզըս խոսիս, թեվուր Սաջաթ-Նովու յար իս.
Շուխկըտ աշխարըս բըռնիլ է՝ արեգագի դեմըն փար իս.
Հուտով հիլ, միխակ, դարիչին, վարթ, մանուշակ, սուսանբար իս,
20 Կարմըրագուն՝ դաշտի ծաղիկ, հովտաց շուշան իս ինձ ամա:

Էսպես դազալի, դաստա բեղաստա քաբվաճուրի ձեռում, Արաթինի ասած:
Սրա հուտը դիմացն է:
Էսպես Արաթինի ասած, ովոր սովի, թաղուրյուն շնորհն:



- նձ սիրեցիր, էշխըն նընդար, խաղի դավթար իմ քիզ ամա.
 Մի՛ քաղի փըշի ծագիկըն՝ վարթ, սուսանբար իմ քիզ ամա.
 Զիմ թողնի արեգագումըն՝ բաղչի սաջար իմ քիզ ամա.
 Յիս քու մահըն վո՞ւնց կու խընդրիմ՝ նուղլ ու շաքար իմ քիզ ամա:
- 5 էլ քու բաղին մըտիկ արա, ուրիշ բաղեն վարթ չին տա քիզ.
 Աղ ու հացըն մի՛ դեն գըցի, շափթենըն մեկ մըտիկ տու միզ.
 Թեգուզ աշխարըս պըտուտ գաս՝ չիս տեսնի ինձի պես աղիզ.
 Թաք ուրիշ գողալ չըսիրիս՝ իղըարով յար իմ քիզ ամա:
- Թաք յիս մորես չէի ծընի. վա՛յ էն օրին՝ յիս քիզ տեհա.
 10 Դու բըլբուլ իս, յիս կյարմիր վարթ. չասիս, թե վարթըն ջալդ կեհա.
 Մե փուբըր էտենց դիմացի, շուտով Հընդըստան մի՛ էհա.
 Անգործիլ, անխարջ ու քըրիհ մանդիլի դար իմ քիզ ամա:
- Ա՛ստված վըկա, դիմիշ արած գըլուխըս քիզ մատաղ ըլի.
 Ե՛կ քիզիդ սիրով դամ անիմ, ով դուպե բեղամաղ ըլի.
 15 Յիս քու խոսկեն չիմ անց կենա, թաք քու դամաղըն չաղ ըլի.
 Թեգուզ անմահութին ուզիս, սիրով կու ճարիմ քիզ ամա:
- Քու դարդըն ինձի պառվեցուց. ու՞մըն ասիմ, Սա՛յաթ-Նուլա.
 Մի՛ գըցի ձեռնեմեն ձեռըն՝ օսկե թաս իմ, Սա՛յաթ-Նուլա.
 Փռանգըստանու միջեն էլած՝ դար ատլաս իմ, Սա՛յաթ-Նուլա.
 20 Մալե դավթարըտ, ղութին դի՛ ունգ ու ուրբար իմ քիզ ամա:

Ղազարի, էս Արուսիկը ու իր սիրեկանը որ խոսեց էին, էն է. սիրեկանն ասել է ուղղակի Սայաթ-Նովայի երեսին, բռնիկոնի 442-ին (1754):

էսպես ասել է մեկ հավատարիմ սիրեկանն, և մյուս երեսին՝ Սայաթ-Նովան. ապրիլի 1-ին, բռնիկոնի 442-ին (1754):



- չաբ քանի ժամանակ է, թաք գիդենամ տա՛րիտ, էրնեկ.
 Վո՛ւնց ուտիլ գուղե, վո՛ւնց խըմիլ՝ մողըտ նըստող յա՛րիտ էրնեկ.
 Բացվիլ իս կարմիր վարթի սեւ, փաթութ սուսանբա՛րիտ էրնեկ.
 Բըլբուլին լալով ման կոծիս գիշեր ցերեկ՝ խա՛րիտ էրնեկ:
- 5 Հուտըտ աշխարբս բըռնիլ է, բերնումտ ունիս զանջափիլըն.
 Կանց քիզ լալ հուտ չի ունենա Հընդու էկած դարանփիլըն.
 Գիշեր-ցերեկ զուքսիտ մեշն իս, ձեռիտ ունիս [հուտով հիլըն].
 Դիբշում է ալ պըռռոշնիրուտ, ունքիտ, սամանդա՛րիտ էրնեկ:
- Շատըն հասրաթետ կու միռնի, սըրտումըն կունենա զարուր.
 10 Ով չէ տեսի՝ մե՛կ ա՛լս կոնե, ով կու տեսնե՝ հաղար հարուր.
 Քու զաթըն քու նըման կու լի, կըշտիտ ունիս օսկե բարուր.
 Բալքա մեկ էլ դեղեն բերե՝ նըման բարեբա՛րիտ էրնեկ:
- Մե նաղըտ Արաբ անցկացալ, մե նաղըտ Հընդըստան զընաց,
 Մե նաղըտ Ղըրիմ անցկացալ, մե նաղըտ Դաղըստան զընաց,
 15 Մե նաղըտ Ուրումեկ կացալ, մեկըն Փըռանդըստան զընաց.
 Ով քու սուրաթըն տեսնում է, ասում է՝ թահա՛րիտ էրնեկ:
- Ա՛րի նըստի, Սա՛յաթ-Նովա, խոսիլաւ ասաւ լամդ ու բասով.
 Սազին խիլքըտ շըտանուլ տաս էտ խիալով, էտ հավասով.
 Ձեռիտ բըռնածըն բըրով է. ա՛ծա, խըմինք օսկե թասով.
 20 Շատ աջայիբ մեհմանդար իս, սուփրի սաղանդարիտ էրնեկ:

Էսպես Արուիքնի ասած, քոնիկոնի 443-ին (1755):



ն՞չ կոնիմ հեքիմըն, ի՞նչ կոնիմ ջարեն՝
Քու տըվածըն ուրիշ դիղ է, ո՛ւրիշ դիղ,
էրում է մըհլամըն, չէ լավնում յարեն.
Քու տըվածըն ուրիշ դիղ է, ո՛ւրիշ դիղ.
ուրիշ դիղ, ա՛ման, ո՛ւրիշ դիղ:

- 5 Ասաց քե. «Հիռա՛ցի գըլխեմես, գընա՛.
Քու ասածըն ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ.
էտ քու արարմունքսըն քիղի չի՞ մընա,
Քու ասածըն ուրիշ տիղ է, ուրի՛շ տիղ.
ուրիշ տիղ, ա՛ման, ո՛ւրիշ տիղ»:

- Ասի քե. «էշխեմետ չի՛մ հանքչում տանըս,
10 Ձեռներըս թուլացալ՝ չէ շինում բանըս,
էրվեցալ ջիգարըս, մաշվեցալ ջանըս.
Քու տըվածըն ուրիշ դիղ է, ո՛ւրիշ դիղ.
ուրիշ դիղ, ա՛ման, ո՛ւրիշ դիղ»:

- Ասաց. «Իմ դիղեմեն քիղ չըկա չարա,
Գընա՛, թե խիլք ունիս՝ գըլխիտ ճար արա,
15 Թե չէ անիլ կու տամ քիղ փարա-փարա.
Քու ասածըն ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ.
ուրիշ տիղ, ա՛ման, ո՛ւրիշ տիղ»:

- Յիս բըլբուլ իմ, վարթըս մընաց խարումըն.
Կըրակ գըրիր սըրտիս խուցի յարումըն.
Վո՛ւնց գըրանքումըն կա, վո՛ւնց դավթարումըն.
20 Քու տըվածըն ուրիշ դիղ է, ո՛ւրիշ դիղ.
ուրիշ դիղ, ա՛ման, ո՛ւրիշ դիղ:

Ասաց քե. «Քի զարար շինեցիր շահըտ.
Կըտրեցիր ադաբըտ, կըտրեցիր ահըտ.
Մի՛ վիթի արունըտ, մի՛ շանց տա մահըտ.
Քու ասածըն ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ.
ուրիշ տիղ, ա՛ման, ո՛ւրիշ տիղ»:

25 Ասի քե. «Մաղիրըտ սիրմա իս անում,
Հենց գիղիս՝ չի՞մ գիղի, յա՛ր, չի՞մ իմանում.
Սերըտ ինձ մահ դառալ՝ էլ չի՞մ դիմանում.
Քու տըվածըն ուրիշ գիղ է, ո՛ւրիշ գիղ.
ուրիշ գիղ, ա՛ման, ո՛ւրիշ գիղ»:

«Թաքավուրի թագի լայիղ քարըն իմ,
30 Շիրինի պես Փահրադի դիդարըն իմ,
Յիս է՛ն գըլխեն Սալաթ-Նուլու յարըն իմ.
Քու ասածըն ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ.
ուրիշ տիղ, ա՛ման, ո՛ւրիշ տիղ»:

Հիդըս խո՛սի, մի՛ կենա խըռովի պես.
Տալղա տըվիր՝ գեմիս տարար ծովի պես.
35 Կու միռնիմ. չիս տեսնի Սալաթ-Նուլի պես.
Քու տըվածըն ուրիշ գիղ է, ո՛ւրիշ գիղ.
ուրիշ գիղ, ա՛ման, ո՛ւրիշ գիղ:

Էսպես շիրվանի ճանգում, որ ասում է Յալաւամզյան. Արութի՛նն ու իր սիրե-
կանն ասում են իրար:
Սեպտեմբերի 3-ին, Բոնիկոնի 444-ին (1756):



եջլումի պես կորավ յարբս,
լե՛յլի ջան, ման իմ գալի
յա՛նա-յանա.

էրվեցավ խունի ջիգարբս,
Արնի պես աչկս է լալի.
յա՛նա-յանա, յա՛նա-յանա:

5 Բըլբուլի նըման լացիլ իմ,
Աչկիրբս արնով թացիլ իմ,
էշխեմետ հիվանդացիլ իմ.
Պառկած իմ դըժար հալի.
յա՛նա-յանա, յա՛նա-յանա:

էշխեմետ դառիլ իմ յիզիդ,
10 Հալվեցա, մաշվեցա քիզիդ,
Ռա՛հմ արա, մե խո՛սե միզիդ.
Բեմո՛ւրվաթ, ձեն իմ տալի.
յա՛նա-յանա, յա՛նա-յանա:

էրվում իմ, կանչում իմ ա՛ման.
Ծոցըտ բաղ, ունքիրըտ քաման.
15 Աշխարիս մեշըն քիզ նըման
Չիմ տեսած, ման իմ գալի
յա՛նա-յանա, յա՛նա-յանա:

Մանուշակ բաց արած հովին,
Կարմիր վարթ, ծա՛ղիկ հուտովին,
Շատ մի՛ լացնի Սայաթ-Նովին,
20 Ա՛չկի լուս, կըսկըծալի.
յա՛նա-յանա, յա՛նա-յանա:



- շխեմենն էնպես վառվիլ իմ.
Վունց Մեջլում՝ յա՛ր իմ ասում
էնտիղե՛մենն,
Գողալի տիսուն կարոտ իմ՝
Հի՛դ քաշվի սա՛ր իմ ասում,
էնտիղե՛մենն, էնտիղե՛մենն:
- 5 Ղուրբան իմ ծոցիտ նըռանըն,
Հոքիս տամ շիմշատ կըռանըն,
Թաք պառկիմ յարի դըռանըն.
Գըլխոքըս քար իմ ասում,
էնտիղե՛մենն, էնտիղե՛մենն:
- Հաքիլ իս ատլաս խասեմենն,
10 Խըմեցուր ձիռիտ թասեմենն,
Համաշա էշխիտ բասեմենն
էրվում իմ, ճա՛ր իմ ասում,
էնտիղե՛մենն, էնտիղե՛մենն:
- Բաղ կու սիրիմ, յիս բաղման չիմ,
Բաղի տիրուչըն ճանանչ իմ,
15 Բըլբուլ իմ, սիրով վա՛րթ կանչիմ.
Հի՛դ քաշվի, իսա՛ր իմ ասում,
էնտիղե՛մենն, էնտիղե՛մենն:
- Մեջլիսներու խաղըն դուն իս,
Վանքերումըն տաղըն դուն իս,
Սայաթ-Նովու բաղըն դուն իս.
20 Կարոտ իմ, բա՛ր իմ ասում,
էնտիղե՛մենն, էնտիղե՛մենն:

Էս երկու խաղերն էն ձենով՝ Ռիբովն նստած է վարքին լավ կանչեւ և
վարքի համա, Արուրիին ասած, ապրիլի 5-ին քոնիկոնի 445-ին (1757):



30

անի վուր ջան իմ,
Յա՛ր, քի դուրբան իմ.

Աբա ի՞նչ անիմ.

Արտասուներ անիմ,

5 Շատ հոքուց հանիմ,

Յա՛ր, դադետ տանիմ:

Ասի՛ր՝ ջեյրան իմ,

Թուղ քի սե՛յր անիմ.

Յա՛ր, մըտիկ անիմ,

10 Մո՛ւտ բաղչեն նաղով,

Քիզ գովիմ սաղով,

Յա՛ր, իլթիմաղով:

Մազիրըտ դաստա,

Պըռոշըտ փըստա,

15 Հեյրանի վախտ է.

Եկ նընգնինք շուրն,

Վուր հասնինք գուրն.

Ջեյրանի վախտ է:

Բըլբուլըն վարթին,

20 Վարթըն բաղաթին.

Սեյրանի վախտ է:

Մո՛ւտ բաղչեն նաղով,

Քիզ գովիմ սաղով,

Յա՛ր, իլթիմաղով:

25 Շուռ գանք համդամով.

Յիրգնային նամով

Թուփըն թացվիլ է:

Խաղ կանչինք հանգով,
լալեքըն ունգով,
30 Վարթըն բացվիլ է.
Սուսան-սըմբուլով,
Ղարիբ բըլբուլով
Բաղըն լըցվիլ է:

Մո՛ւտ բաղչեն նազով,
35 Քիզ գովիմ սազով,
Յա՛ր, իլթիմազով:

Պատվական շինած,
Նըման նըմանած
Լեյլու դիզարին.
40 Յա՛ր, ուշկըս գընաց,
Մազիրըտ մընաց
Վրա մուհաջարին:
Բաղըն զարթարած,
Բըլբուլըն քընած
45 Վարթի սաջարին:

Մո՛ւտ բաղչեն նազով,
Քիզ գովիմ սազով,
Յա՛ր, իլթիմազով:

Հաքիլ իս աուլաս,
50 Թուրլու դար ու խաս.
Սալբու դալ րուլուն.
Ձեռիտ ունիս թաս,
Լըցնիս ու ինձ տաս.
Ղուրբան իմ քովուն:
55 Թաք դու բաղչեն դաս.
Անիս մասնե մաս
Քու Սալաթ-նուլուն:
Մո՛ւտ բաղչեն նազով,
Քիզ գովիմ սազով,
Յա՛ր, իլթիմազով:

Էսպես Արուրիների ասած, Թասիրն շինի նույն հանգով, մայիսի 2-ին, Բռնի-կոնի 445-ին (1757):



- ունցոր վուր զարիբ բըլբուլըն մե տարով բաղին կարոտ է,
էնենց գու լա քու սիրողըն՝ ձեռիտ արաղին կարոտ է.
Դուն ուրիշի հիդ մի՛ խոսի, քու ճուրտըն աղին կարոտ է.
Հասիլ է ծուցիտ շամամըն՝ օսկե թաբաղին կարոտ է:
- 5 Մե զադ չըկա՝ գո՛ւման ածիմ, ասիմ, է՛ն նըման է գունքըտ,
Անդալամ, անվարնիշ քաշած օսկու պես է փայլում ունքըտ.
Բոյեմետ շուրս մատն ավելի, լըցվիլ է դոշտ ու թիկունքըտ.
Զարով, աբբեշումով հուսած մազիրըտ շաղին կարոտ է:
- Դուն խոմ էն գըլխեն գոված իս, յիս քիզ նույմեկ գով իմ արի
10 Ծուցըտ վարաղնած հուջրա է, հոտ ունե մուշկ ու ամբարի.
Իրեք հարուր վացուն ու վից՝ ամեն անդամըտ զարարի.
Կուռըտ շիմշատ, մատնիրըտ մում՝ բըրուլե ճաղին կարոտ է:
- Յիս էլ ուրիշ յար չիմ սիրի, աշխարումըս դո՛ւն իս իմըն.
Թե մե շափաթ քիզ չիմ տեսնի, կու կըտրիմ բամանչի սիմըն.
15 Թեգուզ թաքավուրըն կանչե, թեգուզ Լողմայի հեքիմըն՝
Վո՛ւր մե դարդըս կու հասկանան՝ դուգունըս դաղին կարոտ է:
- Գիշիր-ցերեկ ման իմ գալի էշխետ յա՛նա-չանա, գո՛ղալ,
Անգաճ արա, մա՛տաղ իմ քիզ, մե քիչ կա՛մաց գընա, գո՛ղալ.
Աշխարըս ո՛ւմն է մընացի, վուր ինձ ու քիզ մընա, գո՛ղալ,
20 Մակամ միռա՛վ Սայաթ-Նովեն՝ անգաճըտ խաղին կարոտ է:

էսպես Դիրա ու Ենգիդունիայի հանգում, որ մուսադասու (պես) կասեն, Արու-
քինի ասած, քունիկունի 446-ին (1758):



- ե խոսակ ունիմ իլթիմաղով, անգաճ արա, ո՞վ աչկի լուս։
Սըրտումըս ինթիղար ունիմ, քու տիսըն բարով, ա՛չկի լուս,
Աջաբ քիզ ի՞նչ դեթ իմ արի՝ կենում իս խըռով, ա՛չկի լուս։
Աշխարս աշխարով կըշտացալ, յիս քիզանից՝ սով, ա՛չկի լուս։
- 5 Մակամ օշով յար չէ սիրի՞, էս ի՞նչ արիր, էս ի՞նչ բան ա.
էշխեմետ ջունուն իմ էլի, ման իմ գալի յանա-յանա.
էս դարդեն օշով չըքաշե, վուր մե դանգին չի դիմանա.
Սիրտըս լուրի պես խորվեցիր էշխա կըրակով, ա՛չկի լուս։
- Դոստիրըս դուշման շինեցիր, յադերուն ի՞նչպես դոստ անիմ.
10 Անցկացած օրըն չիմ տեսնում, քանի դուզե վուր դաստ անիմ.
Ա՛ստված վըկա, խիստ դըժար է, գըլուխըս ի՞նչպես դուս տանիմ.
Յիս մե փուքըր նավի նըման, քու էշխըն է՝ ծով, ա՛չկի լուս։
- Դուզիմ բերանըս բաց անիմ, գովքըս ասիմ թարիփի պես.
Տաս տարի է ման իմ գալիս փաղիշահի շարիփի պես.
15 Օխտըն տարի էլ ման դու քամ սաղըն ձեռիս Ղարիբի պես.
Բութա Շահսանամըս դուն իս, էլ չունիմ օշով, ա՛չկի լուս։
- Թեգուզ հազար դարդ ունենամ, յիս սըրտումըս ա՛հ չիմ ասի.
Իմ հուրմի-հեքիմըն դուն իս, յիս էլ ուրիշ շահ չիմ ասի.
Սալաթ-նովեն ասաց՝ դա՛լում, յիս էն մահին մահ չիմ ասի.
20 Հենչաք ըլի՝ դո՛ւն վըրես լաս մազըս շաղ տալով, ա՛չկի լուս։

էս էլ էն հանգով, Արուրիկի (ասած), Բռնիկոնի 446-ին (1758)։



նգին ակըն վըրետ շարած, անբան օսկու ուխտ իս, գո՛ղալ,
Աստված քիզ ու նըրան պահե, ում հիդ վուր նըվախտ իս, գո՛ղալ.
Բըլբուլին լիզու շինեցիր՝ դուն վարթի դըրախտ իս, գո՛ղալ,
Վարթըն մե ամիս ումըր ունե՝ դուն ամենան վախտ իս, գո՛ղալ:

5 Մեմեկ մեմեկ էլ չի ասվի՝ թարիփըտ դառաւ քուլիչով.

Պատկիրըտ դարով, զարբաբով, դոշամետ՝ խալով, խալիչով,
Տախտակնիրըն՝ էրծաթեմեն, միխիրըն՝ օսկե գուլիչով.

Խոսքով փաշայեմեն թողած, դուն Թովուլի թախտ իս, գո՛ղալ:

Սկանդարի Զուլդարի թողած ջաւահիր իս, անգին լալ իս.

10 Դանգըն դանգի միչեն հանած, հիդքաշած մըսխալ մըսխալ իս.

Յիփ դուն սեյրանգահըն կեհաս, օշով այնումըտ չէ գալիս,
Փաք չունիս փաշադադիմեն, անդամ, առանց սախտ իս, գո՛ղալ:

Թեգուզ մըտոք ճարտար ըլի, կանց Սողոմոն դադա ըլի,

Թեգուզ մարքարիտով լիքըն, թեգուզ սադափ սադա ըլի,

15 Թեգուզ՝ արեգագ, լուսնիակ, թեգուզ հուրիզադա ըլի,
էտ քու ամեն մարիփաթով դիփունին կու ախտիս, գո՛ղալ:

Յիրգնուց վըրետ ձուն է էկի՝ փունջ մանուշակ նուր իս, ջա՛նում.

Մողըտ նըստողըն կու էրվի՝ էտ նազի տեր վուր իս, ջա՛նում.

Դիւ Սայաթ-Նովեն չէ միռի՝ դուն ինչի՞ տըխուր իս, ջա՛նում.

20 Թաք յիս միռնիմ, դուն սաղ ըլիս, գերեզմանըս վաղ տիս, գո՛ղալ:

Էս էլ էն Դիբայի հանգում, Արուքինի ասած:

Աստված բողոքյաւ շնորհն սիրեկաւ եւ սպանած Արուքին Սայաթ-Նովին,
Բռնիկոնի 446-ին (1758):



ամամ աշխար պըտուտ էկա, չըթողի Հաբաշ, նազա՛նի.
Չըտեսա քու դիդարի պես՝ դուն դիպունեն բաշ, նազա՛նի.
Թե խամ հաքնիս, թե դար հաքնիս, կու շինիս դումաշ, նազա՛նի.
էնդու համա քու տեսնողըն ասում է վա՛շ, վա՛շ, նազա՛նի:

5 Դուն պատվական ջաւահիր իս, է՛րնեկ քու առնողին ըլի.
Ով կու գըթնե, ա՛լս չի քաշի, վա՛յ քու կորցընողին ըլի.
Ափսուս վուր շուտով միռիլ է, լուսըն քու ծընողին ըլի.
Ապրիլ էր, մեկ էլ էր բերի քիզի պես նազաշ, նազանի:

Դուն է՛ն գըլխեն ջուհարդար իս, վըրետ դարնըշան է քաշած.
10 Դաստամաղիտ թիլի մեչըն մե շադա մարջան է քաշած.
Աչկիրըտ օսկե փիալա՝ չարխեմեն փընջան է քաշած.
Թերթերուկըտ նիտ ու նաշտար, սուր դաւամթըրաշ, նազա՛նի:

էրեսըտ՝ փարսեվար ասիմ, նըման է շամշ ու դամարին.
Բարակ միշկիտ թիրման շալըն նըման է օսկե քամարին.
15 Ղալամըն ձեռին չէ կանգնում, մաթ շինեցիր նազաշքարին.
Յիփ նըստում իս՝ թութի դուշ իս, յիփ կանգնում իս՝ ուաշ, նազա՛նի:

Յիս էն Սայաթ-Նովասին չիմ, վուր ավդի վըրա հիմանամ.
Աջաբ, միզիդ ի՞նչ իս կամում, սըրտետ մե խաբար իմանամ.
Դուն կըրակ, հաքածըտ կըրակ, վո՛ւր մե կըրակին դիմանամ.
20 Հընդու դաւամքարու վըրեն ծածկիլ իս մարմաշ, նազա՛նի:

Էս էլ Դիրա ու Էնգիդունիայի հանգում, որն որ մուսաղթսու պէս կասեն,
Արոփինի (ասած), քոնիկունի 446-ին (1758):



- ողըտ նըստողըն կու հարփի՝ դուն բանգ ու բողա իս, ա՛ղիզ.
Դիվանա Փահլուկ կու շինիս տեսնողին՝ աղա իս, ա՛ղիզ.
Ինչ տեղ կուլիս շընուք կու տաս՝ մեջլիսի մազա իս, ա՛ղիզ.
Մազեն մե սահաթ լավ կուլի, դուն համան թաղա իս, ա՛ղիզ:
- 5 Մե խոսկըտ կանց շաքար քաղցըր, մե խոսկըտ վառ՝ քուրա-քուրա.
Մե նըմանըտ ռաշի նըման, մե նըմանըտ՝ ջուրա-ջուրա.
Մարքարիտով լիքըն կալ իս, սադափնիըտ թուրա-թուրա.
էրծաթե կոխպեքով կոխպած, դուն, օսկե ռաղա իս, ա՛ղիզ:
- էրեսըտ առվուտովան արիւ՛ժ քանի կեհա կու դարգանա.
10 Թաքավուրի քարխանի դար՝ ծառըն ծառեն չի թարգանա.
Թե սուշ ունենամ սըպանե, թե չէ նըհախ մի՛ բարգանա.
Մե ձեռըտ ջուր, մե ձեռտ արուն՝ ջալլաթի ջաղա իս, ա՛ղիզ:
- Տեսնողըն նաղշըտ կու տընդդե էն թովուղի բըմբուլի պես.
Ձընի տակեն նուր դուս էկած, արիւ՛ժ դիբած սըմբուլի պես.
15 Թուղ վըրես լալով պըտուտ գամ, վարթի կարոտ բըլբուլի պես.
Դուն ինձնից շուտով մի՛ թըռչի՝ շավարդան-բաղա իս, ա՛ղիզ:
- էշխեմեսո հիվանդացիլ իմ. վո՛ւնց դարար, վո՛ւնց շահ ին ասում.
Հեքիմնիրըս ափսոսում ին՝ ծընգան տալով վա՛յ ին ասում.
Կանչողըս դարդակ է գընում. «Ա՛խ, Սա՛յաթ-Նովա» ին ասում.
20 Թաք դուն սփս գաս, վիր կու կենամ. թե սաղիս սաղա իս, ա՛ղիզ:

Էսսվես Արուսիմի ասած, Բոնիկոնի 446-ին (1758)



րի համով զո՛ւլուղ արա, խալխի նոքար Սա՛յաթ-Նովա.
Ամեն մարթ չի կանս ճանգի շահ ու շրքար, Սա՛յաթ-Նովա.
Ով քիզի լիղի պարքիվե, դուն տու շաքար, Սա՛յաթ-Նովա.
Ղաստ արա՝ շուշետ չըկոտրին, չըխըփին քար, Սա՛յաթ-Նովա:

5 Թեգուղ դըբրատանըն պահ տաս՝ ծեծով չի խըրատվի խիվըն.
Ինչու անձնեն չըդուս էհա անախտիլի էն չար դիվըն.
Բեդասըն ասըլ չի՛ դառնա, թուլով չի՛ սիպտակի սիվըն,
Ծուռըն փետըն չի՛ դըրըստի ոանդան, դո՛ւրգար Սայաթ-Նովա:

Թեգուղ իմանաս, գիդենաս աստղերու համբարքըն սիրուն.
10 Անբարի գուրծըն կորած է՝ կարթա Հարանց վարքըն սիրուն.
Ավիտարանի խոսկիրըն մարքարիս է, կարքըն՝ սիրուն.
Մի՛ ածի խուղի առչիվըն լալ ու գովհար, Սա՛յաթ-Նովա:

Թե էս կենաց փառքըն չուղիս՝ էն կենաց ալմասըն կու տան.
Թե հոքուտ խաթիր շալ հաքնիս՝ զար քաշած ատլասըն կու տան.
15 Թեվուտ լալով զըխճում անիս՝ անմահացըն մասըն կու տան.
Խոստովանիս արած միխկըտ՝ չանիս ինքար, Սա՛յաթ-Նովա:

Վուրտիղ հարսնիք, վուրտիղըն սուր, վուրտիղ սոյբաթ խաղ է ըլում.
Վուրտիղ ժամ, վուրտիղ պատարաք, վուրտիղ սիրով տաղ է ըլում.
Թեվուր հոքուտ կամքն իս անում, մարմինտ բեդամաղ է ըլում.
20 Վո՛ւր մե դարդին կու դիմանաս, դուն ջըրա՛տար Սայաթ-Նովա:

Էսպես Արցախի ասած. Բոնիկոնի 446-ին (1758):



Հիսեմեստ հիվանդացիլ իմ, դիդի համա իմ լալի.
Վախում իմ, թե դարդըն հալե, յիդի համա իմ լալի.
Շահի կարբած վեքիլի պես դիդի համա իմ լալի.
Տանենն դուս արածի նըման տիդի համա իմ լալի:

5 Մե տիդ հուքմի-հեքիմ չըկա՝ դուռըն էհամ, կանչիմ հարա.
Վի կենա կողմայի հեքիմըն, բալբամ դարդիս անե շարա.
Տիս, թե ի՞նչպես է շըփոթվի, դուն իմ խի՞քին մըտիկ արա.
Ջուրն էկավ գերանըս տարավ, ծիդի համա իմ լալի:

Սիրտըս էշիսեմեն էրած է, դուգունըն դադըն ի՞նչ կոնիմ.

10 Վո՞ւնց դոբա ունե, վո՞ւնց շափար, յիս էնպես բադըն ի՞նչ կոնիմ-
Անդի լարըն կըտըրվիլ է, դարդակ սաղադըն ի՞նչ կոնիմ.
Նիտըս քարումըն կոտրեցի, թիդի համա իմ լալի:

Ղալամըն գիրըս չէ գըրում՝ մե չուրացած թանքի նըման.
Խոսկիրըս մեմեկ չի ասվի՝ իմաստնեքու բանքի նըման.

15 Մեչըն չիմ կանացի մըտնի, ծովի ծածկած վանքի նըման.
Խոստովնահեքըս հիւացավ, միդի համա իմ լալի:

Գիղումըն՝ մելիր-տանուտեր, քաղաք տիդըն՝ սուլթան-խան իս-
բաղումըն՝ վարթ ու մանուշակ, սարումըն՝ սըմբուլ-սուսան իս-
Ղաբուլ ունե Սալաթ-Նովեն՝ թաք քու ձեռով դուն սըպանիս.

20 Միոնեկուս համա չիմ հոբում, ցիդի համա իմ լալի:

Էսպես Արուրիկի ասած, Բոնիկոնի 446-ին (1758):



- լմեցուր ձեռիտ թասեմեն,
Ջո՛ւր իմ ասում, [տո՛ւր քասեմեն]։
[Մըն]ացի սրկու մասեմեն.
Ա՛շկի լուս, ջո՛ւր իմ ասի,
5 [Հուր չիմ ասի, հուր] չիմ ասի,
Թուր չիմ [ասի], տուր չիմ ասի։

- Գո՛ղալ, Աստված քիզի լալ տա,
Չուզողի աշկերուն ցալ տա.
Անգալի խոսկին մի՛ ավտա.
10 Ա՛շկի լուս, [զ]ո՛ւր իմ ասի,
[Ս]ուր չիմ ասի, սուր չիմ ասի.
Ջու[ր] իմ ասի, սուր չիմ ասի։

- Ուլ քիզի այան մըտիկ տա,
Աբելին Կայան մըտիկ տա.
15 Ինչ աշկ քիզ խայան մըտիկ տա,
Ջա՛նում յար, կո՛ւր իմ ասի.
Նուր չիմ ասի, նու[ր] չիմ ասի],
[Կուր իմ ասի, նուր չիմ ասի]։

- Ուոռ ինձ շինից դիվանա՝
20 Սուրբ Կարապիտեն խիվանա.
Վազի Լրեսըն սիվանա.
Ա՛շկի լուս, մո՛ւր իմ ասի.
Չուռ չիմ ասի, [չուռ չիմ ասի,
Մուր իմ ասի, շուռ չիմ ասի]։

- 25 էշխեմետ խըմած, մաստ էկած,
Գըլուխըս մահին ոաստ էկած.
Սալաթ-Նովենն իմ^ս տիստ էկած.
Ա՛շկի լուս, ո՞ւր իմ ասի,
Սուր չիմ ասի, սուր չիմ ասի,
30 Տուր չիմ ասի, [սուր չիմ ասի]:

Էսպես քասիբ, Արուրինի ասած, մալիսի 10-ին, ֆռեիկոնի 446-ին (1758):



նդուր աշկըս չէ ցամաքում՝ սըրտիս մեշըն արին մընաց.
 Վունչիչ դարով չըլաւացալ՝ մըհլամըս հիդ յարին մընաց.
 էշխեմեն հիւանդ պառկեցա, աշկըս ճանապարին մընաց.
 Յիփ միռա՝ իժում տիս էկալ՝ նաղըն բեիդրարին մընաց:

5 Գարունքւան վախտըն լըցւիլ է, էրա՞նի ձիզ ծաղկած վարիւր,
 Թե բըլբուլին բաղն դըրգեցիք, մանուշակով լիքըն սարիւր,
 Բաս ինչի՞ ձենըն չէ գալիս, սա՛լբու-չինար, էտ ի՞նչ արիւր,
 Ճուխկըս բըլբուլին սըպանից՝ կարմիր վարթըն խարին մընաց:

Ալ պուճպուճեն ասաց խափե սարումըն դարիբ բըլբուլին.
 10 Յիփ բըլբուլըն միտըն ածալ՝ ռեհնուլ կըպած թայիդուլին.
 Ով վաղ գընաց, վարթըն քաղից, չասին, թե պետկ է բըլբուլին,
 Վա՛յ քու դարին, դա՛րիբ բըլբուլ, վուր լեշըտ չափարին մընաց:

Խոսկիրըտ քաղցըր քաղցըր է, լիզուտ շաքար ու նաբաթ է,
 Խըմողին վընաս չի անի՝ ձեռիտ բըռնածըն շաքաթ է.
 15 Շաքաթըն օխտն օր ին ասի՝ քու հաքածըն նուր բաքաթ է.
 Հաքիլ իս բեհեզ ծիրանին՝ ծալած դաւամբարին մընաց:

Աշուդի լիզուն բըլբուլ է, օրհնանք ունե, նալաթ չըկա.
 Շահի մոդ խոսկն անց կու կենա, սըպանելու ջալլաթ չըկա.
 Հեքիմ ու դադաստան չըկա, մե դըրուստ ադալաթ չըկա.
 20 Մե մարթ չըկեր՝ ադատիլ էր, Սայաթ-Նուլեն դարին մընաց:

Էս էլ Դիբա ու Ենգիդունիայի ձեռում, Արուսիքի ասած է, հունիսի սկզբի՛ն,
 Բռնիկունի 446-իւն (1758):



Հիւսմեաւ անդանակ էլա, եկ մո՞րթե՝ ջալլաթըն դուն իս.
 Մի՛ սըպանի հասարաթեմետ՝ սըրտիս խըջալաթըն դուն իս.
 Թաքավուրի քարխանեմեն դուս էկած խալաթըն դուն իս.
 Հինդ ու Հաբաշ, Արաբըստան, Խորասնու Քալաթըն դուն իս:

5 Բարդ էրեսըտ՝ կըրակ նընդած օսկու նըման ջիռանում է,
 էնդու համա քու տեսնողի խիլքըն գըլխեն հիռանում է.
 Ով չէ տեսի, տիստ է ուղում, ով տեսնում է՝ միռանում է.
 Օսկե վարաղով վարաղնած սուրաթ-մաքաղաթըն դուն իս:

Շատըն քու էշխեն կու միռնի, չի դիմանա ինթիզարի.

10 Տարենըն մե դամ բաց կուլիս, մաթահ Շահրադել բաղարի.
 էրնեկ ըլի քու տիրուշըն՝ մըտիկ տալեն չի բեղարի.
 Ամառն ու ձըմիռըն ծաղկած գուլբաղ ու բաղաթըն դուն իս:

Մուղդ ունե էն նաղըշքարըն՝ վուր թահրըդ զալամով հանա,
 Ճակտես ունըրտ չի կանա դա, քանի գուղե վուր շատ ջանա,

15 էնդու համա ծարալ մարթըն քու ջըրեմեն չի կըշտանա.
 Շիրաղու շուշումըն ածած՝ նաբաթե շարբաթըն դուն իս:

Է՛րնեկ մողըտ նըստող յարին, վուր քիղի պես համգամ ունե.
 Խայան յարին չէ ռաստ էկի, քիղանից խաթըրջամ ունե.

Սայաթ-Նովան, վուր քիղ ունե, աշխարումըս ի՞նչ զամ ունե.

20 Խաթաբանդով չարա-չարդախ, քոշկ ու ամարաթըն դուն իս:

Էս էլ Դիբա ու Ենգիդունիայի հաճգում. Արուրիհի ասած, սեպտեմբերի 6-ին,
 Բոնիկոնի 446-ին (1758):



- ա՛ր, քիզ իսկի զաւլալ չըլի՝ քու դուշմենին՝ շառ բացարած.
 Հուարտ աշխարհս բըռնիլ է՝ բալասանի ծառ բացարած.
 Թըխտիրըտ օսկե վարադուլ Ասմավուր իս՝ ճառ բացարած.
 Տեսնողըն շարքըն չի դիդի, Լուսնի ասդ պայծառ բացարած:
- 5 Ամեն մարթ չի կարա մըտնի՝ էշխիտ ջուրըն հիդ է, զա՛լում.
 Մըտնում է յարստուն կարմունջըն՝ շասիս, թե մե՛ գիդ է, զա՛լում.
 Ունքիրըտ սալիդ սաղախ է, թերթերուկըտ նիտ է, զա՛լում.
 Մըտնողըն էլ չի դուս էհա՛ դուս, մահու պատճառ, բացարած:
- Բարակ մեշկըտ զարդուզամիշ, էրեսըտ թաշգուլի նըման.
 10 Օրըն յարստուն ռանգ կու փոխիս, վո՛ւնց մեկը չէ տուլի նըման.
 Յիփ խաղում իս՝ վըրվըռում իս օցի բերնի հուլի նըման.
 Մութըն աիդըն լուս իս տալի առանց կըրակ՝ վառ բացարած:
- Բարովողին բարուլ չիս տա՝ թարավուրի սալամի պես.
 Ձեռնիրըտ՝ սխալտակ մաքաղաթ, լիզուտ օսկե զալամի պես.
 15 Զարուզարբաբե դըրոշա՛ ման իս գալիս ալամի պես.
 Տեսնողըն էնպես կիմանա՝ շահ իս գալիս՝ ջառ բացարած:
- Յա՛ր, քիզանից հիռանալըս միռնեկուս վըրա գըժար ա.
 Լիզուտ քաղցըր, խոսկըտ քաղցըր, ալըռքնիրըտ անգին բար ա.
 Իրեք քըսան ու առա խալըն էրեսիտ բոլորքըն շար ա,
 20 Վունցոր Սալաթ-նովու լիզուն յոթանասուն բառ բացարած:

Էս էլ Դիբա ու Էնգիդունիայի հանգում, Արուքիեի ասած, հոկտեմբերի 9-ին,
 Բոնիկունի 446-ին (1758):



նձ ու իմ սիրեկան յարին մե տարի բերած զիդենաք.
Այս քաշելեն սըրտիս մեշըն արունըն մերած զիդենաք.
Գիշեր-ցերեկ յարի խաթրու ջիգարըս էրած զիդենաք.
Աշկըս թաց, բերանըս ցամաք, լիզուս հիդերած զիդենաք:

- 5 Սիրտըս փուրումըս թուլացավ անդալներու զալս անելեն,
Ուշկ ու միտկըս խառնվեցավ խուռըն-խուռըն խաղ հանելեն,
Աշկեմես ջուհարըն գընաց յարեն կարոտ ա՛յս անելեն.
էլ ապրելու ումիկ չունիմ, իմ օրըս կերած զիդենաք:

- էրած-խորված ման իմ գալիս, մե տիղ չըկա մար ունենամ.
10 Լիզվով չիմ կանացի ասի, թեգուղ խոսկըս փար ունենամ.
Ափսուսալու հաղար ափսուս, յիս էս զաղա դար ունենամ
էշխեն ուշկ ու միտկըս կապած, ինձ ջըրի տարած զիդենաք:

- Սիրտըս փուրումըս սըքուր է, ալ աշկիրըս լաց է անում.
Ծովըն նընգած ամբի նըման դոշս ու յախես թաց է անում.
15 Քանի վուր մըհլամ իմ գընում, դուգունս էլ խիստ բաց է անում.
Հավեցա, արնաքամ էլա՝ յարես հիդարած զիդենաք:



- Ով տեսնում է, էս է ասում. «Վա՛յ քու դարին, Սա՛յաթ-Նովա,
Համաշա քիզ պիտինք տեսնի՝ աշկըտ արի՞ն, Սա՛յաթ-Նովա,
Ինչո՞վ չէլավ, չըռաստ էկաք մե լավ յարին, Սա՛յաթ-Նովա».
20 Ումբըրս էրազի պես գընաց՝ ծառըս չըխերած զիդենաք:

էս էլ Դիբա ու ենգիզուհիայի ձևում, հաճեց ղազալի: Արուրիքի ասած, Բռ-
նիկոնի 447-ից (1759):



ջաբ քու սիրտըն ո՞վ շինից՝ խոնարից, հիզնից բեղամաղ.
Քանի գուղե մարթ վուր հարսի, վո՞ւնց կուլի վազնից բեղամաղ.
Յա՛ր, յիս քիզ ի՞նչ գեթ իմ արի՝ նըստած իս միզնից բեղամաղ.
Քամեցիր էշխիտ մանգանով. յի՛ս պիտիմ քիզնից բեղամաղ:

5 Ինչ քիզանից հիռացիլ իմ, իմ ջանումըս ջան չէ մըտի.
Ուշկ ու միտլըս դուն իս տարի, ձեռիս մեշըն բան չէ մըտի.
Հենց գիդիմ, թե չուրս տարի է Քաղաքըն քարվան չէ մըտի.
Ռախտարի նըման նըստած իմ՝ իջարից, միզնից բեղամաղ:

Հալբաթ սերըն կես է էլի, վուր միզի ատիլ է ուզում.

10 Չուրս տարեկան էրեխի պես՝ յարըս խըրատիլ է ուզում.
Բըռնիլ է էշխի դանակըն, սիրտըս կըտրատիլ է ուզում.
Շատ մարթ կա նըստած լացլեխս, դողալի նազնից բեղամաղ:

Թեգուղ իմա՛ցի, կարթա՛ցի իմաստնասիրաց առակըն.
էշխեմեռ ջոնուն իմ էլի, վեր էկավ սըրտիս վարակըն.

15 Ա՛ստված վըկա, մարթ չըքաշե՝ դըժար է էշխի կըրակըն.
Տեսա արունուտ ջեյրանըն՝ վուրսնուրթի նիզնից բեղամաղ:

Անցկացալ աշունքվա վախտըն, սալբիքըն խաղալ է ուզում.

Հասավ գարունքվան հուսանըն՝ բըլբուլըն էլ գալ է ուզում.

Սայաթ-Նովեն առանց նընգիր ճիզըն գըցած լալ է ուզում.

20 Զառ կորցըրած խոնթկարի պես նըստած է խազնից բեղամաղ:

Արուիինի ասած, Բոնիկոնի 447-ին (1759):



Եղասլին վուր խոսեցընիս, լալ անիլըն ինչի՞ն է շահ.
Ռանդըն վուր սեաղեն նընդնի՝ ալ անիլըն ինչի՞ն է շահ.
Մարթ վուր քու խոսկով միտանի՝ գալ անիլըն ինչի՞ն է շահ.
Պատանքին մե՛ ռանգն է հերիք՝ չալ անիլըն ինչի՞ն է շահ:

- 5 Մարթ պիտի թանգ հախ տա, առնե խոսկիրըն փիր-ուստագեմեն.
Ռանգըն ռանգերուն ծածկում է, հուշրեքըն լիքն է սագեմեն.
Թեգուլ զար-զարաբ հաքցընիս, վուր չըլի ասըլզագեմեն...
Սիվ արաբի ճակտի վըրա խալ անիլըն ինչի՞ն է շահ:

- Լավ մարթն էն է՝ սիրով անե բարի հրեշտակնիրու կամքըն.
10 Իմաստուննի՞րն էլ չըտեսան էս աշխարի հուտն ու համքըն.
Զուրս գըլխանի ռաշի վըրեն աջալըն դըրիլ է թամքըն.
Աշխարըս միզ մընալու չէ՝ մալ անիլըն ինչի՞ն է շահ:

- Մեր ու մանուկ բաժանվեցան, մանուկն էնդուր ունի լալու.
Սատանեն մե դամբ է դըրի՝ Աթամի դաթըն վուրսալու.
15 Շատըն սատանեն է տանում, վիրչըն մընում է վա՛յ տալու.
Վուր չէ Ուռնիյելի նըման՝ կալ անիլըն ինչի՞ն է շահ:

- Շուռ էրիտ չարիսը փալագըն, դովլաթըն միզնից խըռով ա.
Ում հաքին հին շալ ին տեսնում, էլ չին ասում, թե էս ո՞վ ա.
Յարովըտ մեկ մըհլամ շունիս, էնդուր գու լաս, Սա՛յաթ-նովա.
20 Զարեքըն դիլըտ չին գիդի՝ փալ անիլըն ինչի՞ն է շահ:

Քրոնիկոնի 447-ին (1759):

1/16-րդ հարյուրամյակի խոնարհական
 և խոնարհական զորքի զորքի զորքի
 զորքի զորքի զորքի զորքի զորքի
 զորքի զորքի զորքի զորքի զորքի

1/16-րդ հարյուրամյակի խոնարհական
 զորքի զորքի զորքի զորքի զորքի
 զորքի զորքի զորքի զորքի զորքի
 զորքի զորքի զորքի զորքի զորքի

1/16-րդ հարյուրամյակի խոնարհական
 զորքի զորքի զորքի զորքի զորքի
 զորքի զորքի զորքի զորքի զորքի
 զորքի զորքի զորքի զորքի զորքի

1/16-րդ հարյուրամյակի խոնարհական
 զորքի զորքի զորքի զորքի զորքի
 զորքի զորքի զորքի զորքի զորքի
 զորքի զորքի զորքի զորքի զորքի

1/16-րդ հարյուրամյակի խոնարհական
 զորքի զորքի զորքի զորքի զորքի
 զորքի զորքի զորքի զորքի զորքի
 զորքի զորքի զորքի զորքի զորքի
 զորքի զորքի զորքի զորքի զորքի



ատկիրքըս դաւամով քաշած, թահրըս ոսնդե ոսնդ իս անում.
էրեսըս խալըն ծածկում է, մաղիրըս խափանդ իս անում.
Բացվիլ իս կարմիր վարթի պես, բըլբուլի հիդ հանդ իս անում.
Ակոեքըս օսկումըն շարած, պըռռըս մահանդ իս անում:

5 էրեսըս նուր լուսնի նըման քանի կեհա, կու բուլըվի,
Դաստամազըս նամ չի ուզի՝ առանց հուսիլ կու օլըրվի,
էնդու համա քու տեսնողըն իր ճանփեմեն կու մոլըրվի.
Յիփ մըտնում ես մեջլիսումըն, շանդ շուխի-շաբանդ իս անում:

էրեսըս տեսնելու գուքան քաղաք քաղկով, գիղ՝ գիղի պես.
10 Միռնողըն քիզմեն կու առնե տնմահական դիղ՝ դիղի պես.
Յիփ տիղեմետ ծած իս գալի, շըխշըխկում իս չիղչիլի պես.
Ի՞նչ կոնիս սանթուր-քամանչեն՝ դուքսըս շոնդուր, շանդ իս անում:

Մուցիս մեչըն վարթ, մանուշակ, սընբուլ ու սուստն իս շինի.
Քու տերըն բաղըն ի՞նչ կոնեն՝ քու հուտըն ռեհան իս շինի.
15 Քամին մեչըն անց է կենում՝ մաղիրըս ելքան իս շինի.
Աշխարքըն ծով, դուն մեչըն նալ, ման իս գալի, լանդ իս անում:

Տասնեմետ մեկըն չին ասի, թեգուզ աշխարքս քիլ դովին.
Նովափար, ծաղիկ ծովային, մանուշակ՝ բաց արած հովին.
Բաս քու էշխին վո՞ւնց դիմանամ, ջուրըն տանե Սայաթ-Նովին.
20 Թե տեսնողըս մեկ էլ տեսալ՝ դիվանա-դաբանդ իս անում:

Էս էլ Դիքա ու Ենգիդունիայի հանգում, Արուսիկի (ասած), մարտի վերջին,
ֆոնիկոնի 447-ին (1759):



չխարըս մե փանջարա է. թաղերումեն բեզարիլ իմ.
 Մըտիկ տըվողըն կու խուցվի. դաղերումեն բեզարիլ իմ,
 էրեգ լավ էր կանց վուր էսօր. վաղերումեն բեզարիլ իմ,
 Մարթ համաշա մե՛կ չի ըլի. խաղերումեն բեզարիլ իմ:

- 5 Դովլաթն էյթիբար շունե, յիփոր կերթա իր շըքարով.
 Լավ մարթն էն է՝ գըլուխըն պահե աշխարումս էյթիբարով.
 Աշխարըս միզ մընալու չէ՝ իմաստնասիրաց խաբարով.
 Գուզիմ թըռչի բըլբուլի պես. բաղերումեն բեզարիլ իմ:

- Ո՞վ կոսե, թե յիս կու ապրիմ առուտեմեն ինչրու մուտըն.
 10 Աստըծու ձեռումըն հիշտ է մարթու աշխարք ելումուտըն.
 Ղուրթս էնդուր ճանփա չէ գնում՝ շատացիլ է խալխի սուտըն.
 Քըսանըն՝ մե՛ղ դուլ չին պահում. աղերումեն բեզարիլ իմ:

- Աշխարըս միզ մընալու չէ, քանի նըստինք զող ու սափին.
 Հում կաթնակիր-Աթա՛մի ղաթ, նա՛լաթ ըլի էտ քու բափին.
 15 Հանփիրութինըս հատիլ է, չիմ դիմանում խալխի գափին.
 Դոստիրըս դուշման ին դառի. յաղերումեն բեզարիլ իմ:

- Սալաթ-Նովեն ասաց՝ դարդըս կանց մե ճարըն շատացիլ է.
 Չունիմ վաղվան քաղցըր փառքըս, հիմի դարըն շատացիլ է.
 Բըլբուլի պես էնդուր գու լամ՝ վարթիս խարըն շատացիլ է.
 20 Չի՛ն թողնում վախտին բացվելու. քաղերումեն բեզարիլ իմ:

էսպես Արափիկի ասած, ապրիլի սկզբին, Բոնիկոնի 447-ին (1759):



չկ ու ունքըտ վեր իս թողի, հուքմըտ մե ոուս ցարի բաբաթ.
Աջաբ քիզ ի՞նչ գեթ իմ արի. խոսում իս դուն չարի բաբաթ.
Ով քիզի խաչան մըտիկ տա, սիրտըն դառնա քարի բաբաթ.
Թեգուղ պա՛հե, թեգուղ սպա՛նե դըռանըտ նոքարի բաբաթ:

5 Դըռանըտ նոքար չիս պահի, թաքավուր իս՝ դուլ սըպանող.
Խոսկըս առակով իմացի, Լուսնի ասդ՝ փուղուլ սըպանող.
Բացվիլ իս բազի միշումըն, կա՛րմիր վարթ, բըլբուլ սըպանող.
Կըտրիլ տու քանի կըտրում է քու թուրըն սարդարի բաբաթ:

Յա՛ր, ինձ մե ճանփաւ կանգնեցու՝ կենամ խաթըրջամի նըման.
10 Գիշիր ու ցերեկ լալիս իմ, աչկերըս է նամի նըման.
Թող դըռանըտ նընգած ըլիմ օտար բարեկամի նըման.
Անգալին Ա՛ստված սըպանե, Փահրադ-Շիրնի դարի բաբաթ:

Գարնան շընչի ծաղկի նըման կարմիր վարթըն բաց է ըլում.
Ի՞նչ օքուս է քու բաղմընչուն, վուր բըլբուլըն լաց է ըլում.
15 Պըռոշեմեստ միղդ է կաթում, թողնիս, յախես թաց է ըլում.
էնդու համա քաղցր իս խոսում. լիղուս է շաքարի բաբաթ:

Մարթ իր խոսկով կու ճանանչվի, գուղե շահի վեղիր շինին.
Բեղասըն ասըլ չի դառնա, թեգուղ վեթիլ, նազիր շինին.
Թե կամենաս, ամենան տիղ քու ասածըն հաղիր շինին,
20 Սա՛յաթ-նովա, խոսկըտ ասա բելու քամանդարի բաբաթ:



Կիսամուրազ մի՛ սըպանի,
 Չունքի արիւր սեր, նազա՛նի.
 Թե քիզ ավել յադ յար սիրիմ,
 Ումբրենս շանիմ խեր, նազա՛նի:

7 Աշխարումըս [դուն իմ] ջան իս,
 Դուն իմ շահ իս, սուլթան-խան իս.
 Ի՞նչ կուլի միզ մըտիկ անիս
 Հազարեն մե ջեր, նազա՛նի:

Ղարիբ դավրիշ իմ, հաջ շունիմ.
 10 Գըլխիս էրծաթե թաջ շունիմ.
 Յիս քիզ ավել իլաջ շունիմ.
 Դուն դառի ինձ տեր, նազա՛նի:

Կըրակ տըվիր կրակեն ավել.
 Չախմախ էլ ունիս դու, դավ էլ.
 15 Աշխարումըս քիզնից ավել
 Ո՞վ ասաց, թե կեր, նազա՛նի:

Սայաթ-Նովեն իմ, ճար շունիմ,
 Յիս վարթըն իմ, մին խար շունիմ,
 Թե դուն ասիր յադ յար շունիմ,
 20 Իղրարըտ էտ էր, նազա՛նի:

Քապես լալ գարեհլիի ձայնով, Սայար-Նուլայի ասած (ծան. Օհանի):



ընդու քաղաքեմեն հանած ջաւահիր, լալ արմանալու,
Ինչի դիբչիս նաղաշ կոնիս, օսկե փարգալ արմանալու.
Ամեն մարթ չի կանա ճարի շահ ու շրքար արմանալու.
Մարթ հիղըտ չի կանա խոսի, Ռոստոմի Զալ արմանալու:

- 5 Շիմշատի ծառ՝ բըհամ էկած, շենքըտ տաշիլըն ի՞նչ կոնե.
Երանի է քու տիրուչըն. յադին յաշիլըն ի՞նչ կոնե.
էրեսըտ խաս ա՛ մուրասա. դալամ քաշիլըն ի՞նչ կոնե.
Կարմիր ու կանաւնչ ու ճերմակ, սարիսար ալ արմանալու:

Դուն հիշտ դիմիշ անելու չիս, ճըրաք վառած, դըժար ճարած.

- 10 Ովոր էրեսըտ կու տեսնե, խիլքըն կու դառնա շըվարած.
Անգին յաղութ, անգին ալմաս՝ բոլորքըտ ջաւահիր շարած,
Սկանդարի Զուլդարի թողած ջընաղ հեքալ արմանալու:

Համաշա սեյրան իս անում, վարթ ու մանուշակ քաղում իս,
Շուշա-բըրդի գուլաբգան՝ բերնետ վարթաջուր մաղում իս.

- 15 Թաքավուրի թաջի ջիղա, օսկե թիլըտ շաղմաղում իս.
Վուրսնուրթի ձեռնեմեն փախած ջեյրան, մարալ արմանալու:

Յա՛ր, քիզանից հիռանալըս միոնելուս վըրա դըժար ա.
էշխեմետ Մեջլում իմ դադի. ի՞նչպես անիմ ինձի չարա.
Ավելի չէ՛ Սայաթ-Նովեն քիզի ծառա ու նոքար ա.

- 20 Նըրանից ձեռըտ քաշիլըն՝ շատ ա էտ ալ արմանալու:



Ա. ՀԱՎԵԼՎԱԾ

1 (50)

Թեգուղ քու քաշըն մարքրիտ տան
բրո՛յի, բրո՛յի,
Թեգուղ քու քաշըն ալմաս տան
բրո՛յի, բրո՛յի,
Յա՛ր, չիմի տա, չիմ հիռացնի
քիզ քու յարեմեն,
բարե՛բարեմեն:

Զիմ քաշլի էկած մահեմեն,
5 Ռադիփի տըված ահեմեն
բրո՛յի, բրո՛յի,
Թեգուղ ոաղամ գա շահեմեն,
Յա՛ր, չիմի տա, չիմ հիռացնի
քիզ քու յարեմեն,
բարե՛բարեմեն:

Թեգուղ քու քաշըն ալմաս տան
բրո՛յի, բրո՛յի,
Թեգուղ քու քաշըն մարքրիտ տան
բրո՛յի, բրո՛յի,
10 Յա՛ր, չիմի տա, չիմ հիռացնի
քիզ քու յարեմեն,
բարե՛բարեմեն:

Գուլ իս անգին-ից, նույն հանգով:



2 (51)

Իմքըտ վերըստին նուրեցին, շաղ արին, Մոզնու սուրփ Գևուրք.

Քար ու կիրըտ ոխչըրի կաթ շաղ արին, Մոզնու սուրփ Գևուրք.

Աչ ու ձախ կախեցին՝ բրուե ճաղ արին, Մոզնու սուրփ Գևուրք.

Յիրգնուց լուսըն վըրետ կամար-թաղ արին, Մոզնու սուրփ Գևուրք:

5 Պատիրըտ կարմիր ագուրով, սընիրըտ տաշ մարմար քարով,

Հընդու միչեմեն դուս էկած վարաքուրըտ՝ դալամքարով,

Թագիրըտ անգին ակնիրով, ըզգիստըտ դարբաբով, զարով.

Բիմըտ ու խաչկալըտ դրախտի բաղ արին, Մոզնու սուրփ Գևուրք:

Վիրնատունտ՝ սանդալե տախտակ, ռանգըն է տորոնի նըման.

10 Հոքով ու մարմնով կու սըրփիլի, ով քիզ դու քա մոնի նըման.

Տապանակ ուխտի կըստակավ խորանտ Ահարոնի նըման.

Միաբանքըտ քաղցըր ձայնով տաղ արին, Մոզնու սուրփ Գևուրք:



3 (52)

աբար գընաց բըլբուլի մող. «Վարթըն քու գալուն մընում է,
Ճըխկընիրըն բացրացիլ է, վըրենն շուռ գալուն մընում է.
Առավուտուց ղանգակի պես քաղցըր ձեն տալուն մընում է»:
Բըլբուլն ասաց. «Ձիմ կանա գա, պուճպուճես լալուն մընում է»:

5 Վարթըն ասաց. «Իմ բըլբուլին ալ պուճպուճեն վո՞ւնց կու խափե-
թե խիլք ունիս, ղարիբ բըլբուլ, է՛լ քու բաղի ճանփեն չափես»:
Քանի գուղե քընած տիղըն իր թըշնամին կուռըն կապե,
էլի վիրշումըն մեյդանըն Ռոստոմի Ձալուն մընում է:

Վարթըն ասաց. «Խա՛յան բըլբուլ, նա՛լաթ էտ քու էլթիբարին,
10 Անցկացավ ապրիլ մայիսըն, մեկ օր չըհալցըրիւր յարին»:
Ձէթուղ թե մուրազին հասնին, տե՛ս ին՞չ արավ քավթար ղարին,
Փահրադին քըլունգն ըսպանից, Շիրին՝ խանջալուն մընում է:

Աշխարումըն վարթն է էլի բըլբուլների սիրեկանըն.
Բըլբուլի լիզվով իմ ասում. «Տե՛ր, պահե վարթի նըմանըն».

15 Աշխարումըս քանի սաղ իս, Սայաթ-Նովի գերեզմանըն
Շահ-Աբուսի լալի նըման, Շահի՛ վրեն գալուն մընում է:



4 (53)

ըտա էշխի քուրեն խալիս դառնալու,
Սիրտըս էլավ քե ու ալիք, էրկու բեն,
Կամով սովդեն մըտա դարդըն բառնալու,
էլ ո՞ւմ բըռնիմ սե ու ալիք էրկու բեն:

5 Դադա պիտի խոսկըն դադիմի շինե.
Շարբաբի միշումըն խամ թիլ չըհինե.
Ձորու նըման չասե՝ իմ դեղեն ձին է,
Մարթ վուր քի նու ու ալիք էրկու բեն:

Ինչպես վուր կըրակին չի դիմանա մում,
10 Էնչպես սախաթ կուլի, ուլոր խոսի հում.
Սալաթ-նովեն ասաց՝ է՛նդուր չէ պակսում
էրկու աչկես էրկու ալիք, էրկու բեն:

էս հայերեն դարանեջա է (ծան.՝ Օհանի):



5 (54)

յիւր Աստված սիրիս, Բեն բարի կացի.
Գիւմ գադաթլտ արա Դա ու ալիք քո.
Եւ երանի չըկա Զա զալում մարթուն.
է Ը էրեսիտ դի Թո ու ալիք քո:

5 Ժե ժամանակ հասաւ աշկերիս լալու.
Ին ինձի գրցեցիր դարդըս վոխպալու.
Հյուն լալով իմ յիս աշխարիս մընալու.
էնդուր վա՛խ քաշեցի Խե ու ալիք քո:

Ծա ծովումըն մընաց, դուս չէկաւ նավըտ.
10 Կեն կամով ալեւցըրար սըրտի ցաւըտ.
Հո համան կանչում իս Զա ձայնով դաւըտ.
Ղաթ դարուլ կաց՝ ճարիս նե ու ալիք քո:

.
.

Բե րուն Յո ցամքիլ է, Հյուն հունար ունի,
Փյուր փակեցին դուռըն, Քենը քար ունի.
15 Եվ Օ ֆեն կարթալու Ա՛ստված ճար ունի,
Հալալ Սայաթ-նովուն՝ կեն ու ալիք քո:

էս այբբենական դարահեշա է. հալերեն (Օհանի ծան.):



6 (55)

լիբբիմըն կարթացիլ իմ դասեղաս,
Հասա Ռա, է, հասա Ջե, հասասե.

Անդըրծակի մե ձեն էկալ դասեղաս,
Անգաճ կալա, չիմացա ինչ հասասե:

- 5 Հաղար տարին մարթու աչկին քափալուր.
Քանի տընանդ, քանի հարուստ, քափալուր.
Ձի հարցընի աիկատ, հարուստ, քափալուր՝
Մահըն վուր կա, առանց կաշառք հասասե:

- Դառնացալ, թըթլեցալ կինքըս ծովացալ.
10 Ախ քաշեւեն սիրտըս նընդալ ծովացալ.
Կաթելով, կաթելով դարդըս ծովացալ,
Մե մարթ չըկա, վուր ինձ խըրատ հասասե:

- Հաղար տարին մարթու աչկին փափասուն.
Ո՞ւլ է մնացի աշխարումըս փափասուն.
15 Սալաթ-նովա, տարիտ էլալ փափասուն,
Դուն մահի հիդ, մահըն քիզ հիդ հասասե:

էս հայերէն քեջնիս է (ծան. Օհանի):



7 (56)

ազիր ունիս դաստառեհան՝ նըման սիրուն սուսանի,
Ունիրըտ դալամով քաշած, սաղում ին միր գումանին.
Թերթերուկըտ նիտ ու նաշտար՝ դիբշում է միր քամանին.
Աշկիրըտ օսկե փիալա, կըրակ ղըրից միր ջանին:

5 Վարթ էրեսիտ խալ իս ղըրի՝ աստղի նըման հավասար.
Գունքըտ Հընդըստանի մում է՝ ջանս արավ դավար-դավար,
Լիզուտ քաղցըր, բառըտ քաղցըր, ակըոֆնիրըտ անգին քար.
Պըռոշեմետ միդր է կաթում, շի հասնում միր փընջանին:

էրեսըտ է արիւլ-լուսին, վիզտ է նըման դարդարի.

10 Բուխախնիրըտ կախ է նընդի՝ ինձ ամա շիս դարդ արի.
Կուռըտ շիմշատ, մատնիրըտ մում, դունգտ արավ ինձ սարսարի.
Գիշեր-ցերեկ էշխի մեշըն կախվիլ է միր դամանին:

էնդու համա ջունուն դառած կանչում իմ ա՛ման-ա՛ման.

Աճիլ է, ծաղկիլ է ծոցըտ, հուտըն գուֆա անըման.

15 Դոշըտ դառած [բաղ ու բաղչա], խալ է զըցի շամաման.
Կու բըխեցնե կաթնեախպուր կանանչ չալիր շիմանին:

Թա՛րիփ արա, Սա՛յաթ-նուլա, գոզալըն անըման է,

Միշկըն հադիդեմեն քաշած՝ մարքու հոֆի կու հանե.

Ի՞նչ իս անում, դա՛նլու մարալ, էշխըտ ինձի կու սպանե.

20 Մի՛ սըսպանի հասարթեմետ, ե՛կ, տեր մի՛ դառ միր արնին:

էս Արուսիկի ասած է, իլանի:



ըշու սուլքան սուրփ Կարապիտ, երկինք է հասյալ գովքըն քո.
Գլուխ վարքասյիտ նըշմարտության, չըկար հավասար ոքըն քո.
Խոսկիրըտ անգին ջալահիր, լալ իս թափյալ բիրնոքըն քո.
Ուռվայնէ երգիր պափիր, արմաքյալ ին ծընողքըն քո.

5 Անապատեն բարբառեցար հըրաշախոս շըրթնոքըն քո:

Գրնացիր գետըն Հորդանան, Տերն ինքն մըկըրտեցիր.
Տիրոջըն դու ցուցիր մարդկանց՝ երուրտութիւնը հայտնեցիր.
Յիս վասըն այն ուրախ իմ շատ՝ չար սատանէն կորցըրեցիր.
Երեսուն ամ ի մէջ ալրի, վասն աշխարին աղոթեցիր.

10 Մեղըր վայրի վայիլիցար, շատ քաղցըր ին քարողքըն քո:

Գըրյալ է ի մէջ սուրբ զըրքի՝ Ովհաննէս միծ ի ծնունդկանանց.
Զարյամբ քո հոգիք փրկեցիր, քազ ու պարծան իս կուսանանց.
Հրիշտակներն իջան յիրգնուց, պըսակ լուսո առիր անանց,
Խաչապաշտյաց հիմըն դառար, աշտանակ իս ամեն վանանց.

15 Մասունմտ ամեն տիղ ծավալի, ամեն տիղ է լուս-շողքըն քո:

Կըռապաշտըն քիզ հյուր կանչեց, զորս ամենայն յուր հավաքյաց.
Բաղմութիւնըն եղև հուզյալ՝ Եխպոր տխշիկըն չըխաղաց.
Երթում կերավ գահի վերա, ինչ որ ուղես, կու տամ՝ ասաց.
Մարգարէի գլուխըն ցանկաց, ջալլաքըն շուտով զըլսատյաց.

20 Սխտն անում հիշատակեցին, որ կըտրեցին շըլինքըն քո:

Ինչ հրաշալի կերպ ունիր դու, սանքարամիտն զորոք սարսյալ.
Տարտարոսըն հայտնի արիր, ավետիս համայն առաքյալ.
Դրախտի հըրիշտակըն իս դու, սուրբըտ սըրբոց սիրտըտ մաքրյալ.
Սայաթ-նովեն շատ կու ողբա, աղաչում է երեսն անկյալ.

25 Մեղավորաց մեղկըն հալե, լուսով լի է տապանքըն քո:



9 (58)

ս ի՞նչ էլավ ինձ հիդ, տես ի՞նչ իմ արի,
Դե վիզըս ծուռ, դընտ, տանեն դուս արած.
Խիլքըս տանուլ տըված լիղնուրթ իմ դառի,
Գըծված ման իմ գալի, բանեն դուս արած:

5 Քաղցըր թութըս դառըն լիղի շինեցի,
Յիս մե միզկ իմ արի՝ նաշտար քաշեցի,
Իմ էն արթար կաթիս արուն խառնեցի.
Բաս է՛նդու համա իմ նանեն դուս արած:

Յիս բըլբուլ իմ, վարթըս փակից ալալըն.
10 Տես ի՞նչ արից հուրիզադա ջալալըն,
Կորցըրիլ իմ ջալա՜խրըն ու լալըն,
Մադա՛ն չունիս, Բադեշխանեն դուս արած:

Հա՛ լաց էլա, վա՛յ կանչեցի անհաշիվ,
էլ ի՞նչ օքուտ, ջան տու, կինքըտ հա՛ մաշի,
15 էս իմ դարդից թուղ վուր օշուլ չըքաշի՝
Օշուլ չըլի սիրեկանեն դուս արած:

Ա՛րի, մի՛զկ իս, Սա՛յաթ-նովա միղանշող,
Ախպոր ճամփին կինքըս մատաղ ըլի թող.
Սըրան դաբուլ իմ, արարիշ-ստիզծող,
20 Հոփիս չանիս դրախտի ջանեն դուս արած:

Էս դավիան չորս լեզվով է՝ վրացերեն, պարսկերեն, բուրֆերեն, ճա-
յերեն. Աբուքինի ասած, մարտի 6-ին, ֆրեհիկոնի 446-ին (1758)

Բ ՀԱՎԵԼՎԱԾ



1 (59)

աքալուր իս, դիվանս արա, յա՛ր, քու արիւմըն կու սիրիս,
 նըհախ տիւղըն մի՛ բարգանա, շա՛ր, քու արիւմըն կու սիրիս;
 Կարմիր վարթըս մի՛ փուշ ածի, խա՛ր, քու արիւմըն կու սիրիս,
 Ուրոր դընաս՝ ինձ էլ հիղըտ տար, քու արիւմըն կու սիրիս:

5 Վարթըն ալընումըն կուլի՝ նամ-նամ արխին սաղ ըլիւով,
 Կանանչ փոթուըն բացվիլ է՝ կարմիր ու գուլգաղ ըլիւով,
 Ամեն ծիտ բըլբուլ չի դառնա՝ վարթին փիանդաղ ըլիւով,
 Վարթըն ալուրվին մի՛ շանց տա, ծա՛ռ, քու արիւմըն կու սիրիս:

Վարթըն մայիսին բաց կուլի, փոթուըն կու տանին խեչըն,
 10 Քանի վուր գուղե թառամի, պետկական է վարթի չեչըն,
 Քիղ օսկե ամբարշա պիտի, մի՛ նըստի պըղընծի մեչըն,
 Ո՛ւլ ջաւահիր, անգին ալմաս քա՛ր, քու արիւմըն կու սիրիս;

Ակուսըն բըլբուլ չի դառնա, քանի գուղե վուր ախ անե,
 Ամեն ոանդի վարթի մեչըն կարմիր վարթըն սիրեկան է,
 15 Գուղ մարթըն մանգալով գուքա, ձիք կու տա, տալուն կու հանե,
 Մի՛ թողնի հասկըտ քաղելու, բա՛ր, քու արիւմըն կու սիրիս:

Բըլբուլըն սարեմեն գուքա, իր լիզվումըն բա՛ղ կանչելով,
 Ակըռքնիրըն վեր թափվեցան՝ շատ իլթիմաղ, ա՛խ կանչելով,
 Սալաթ-նովեն բեզարիլ է շատ յարանա խա՛ղ կանչելով,
 20 Իլըիմազըն էսպես կուլի, յա՛ր, քու արիւմըն կու սիրիս:



2 (60)

ուսան-սըմբուլ դաստամաղըտ էրեսիտ խափանգ իս արի,
Կա՛վիրըտ օլոր, տար ու բիր, արայիշ՝ գուհանգ իս արի.

5

Հանգ իս արի, յա՛ր, ա՛յար,
Սիրտըս արիր յարա, յա՛ր,
Գըլուխըս մատաղ կոնիմ՝
Ղաբուլ անիս, յա՛ր, այար:

Ումբրիս լարըն ձըքիլ, դադանգ իս արի,
Վայ թե կըտըրվիլ է դափիլ, յա՛ր, ա՛յար:

Աշկիրըտ ծով, էրեսըտ շովղ, էշխըս լող կու տա անդայիղ,
10 Անքանար ջուրըն իս գըցի, բոլորքըս տալղա, ջըրնիղիղ,

Ջըրնիղիղեն Նոյ ալիբ,
Վուր փըրկըվից նու ալիբ,
Նոյին գեմին աղատից,
Ինձ՝ Այիբն ու նու ալիբ:

15

Մեմեկ ինձի տիսուտ թե անիս լայիղ,
Կու կենամ ջամալիտ մայիլ, յա՛ր, ա՛յար:

Հասրաթեմետ չոլիր նընգած, Մեջլումի պես՝ Լեյլու դայաթ.
Յարալու ջեյրան իս դառի, յիս քու էղնեն՝ ավչի-սայաղ,

20

Սայաթ-Նովեն իմ, Սայադ.
Անուներս հաշվիր՝ սայ-աղ.
Տիսուտ կարոտ չըթողնիս,
Չասիս՝ սա օտար, սա՝ յադ:

Կամ թե գուրձավուր իմ, բեքարա խայաթ,
Արածըտ ինձ չիլի վայիլ, յա՛ր, ա՛յար:



3 (61)

ստուծ խիալ արից. սըվթա
Ստիղծից նախ մարթըն Աթամ.
Աթամի կուղեմեն քաշից,
Յիվան տըվից նըրան համդամ:

5 Համդամ գուզիք՝ էս ձիզ ղարար—
Տերըն ասաց,—չո՛ւտիք էս բար,
Թե չէ կու տեսնիք մինձ ղարար,
Վուր առիլ իք էս պըտղի համ:

Համ առնիլըն ուղից նախամար Յիվան,
10 Չարըն գըթավ նըրան, տըվին իրար կամ:

[Կամով նընգավ շարի թոռըն],
Քաղից արքիված խընձորըն,
խափից Աթամ նախահորըն,
Կերան ու դառան մերկանդամ:

15 Մերկացան ու ամանչեցին,
Փռման դառան ու լացեցին,
Տերըն վուր էկավ՝ խափեցին.
Թե՛ օցըն էր արավ սիթամ:

Սիթամ արից Տերն էլ, քըշից զըրախտեն,
20 Քանի վուր պատվիրըն չըպահին քամամ:

Թամամ մութ բըռնից աշխարըն,
Ի՞նչ է Աթամ-Յիվի ճարըն.
Սատանեն գըթավ հընարըն.
Ասաց՝ գուզի՞ք, ձիզ լուս կու տամ:

25 Կու տամ, ասաց՝ գիրըն առաւլ.

Հորդանանու գիղըն տարաւլ,

Աթամ վուր էտ շարթըն արաւլ՝

Նաթիջում դըժուխկ գընաց ջամ:

Ջամ հաղար տարի անց, Տերն էկաւ աշխար,

30 Աղատից հոքիքըն, բան չը թողից քամ:

Քամ ու նիղ օրիւ տեսան շատ:

Ուլ ունեցաւ հույս ու հաւատ,

Իղրարին մնացողըն հաստատ

Տերըն կու հիշե ամեն ժամ:

35 Ժամըն ու ժամանակն է նիղ.

Մահըն գութա ամենան տիղ.

Կու լինի դադաստան ահիղ.

Աղաչիւմ Փըրկիչըն՝ հուսամ:

Հուսամ Սալաթ-Նովեսս, միղկիրըս քաւիւմ,

40 Թե չէ դադաստանին յիս ի՞նչ ջուղաբ տամ:



4 (62)

շխարհեմեն բեղարիլ իմ, էլ բերնումըս համ չըկա, չէ՛,
Թառամիլ է սըրտիս վարթըն, սափա, զող ու դամ չըկա, չէ՛,
Ամեն մարթ ի՛րան է քաշում, դարդիման համդամ չըկա, չէ՛.
Բոլորքըն ղամքաշ ին դառի՝ ուրախ սիրտ անդամ չըկա, չէ՛:

5 Դառըն խոսկուլ սիրտըս խուցից, վաղի ձեռնե՛մեն գու լամ յիս,
Դոստիրըս դուշման ին դառի, յաղի ձեռնե՛մեն գու լամ յիս,
Մեկ չէ, էրկու չէ՝ աշխարում շատի ձեռնե՛մեն գու լամ յիս,
էյթիբարըն վիրացիլ է, ասկ ու բարեկամ չըկա, չէ՛:

է՛յ ադալաթ հուքմի-հեքիմ, սուչըս ի՞նչ է, ա՛սա ինձի,

10 Վուր հաքցըրի իմ շուղեցած սիւլ ու սուք լիբա՛սըն ինձի.
Խըմցըրեցիր անմիղ տիղըն էս աղուի թասըն ինձի.
Հոքուտ մեկ ի՛նսապի, սըրտումըտ շընուք ու քարամ չըկա, չէ՛:

Թե ռուխսաթ տան, սիրտըս բանամ, կու տեսնիք դարդիրըս ծով ա,
Դուլրանեմես դուս ին գըցի, իմ տիղըս բըռնողըն ո՞վ ա,

15 Ասում ին՝ տարքըրտ թամամից, լա՛ց ու վո՛ւխսպա, Սա՛յաթ-նուլա,
Հեյ վա՛խ, էլ ձեռիս քամանչա, մեջլիսումըն ջամ չըկա, չէ՛:



5 (63)

դրար ու ամագ շունեցող յարի ձեռնե՛մեն դագ կոնիմ.
Բըլբուլին վարթեմեն զըրգող խարի ձեռնե՛մեն դագ կոնիմ.
Մարթուս էջթիբար շըմընաց, դարի ձեռնե՛մեն դագ կոնիմ.
Դիփ խառնակիչ ու ավիրող շարի ձեռնե՛մեն դագ կոնիմ:

- 5 էլ հոքեւլախ կըրոնավուր, մարթասեր իշխան շըմընաց,
Զորըն անդորին կերիլ է, մարթկանց վըրա ջա՛ն շըմընաց,
էս դամանի գողալներուն ախրաթ ու իման շըմընաց,
Քա՛նի կանչիմ դագ ու փիրյադ, զարի ձեռնե՛մեն դագ կոնիմ:
- Փիբըր ու խիալըս հարգա՛հ աշխարքի ցավի մասին է,
10 խիղճի, նաչարի, տընանգի, բարու ու լավի մասին է,
Սայաթ-Նովու խոսկըն ի՛րավ ու անիրավի մասին է,
Յոխսուլին զըրգող, բեինսափ վարի ձեռնե՛մեն դագ կոնիմ:

է՛յ նաղանի, ռահմ արա, դուն մի՛ դառնա աջալըս.
Հենց ձեռովըտ կապեցիր, էնպես բաց էր իղբալըս,
էղբւնմետ հիմանդադա, չիս հարցընում իմ հայրս.

Իմ թայնհիրոն քու բանն էր, յասիր, թե ի՞նչ, իմ անում:

Ուրիշներու խոսկիրով կապած լարես հիդ անում.

10 Մե խալվաթ օթախումբն բարիշէլու վախտոնն է:

էս իմ խունի ջիգարրն հաղար փարա մի՛ անի,

Արուսեհինի շախ սիրտուն մեկ էլ լարա մի անի.

15 Կամոյ ու ճիգ անելով փաթաթվելու վախտըն է:



7 (65)

ելն ու շոբանըն մեկ մեկու ռաստ էկան.
Չոբանն ասաց. «Յիս քու հալըն շանց կու տամ,
Թե բարով կու գըցիմ շոմբախիս տակըն՝
Աղվեսի պես ցընկցընկալըն շանց կու տամ»:

5 Գելն ասաց. «Մուլափ տամ գեղինըն մըթնի,
Ուսուլով ման գուբամ, բինետ կու գըթնիմ.
Քու շընեբու հաշոցեմեն չիմ խըրթնի,
Առուտեհան խերն ու շառըն շանց կու տամ»:

Չոբանն ասաց. «Հենց գիղիս դուրթ քո՞ւն ունիմ,
10 Մե աչկ ու աւանջըս քու կըռնումն ունիմ,
Ամեն դոչի գըլխին մե-մեկ շուն ունիմ.
Ճըղիտ էրկըթե կըրկալըն շանց կու տամ»:

Գելն ասաց. «Վուր ամպըն վեր գա ծըմակին,
Ակոեքըս կու գըցիմ դոչի գըմակին.

15 Վուրըն կու խիխտիմ, վուրն էլ իմ քամակին
Մե-մեկ, մե-մեկ դիմաց սարըն շանց կու տամ»:

Սալաթ-նովեն ասաց՝ յիս կարմիր կով իմ,
Կովկիթըս կոտրիլ իմ, հարսից խըռով իմ,
Գիլի հիդ բան շունիմ, շոբնին կու գովիմ.

20 Մե գամ էլա կաթնի համըն շանց կու տա:



8 (66)

Մախուխն ու ռխչըրի միսըն կըռվեցան,
Ամեն մեկըն ասում էր՝ «Մազեն յիս իմ,
Քու մեչն ինչ ղըվաթ կա, ինչ իս դուս սալի,
Մարթու ղըվաթ տըվողն ու փազեն յիս իմ»:

- 5 Մախուխն ասաց՝ «Օխտըն շափաթ պաս ունիմ,
Գըլխիս ծառա օխտըն նորահարս ունիմ.
Համիմ, սըխտոր, պիտնա ու պըռաս ունիմ,
Աթամորթու սըրտի մուրաղըն յիս իմ»:

Ոխչըրի միսն ասաց. «Իմ մեչն է համըն.

- 10 Կու դընին փլավումըն՝ կու քաշին դամըն,
Ինձ մաթլարեն կոծին, քիզ կոծին ջամըն.
Ջիզրու կու պատռեցնիմ, քու ջազեն յիս իմ»:

Մախուխն ասաց. «Քանի փըքվիս, պատըռվիս,
Պիտի վուր պաս պահիս, հազար փըշըրվիս,

- 15 Միխկիրիտ դարձ դաս ու պիսի հաղորթվիս՝
Դըթուխկի ու դըրախտի ղազեն յիս իմ»:

Ոխչըրի միսըն ասաց. «Պակսիլ է օրըն,
Դիփունն ինձ ին գովում՝ քաշալն ու քոռըն.

- Քիզ կու քոռացընե իմ մատդի ղորըն,
20 Լավաշում փաթաթած թավադեն յիս իմ»:

Սալաթ-նովեն ասաց. «Խում դիլիք՝ օց իմ.
Գուղիք էրկսիս մետի մերաշ սըղոցիմ.
Կու վիկալնիմ ձիզ մութըն տիղըն կոծիմ,
Կողպեքըն կու դընիմ՝ ձիւ ռազեն յիս իմ»:



9 (67)

դեն ու ախշիկըն մեկ-մեկու դեմ էլան.
Տըղեն ասաց. «Բա՛րով տեսանք, ի՛մ սիրած,
Թեվուր գովքըտ ասիմ, լիզուս չէ պատում.
Բոյըտ սալբու-չինար՝ դարարին բերած,
յի՛ս քիզմեն էրած»:

5 Ախշիկն ասաց. «Գըլխես ոա՛դ լի, տո գա՛դա,
Նըհախ տիղըն գըլուխըտ մի՛ տա բադա,
Շատ քիզ պես իմ տեսի շահ ու շահլադա.
Բոյըտ սալբու-չինար՝ դարարին բերած.
[դո՛ւն ինձմեն էրած]»:

Տըղեն ասաց. «Սիրտըս սըրտիտ կեսըն է.
10 Քու ճանփեն դետը չէ, քու ճանփեն դեսն է,
Ա՛րի հենց բան բըռնինք՝ օ՛շով չըտեսնեն.
Թամամ էս աշխարքիս մինք կուլինք գոված.
յի՛ս քիզմեն էրած»:

Ախշիկն ասաց. «Ա՛րի մինք շանինք շըփոթ,
վախում իմ խաբարըն զընա հորըս մոդ,
15 Թե հերըս իմացալ, [կուլի միզ ամսթ],
Կոնե քիզ մեշտ ի կես, խանչալըն ձեռաց.
դուն կուլիս մեռած»:

Տըղեն ասաց. «Ա՛փսուս, ինչի՞ նազ արիր,
Շուտով շուռ էկար դուն, իլթիմազ արիր,
Նընդա վուտիտ տուլըն, փիանդազ արիր.
20 Ա՛խշի, հենց գիդեիր յի՛ս իմ քու ասած.
ասկտ էր անիծած»:

Ախչիկն ասաց. «Սիրտըս խոսկով լըցրեցիր,
Յիս իմն էի ասում, դուն ավելցրեցիր,
Քու ղուլըն կուլիմ, թեւուր ինձ պըրծեցրիր.
Թամամ էս աշխարքիս մինք կուլինք գոված,
[յիս քիղմեն էրած]»:

25 Սաշաթ-Նովեն խաղիր կոսեր հանգերով,
էրկու յարըն կու խաղեին նարդերով,
Մեկ-մեկու հիդ շանց կու տեին վարթերով,
Թաք նըրանց մեշըն յիս էի էլած,
շըլեի էրած:



10 (68)

արի ձեռնեմեն դադ կոնիմ, փըշին գերի բըլբուլ իմ յիս,
ինձ համա դըռնիրըն փակ ին, վանքի դուռն մե դուլ իմ յիս,
հոսկիր չիմ դըթնում, վուր ասիմ. սաղըն ձեռիս մալուլ իմ յիս,
Կըրակի կողքին բուսցըրած, թառամած մե սընբուլ իմ յիս:

5 Վունց արեհց էրված ծաղիկ, էրված իմ յիս իմ յարեմեն,
էրված յարիս գիղ շըղըրից իր փիրուլե խաս կըռնեմեն,
Քանի լացի, աչկըս թացի, անց շըկացաւ միր դըռնեմեն,
Ջահիլ կինքըս տանուլ տըված, մե փըշըրված բըրուլ իմ յիս:

Նո՞ւր կու լաս դուն յարիտ համար, օրիրըտ դար, Սալաթ-նովա,
10 Ո՞վ կու հարցնե, թե յար շունիս, խաղիրըտ՝ յար, Սալաթ-նովա,
Վարթ ուղեցիր խոսս բաղչեմեն, քիղ տըվին խար, Սալաթ-նովա,
Ա՛սա շունիմ ումբը ու արիվ, ձըմիռ շանցած կու հալիմ յիս:



11 (69)

ար, քու կարոտըն քաշում իմ անմահական ջրրի նըման,
Ռահմ արա, դուռըտ եմ էկի օջախի ու փրոռի նըման,
Սերըտ սիրտըս կես է արիլ ջահվարդարի թըրի նըման,
էշխիս ալաւըն ինձ էրից բաբեւական հըրի նըման:

5 էլ քա՞նի գըցիս սարեսար, ռահմ արա, յա՛ր բեմուրլաթ,
Վո՛ւչ աշկումըս լուս է մնացի, վո՛ւչ գարդանումըս թաղաթ,
Թե դադ կոնիս, էս էլ շատ է, սպանեցիր ինձ թամամ բաբաթ,
էրված սիրտըս հովցընելու բըխլոր դու ախպուրի նըման:

Վունցոր կարոտ մե ուխտաւոր դուռտ է էկել Սայաթ-Նովեն,
10 Անց է կացել ամեն շարկապ, ամեն արկիլ Սայաթ-Նովեն,
Թեվուր կորցնիս էլ չիս գըթնի նորից մեկ էլ Սայաթ-Նովեն,
Նա մի հատ էր՝ աշխար էկալ քանց մե դարիբ հուրի նըման:



12 (70)

իս մե զարիբ բըլբոլի պես,
Դուն մե գուշան բաղ ի՞նչ աջաբ,
Յիս էն գըլխեն իմ վերանա.
Դուն բինադան վաղ ի՞նչ աջաբ:

5 Մինա է գարդանըտ բարցըր,
Լիզուտ նուղուկմեն քաղցըր,
Գանա օրեն մի օր հարցո՞ւր,
Իմացա՞ր ահվալըս աջաբ:

Մե չիս ասում, Սայաթ-նովա,
10 էս աշխարքում տերըտ ո՞վ ա,
Կամ իմանաս ի՞նչ աբով ա
Իմ քու զուռըտ գալըս աջաբ:



ըլբուլի պես ձայն է տալի, ինչ քաղցրը ավազ է անում,
Մոգ է արի ղուլ-ղարավաշ, կըշտումըն փարվազ է անում,
Բըռնիլ է վարթի փոթուըն, գուլին փխանդազ է անում.
Յիս ի՞նչ անիմ, իմ սիրելին ինձիդ գուլգավազ է անում:

5 Սալբի բոյըն համամիցըն դալիս տիղըն բեղարիլ է,
Ունքիրըն զալամով քաշած, աչկիրըն խիլքըս տարիլ է,
Ճիգումըն օսկե ամբարշա, յախին մարքարիտ շարիլ է.
Մուրվարըն գուլաբաթինով դար-դալամքարըն կարիլ է,
Ճեռըն գիմխա գոտկին մեկնած, մինա քամար սազ է անում:

10 Հաքիլ է սաղրի քոշիրըն, կրունգն էրծըթե նալ է գըցի,
Օսկեթելով բավթեն կարած, ըռանգ-ըռանգ խալ է գըցի,
Գոտկի տուտըն մինչև յակեն յաղութ, յաման, լալ է գըցի,
Ծածկիլ է զարլու շարղաթըն, գըլխին քիրման շալ է գըցի,
Կոսե՝ հալա ջեր վախտըն չէ. ուշացնում է, նազ է անում:

15 Էրեսըն գուլգազ լալի պես, պըռոշըն լուլա-փարա է,
Խոսեցնում իմ, ջուղաբ չի տա, էն կողմեն սիրտըս յարա է,
Հաքիլ է զարլու մինթանեն, կու հանե՝ յաշիլ խարա է,
Կըռնիրըն շիմշատ է քաշած, բոյըն մե քոշկ ու սարալ է,
Յիս ի՞նչ անիմ, վուր սպանում է, ջալլաթի պես ջազ է անում:

20 Քաղցրը իխտիլաթ ունի, Մըսըրու դանդ ու շաքար է,
Շուղկըն ինձի նորոգիլ է, նուր բացված գուլ ու բահար է,
Մոցի մեչըն մե ջուխտ շամամ, ջավահիր ու ալմաս քար է,
Ով չէ առի անուշ հոտըն, աշխարքումըս ի՞նչ կու ճարե,
Թե հարցընիս՝ Սալաթ-Նովեն էսպես յարին բանդիվար է.

25 Բանդիվան փարվան իմ էլի. նըստած է, Շիրազ է անում:



14 (72)

չկիրըտ օսկե փիալա,
Ծամրտ ռեհանի նըման է,
էրեսիտ լալ խաթու խալի
Ռանգըն արունի նըման է:

5 Վիզըտ սուշա, մարմար աղշա,
Շամամնիրտ դրած թաղշա,
Ծոցըտ է բեհիշտի բաղշա,
Դռըտ գովշանի նըման է:

Ղուլի պես դըռնումըտ պահիր,
10 էշխեմետ դառիլ իմ շանիր,
Ակըռքնիրըտ լալ-ջավահիր,
Պռռըտ բալշանի նըման է:

Բոյըտ նըման սալբու ծառի,
Ծամրտ նըման գովասառի,
15 Սայաթ-նովուն ղուլ իս արի.
Նա քու մեհմանի նըման է:

ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ



1 (1)

Ամեն սաղի մեջըն գոված դու թամամ տասն իս, քամանչա,
Ղաստ արա էն լավ օրերու էդիվըն հասնիս, քամանչա,
Նաքազ մարթ շի կարող տեսնե, դու նըրա պասն իս, քամանչա:
Քիզ ինձնից ո՞վ կանա խըլի, աշուղի բասն իս, քամանչա:

Անգաճըթ էրծաթեն պիտի, գըլուխըթ ջավաճիր քարած,
Կութըթ շիրմայեմեն պիտի, փուրըթ սադափով նաղշ արած,
Սիմըթ օսկեն քաշած պիտի, էրկաթըթ փանջարա արած.
Օշով դիմեթեթ չէ խաբար՝ լալ ու ալմասն իս, քամանչա:

Ճիպուտըթ վարաղնած պիտի՝ թահր ունենա հազար ունգով.
Ձարըթ ուաշի կուդեն պիտի, վուր դու խոսիս քաղցըր հանգով.
Շատին դարթուն կու լուսացնիս, շատին կու քընեցնիս բանգով՝
Անմահական գինով լիքըն դուն օսկե թասն իս, քամանչա:

Ածողիթ էրկու կու շինիս. առաչ չայի, դափա գուդիս.
Կու մեծըրվիս էյվընումըն, պարապ վախտի ուափա գուդիս.
Յիփ կըմըտնիս մեջլիսումըն, քաղցըր զող ու սափա գուդիս.
Բոլորքըթ գողալնիր շարած՝ մեջլիսի կեսն իս, քամանչա:

Յիփ քաղցըր ձենըթ դուս գուքա, բաց կուլի հիղըթ խաղողըն.
Շատ տըխուր սիրտ կու խընդացնիս, կու կըտրիս հիվընդի դողըն.
Խալխին էս իլթիմազն արա՝ ասին. «Ապրի քու ածողըն»:
Քանի սաղ է Սայաթ-Նովեն, շատ բան կու տեսնիս, քամանչա:

2 (17)

Շատ մարթ կասի՝ ես յարիցըն հասրաթ իմ՝
Լեյլի-Մեջլումն էլ շի էլի էս հալով.
Մարթ պիտի համաշա բերանըտ տընդղի՝
Խոսկ իս ասում առակավուր—մասալով:

հոսակիրը քաղցը է՝ շաքար ու շաքի՛ն.
Մաղիրը ունջան է՝ փաթեթած վարթին.
Քի զարթարած տեսնիմ հիդ ծաղկաղարթին՝
Հաքիլ ըլիս դար-դարբաբն խաս ալուի:

Կամ ինձի կորցրեք կամ մին բան արեք,
Խըփեցեք մին տիղըս մին նըշան արեք,
Թեգուղ էստու համա քարասպան արեք՝
Զիմ կշտանում ես յարիս հիդ խոսալուի:

Խիլքըս տարալ՝ ջաղուքարին չիմ տեսի.
Բեմուրվաթին, բեիղրարին չիմ տեսի.
Սալաթ-նուլեն ասալ՝ յարին չիմ տեսի,
Ման իմ դալի արտասունքըս հուսալուի:

Աջաբ վո՞նց դիմանամ ես էսչափ դարին,
Աչկեմես արտասունք կաթում ա՛րին,
Օրըն իր շափաթով կարոտ իմ յարին
Ինչպես դարիբ բըլբուլ՝ վարթին տիսալուի:

3 (20)

Դու շատուց է իմաստուն իս, խիլքո հիմարին բաբ մի անի.
էրազական տեսիլքի հիդ միղի մե հեսաբ մի անի,
Եթե ինձնից բեղարիլ իս, ուրիշին սաբաբ մի անի,
Իմ սիրտըն շատուց էրած ա, մյուս անդամ քաբաբ մի անի:

Յարալուն հեքիմըն գողե՛ղ՝ դիղ տալու է, ցալ տալու չէ.
Բյուր անգամ արբաբ ըլի՝ ծառեն աղին դալ տալու չէ.
Դու քո սիրտըդ մի շրփոթիր, յադի խոսկըն ավտալու չէ.
Աստըծու սեր կանչողի պես զըռնից[ըտ] ջուղաբ մի անի:

Զըկա քիդ պես հուքմի հեքիմ՝ դուն Ռոստոմի Զալ թաքավուր.
Ասկըտ ասկերումեն ընտրած՝ դու ունիս գողալ, թաքավուր.
Թե ավելի սուչ ունենամ՝ գլուխըս արա տալ, թաքավուր.
Մըտիկ արա քու ստեղծողին՝ նըհախ տիղ զաղաբ մի անի:

Ամեն մարթ չի կարող կարթա՝ իմ գիրըն ուրիշ գըրեն է.
Ամեն մարթ չի կարող ըմպել՝ իմ ջարքըս ուրիշ ջըրեն է.

Բունիաթըս ավազ չիմանաս՝ քարաշեն ամուր կըրեն է.
Սելավի պես առանց օգուտ, դու շուտով խարաբ մի անի:

Որքան գուղի քամին տանե՝ ծովիցըն ավազ չի պակսի.
Դուղեք ըլիմ, գուղեք չըլիմ՝ մեջնիսներին սաղ չի պակսի.
Թեվուր պակսիմ, քիզ կու պակսիմ՝ աշխարիս մին մաղ չի պակսի.
Սայաթ-Նովու գերեզմանըն Հինդ, Հաբաշ, Արաբ մի անի:

4 (20)

Թե ինձանից բեզարիլ իս, ուրիշին սաբաբ մի անի,
Դուն էն գըլխեն իմաստուն իս, խիլքտ [Հ]իմարին բաբ մի անի,
Սիրտըս էն բաշտան էրիլ իս, նուրմեկանց քաբաբ մի անի:

Ինչ քիզանից հիւսացիլ իմ, իմ ջանումըն ջան չէ մըտի,
Պարապ դարցկար ման իմ գալի, իմ ձեռումըն բան չէ մըտի,
Յիս հենց դիդիմ շուրս տարի է քաղաքըն քարվան չէ մըտի,
Նըստած իմ ուխտարի մեշըն, իջարեն միզնից բեղամաղ:

Հալբաթ սերըս էս է ըլի, վուր ինձի ատիլ է ուզում,
Բացիլ է էշսի դանակըն, սիրտըս կըտըրտիլ է ուզում,
Չուրս տարեկան էրեխի պես յարըս խըրատիլ է ուզում,
Իմ սիրեկան, խըռովիլ իս, նըստած իս միզնից բեղամաղ:

Հազար գուղի քամին փըշե, ծովեմեն ավազ չի պակսի,
Թե կու պակսի՝ ինձ կու պաքսի, ինձ կու պաքսի, քի պես
յարին մաղ չի պակսի,
Սայաթ-Նովի գերեզմանըն նուրմեկանց խարաբ մի անի:

5 (21)

Քի սաղ գուքա ալ ղումաշըն, նազա՞նի,
Ե՛կ ճակատիտ կապիր զարլու մուղայիշ,
Ձեռիտ բըռնիր օսկեջըրած մըկրատըն,
Խուճուճ-խուճուճ ծամերուտ տուր արայիշ:

Պատվական տեսնելու նովաբու նաշար,
Քըլբուլին սըպանող թուփ՝ վարթի սաշար

Ունքիրըտ աշկերիտ էլաւ մուհաջար:
Թերթերուկիտ մազըն զար՝ օսկով զարնիշ:

Հուտըտ աշխար բըռնից, Փըռանգի մաջում.
Դաստա-դաստա մազըտ սիմի աբրեշում.
Կըռնիրըտ շիմշատ է, մատնիրըտ է մում,
Բոյըտ սարվի ունիս, մեշկըտ է զամիշ:

Մազիրըտ ռեյհան է, սըմբուլ-սուսանի.
Վախում իմ, թե սերըտ սիրտըս կես անի.
Կու միռնիմ ինձի պես էլ շիս տեսանի.
Քու Սալաթ-նովեն իմ, մի՛ անի զիմիշ:

6 (23)

Ձիս ասում, թե լաց իս էլի.
Բարով տեսա, իմ սիրեկան.
Վարթի նըման բաց իս էլի
խարերով,
խարերով.

Բարով տեսանք, իմ սիրեկան:

Արի, մին դարդըս իմացի.
Յիս քիզ սումա շատ իմ լացի,
Օրըս ալսպես անցուցի
դարերով,
դարերով.

Բարով տեսանք, իմ սիրեկան:

Ինչվախտ հաքնիս ալ ու առլաս,
Տեսնողին կու շինիս մաս մաս.
Դոշիտ պետք է լալ ու ալմաս
շարերով,
շարերով.

Բարով տեսանք, իմ սիրեկան:

Սալաթ-նովեն վո՞ւնց դընջանա,
Աշկիրըն ոսկե փընջան ա.

Դուռմանի լիզուն մընջանա
շարերով,
շարերով.
Բարով տեսանք, իմ սիրեկան:

7 (23)

Ձիս [հ]արցընում լաց իս էլի.
Բարով տեսանք, իմ սիրելի,
վարթի նըման բաց իս էլի
խարերով,
խարերով:

Յիս քիզ ամա շատ իմ լացի.
Արի մե դարդըս իմացի.
Օրըս աշտպես անց է կացի
դարերով,
դարերով:

Դուն [հ]աքիլ իս առլաս ու խաս.
Քու սիրողին կոնիս մաս-մաս.
Յախիթ սլիտի յաղութ-ալմաս
շարերով,
շարերով:

Քիզ կու գովինք խաղի մեշըն,
Շամամնիրըտ թաղի մեշըն,
Շուռ իս գալի բաղի մեշըն
յարերով,
յարերով:

Սառթնառն վո՞ւնց դընջանա.
Աչկիրըն օսկե փընջան ա,
Դուռմանի լիզուն մընջանա
շարերով,
շարերով:

Մեջլումի պես կորաւ յարըս,
 Լեյլի ջան, ման իմ գալի
 յանա-յանա.

էրլում ա խունի շիգարըս,
 Արնի պես աչկս է լալի
 յանա-յանա:

էշխիցըթ դառիլ իմ յիզիդ,
 Հալվեցա, մաշվեցա քիզիդ,
 Ի՞նչ կուլի, մեկ խոսիս միզիդ՝
 Բեմուրվաթ, ձեն իմ տալի
 յանա-յանա:

Ինձ պահում իս էս հալի,
 Աշկիրըս արուն է լալի,
 էշխիցըթ հիվանդ իմ դժվար հալի.
 Շուռ իմ գալիս
 յանա-յանա:

Մանուշակ բաց արաց հովին,
 Կարմիր վարթ, ռեյհան հուտովին,
 Շաւ մի լացնի Սեիդ-Նովին,
 Բեմուրվաթ, կըսկըծալի՝
 յանա-յանա:

Էսպես դուբէյրի ձենով... Սայար-նովայի ասած (ծան. Օհանի):

9 (29)

Ղուրբան իմ ծոցիտ նըռանըն,
 Հոքիս տամ շիմշատ կըռանըն,
 Թաք պառկիմ յարի դըռանըն.
 Գըլխոքըս քար իմ ասում:

Հաքիլ իս ատլաս խասեմեն,
 Խըմեցու ձեռիտ թասեմեն,
 Համաշա էշխիտ բասեմեն
 էրվում իմ, ճար իմ ասում:

Բաղ կու սիրիմ՝ յիս բաղման շիմ,
Բաղի տիրոջն ճանանշ իմ,
Բըլբուլ իմ՝ սիրով վարթ կանչիմ,
Հիդ քաշվի, խար իմ ասում:

Մեջլիսներու խաղըն դուն իս,
Վանքերումըն տաղըն դուն իս,
Սայաթ-Նովու բաղըն դուն իս,
Կարոտ իմ, բար իմ ասում:

10 (30)

Քանի վուր ջան իմ,
Յա՛ր, քիզ դուրբան իմ.
Աբա ի՞նչ անիմ՝
Արտասունք անիմ,
Շատ հոգուց անիմ,
Յա՛ր, դադետ առնիմ:
Ասիր՝ ջեյրան իմ.
Թուզ քի սեյր անիմ.
Յա՛ր, մըտիկ անիմ:

Մո՛ւտ բաղչեն նազով,
Քիս գովիմ սազով,
Յա՛ր, իլթիմազով:

Շուռ դամ համդամով.
Յիրգնային նամով
Թուփըն թացվիլ է.
Խաղ կանչիմ հանգով,
Լալեքըն ռանգով,
Բաղըն լըցվիլ է.
Սուսան սըմբուլով,
Ղարիբ բըլբուլով
Վարթըն բացվիլ է:

Մո՛ւտ բաղչեն նազով,
Քիս գովիմ սազով,
Յա՛ր, իլթիմազով:

Մազիրըտ դաստա,
Պըռռըտ փըստա.
Հեյրանի վախտ է
Ե՛կ գընանք շողըն,
Վուրս անինք գողըն.
Ջեյրանի վախտ է:
Բըլբուլըն վարթին,
Վարթըն ի բաղին.
Սեյրանի վախտ է:

Մո՛ւտ բաղչեն նազով,
Քիս գովիմ սազով,
Յա՛ր, իլթիմազով:

Հաքիլ իս ատլաս,
Թուրլու դար ու խաս՝
Ղուրբան իմ բոյուտ.
Ձեռիս ունիս թաս,
Լըցնիս ինձի տաս,
Ղուրբան իմ քովուտ:
Թաք դու բաղչեն դաս՝
Անիս մասնե մաս
Քու Սալաթ-Նովուտ:

Մո՛ւտ բաղչեն նազով,
Քիս գովիմ սազով,
Յա՛ր, իլթիմազով:

Էսպես Սալաթ-Նովի ասած Սան սանիւան-ի ձեռում սեմանի քասիք
(ծան. Օհանի):

11 (32)

Մե խոսկ ունիմ իլթիմազով, ա՛նգաւճ արա, ո՛վ աչկիս լուս.
Սըրտումըս ինթիզար ունիմ, քու տիսըտ բա՛րով, աչկիս լուս.
Աջաք քիզ ի՞նչ գեթ իմ արի՝ կենում իս խըռով, ա՛չկիս լուս.
Աշխարքն աշխարքով կըշտացավ, յիս քիզանից սով, ա՛չկիս լուս:

Մագար մե մարթ յար չէ սիրի՞, էս ի՞նչ արի, էս ի՞նչ բան ա.
Դիվանա բա՛շուլ շինեցիր, ման իմ գալիս յա՛նա-յանա.

էս դարդեն օշուկ չըքաշե, վուր մին դանգին չի դիմանա.
Սիրտըս լուրի պես խորվեցիր էշխիթ կըրակով, ա՛շկիս լուս:

Դոստիրըս դուշման շինեցիր, յադերուն ինչպե՞ս դոստ անիմ.
Անցկացած օրըն չիմ սեանում, հաղար գուզե վուր դաստ անիմ.
Ա՛ստված վըկա, խիստ դըժվար ա, գըլուխըս ինչպե՞ս դուս տանիմ.
Յիս մե փուքըր նաւի նըման, քու էշխըթ է՛ ծով, ա՛շկիս լուս:

Հաղար դուզե դարդ ունենամ, իմ սըրտումըս ա՛հ չի ասի.
Իմ [հ]ուրմի- [հ]եքիմըն դու իս, յիս էլ ուրիշ շա՛հ չիմ ասի.
Սայաթ-Նովեն ասաց. դա՛լում, յիս էն մահին մա՛հ չիմ ասի՝
էրնեկ ըլի՝ դու վըրես գաս մազըտ շաղ տալով, ա՛շկիս լուս:

12 (33)

Անգին աղըն վըրետ շարած, անբան օսկու ռախտ իս, գո՛ղալ:
Աստված քիզ ու նրան պահե, ում հիդ վուր նըվախտ իս, գո՛ղալ.
Բըլբուլին լիզու շինեցիր՝ դու վարթի դըրախտ իս, գո՛ղալ.
Վարթըն մին ամիս ումբր ունե՝ դուն ամենան վախտ իս, գո՛ղալ:

Մինմին, մինմին էլ չի ասվի՝ թարիփըտ դառաւ քուլիչով.
Պատիրըտ դարով, դարբաբով, դոշամետ՝ խալով, խալիչով,
Տախտակներըտ էրծաթիցըն, միխիրըն՝ ոսկու գուլիչով.
Մե թաքավուր չէ ունեցի, դու թովուզի թախտ իս, գո՛ղալ:

Յիրգնուց վըրետ ձուն է էկի, փունջ մանիշակ նուր իս գալի,
Խըմողըտ վո՞նց [կու] կըշտանա՝ կաթնի ախպուր դուր իս գալի.
Դու բաղըն սեյրան գընալիս՝ մին մարթ այնումըտ չէ գալի,
Փաք շունիս փաշահզադիցըն, անղամ, առանց սախտ իս, գո՛ղալ:

Աջաբ յիս քիզ ինչպե՞ս գովիմ, ինչպե՞ս շարագրանք իմ անում.
Սիրտըս էշխիցըթ էրած ա, ոչինչ ճարով չի հովանում,
Դիռ չի միռի Սայաթ-Նովեն, դուն ինչի՞ տըխուր իս, ջա՛նում.
Թաք յիս միռնիմ, դու սաղ ըլիս, գերեզմանըս վաղ տիս, գո՛ղալ:

Թամամ աշխարք պըտուտ էկա, չըթողի Հաբաշ, նազանի.
 Զըտեսա քու դիդարի պես՝ դու վուխչիցըն բաշ, նազանի.
 Թե խամ հաքնիս, թե զար հաքնիս, կու շինիս դումաշ, նազանի.
 Էնդուր համար քու տեսնողըտ ասում ա վա՛շ, վա՛շ, նազանի:

Փարսերեն ասիմ էրեսըտ, նըման է շամշի դամարին.
 Բարակ միչկիտ թիրման շալըն նըման է օսկե քամարին.
 Ղալամըն ձիոն չի գալի, մաթ իս շինի նաղըշարին.
 Յիփ նըստում իս՝ թութի դուշ իս, յիփ կանգնում իս՝ ոաշ, նազանի:

Դու էն գըլխից ջաւահիր իս, էրենկ քու առնողին ըլի.
 Ու վ գըթնում է ալա չի քաշում, վա՛յ քու կորցընողին ըլի.
 Հա՛յիփ, վուր շուտուլ միոնիլ ա. լուսըն քու ծընողին ըլի.
 Ապրիլ էր, մին էլ էր բերիլ քիզ նըման նազա՛շ, նազա՛նի:

Դու էն գըլխից ջուհարդար իս, վըրես դարնըշան է քաշած.
 Դաստամազիտ թիլի մեչըն մի շադա մարջան է քաշած.
 Աչկիրըտ օսկե փիալա՝ շարխիցըն փընջան է քաշած.
 Թերթերուկըտ՝ նիտ ու նըշաար, սուր դալամթըրաշ, նազանի:

Յիս է՛ն Սալաթ-Նուվասին չիմ, վուր ավղի վըրա հիմնանամ.
 Աջաբ միդիդ ի՛նչ իս կամում՝ սըրտեո մին խաբար իմանամ.
 Դու կըրակ, հաքածըտ կըրակ, յիս էրկուսին վո՞նց դիմանամ.
 Զարլու դալամաքարի վըրան ծածկիլ իս մարմաշ, նազանի:

14 (34)

Էնդու համա քու տեսնողըն ասում է վա՛շ, վա՛շ, նազանի.
 Թամամ աշխարք ման էկա, չըտեսա Հաբաշ, նազանի,
 Վուրդի վուր գոզալ տեսա, դուն դիփուենն բաշ, նազանի,
 Թե զար հաքնիս, թե խամ հաքնիս, կու շինիս դումաշ, նազանի:

Դուն էն բաշտան ջուհարդար իս, վըրես դարնըշան է քաշած,
 Դաստամազիտ թիլի մեչըն մե շադա մարջան է քաշած,
 Աչկիրըտ օսկե փիալա, շարխումըն փընջան է քաշած,
 Ունքիրըտ նիտ ու նաշաար, սուր դալամուլ թրաշ, նազանի:

Դունն էն բաշտան ջաւահիր իս, էրնեկ քու առնողին ըլի,
Քու առնողըն ախ չի քաշի, վա՛յ քու կորցընողին ըլի.
Հա՛իփ, վուր շուտով միռավ՝ լուսըն քու ծընողին ըլի.
Ապրիլ էր, մեկիլ բերիլ էր քիս պես դարաղաշ, նաղանի:

Յիս ինչ Սալաթ-Նուլեն իմ, աւլղի վըրենն չեմ դիմանա,
Առանց քիզ էս աշխարիս յիս կենթանի չիմ դիմանա,
Դունն կըրակ, հաքուստըթ կըրակ, յիս էրկուսին վո՞ւնց դիմանամ.
Զար ու դաւամբարի վըրենն ծածկիլ իս մարմաշ, նաղանի:

15 (34)

էնդու համա քու տեսնողըն ասում է վա՛շ, վա՛շ, նաղանի.
Քամամ յիրգիր պըտուտ տըվի, չըթողի [շ]ամաշ, նաղանի.
Վուրդի վուր գողալ տեսա, դունն դիփունանց բաշ, նաղանի,
Թե դար հաքնիս, թե խամ հաքնիս, կու շինիս դումաշ, նաղանի:

Դունն էն բաշտան ջուհարդար իս, վըրես դարնըշան է քաշած,
Դաստամաղիտ թիլի մեշըն մե սաղա մարջան է քաշած,
Աչկիրըտ օսկե փիալա, չարխեմեն փընջան է քաշած,
Թերթերուկըտ նիտ ու նաշտար, սուր դաւամթրաշ, վա՛շ նաղանի:

Փարսեւլար էրեսըտ գովիմ, նըման է շամշ ու դամարին,
Բարակ միշկիտ թիրմանու շալ՝ նըման [է] օսկե քամարին,
Ղաւամըն ձեռիտ չէ դալի, մաթ իմ նաղաշքարին,
Յիփ նըստում իս թութի դուշ իս, յիփ կանգնում իս՝ ուաշ, նաղանի:

Դունն էն բաշտան անգին քար իս, էրնեկ քու առնողին ըլի,
Քու առնողըն ախ չի քաշի, վա՛յ քու կորցընողին ըլի,
Հա՛իփ, վուր շուտով միռավ՝ լուսըն քու ծընողին ըլի.
Ապրիլ էր, մեկ էլ բերիլ էր քիս պես դարաւաշ, նաղանի:

Յիս էս Սալաթ-Նուլեն իմ, յիս էս նաղին վո՞ւնց դիմանում,
Մե փուքըր մուլափ կու տաս՝ սըրտեմեն խաբար իմանամ,
Դունն կըրակ, [հ]աքուստըտ կըրակ, յիս էրկուսին վո՞ւնց դիմանամ.
Զարու դաւամբարի վըրենն ծածկած իս մարմաշ, նաղանի:

Թամամ աշխարք ման եկա, շըտհաս Համաշ, նաղանի,
Վուրտի վուր գողալ տեսնես՝ դուն դիփուկանց մաշ, նաղանի,
էնդու համա քու տիսնողըն ասում է վա՛շ, վա՛շ, նաղանի:

Դուն էն գըլխեն ջուլարտար իս, վըրետ դարնըշան է քաշած,
Դաստամաղըտ թիկնամիջիտ մե սաղա մարջան է քաշած,
Աշկիրըտ օսկե փընջան, մասաղա մարջան է քաշած,
Թերթեւլունքիրըտ նիտ ու նըշտար, սուրլու դամթըրաշ, նաղանի:

Դուն էն գըլխեն աննըման իս, էրնեկ քու տեսնող[ին] ըլի,
Քու տեսնողըն ախ չի քաշի, էրնեկ քու կորցնողին ըլի,
Եփոր շուտով միռալ, լուսըն քու ծընողին ըլի.
Ապրիլ էր, մեկ էլ էր բերի քիւ՝ ղարաղաշ, նաղանի:

Փարսևար երեսըտ գովիմ, նըման է շամշ ու դամարի,
Բարակ մեջքիտ քիրմանու շալ, նըման է օսկե քամարի,
Ձիռումըտ դալամ չէ գալի, մոտիկ բերում նաղըշքարի,
Երբ նըստիս՝ թութի դուշ ես, կանգնում ես՝ ռաշ, նաղանի:

Սալաթ-Նուլեն իմ ես, առանց սաղի վո՞ւնց դիմանամ,
Մե սըհաթ մուլափ սուր, սըրտեմետ խաբար իմանամ,
Դուն կըրակ, հաքուստը կըրակ, ես երկուսին վո՞ւնց դիմանամ.
Հընդու ղալամքարի վըրեն հաքնում ես մարմաշ, նաղանի:

17 (35)

Մողըտ նըստողըն կու հարփի՝ դու բանդ ու բողա իս, ազիդ.
Դիվանա Փահլուլ կու շինիս տեսնողիտ՝ ջաղա իս, ազիդ.
Ինչ տիղ նըստիս, շընուք կու տաս՝ մեջլիսի մաղա իս, ազիդ.
Մաղեն մին սահաթ լալ կուլի, դուն համան թաղա իս, ազիդ:

Տեսնողըն թահրըտ կըտընդդե փարշևանդի բընբուլի պես.
Ջընի տակեն նուր դուս էկած, արիւլ դիբած սընբուլի պես.
Թուղ վըրետ լալով պըտուտ գամ, վարթ կորցըրած բըլբուլի պես.
Դու ինձ շուտով մի փախցընի՝ շավարդեն-բաղա իս, ազիդ:

Մե խոսկըտ քանց շաքար քաղցըր, մե խոսկըտ վառ՝ քուրա-քուրա.
Մե նըմանըտ ուշի նըման, մե նըմանըտ ջուրա-ջուրա.
Մարքարխտով լիբըն կալ իս, սաղափնիրըտ թուրա-թուրա.
Էրծաթե կողպեքով կողպած, դուն, օսկե ուղա իս, ազիզ:

Էշխիցըթ հիվանդացիլ իմ. վունց զարար, վունց շահ ին ասում.
Հեքիմնիրըս ափսոսում ին՝ ծընդան տալով գայ ին ասում.
Մեծրողըս դարդակ է գընում. «Ա՛խ, Սալաթ-Նովա» ին ասում.
Թե դու գուքաս կու լավանամ, թե սաղիս սաղա իս, ազիզ:

Սալաթ-Նովեն մի ազիզ անվանի բարեկամ է ունեցել, էս փվլաման նրա
վրա է ասել (ծան. Օհանի):

18 (36)

Ա՛րի համով դուլուղ արա, խալխի նոքար Սա՛լաթ-Նովա.
Ղաստ արա՝ շուշետ չըկտորին, չը խըփին քար, Սա՛լաթ-Նովա,
Համաշա չիս կարող ճարի շահով շքար, Սա՛լաթ-Նովա.
Ով քիզի լիզի պարքիվե, դու տուր շաքար, Սա՛լաթ-Նովա:

Գուզիս դըբրատան[ըն] պահ տաս՝ թագելով չի խըրատվի խիվըն.
Մինչուու անձնեն չըդուս էհա անախտիլի էն չալ զիվըն
Բեդասըն ասըլ չի դառնա, թոլով չի ճերմակի սիվըն,
Ծուռըն փետըն չի դըբրատի ունդան, դուրդար Սա՛լաթ-Նովա:

Թե էս կենաց փառքըն չուզիս՝ էն կենաց ալմասըն կու տան.
Թե հոքուտ խաթիր շալ հաքնիս՝ դար քաշած ատլասըն կու տան.
Թեվուր լալով գըխճում անիս՝ անմահացըն մասըն կու տան.
Խոստովանիս արած միզկըտ՝ շանիս ինքար, Սա՛լաթ-Նովա:

19 (37)

Էշխիցըթ հիվանդացիլ իմ, դիզի համար իմ լալի.
Վախում իմ, թե դարդըն հալե, յիզի համար իմ լալի,
Տանեն դուս արածի նըման տիզի համար իմ լալի,
Շահի կարքած վեզիրի պես գիզի համար իմ լալի:

Սիրտըս լուրի պէս խորվեցիր, դուգունն ու դաղըն ի՞նչ կոնիմ,
Վունց դոբա ունե, վունց չափար, յիս էնպէս բաղըն ի՞նչ կոնիմ.
Անդի լարըն կըտըրվիլ ա, դարդակ սադաղըն ի՞նչ կոնիմ.
Նիտըս քարումըն կոտրեցի, թիղի համար իմ լալի:

Մին աիդ հուքմի հեքիմ չըկա՝ էհամ դուռըն կանչիմ հա՛րա.
Ո՛ւր է կողմայի հեքիմըն, բալքամ անն դարդիս չարա.
Տիս թե ինչպե՞ս է շըփոթվիլ, դուն իմ խիլքիս մըտիկ արա,
Ջուրն էկավ, գերանըս տարավ ծիղի համար իմ լալի:

Դարդիրըս մինմին չի ասվում՝ իմաստնենքու բանքի նըման.
Ղալամըն գիրըս չի գըրում՝ մեչըն ցամաք թանքի նըման.
Ա՛խ, յիս չիմ կարացի մըտնի ծովի ծածկած վանքի նըման.
Խոստովնահերըս հիռացավ, միղի համար իմ լալի:

Գիղումըն՝ մելիք-տանուտեր, քաղքումըն սուլթան ու խան իս.
Բաղումըն՝ վարթ ու մանուշակ, սարումըն սընբուլ-սուսան իս.
Ղաբուլ ունե Սալաթ-Նովեն՝ թաք քու ձիռովըտ սըպանիս.
Միռնիլուս խաթրի չիմ հոքա, ցիղի համար իմ լալի:

էս լավ երգ է, սեմայի են ասում (ծան. Օհանի):

20 (41)

Հուտըտ աշխարըս մալիլից՝ բալասանի ծառ բացարած.
Թըխտիրըտ օսկու վարադով Ասմավուր իս՝ ճառ բացարած.
Կարթուղըն սարքետ չի խաբար, լուսի աստղ սլաճառ բացարած
Օշով դիմաթըս՝ չի գիղի, ջավահիր իս, քար բացարած:

Բարովիմ՝ բարով չիս առնում՝ թաքավուրի սալամի պէս.
Ջիռնիրըտ ճերմակ մաքաղաթ, լիղուտ օսկե ղալամի պէս.
Ջարուղարբաբե դըրոշա՝ ման իս գալի ալամի պէս.
Տեսնողըն էնպէս կիմանա՝ շահ իս գալի, ջառ բացարած:

Ամեն մարթ չի կարող մըտնի՝ էշխիտ ջուրըն հիդ է, դա՛լում.
Մըտնում ա յարսուն կարմունջ[ըն]՝ չասիս, թե մե՛ գիդ է, դա՛լում,
Ունքիրըտ սալիդ սաղախ է. թերթերուկըտ նիտ է, դա՛լում.
Պատահողըն չի սլըրծընի՝ դուռ մահու պատճառ, բացարած:

Օրըն յարսուն ռանգ կըհաքնիս, վունշ մինը չէ տուլի նըման.
Բարակ մեշկըտ ղարղուղամիշ. էրեսըտ թայգուլի նըման.
Ինշ վախտ խաղաս՝ կըվըռվըռաս օցի բերնի հուլի նըման.
Մութ[ըն] տիղըն լուս իս տալի առանց կըրակ՝ վառ բացարած:

Յար քիզանից հիռանալըս միռնելուս վըրա դըժվար ա.
Հիզուտ քաղցըր, խոսկըտ քաղցըր, ակըռքնիրըտ անգին քար ա.
Մարթի ուշկըն աանող խալըն էրեսիտ բոլորքն շարած ա,
Ինչպես Սայաթ-Նովու լիղուն յոթանասուն բառ բացարած:

21 (43)

Աջաբ քու սիրտըն ո՞ւլ շինից՝ խոնարից, [հ]իզնից բեղամաղ.
Քանի գուզե մարթ վուր հարփի, վո՞ւնց կուլի վաղնից բեղամաղ.
Քամեցիր էշխիտ մանգանով. յիս պիտիմ քիզնից բեղամաղ.
Աջաբ քիզ ի՞նչ գեթ իմ արի՝ կենում իս միզնից բեղամաղ:

Ինշ քիզանից հիռացիլ իմ, իմ ջանումըս ջան չէ մըտի.
Խիլթըս գըլխիցըս տարիլ իս, ձիոիս մեշըն բան չէ մըտի.
Հենց գիգիմ թե շուրս տարի է քաղաքըն քարվան չէ մըտի՝
Նըստած իմ ռախտարի նըման՝ իջարից, միզնից բեղամաղ:

Հասավ դարունքվան վախտըն, բըլբուլնիրըն դալ է ուղում,
Կարմիր ու գուլղալ ա հաքի՝ սարվիթըն խաղալ է ուղում.
Սայաթ-Նովեն առանց [նը]նգիր վիզ[ըն] գըցած լալ է ուղում,
Ջառ կորցըրած խոնթկարի պես նըստած ա խաղնից բեղամաղ:

Գուզիս իմա՛ցի, կարթա՛ցի իմաստնաց սիրով տռակըն՝
Ախ քաշելեն սիրտըս էրվալ, վիր էկալ սըրտիս վարակըն.
Աստված վըկա, մարթ չըքաշե՝ դըժվար է էշխի կըրակըն.
Տեսա յարալու ջեյրան[ըն]՝ վուրսնուրթի միզնից բեղամաղ:

22 (44)

Բեղասլին վուր խոսեցընիս, լալ անիլըն ինչի՞ն է շահ.
Մարթ վուր քու խոսկով միռանի՝ գալ անիլըն ինչի՞ն է շահ.
Պատանքին մին ռանգն ա հերիք՝ չալ անիլըն ինչի՞ն է շահ.
Ռանգըն վուր սեպղեն նընգնե՝ ալ անիլըն ինչի՞ն է շահ:

Մարթ պիտի թանգ հախ տա, առնե խոսկիրըն փիր ուստադեմեն.
Ռանգըն ոանգերուն ծածկում ա, հուջրեքըն լիքն ա սադեմեն.
Թեգուզ զար զարբաբ հաքցընիս, վուր չըլի ասըլջադեմեն...
Սիվ արաբի ճալտի վըրա խալ անիլըն ինչի՞ն է շահ:

Լալ մարթ նա է՝ սիրով անե բարի հրիշտակներու կամքըն.
Իմաստուններն էլ չըտեսան էս աշխարիս հուտն ու համքըն,
Չուրս գըլխանի ուաշի վըրա աջալըն դըրիլ է թամքըն.
Աշխարըս միզ մընալու չէ՝ մալ անիլըն ինչի՞ն է շահ:

Մեր ու մանուկ բաժանվեցան, մանուկն հալբաթ ունի լալու.
Սատանեն մի՝ թոռ է գործել Աթամի զարմըն վուրսալու.
Շատըն սատանեն է տանում, վիրչըն մընում ա վա՛յ տալու.
Վուր չի Ուռնի կալի նըման՝ ալ անիլըն ինչի՞ն է շահ:

Շուռ էկավ շարխի փալագըն, դովլաթըն միզնից խըռով ա.
Ում հաքին հին շալ ին տեսնում, էլ չին ասում, թե էս ո՞վ ա.
Յարովըտ մին մըհլամ չունիս, էնդուր գու լաս, Սա՛յաթ-Նովա.
Ջարեքըն դիդես չին խաբար՝ փալ անիլըն ինչի՞ն է շահ:

23 (45)

Պատկիրքըտ դալամով քաշած, թահրըտ ոանգն ոանգ իս անում.
Էրեսըտ խալըն ծածկում ա, մադիրտ օցի հանդ իս անում.
Բաց իս էլի, կարմիր վարթ իս, բըլբուլի հիդ հանգ իս անում.
Ակոեքըտ օսկումըն շարած, պըռոշըտ մեհանգ իս անում:

Յա՛ր, քու ծոցըն վարթ, մանուշակ, սընբուլ [ու] սուսան իս շինի.
Քու տերըն բաղըն ի՞նչ կոնի՝ քու հուտըտ ռեյհան իս շինի.
Քամին մեչըն անց ա կենում՝ մադիրըտ ելքան իս շինի.
Աշխարըս ծով, դու մեչըն նավ՝ ման իս գալի, լանգ իս անում:

Թարիփըտ ոշով չի ասի, քաղաք քաղկով, գիդ՝ գիդի պես.
Միռնողըն քիզնից կառնի անմահական դիդ՝ դիդի պես.
Յիփ խաղում իս, ժաժ իս գալի, շըխշըխկում իս ջիդջիդի պես.
Ի՞նչ կոնիս սանթուր, քամանչեն՝ դուքսըտ շոնգուր, շանգ իս անում:

Տասնիցըն մինըն չին ասի, թեգուզ աշխարըս քիզ գովին.
Նովափար, ծաղիկ ծովալին, մանիշակ բացարած հովին.
Բաս քու սիրուն վո՞ւնց դիմանամ, ջուրըն տանի Սալաթ-Նովին.
Թե տեսնողըտ մին էլ տեսնե՝ դիվանա ու բանդ իս անում:

24 (45)

Կարմիր վարթիս էլի, գո՞ւալ, բըլբուլի հիդ հանգ իս անում.
էրեսիտ խալըն ծածկիլ իս, մազիրըտ խափանգ իս անում.
Պատկիրբըտ դալամով քաշած, թահրըտ ունգե ունգ իս անում,
Ակոեքըտ օսկումըն շարած, պըռոշըտ մահանգ իս անում:

էրեսըտ տեսնելու կու դան քաղկե քաղաք, գիղ՝ գիղի պես,
Մեռնողներըն քիզմե գուլին անմահական դիղ՝ դիղի պես,
Յիփ տիղեմետ շուռ իս գալի, շըխշըխկում իս ջիղջիղի պես,
Ի՞նչ կոնիս սանթուր-քամանչա, զուգսըտ շոնգուր-չանգ իս անում:

Պատկիրբըտ նուր լուսնիակ է, քանի կեհա կու բուլբուլի,
Դաստամազըտ նամն ի՞նչ կոնե, առանց հուսիլ կու օլըրվի,
էնդու համա քու տեսնողըն իր ճանփեմեն կու մուլըրվի,
Յիփ նըստում իս մեջլիսումըն, չամ շըրաղը բանգ իս անում:

Քու տեսնողըն բաղն ի՞նչ կոնե, քու հուտըն ուհան իս շինի,
Ծուցիտ մեչըն վարթ, մանիշակ, սընբուլ ու շուշան իս շինի,
Քամին մեչըն անց է կենում, մադիրըտ ելքան իս շինի,
Աշխարքըն ծով, դուն մեչըն նավ, ժուռ իս գալի, լանգ իս անում:

Տասնեմեն մեկն չին ասի, թեգուզ աշխարքըս քիզ գովին,
Նունուփար, ծաղիկ ծիրանի, մանիշակ բաց արած հովին,
Բաս քու էշխին վո՞ւնց դիմանա, ջուրըն տանե Սալաթ-Նովին,
Թե տեսնողըտ մեկ էլ տեսավ դիվանա դաբանգ իս անում:

25 (45)

Կարմիր վարդ, բաց ես էլե, բըլբուլի հիդ հանգ ես անում,
Երեսիդ խալը ծածկիլ ես, մազիրըդ խափանգ ես անում:

Ծս քու սիրողդ գալիս եմ քաղքե քաղաք, գիղ՝ գիղի պես,
Մեռնողները քիչ խընդրում են անմահական դիղ՝ դիղի պես,
Երբ տեղումըն շուռ ես գալի, շղջըղկում ես ջիղջիղի պես,
Ի՞նչ կոնիս շոնկուր, կամանչա, դուգսըտ շոնկուր-չանկ ես անում:

Կարմիր վարդ, բաց ես էլե, բըլբուլի հիդ հանդ ես անում,
Երեսիդ խալը ծածկիլ ես, մաղիրըտ խափանդ ես անում:

Պատկիրքըտ նոր լուսնիակ է, քանի կենա կու բոլորվի,
Դաստամաղըդ նամն ի՞նչ կոնե, առանց նամի կու օլորվի,
էնդու համա քու տեսնողներն քու ճամբեմեն կու մոլորվի,
Երբ նըստում ես մեջլիսումը, շամ չըրաղը բանդ իս անում:

Կարմիր վարդ, բաց ես էլե, բըլբուլի հիդ հանդ ես անում,
Երեսիդ խալը ծածկիլ ես, մաղիրըդ խափանդ ես անում:

Քու տեսնողըն բաղն ի՞նչ կոնե, քու ծոցըտ ոեհան ես շինե,
Ծոցիտ մեջը վարդ, մանիշակ, սըմբուլի սուսան ես շինե,
Քամին մեջը անց է կենում՝ մաղիրըդ էլքան ես շինե,
Աշխարըս ծով՝ դուն միջումըն շուռ իս դալի, լանք ես անում:

Կարմիր վարդ, բաց ես էլե, բըլբուլի հիդ հանդ ես անում,
Երեսիդ խալը ծածկիլ ես, մաղիրըդ խափանդ ես անում:

.
. ջուրը տանի Սայաթ-նովին,
Քու տեսնողըն մեկ էլ տեսնե

26 (45)

Կարմիր վարթ, բաց իս էլի, բըլբուլի հիդ հանդ իս անում,
Ակըռքներըտ օսկով է շարած, սուռնիրըտ մեհանդ իս անում,
Պատկիրքըտ ղալամով քաշած, թահրըտ ոանդե ոանդ իս անում,
էրեսիտ ալըն ծաղկում իս, մաղիրըտ ղափանդ իս անում:

Քու սիրողըն բաղն ի՞նչ կոնե, քու ծուցըն ոեհան ի շինի,
Ծուցեմետ վարթ, մանիշակ, սունբուլ-սուսանբար ի շինի,
Քամին փըշե, անց կու կենա, մաղիրըտ ղափանք իս շինի,
Աշխարքըն ծով, դուն մեջըն նավ, շուռ իս գալի, լանդ իս անում:

էնդուր լաւ է լաւ հեքիմըն, դիդ տալու է, ցաւ տալու չէ,
Քանի գուլե արբաբ անե, նոքարն աղին դաւ տալու չէ,
Դուն քու սիրտըն իստակ սլահե, յադի խոսկըն ավտալու չէ,
Խոսկըտ զորբա զորիլ է, մարթու անգումանգ իս անում:

27 (46)

Աշխարըս մին փանշաբա է, թաղերումեն բեղարիլ իմ.
էրեգ լաւ էր կանց[վուր] էսօր, վաղերումեն բեղարիլ իմ.
Դուգուննիրըն շատացիլ է, դաղերումեն բեղարիլ իմ.
Մարթ համաշա մեկ չի ըլի. խաղերումեն բեղարիլ իմ:

Աշխարըս միդ մընալու չէ, քանի նըստինք զոդ ու սափին.
Հում կաթնակիր՝ Աթամի դաթ, նալաթ ըլի էտ քու բափին.
Համփիրութինս հատիլ ա, չիմ դիմանում խալխի գափին.
Դոստիրըս թըշնամի դառան. լաղերումեն բեղարիլ իմ:

Ո՞ւ կոսի թե յիս կու ապրիմ առ[ա] ուտից մինչրու մուտըն՝
Ասաըձու ձիռքումըն հիշտ է մարթու աշխարը ելնումուտըն.
Ղուրթս էնդուր ճանփա չէ գընում՝ շատացիլ ա խալխի սուտըն.
Քըսանըն՝ մե զուլ չին պահում. աղերումեն բեղարիլ իմ:

Դովաթըն էյթիբար չունե, ինչվախտ կերթա ուր շըքարով.
Հաւ մարթն էն է՝ ուրան պահե աշխարումըս էյթիբարով,
Աշխարըս միդ մընալու չի՝ իմաստնաց սիրով խաբարով.
Գուլիմ թըռչի բըլբուլի պես. բաղերումեն բեղարիլ իմ:

Սալաթ-նովեն ասաց դարդըս քանց մին ճարըն շատացիլ է.
Չունիմ վաղվան քաղցր շարթըս. հիմա դարըն շատացիլ է,
Բըլբուլի պես էնդուր գու լամ՝ վարթիս խարըն շատացիլ է.
Չին թողնում վախտին բացվելու. բաղերումեն բեղարիլ իմ:

Էսպես լալ հայերեն մուսամբագ, Սալաթ-նովալի ասած (ծան. Օհանի):

28 (52)

Խաբար գընաց բըլբուլի մոդ՝ վարթըն քու գալուն մընում է,
Ճըխկընիքըն բացրացիլ ին, վըրետ շուռ գալուն մընում է,
Առաուտան զանգակի պես քախցըր ձեն տալուն մընում է,
Բըլբուլն ասավ՝ չիմ կարա գա, պուճպուճեն լալուն մընում է:

Վարժըն ասա՛վ՝ իմ բուլբուլին ալ պուճպուճեն լո՞ւնց կու խափե,
Քանի վաղ է, դարիք բըլբուլ, դուն քու բաղի ճամփեն չափե,
Հագար գուզե ղայրաթ անե, Սիպտա դիւլըն կուռըն կապե,
էլի վիրշումըն մեյդանըն Ռոստամու Զալուն մընում է:

Վարժըն ասա՛վ՝ խա՛նն բըլբուլ, նա՛լաթ դա քու էհտիբարին,
Անցկացա՛վ ապրիլ-մայիսըն, ինչի՞ չըհարցըրիր յարին,
Զէթուղ մուրադին հասիլ էր, տե՛ս ինչ արա՛վ քա՛վթար դարին,
Փահրադըն իրան սըպանից, Շիրին խանջալուն մընում է:

Հաղրենըն մեկըն չիմ ասի, թեգուլ աշխարք դիւի գուլին,
Գարունքին ծաղկներով հուտ կու տաս, ամըւլան հուլին,
Հենչաք ըլի դուն սաղ ըլիս, ջուր[ըն] տանե Սոյաթ-Նուլին,
Շահ-Աբասի կալի նըման շահն վրես գալուն մընում է:

29 (57)

Մըշու սուլթան սուրփ Կարապիտ, երկինք է հասչալ գուլըն քո,
Կուլս վարթապիտ նըշմաբտության, չըկար հավասար ոքըն քո.
Ոռովայնից երգիր պաֆիւ, արմացչալ ին ծընողըն քո.
Անապատեն բարբառեցար, հըրաշախոս շըրթնոքըն քո:

Գընացիր գետըն Հորդանան, Տերըն ինֆըն մըկըրտեցիր.
Տիրոջըն դու ցուցիր մարդկանց՝ երուրդութիւնըն հայտնեցիր.
Յիս վասըն այն ուրախ եմ շատ՝ չար սատանեն կոց[ըրեց]իր.
Երեսուն ամ ի մեջ ալրի, վասն աշխարի աղոթեցիր.
Մեղր վայրենի մայիլիցար, շատ քաղցըր ին քարողըն քո:

Կըռապաշտըն քիզ հյուր կանչեց, գորս ամենայն յուր հավաքաց.
Բազմությունըն եղև հուլչալ, եխպուր աղջիկըն չըխաղաց.
Երդում կերա՛վ գահի վերա, ինչ որ ուզես, կու տամ՝ ասաց.
Մարգարեի գլուխըն ցանկաց, չալլաքըն շուտով գըլխատյաց.
Օխտն անուն [հ]իշատակեցին, որ կըտրեցին շըլինքըն քո:

Ամենայն տիղ հայտնի է, լուսապրսակ դըրիր անանց.
Ոչով հատըք չի լինի՝ թագ ու պարծան իս կուսանանց.
Խաչապաշտյաց հիմըն դառար, աշտանակ իս ամեն վանանց.
Մասունֆք ամեն տիղ ծավալի, ամեն տիղ է լուս-շողըն քո:

Ինչ հրաշալի կերպ ունիր դուն, սանքարամիտն զօրոք սարսյալ.
Տարտարոսը հայտնի արիր, ավետիս համ[այն] առաջյալ.
Դրախտի հրիշտակըն իս դուն, սուրբըտ սրբոց սիրտըք մաքրյալ.
Սայաթ-Նովեն շատ կու ողպա, աղաշում է երեսն անկյալ.
Միզավորաց միդկըն հա՛լե, լուսով լի է տապանքըն քո:

30 (59)

Թաքավոր ես, դիվանս արա, յա՛ր, քո արեւըն կու սիրես,
Նըհախ տեղըն մի՛ բարկանալ, շա՛հ, քո [արեւըն կու սիրես],
Կարմիր վարդըս մի՛ փուլ ածիր, խա՛ր, քո [արեւըն կու սիրես],
Ուր որ երթաս ինձ էլ հետըտ տար, քո [արեւըն կու սիրես]:

Կարմիր վարդըս խեչվընումըն շով նամ արխեն սաղ էլնելով,
Կանանչ տերեղդ բաց կուլի, կարմիր ու գուլիաղ էլնելով,
Ամեն ծիտ պըլպուլ չի դառնալ, վարդին փայտնդաղ էլնելով,
Վարդն ակռավին նըշանց մի՛ տալ, ծա՛ռ, քո արեւըն կու սի[րես]:

Վարդըն մայխսին բաց կուլի, փոթուըն կու տանեն խաչեն,
Քանի որ կուլի թըռըշկի՝ պետկական է վարդի չեչըն,
Քեզ ոսկե ամբարչա պիտի, մի՛ նըստիլ պըղընծի մեջըն,
Ո՛վ ջավահիր, անգին ալմաղ, քա՛ր, քո արեւըն [կու սիրես]:

Ակռավըն պըլպուլ չի դառնալ, քանի որ գուլե ա՛խ անե,
Ամեն ըռանկ վարդի մեջըն, կարմիր վարդըն սիրեկան է,
Կող մարդուն մանկաղով երքըդ ծիկ կու տա, տակուով կու հանե,
Մի՛ թողնիլ հասկըդ քաղելու, վա՛րդ, քո արեւըն կու [սիրես]:

Բըլպուլըն սարիցըն կսլիս, ուր լեզվուդ բաղ ու վախ կանչելով,
Ատամները վիւր թափվեցավ շատ ըլթիմաղ աղաչելով,
Սայաթ-Նովեն բեղարվել ա շատ յարանա հաղ կանչելով.
Ըլթիմաղըն էսպես կուլի, յա՛ր, քո [արեւըն կու սիրես]:

31 (59)

Թաքաուրս իս, դիվանս արա, թաք քու արիվըն կու սիրիս,
Ուրոր գընաս ինձ էլ հիդըտ տար, քու արիվըն կու սիրիս.
Ակռավը բուլբուլ չի դառնա, քանի գուլե վուր ախ անե.

Ամեն ռանգ ծախկի մեշը կարմիր վարժը սիրեկան է,
Գուղ մարթը մանգաղով գուքա, ձիք կու տա, տակունն կու հանե:

Մի՛ թողնի ասկիտ քաղելու, վա՛րթ, քու արիւլըն կու սիրիս:
Բուլբուլը սարեմեն գուքա, իր լիզվովը բաղ կանչելով.
Սայաթ-Նովեն, վուր բեղրիլ է, շատին էրից խաղ կանչելով.
Ո՛վ ջաւաճիր, անգին ալմաս, յա՛ր, քու արիւլըն կու սիրիս:

32 (59)

Վարդը էն ամսին բաց կուլի,
Որ տանին դիմաց խեշըն
Քանի որ գուզն շըմըշկի՝
Պետկական է վարդի չեշը:

Քեզ օսկն ամբարշա պիտի,
Մի նըստի պըղընձի մեշը,
Նով ջաւաճիր, անգին ալմազ,
Յա՛ր, քու արիւլը կու սիրիս:

Վարդըն խեշվընումըն կուլի՝
Նամ-նամ արխին սաղ ըլելով,
Կանանչ փոթովը բացվիլ է՝
Կարմիր ու գուլգաղ ըլելով,
Վարդն ակոբվին մի՛ շանց տա,
Յա՛ր, քու արիւլը կու սիրիս:

33 (65)

Գելն ու շոբանըն մեկ մեկու հիդ ռաստ էկան,
Գելն ասաւ՝ «Բարով տեհա, շոբան ախպեր»:
Չոբանն ասաւ՝ «Յիս քու բարովն ի՞նչ կոնիմ.
Գըլխեմես ռադ ըլի, չիմ քընի, անգիր»:

Գելն ասաւ՝ «էնքան մուլափ կու տամ գեդինը մըթնի,
Ուսուլով ման գուքամ, բինետ կու գըթնիմ.
Շնեբու հաշոցեմեն իսկի չիմ խըրտնի,
էգուց առուտեհան խերն ու շառը շանց կու տամ»:

Զոբանն ասաւ՝ «Դուն հենց գիգիս քո՞ւն ունիմ,
Ամեն օխչրի գըլխին մե-մե շուն ունիմ,
Թեվուր գուքաս, ինձի մինձ իղբալ ունիմ,
Քրկըթե կըրկալըն ճըտիտ շանց կու տամ»:

34 (65)

Գելն ու շոբանը մեկ-մեկու ռաստ էկան.
Գելն ասաւ՝ «Այ բարով շոբան, այ ախպեր»:
Զոբանն ասաւ՝ «Յիս քու բարով տալը չիմ ուզում,
Թե չէ կոմբլիս տակը կու գըցիմ,
կընծկընծալի շանց կու տամ»:

Գելն ասաւ՝ «էնքան մուլափ կու տամ, վուր ամպը ցըմաքի,
Ակոիքըս կու գըցիմ դոչի դըմակին,
Վուրը կուտում, վուրը կու խիղզիմ,
Առավուտյան խերն ու շառը շանց կու տամ»:

Զոբանն ասաւ՝ «Հենց գիտենաս գիշերներով քո՞ւն ունիմ,
Մե-մե օխչրի գըլխին մի-մի քոփակ շուն ունիմ,
Թե ճանկըս նընդար, յիս իղպալ ունիմ,
Երկըթե կըրկալը շըլընքիդ շանց կուտամ»:

Գելն ասաւ՝ «էնքան մուլափ կու տամ, վուր արեւը մըթնի,
Ուսուլով ման կու դամ, պինեդ կու գըտնիմ,
Վուրը կուտիմ, վուրը կու խեղզիմ,
Առավոտյան թամաշան շանց կու տամ»:

Սաչադ-Նովն ասաւ՝ «Յիս մի կարմիր կով իմ.
Կովկիթըս կոտըրվիլ է, հարսի մոդ խռով իմ.
Գիլի մոդ ի՞նչ բան ունիմ, շոբնին կու գովիմ,
Մե-մե անգամ մածնի համը շանց կու տամ»:

35 (65)

Գելն ու շոբանը մեկս մեկու ռաստ էկան.
Գելն ասաւ՝ «Ու՛ր իս գընում, բարով, իմ շոբան ախպեր»:
Զոբանն ասաւ՝ «Գըլխեմես ռադ էլ,
Վունց քու խերը գուղիմ, վունց քու շառը»:

Գեւն ասաւ՝ «Հեստի թաքուն դուքամ, դուն էլ շիմանաս,
Ակոեքըս կու գրցիմ զոչի դըմակին,
Կեսը կու կոտորիմ, կեսը կու խիխտիմ.
Առուտեհան վիր կու կենաս, խերն ու շառը շանց կու տամ»:

Չոբանն ասաւ՝ «Հենց գիդիս թե դուրթ քուն ունի՞մ.
Մե ամկս ու անգաճըս քու կըռնեն ունիմ.
Թե ճանգըս կու նընգնիս, յիս իզբալ ունիմ,
Առուտեհան շլընքիտ էրկըթե կըրկալը շանց կու տամ»:

Գեւն ասաւ՝ «Հեստի թաքուն դուքամ, դուն էլ շիմանաս.
Ակոեքըս կու գրցիմ զոչի դըմակին.
Կու գրցիմ քամագիս.
Առուտեհան մե-մեկ, մե-մեկ սարի ծերին շանց կու տամ»:

Սալաթ-Նովեն ասաւ՝ «Յիս կտրմիր կով իմ,
Կովկիթըս կոտրեցի, հարսի հիդ խռով իմ.
Գիլի հիդ բան չունիմ, չոբնին կու գովիմ.
Մե գամ էլա գառնի համը շանց կու տամ»:

36 (65)

Գեւն ու չոբանըն մեկզմեկու դեմ էլան,
Չոբանն ասաւ՝ «Ես քու հալը շանց կու տամ,
Թե բարով կու գրցիմ չոմբախիս տակը՝
Ազվեսի պես ցընկցընկալը շանց կու տամ»:

Գեւն ասաւ՝ «Մուլապ տամ գետինը մըթնի,
էնզադա կու ման գամ՝ բինետ կու գըտնիմ,
Ուրըն ուտիմ, ուրըն կոտորիմ,
Առավոտյան խերն ու շառը շանց կու տամ»:

Չոբանն ասաւ՝ «Դուն հենց գիսիս գիշեր քո՞ւն ունիմ,
Ամեն օխշրի գըլխին մին-մին շուն ունիմ.
Թե կու գաս՝ կու բըռնըվիս, ես իխբալ ունիմ.
էրկըթե կըրկալը բըգիդ շանց կու տամ»:

Գեղն ասաւ՝ «Մուլտալ տամ՝ ամպը ցամաքի,
Ակռեքըս կու կըպցնիմ օշխրի դըմակին,
Թե բարով կու գըցիմ էս իմ քամակին.
Առաւոտջան դիմաց սարը շանց կու տամ»:

Սալայթ-Նուլեն ասաւ՝ «Ես կարմիր կով իմ,
Կովկիթըս կոտորած է, հարսի հիդ խռով իմ,
Գելի հիդ բան չունիմ, չոբնին կու գովիմ.
Մին անգամ կաթընի համը շանց կու տամ»:

37 (65)

Գեղն ու չոբանը մեկզմեկու դեմ էլան.
Գեղն ասաւ՝ «Բարով տիսանք, չոբան ախպեր»:
Չոբանն ասաւ՝ «Գլխեմես ռադ իլ,
Քու բարովն ի՞նչ կոնիմ իքմնի անդեր»:

Գեղն ասաւ՝ «Էնղաղա կու մնամ գեղինն մթնի,
Ուսուլով ման գուքամ, բինետ կու գթնիմ,
Ինչոր կուտիմ, կու խիխտիմ էնդի վեր կոծիմ,
Առուտեհան խերն ու շառը շանց կու տամ»:

Չոբանն ասաւ՝ «Դուն հենց գիղիս չիս դիշերով քուն ունի՞մ,
Ամեն դոշի գլխին մե-մե շուն ունիմ,
Թե դուն ինձ մոդ գուքաս, չիս իղբալ ունիմ,
Էրկաթե կրկալը վզիտ շանց կու տամ»:

Գեղն ասաւ՝ «Էնղաղա կու մնամ ամբը ծմակի.
Ակրիքս կու կպցնիմ զոշի դմակին,
Թե լավ էլ պցեցի էս իմ քամակին,
Առուտեհան սարի ծերին շանց կու տամ»:

Սալայթ-Նուլեն ասաւ՝ «Յիս կարմիր կով իմ,
Կովկիթս կոտորիլ իմ, հարսի հիդ խռով իմ,
Գելի մոդ բան չունիմ, չոբնին կու գովիմ.
Մե գամ էլա կուլի կաթնի համը շանց կու տամ»:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ



1. «ԱՄԵՆ ՍԱԶԻ ՄԵՉԸ ԳՈՎԱԾ»

Գտնվում է Դավթարի 134 էջում: Այս խաղից մինչև 46-րդ խաղը ներառյալ (բա-
ցառույթյամբ 8-րդի) առաջին անգամ հրատարակել է Գ. Ախվերդյանը:

1-ին տող. դուռն րամամ տասն իս—այսպես է թե՛ Դավթարում և թե՛ Օհանի ձեռա-
գրում: Ընդ որում, երգիչը խաղի այս առաջին տողը գրի է առել երկու անգամ (առա-
ջին անգամ գրել է խոշոր տառերով, հետո դիժ է քաշել վրան և նույնը գրել մանր
տառերով) և երկու անգամ էլ որոշակիորեն գրել է րամամ տասն իս: Այսուհանդերձ
Գ. Ախվերդյանը տաս-ը դարձրել է դաս: Այդպես էլ այդ բառն ընդունվել է Սայաթ-Նո-
վայի հաջորդ հրատարակություններում մինչև Մ. Հասարթյանի ժողովածուն (1945):
Ըստ Գ. Ախվերդյանի, դաս նշանակում է նվագախումբ, «միատեղ դասած զանազան
նվագարաններու ղույզակչիո հնչումն» (ԳԱ, 44): Մ. Հասարթյանը հարազատ մնալով
երգի ձևադրերին, թողել է տասն ձևը, ընդունելով այն իբրև զերգալանց բառի փոխա-
բերություն և տողը մեկնաբանել այսպես. «ամեն տեսակի նվագարանների մեջ գո-
ված ես և մեկը չէ, այլ լրիվ տասի փոխարինող ես—գերազանց ես» (ՄՀ, 315): Մենք
ևս նախընտրում ենք բնագրերի տասն ձևը և ընդունում Մ. Հասարթյանի մեկնաբա-
նությունը: Ավելացնենք, որ միջնադարյան մտածողությամբ, որի վրա որոշակի ազ-
դեցություն է ունեցել պոլսագորականների թվերի միատիկան, տաս թիվն ունեցել է
կատարյալի խորհրդանիշ: Այս մտածողությունը հարատևել է ժողովրդի մեջ և հետագա
դարերում: Ուշագրասվ է, որ հին Թիֆլիսում շատ արժանիքներով օժտված մարդու մա-
սին ասում էին. «ես տասն է, նա մեկը չէ»: Զիշտ այսպես էլ Սայաթ-Նովան գնահա-
տում է իր քամանչային, որ ոչ թե մեկն է, այլ՝ «թամամ տասը» Հմմտ. «էս աշխարքում
մեկ չիս, տասն իս իմ աչկին» (ՄՀ—195):

2-րդ տող. նախադ մարք քիզ չի կանա տեսնի—այստեղ մեկ ավելորդ վանկով
խախտվել է տղի չափը: Օհանի ձեռագրում այդ ավելորդ վանկը վերացված է քիզ
բառի հաշվին՝ նախադ մարք չի կարող տեսնի: Նման շտկում է առաջարկել նաև Ն. Աղ-
բալյանը (սնարադ մարթ չի կանա տեսնի...»—ՆԱ, 155): Սակայն այս ձևով էլ, ինչ-
պես նկատել է Մ. Հասարթյանը, խախտվում է մտքի որոշակիությունը: «Երգիչն ասում է
քամանչային, թե նաքադ մարդը, այսինքն՝ ստոր, չնչին արարածը քեզ չի կարող տես-
նել (=զգալ, հասկանալ, ունենալ), դու նրա համար պաս ես—արգելված ես, նրան
անմատչելի ես, բայց որոշիչ և հողի պակասը մարդ բառի վերջում և քիզ դերանվան բա-
ցակալությունը երկրորդ տարբերակում խախտում են տղի իմաստը, կանա բառը հե-

դինակի ձեռքով գրված է կնա, գուցե դիտավորյալ, որպեսզի ավելորդ վանկի վրայից սահի երգող-արտասանողը, բայց դրանով մի նոր խախտում է ստացվում» (ՄՀ, 233): Իր ժողովածուի առաջին հրատարակության մեջ Մ. Հասարթյանը մտքերի է կնա բառը, բայց դա, նրա խոստովանությամբ, «կյանքում անօգուտ անցավ»: Հետագայում, գրում է Հասարթյանը. «գերադասեցինք մալք բառը որոշակի դարձնել ն-ով և հանել կնա-կանա բառը, թեև կարող է նույնիսկ առարկող գտնվի, որ կանա-կարող-ը հեղինակը խստացնելու, ուժեղացնելու համար է գրել» (ՄՀ, 233): Հիշալի, առարկելով Մ. Հասարթյանի այս շտկմանը, գտնում ենք, որ կանա-ն իսկապես, հեղինակը իմաստն ավելի որոշակի դարձնելու, սաստկացնելու համար է գրել, ուստի և մենք հեղինակային ձևը թողնում ենք անփոփոխ: Վանկային նմանօրինակ խախտումներ երգիչը թույլ է տվել նաև իր մի քանի այլ խաղերում (հմմտ. խաղ 20, տող 9), որոնք, սակայն, հատկապես երգվելիս, նկատելի չեն:

3-րդ տող. լավ օրերուն—Մհ՝ լավ օրերուն:

4-րդ տող. աշուղի բասն իս, քամանչա—ըստ Մ. Հասարթյանի, սա նշանակում է՝ «Աշուղի հավասարն հս, ընկերն հս, թայն հս, քամանչա» (ՄՀ, 281): Պ. Սեակը կրտաբանապես մերժել է այս բացատրությունը, վկայակոչելով Գ. Ախվերդյանին, որը նկարագրելով աշուղական բաս-մրցավիճակը, գրել է. «Բաս-պր. նշ. վիճ, բայց էս տեղ հատկապես նշ. դործիք վիճո» (ԳԱ, 45): Որ այստեղ խոսքն, իրոք, բաս-մրցավիճի մասին է, հուշում է նաև առաջին կիսատողը՝ Քիզ ինձնից ո՞վ կանա խըլի: Հայտնի է, որ աշուղական մրցավիճակի ժամանակ, սովորաբար, պարտվողից վերցնում, խլում էին նրա նվագարանը (տե՛ս Գ. Լևոնյան, Երկեր, Երևան 1963, էջ 188): Սույն տողում, ուրեմն, աշուղն իր քամանչային դիմում է որպես մրցավիճի գործիքի: «Այսպես են հասկացել ու շարունակում են հասկանալ Սայաթ-Նովայի ընթերցողները՝ բառարանի դիմելու հարկ անգամ չտեսնելով» (ՊՍ, 454):

13-րդ տող. առաջ շայի, դավա գուզիս—ըստ Գ. Ախվերդյանի. «Երեի Սայաթ-Նովայի ժամանակին՝ հարյուր տարի առաջ Վրաստանու հայերու սովորութենով հարզո հյուրերին պատվում են եղել դավա և շայ առաջ տանելով» (ԳԱ, 45): Գ. Լևոնյանը կասկածի տակ առնելով, որ XVIII դարի կեսերին Վրաստանում արդեն թեյ խմելու սովորությունն է եղել, տարօրինակ է համարել նաև առաջին կիսատողում ասված «ածողիս էրկու կու շինիս»-ը, չդատելով ընդհանուր իմաստային կապ այդ երկու կիսատողերի մեջ: Հետևաբար, նա առաջարկել է կարդալ՝ առաջ շայի դավա գուզիս: Այդպիսով «կպարզվի,— գրում է նա,— որ աշուղը այվան մտնելիս երկու է դառնում, նոր մարդ է երևում, հանում է վրայի շալը և հագնում դավան (գալա), այսինքն՝ պարեգոտը, տոնական զգեստը» (ԳԼ, 153): Սա բանաստեղծական տողի ոչ ճիշտ, առարկայական ընկալում է: Այստեղ, ինչպես նկատել է Մ. Հասարթյանը, ոչ մի աղավաղում չկա և խմբագրման փորձ անելու պատճառ չունենք: «Երգիչը, պարզապես, դիմում է քամանչային, որն իր սիրտը երկու տարբեր դրության մեջ է դնում, այն է, որ նախ նա հյուրասիրվում է սրահում՝ թևով և սուրճով, պարապ ժամանակի համար Բավա-տնդորը, հանգիստ (պարսկ.— Բեֆան բաղից) պահանջում կամ, գուցե և, վարձատրություն, բարօրություն (արաբ.— Բեֆան բաղից) ստանում, ապա մտնելով մեջլիսի մեջ, «ղող ու սալա» է ուզում և գալաների շրջապատման մեջ կազմում մեջլիսի կեսը» (ՄՀ, 233—234): Պետք է ասել, որ թեյը արդեն XVII դարի վերջերին բավական տարածված է եղել ցարական Ռուսաստանում և XVIII դարում թափանցել է նաև Անդրկովկաս, որտեղ սկզբնական շրջանում, սուրճի

նման, բաղական հարդի է եղել: Այս առիթով տե՛ս Աբրահամ Կրետացի, Պատմություն, Երևան, 1973, էջ 76:

16-րդ տող. կեսն իս—Գ. Լեոնյանի կարծիքով այս բառը ևս աղավաղված է, քանի որ նախորդ տները վերջանում են ոչ թե—եսն իս, այլ—ասն իս հանգով: Նա առաջարկել է դրա փոխարեն դնել մասն իս բառը: Բայց այդ դեպքում ինչպե՞ս վարվել վերջին տան տեսնիս հանգակիր բառի հետ: Ըստ Լեոնյանի այս տեսնիս-ն էլ աստիպողաբար է գործածված, չկարողանալով գործածել «տասնիս» (ԳԼ, 153): Ինչպես խաղի մյուս հրատարակողները, մենք ևս կեսն իս և տեսնիս բառերը թողել ենք անփոփոխ, հաշվի առնելով նախ՝ այդ երկու իրար անմիջապես հաջորդող հանգավոր բառերի ներդաշնակությունը, այլև այն, որ խաղի ընդհանուր հանդ կարող ենք համարել ոչ թե—ասն իս-ը, այլ՝—սն իս-ը: Նմանօրինակ հանգեր կան երգչի մի քանի այլ խաղերում:

17-րդ տող, դրվւմ—բնագրում՝ դուլն: Գ. Լեոնյանն առաջարկել է կարգաւ դողն, «հակառակ Թիֆլիսի բարբառի, ինչպես որ հանդի համար պետք եղած դեպքերում շեղվում է հեղինակը» (ԳԼ, 154): Ի դեպ, Գ. Ախվերդյանը իր ժողովածուի ձեռագրում ուղղել է դուլն, բայց տպագրելիս թողել բնագրի դուլն ձևը: Մինչդեռ, անկասկած, հաջորդ տողերի խաղում, անույն նույնահանգ բառերից երևում է, որ բանաստեղծը բառի գրական ձևն է նկատի ունեցել, բայց սովորության համաձայն գրել է բարբառային ձևը (տե՛ս ՄՀ, 234):

18-րդ տողում հեղինակը ձևնաւ բարբառային ձևի փոխարեն գրել է ձայնտ: Հանդի ու նրբերանդի վարպետը դրանով, ինչպես նկատել է Ն. Աղբալյանը, հետամտ է եղել խոսքի նրբերանգին: Երաժշտական հնչողություն նշանակությամբ, անկասկած, պատշաճ է գործածել ձայն առավել բարեհնչյուն բառը, որը նույն նպատակով գործածված է նաև երգչի այլ խաղերում (տե՛ս խաղ 10, տող 14-ի ծան.):

2. «ՇԱՏ ՍԻՐՈՒՆ ԻՍ»

Գտնվում է Դավթարի 102 էջում: Գրի է առնված ձախից աջ շեղությամբ: Բնագրի վերջում բերված հեղինակային ծանուցում-հիշատակարանը Դավթարի հայերեն խաղերի բաժնում միակ հայերեն ամբողջական ծանուցումն է:

Բնագիրը և հիշատակարան-ծանուցումն առնված են զարդարուն շրջանակի մեջ, որից դուրս, վերևը դրված է «Շատ սիրուն իս շախաբայի» վերնագիրը, իսկ ներքևում կրկնված են խաղի 7—8-րդ տողերը: Շրջանակի վերևում և ներքևում դրված են վրացական ու և՛ տառերը, որոնց թվային արժեքներով կազմվում է վրաց փոքր ջրոնիկոնի 440-ը (1752), որ խաղի գրության թվականն է (հմտ. ՄՀ, 234): Շրջանակի աջ և ձախ կողմերում դրված են վրացական ջ և ն տառերը, որոնք ցույց են տալիս երգչի տարիքը տվյալ խաղը գրելու ժամանակ, այն է՝ 1752-ին (ջն-ի արժեքն է 30, Վերծանությունը տե՛ս ՊԲՀ, 1976, № 3, էջ 215—20):

Ինչպես իր պարբերականներն երգերի դիվանը, այնպես էլ հայերեն խաղերի շարքը Սայաթ-Նովան սկսել է դիվանի կոչված խաղերով: Մ. Հասրաթյանն այս խաղերը համարել է գաղել: Դիվանին հիրավի շատ մոտ է գաղելին, բայց նույնը չէ: Ինչպես դադելը, դիվանին ունենում է երկտող կամ քառատող տներ՝ հանգավորման նույն եղանակով: Սակայն դիվանին թե՛ Սայաթ-Նովայի և թե՛ մյուս աշուղների մոտ ունի 8—7 չա-

փքը: Մինչդեռ գաղելը (ղազալի) Սայաթ-Նովան գրել է 16 վանկանի ոտանավորով և քառատող տներով (ներառյալ դիվաններն ունեն երկտող տներ): Տարբեր են նաև գաղելների ու դիվանների եղանակային շափն ու կիրառությունը (տե՛ս Գ. Լևոնյան, Երկեր, էջ 151—52): Վերջապես ինքը՝ Սայաթ-Նովան իր բոլոր դիվանների ծանուցումներում նշել է դիվանի, իսկ գաղելներից շորաի ծանուցումներում՝ ղազալի անունը:

Ինչպես աղբրեջաններին դիվաններին, այնպես էլ այս դիվանի մեջ երգիչը տալիս է շախաթայի անունը (գրության ճիշտ ձևն է շախխաթայի, հմմտ. Դավթար, էջ 2): Նա այստեղ իրեն ներկայացնում է որպես շախաթայի ասուղ: Ըստ այսմ Գ. Ախլերդյանը շախաթային համարել է «խաղերու մեկ եղանակի անունը», իսկ Գ. Լևոնյանն ավելացրել է, թե դա մի հին պարսկական եղանակ է: Եվ իրոք, ինչպես ցույց է տալիս Նաֆիսու պարսկերեն բացատրական բառարանը, ալղալիս եղանակ գոյություն ունեցել է: Նիզամ կոչված բառարանի հիման վրա հիշյալ բացատրական բառարանում շահխաթային բացատրված է որպես նալա և շուր եղանակներից մեկի անունը (հտ. 18, էջ 159: Այս աղբյուրին մեղ ծանոթացրել է հարկելի բանասեր Բ. Չոլապյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը): Սրանով, սակայն, դեռևս լիովին չի բացատրվում շահխաթայու առեղծվածը, քանի որ երգչի աղբրեջաններն դիվաններում ալղ անունը գործածված է այլ իմաստով, որպես հատուկ անուն: Դրանց մեջ Շախաթային ներկայանում է որպես «արար-աշխար» և «բարբառ ու բառ ստիղծող», «շէլածեն էլածն» անող (ՄՀ, 198): Այսինքն՝ Շախաթային հանդես է բերված որպես արարիչ աստված: Ուրեմն ի՞նչ է կամ ո՞վ է Շախաթային կամ Շահ խաթային:

1945 թ. հրատարակության ծանուցադրության մեջ (4-րդ) Մ. Հասրաթյանը հենթադրել է, թե Շախաթային կարող է նույնանալ պարսից Սեֆյան դինաստիայի հիմնադիր Շահ Իսմայիլի հետ (1487—1524), որը նաև բանաստեղծ էր՝ խաթայի մականունով: Հետագայում, սակայն, նա հրաժարվում է այս ենթադրությունից, գտնելով, որ «Շ(ախաթայի) բառը համանիշ է աստծու կամ ինչ-որ բարձր ոգու գաղափարին» (ՄՀ, 235): «Սայաթ-Նովայի դավթարը» ուսումնասիրության մեջ Մ. Հասրաթյանը դարձաշենելով այս միտքն, ասում է. «Սայաթ-Նովան իր դիվաններում դիմում է Շախաթայի անուն ունեցող ինչ-որ գերբնական ուժի, կարծես արարչի, աստծու մի հոմանիշի, գուցե մի մուսայի, այն էլ իր ընտրած: Բայց երգչի մուսանձի փոքր, Հովհաննես Մկրտիչ-սուրբ Կարապետն է, և սրան չէր ասի «արար աշխարհ ստեղծող»: Առայժմ մնում է ենթադրել, որ սուփիական որոշակի սրամաղբուրյուններով համակված երգիչը իր համար ինչ-որ մի սրբուրյուն, գերագույն գաղափար-իդեալ է ընտրել, որին և դիմում է իր իլանիներում (ընդգծումը մերն է—Չ. Բ.): Այս հարցը ինձ շատ է դուաղեցրել, բայց այդ գաղտնիքը լուծել հնարավոր չեղավ իմ երկարամյա պրպտումների ընթացքում, ուստի որոշակի ու վճռական որևէ խոսք ասել այդ մասին առայժմ չեմ կարող, («Տեղեկագիր» 1963, № 10, էջ 22):

Ճշմարիտ էր Մ. Հասրաթյանի թե՛ առաջին և թե՛ երկրորդ ենթադրությունը. միայն թե նրան չէր հաջողվել դրանք համատեղել և որոշակիորեն բացել գաղտնիքը: Իրավացի էր նա, որ Սայաթ-Նովային համարում էր սուփիական որոշակի տրամադրություններով համակված բանաստեղծ: Իրավացի էր նաև, որ Շախաթային կապում էր երգչի այդ տրամադրությունների հետ: Սայաթ-Նովայի և առհասարակ միջնադարյան տաղերգության անշուքները սուփիզմին, առանձին լուրջ ուսումնասիրության առարկա է: Սայաթ-Նովան էությամը աղգային լինելով հանդերձ, արևելյան երգիչ է. իսկ Արևելքի բոլոր մեծ բանաստեղծները, ըստ Բերտելսի, այս կամ այն չափով առնչվել են սուփիզմին

(Бертельс, Суфизм и суфийская литература, М., 1965, стр. 54): Պ. Սեակը նույն-
պես սուֆիական ուսմունքի և Սալաթ-նովայի աշխարհայացքի մեջ բավական նմանու-
թյուններ է տեսել (ՊՍ, 284): Նրանից շատ առաջ Ռ. Արբահամյանը մի շարք զուգահեռ-
ներ է անցկացրել Սալաթ-նովայի և Նշանավոր պարսիկ սուֆի բանաստեղծ Բարա Բա-
հեր-Օրիանի երգերի միջև: Ինքը՝ Սալաթ-նովան իր մի վրացերեն կալամբուրի մեջ՝
աղղված վրաց կաթողիկոս Անտոն 1-ին, իրեն թացահայտորեն սուֆի (սոֆի) է անվանել
(տե՛ս «Վրացական երգեր», Թբիլիսի, 1963, էջ 32, Պ. Մուրադյան, Սալաթ-նովան ըստ
վրացական աղբյուրների, էջ 78): Երգչի հայերեն և հատկապես աղբրեջաներեն խա-
ղերում հանդիպում են սուֆիական որոշ տերմիններ, սուֆիական պոեզիային հատուկ
սիմվոլիկ պատկերներ: Այսպես, Շախավայուն ուղղված աղբրեջաներեն դիվանիներից
մեկում (Դավլթար, էջ 3) երգիչը հրկու անգամ գործածել է հաղիվար բառը, որ սուֆիա-
կան հայտնի տերմին է. նշանակում է ճշմարիտ, իրական կեցաբյուրն (Մ. Հասրաբյանը
մի պարբերակում թարգմանել է ճշմարտություն, մյուս դեպքում՝ աղբրություն. ՄՀ, 198):
Ըստ սուֆիական ուսմունքի, հաղիվաթն այն վերջին աստիճանն է, երբ մարդն ինտուիտիվ
ճանապարհով ճանաչում է աստծուն, հաղորդակցվում աստվածային իրական, ճշմարիտ
կեցությանը: Հիշյալ աղբրեջաններն խաղում երգիչն իրեն համարում է հաղիվաթ-ճշմարտ-
առնության դուռը հասած. «Հասա ցուրը ճշմարտության, խմեցի էս սուրի պինին»: Սուրը
գինին ևս սուֆիական սիմվոլ է, որ խորհրդանշում է միասնական պայծառացումը:
Սուֆիական ոգով գրված աղբրեջաներն մեկ այլ խաղի մեջ էլ երգիչն ասում է. Սա-
լաթ-նովեն «փիրից խմած ունե շախու ջամ-ալըն (կարմիր գինին)»: Ի դեպ, փիր էին
կոչվում նաև սուֆիական համայնքների առաջնորդները (տե՛ս Բերտելսի նշվ. աշխ. էջ 40):
Հաջորդ ստեղծում էրգիչն ասում է. «Թնվուր գուլիս տեսնի էն սուրի ջամալն, պիտիս
քաշի էն խալիլի պես տանջանը» (ՄՀ, 174): Սուրը ջամալն էլ աստվածային պատկերն
է, որին տեսնելու, հասնելու համար սուֆիներն սուրում էին տանջալից ասկետական
կյանքով: Սակայն վերադառնալով Շախավայուն: Վերջինս էլ, ուրեմն, աղուր-սուֆիների
մոտ ներկայանում է որպիսի բարձրագույն ոգի, արարիչ աստված: Բայց ինչպե՞ս է այն
կապված Շահ Իսմայիլի խաթայի հետ: Այս կապակցությամբ ուշագրավ է Հ. Արաստ-
հետևյալ դիտողությունը. «Մի քանի հետազոտողներ համարում են, որ (Սալաթ-նովայի)
այս դիմումները Շահ խաթայուն աշուղական մոտիվ է: Այս մոտիվն իսկապես էլ կա աշու-
ղական պոեզիայի մեջ, բայց իմ կարծիքով, սովյալ բանաստեղծությունների մեջ մենք
գործ ունենք աշուղների շրջանում հաստատված ավանդույթների հետ՝ մեջլիսում իրենց
ելույթներն սկսել, դիմելով Շահ խաթայուն, որ ինքն էլ գրում էր աշուղական պոեզիայի
ոգով և լայնորեն օգտագործում ու քաջալերում էր աշուղների պոեզիան՝ իր նպատակների
համար» (տե՛ս «Коммунист», Երևան, 1963, № 248, ՊՍ, 433—34): Աղբրեջաներն եր-
գերի ժողովածուի առաջարանում (Բաբու, 1963, էջ 11) կրկնելով այս միտքը, Հ. Արաս-
տին մեջ է բերել աղբրեջանի աշուղ էսադի մի երգի հետևյալ սուղերը.

Շահ խաթայի էշխե դուշու, աշի հուուն դարբինի,
Յա իլահի, կյունահարամ, կյունահարամ, կյունահարամ
(Շահ խաթային էշխի ընկավ բացեց հալիքժական երանությունը,
Ո՛վ արարիչ, մեղսագործիս, մեղսագործիս, մեղսագործի):

Տեղին է նշել, որ Շահխաթայուն ձոնված մի երգ ունի նաև հայ աշուղ Ավան-Օղյանը,
և այդ երգը նույնպես փառարանում է արարիչ աստծուն (տե՛ս Գուսանք, Բ, էջ 245—46):
Բայց ինչու՞ էր աշուղների մոտ ստեղծվել այդ ավանդույթը, մի՞թե լուկ այն պատ-

ճառով, որ Շահ հաթային ևս դրում էր աշուղական պոեզիայի ոգով և իր նպատակներին համար քաջալերում աշուղական արվեստը: Անշուշտ՝ ոչ, Հ. Արսալու հետևությունները ընդունելով Շախաթայի—Շահ Իսմայիլ հաթայի կապը, Պ. Սևակը փորձել է այլ կերպ բացատրել դա: «Շահ հաթային,— դրում է նա,— իր երկերն ստեղծել է ոչ թե պարսկերեն կամ արաբերեն (ինչպես ընդունված էր), այլ աղբբեջաներին, ուստի և (Իսմադեղին Նասիմիի հետ մեկտեղ) նա աղբբեջաներին լեզվով ստեղծված գրականության հիմնադիրներից մեկն է, ուրեմն և՛ իսկապես էլ՝ «արար աշխար ստիղծող» և «չէլածեն էլածն անող» (իբրև Շահ Իսմայիլ Թագավոր), ուրեմն և՛ իսկապես էլ՝ «չէլածեն էլածն անող» և «բարբառ ու բառ ստիղծող» (իբրև Շահ հաթայի բանաստեղծ) (ՊՍ, 433): Համաձայն շենք Պ. Սևակի այս բացատրությանը, Շահ-Իսմայիլ հաթային արար աշխարհ ստեղծող և շեղածից եղածն արարող է համարվել ոչ թե այն պատճառով, որ զորիդ միապետ է եղել և աղբբեջաններին բանաստեղծություններ է գրել (ներանից շատ առաջ այդ բանը առավել փայլուն ձևով կատարել էր Նասիմին), այլ այն պատճառով, որ աստվածացվել է, համարվել արարչագործ աստվածություն: Դա էլ ունեցել է իր որոշակի հիմքը: Շահ Իսմայիլը Սեֆիդիների դերվիշական (սուֆիական վարդապետության հետևող) լոռնի ամենանշանավոր ներկայացուցիչն էր: Նա ոչ միայն շահ էր այլև սուֆի փիր՝ շեյխ, կատարյալ սուֆի վարդապետ: Իր կենդանության օրոք արդեն նա համարվել է հավատի հերոս, մի նոր մարգարե (տե՛ս ԱՆՈ, Երկերի ժողովածու, հտ. 3, 1969, էջ 172): Ըստ այսմ շեյխ սուֆի Շահ հաթային, սուֆիական միստիկ վարդապետության համաձայն, հասել է սուֆիի բարձրագույն աստիճանին, միավորվելով աստվածային հավերժական էությունը, այլ կերպ ասած՝ դարձել է աստված: Ինքը՝ հաթային իր մի գաղտնի մեջ համարելով իրեն աստվածային ճշմարտություն—հաղիղաթիվ հասած մարդ, խոսում է իր նախասկզբնական աստվածային վիճակի մասին, համարում իրեն արարիչ—աստված: Ահա, մի քանի տող այդ գաղտնիք.

Մինչև արարումն աշխարհի ի սկզբանե ես էի...

Երկիրն ու երկիրն ստեղծող արարիչ—աստվածը ես էի...

Ճշմարտության անմար լույսին առաջին հասնողը ես էի...

(Антология азербайджанской поэзии, т. 2, М., 1960, стр. 27).

Այսպիսով, վերջնականապես լուծվում է շահաթայու առեղծվածը, և միանգամայն հասկանալի է դառնում Սայաթ-Նովայի այն դիվանին, որտեղ Շահաթային ներկայանում է որպես արար աշխարհ ստեղծող, շեղածից եղածն արարող: Հասկանալի է դառնում նաև աշուղ Էսադի վերը բերված երկտողը, ըստ որի աստվածային էջի—սիրով տարված Շահ հաթային բացել է հավերժական երանության դուռը (հասել հաղիղաթի կամ ֆաննայի, այսինքն՝ աստվածացել է): Հասկանալի է դառնում, թե ինչու աշուղները, որ սկզբնապես տարված են եղել սուֆիական վարդապետությանը և որոնց համար Շահ Իսմայիլ հաթային իր արքունիքում մեջլիս էր ստեղծել, իրենց ելույթներն սկսում էին դիմելով նրան և վերադարձվել նրան աստվածային հատկանիշներով: Աստվածային Շախաթայուն ուղղված երգերն էլ, ուրեմն, կոչվել են շախաթայիներ, որպես չորսհատուկ եղանակ և բովանդակություն ունեցող հոգևոր երգեր (ինչպես իլահիները): Պատահական չէ, որ Սայաթ-Նովան իր թե՛ աղբբեջաններին և թե՛ հայերեն երգերի շարքերն սկսել է շախաթայիներով, որոնք վերանվանվել են դիվանիներ, որպես դիվան—ժողովածուների առաջին խաղեր:

Այսպիսով, ուրեմն, խնդրո առարկա հայերեն դիվանիի ծանոթագրվող տողի շա-
խաքայլի ասող արտահայտությունը նշանակում է աստված երգող, հոգևոր երգ ասող,
աղոթող: Տողի իմաստն է՝ շատ սիրուն հս (գեղեցիկ ես, լավն ես) աստված երգողին,
աղոթողին չես անարգի: Խաղի նախավերջին տողն էլ պիտի հասկանալ՝ անվստահելի,
անարժեք է աստծուն շերտող, շաղթող մարդը: Քանի որ տվյալ դեպքում շախաքայլին
գործածված է որպիս երգի, հղանակի տեսակ, ուստի գրել ենք փոքրատառով:

3-րդ տող. վսնց-րճագրում երկու դեպքում էլ՝ մունց: ԳԱ՝ վունց:

4-րդ տող. ճնգնիմ-բնագրում՝ նիգնիմ: ԿԱ՝ ճնգնիմ:

5-րդ տող. էտ-բնագրում՝ էր:

3. «ԴԱՐԴ ՄԻ ԱՆԻ ԶԱՆ ՈՒ ԶԻԳԱՐ»

Գտնվում է Դավթարի 103 էջում: Գրի է առնված աշխց ձախ շեղությամբ՝ խառը
հայ-վրացական տառերով և առնված է քառասկզուն շրջանակի մեջ: Շրջանակից դուրս
գրված են. վերևում՝ վրացական Վ, ներքևում, նրա դիմաց՝ Պ, աջ կողմում՝ հայկական
Օ, ձախ կողմում, նրան համասպատասխան՝ ա տառերը, որոնք կապակցում են դովա
(պարսկ. աղոթք) բառը (տե՛ս ՄՀ, 235): Խաղը հիրավի սիրած կնոջը ձևված աղոթք-
բաղձանք է: Այս և հաջորդ երեք խաղերը ևս, մեր կարծիքով, գրված են 1752 թ.:

1-ին տողի դիվաց բառի վերաբերյալ Ախվերդյանն իր ծանոթության մեջ նշել է.
«էս բառի նշանակությունն չէ հասկացվում. սրա տեղ կարելի է դնել բառն դիպված»
(ԳԱ, 126): Իր կազմած ժողովածուի ձեռագրի մեջ, իրոք, նա դիվաց-ը ջնջել և վերը
գրել է դիպված (Ն. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան, Գ. Ախվերդ-
յանի ֆոնդ, № 1—1-ին, թերթ 59): Հրատարակության մեջ նա, ավնուամենայնիվ, թողել
է դիվաց (ընդգծված): «Միտկլրտ դիվաց չըտեսնեն» նշանակում է՝ միտքդ դիվային, շար
քանի չհանդիպի, դիվային շար մտքերը չպաշարեն քեզ (տե՛ս ՄՀ, 235):

2-րդ տող. աշլ—բնագրում՝ աշլկ:

4-րդ տողի քիզ գլխիբաց չըտեսնեն—ն Ախվերդյանն այսպես է քացատրել. «էս երկրի
(Վրաստանի—Հ. Բ.) սովորութենով՝ մե տաս քսան տարի առաջ, կանանիք սուգ են եղել
անում իրենց մեռելի վրա գլխաբաց՝ գլխի ծածկոցն և լեշարն վեր առած. թե որ մեռ-
նում էր մեկի մարմին (marı), այնժամ կինն (կնիկ) նույնպես գլխիբաց, հյուսքը բաց
արած և ծամերն ձեռին՝ թե՛ թաղման օրն բաղմության մեջ, թե՛ տանն՝ տեսնորդներու
առջևն, կծալով սուղ է եղել անում իր մարդու վրա» (ԳԱ, 126): Կանացի ողբի նման
սովորություն է եղել նաև հին Հայաստանում: Հիշարժան է Փավստոս Բուզանդի մոտ
Փառանձեմ տիկնոջ ողբը. նա ևս իր ամուսնին՝ Գնևլի դիակի առաջ կոծում էր՝ «զգէսս
արձակեալ» և «զհերն փիտէր»:

5-րդ տող. մանի—թիֆլիսահայ բարբառում գործածվել է մահու:

6-րդ տող. Միւ էղենն րամամ աշխարսս ոսվ քաշէ. հաց չըտեսնեն:— Այսպիսի մի
ասացվածք հնում տարածված է եղել թիֆլիսահայերի մեջ. «Իմ էղենն քարը քարի վրա
չմնա»:

10-րդ տող. ձիդըտ—ԳԱ՝ նիտըդ, ՄՀ՝ նիտըտ: ձիդը գցած նշանակում է վշտացած,
սգալորված, վիզը ծուռ: Ժողովրդի մեջ ասվել է՝ «նստիլ իմ, գցիլ իմ հիդը»:

Գտնվում է Դավթարի 104—106 էջերում: Վերնագրված է՝ «Անգամ արա բարիթավուր»
 գնա հիդն խաղ մի անի»:

Այս և 17-րդ խաղի ծանուցման մեջ երգիչը տալիս է աշուղ օղլան անունը: Գ. Ախ-
 վերդյանը երկու դեպքում էլ հանել է այդ անունը: Մ. Հասարաբյանը վերականգնելով՝
 աշուղ օղլանը դրել է մեծատառերով և ենթագրել, որ դա Սալաթ-Նովայի՝ մեղ անհայտ
 մեացած մի շնորհալի նախորդն է, որ հայերեն է ստեղծագործել և որի խաղերի աղդե-
 ցութչամբ են հորինված սույն բարիթավուրն ու 17-րդ խաղը (ՄՀ, 236): Իրականում
 աշուղ օղլանը հատուկ անուն չէ, և այդ անունով ոչ մի նախորդ էլ չի ունեցել Սալաթ-
 Նովան, իսկ 29 և 30-րդ խաղերի ծանուցման մեջ հիշված Քրուլն նստած է վարժինք
 խաղը, ոչ թե հեղինակի է շեղյալ Աշուղ օղլանը, ինչպես ենթադրել է Մ. Հասարաբյանը:
 այլ՝ ոմն Զաքարիա, ինչպես ցույց է տվել Ա. Մեացականյանը (ՊՌՀ, 1963, № 3, էջ
 271—273): Աշուղ օղլան Բուրբերեն նշանակում է երիտասարդ աշուղ, սկսնակ աշուղ»
 օրին և Սալաթ-Նովան դիմում և խրատում է սույն բարիթավուր և 17-րդ օգուր-
 լամա-խրատական խաղի մեջ: Այսպես է մեկնաբանել Նաև Ս. Գալսարյանը (տե՛ս
 «Коммунист», Երևան, 1963, մարտի 24): Եվ բոլորովին իզուր էր Հասարաբյանն իր
 «Սալաթ-Նովայի դավթարը» ուսումնասիրության մեջ («Տեղեկագիր» 1963, № 10, էջ 12)
 մեծ կրթով վիճում Գալսարյանի այդ բացատրության դեմ: «Ինչ որ աշուղ օղլանի հետ
 պատահելու է, բուրբը արա մեջ է գրած» արտահայտությունն արդեն լիովին բացատում
 է, որ աշուղ օղլանը Սալաթ-Նովայի-Նախորդն է: Խաղի առաջին տունն էլ հենց սկսնակ
 աշուղին ուղղված խրատական խոսք է («Անգամ արա բարիթավուր, գնա՛, հիդն խաղ
 մի՛ անի» և այլն): Ինչպես այս, այնպես էլ 17-րդ խաղում երեսնամյա երգիչը սկսնակ
 աշուղին բացատրում, նրա առաջ բացում է սիրո զգացումն իր ողջ խորությանը: Այդ
 խաղի ծանուցման մեջ էլ նշել է՝ «Էսպես աշուղ օղլանի օգուլլամա, Արուժինի ասած»:
 Սա ոչ թե նշանակում է «Աշուղ օղլանի ասած խրատական կամ աշուղ օղլանի ասած
 խրատականի նման, նրա հանդով», ինչպես բացատրել է Մ. Հասարաբյանը, այլ պարզա-
 պես՝ երիտասարդ, սկսնակ աշուղի (աշուղ օղլան) համար՝ խրատական (օգուրլամա), որ
 Արուժինն է հորինել (Արուրիկի ասած):

Կառուցվածքով, շարակապերով (գինջլուրամ), հանդերով ու հանգավորմամբ կա-
 տարյալ է այս խաղը և ինքնին շատ ուսանելի՝ սկսնակ աշուղի համար: Խաղի բարդ կա-
 ռուցվածքն արտաբերել տեսանելի դարձնելու դիտավորությանը, նրա հինգ հատվածներն իրա-
 բից անջատել են և ընդգծել շարակապով ու բառերով:

Գ. Ախվերդյանի արխիվում (Ձ 53—1-ին և Ձ 55—1-ին) կա այս խաղի վրացատառ
 հայերեն երկու ընդհանուր տարբերակ: Մի աղբյուրի տարբերակ կա նաև
 Ախվերդյանի կազմած «Հայ աշուղներ և երգիչներ» ձեռագիր ժողովածուի մեջ (Մատե-
 նագրան, ձեռ. № 3751, էջ 413—14): Դրանք նպատակահարմար շինք դրել ընդգրկելու
 սույն ժողովածուի «Տարբերակներ» բաժնում:

Թերևս այս բարիթավուրի աղգիցությանը, ժողովրդի մեջ ստեղծվել է հետևյալ խա-
 ղիկը, որ դրել է առել Դ. Տիր-Աղեբասանյանը «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» գրքում
 (էջ 44):

Նաղ իս անում, հաղ իս անում,
 Լիզվով լիթիմաղ իս անում.
 Քու սիրողին սաղ իս անում:

3-րդ տող. յարի—բնագրում՝ յարին:

6-րդ տողի յարսուն տարի-ն պետք է հասկանալ ոչ թե երեսուն տարի, այլ՝ երեսուն տարեկան (ուրախ շրջիր, թափառիր մինչև երեսուն տարեկան հասակը):

13-րդ տող. Զի վախենա սուրբան—խանից—սուրբան բառը Սայաթ-Նովայի մոտ, ինչպես պարսկերենում, համարժեք է խանին և նշանակում է իշխան, գավառապետ:

25-րդ տող. Կրակ իս վեր ւածում բերենմեն—թիֆլիսահայերի մեջ տարածված է եղել «Կրակ է վեր ածում ձեռներենեն» ասացվածքը:

30-րդ տող. իխտիար իս—ԳԱ՝ իխտիարիս: Ուղղումն առաջարկել է Ն. Աղբալյանը (ՆԱ, 185):

42-րդ տող. համ—Գ. Ալավերդյանն ընդգծել է և հարցականով ենթադրել, թե համ անիլ նշանակում է սանձիկ (ԳԱ, 166): Համ անիլ նշանակում է՝ վիշտ, թախիծ պատճառով (ՄԶ, 295):

44-րդ տող. խարբլտ ջամ իս անում—Ա. Քոչոյանն առաջարկել է կարդալ խարբլամ իս անում, որ նշանակում է՝ հուսադրում ես, հույս ես ներշնչում (ԱՔ, 88-ի ծան.): Նույն ուղղումն է առաջարկել նաև Ի. Միրզոյանը (ԻՄ, 81): Զեղովելով հեղինակային բնագրից, թողնում ենք խարբլտ ջամ իս անում, որ պիտի հասկանալ՝ հարգանք, վերաբերմունք իմ նկատմամբ ապակու պես կարծրացնում, սառեցնում ես: Բացի այդ ջամ բառը շարակապի սկզբունքով կրկնված է հաջորդ տողում, իսկ դա նշանակում է, որ ձիշտը խարբլտ ջամ իս անում ձեն է:

49-րդ տող. քաշ ա—ՄԶ՝ քաշա: Այստեղ և մի քանի այլ դեպքերում երգիչը հանգի համար է օժանդակ բայի փոխարեն գործածել է ա:

52-րդ տող. գու լա տարով—բոլոր հրատարակություններում՝ գու լա տարով: Մինչդեռ երգիչը ոչ թե սիրած կնոջն է ասում՝ լաց կլինես տարով, այլ ամբողջ տարի լաց է լինում նա, ով քեզ (յարին) գալիս է տեսնելու («Ո՛վ քիզի գուքս թամաշա». տե՛ս «Տեղեկագիր», 1964, № 5, էջ 74): Գու լա ձևը հատուկ չէ թիֆլիսահայ բարբառին, որտեղ այդ իմաստով ասվել է՝ լաց կույի: Գու լա-ն արևմտադարձ է, որ «երգին անշուշտ լսած է իր հորից և կիրարկած է այս բայաձևի ծագական և տաղաչափական արժեքը գիտահետևելով. այդ ձևը սահուն է և կարճ» (ՆԱ, 64): Տե՛ս նաև հուլ 6, տող 17, խաղ 31, տող 2:

60-րդ տող. Փունջ մանուշակ նուր իս—կրկնված է 33-րդ խաղի 17-րդ տողում:

61-րդ տող. նուր գովելի—բնագրում՝ նուր գովիմ ֆի. մինչդեռ հանգավորումը պահանջում է՝ նուր գովելի, ինչպես և շտիկ է Մ. Հասրաթյանը:

70—75-րդ տողեր. տերիվակալ, արիվակալ, բարիվակալ, օրիվակալ—երգչի ստեղծած բառերն են՝ տերեակալած, արև սուած (գուցե և արևատեր), բարև ընդունող (բարյացակամ) և ամեն օր նշանակությամբ:

80-րդ տող. քաբիբ—բնագրում՝ քալիբ: Թալիբը (թալիվ)—սիրտոջ, ուսման ծարավ) գործածված է երգչի մի աղբրեջաներին խաղում, բայց սույն տողում ձիշտը քաբիբն է (թմիշկ):

81-րդ տող. հա՛ տանում իս (անվերջ տանում հս)—ԳԱ՝ հատանում իս (գրկ. կտրում հս), ԲԱ, ՄԶ՝ հա՛ տանում իս:

95-րդ տող. ԳԱ՝ չիման (մարգագետին), ՄԶ՝ չի ման: Հասրաթյանի բացատրությամբ դա պարսկերեն է և նշանակում է՝ ինչ ես... «ծուցիտ մեքըն շայր-չիման, չի ման ասիմ, մուրախաս իմ՝ սրտումս ունիմ իղբար, իման»—ծոցը՝ մարգագետին, դալար դաշտ է. ինչ ես ասեմ, ազատ եմ. օրովհետև սրտիս մեջ ունեմ խոստում և հավատ (անգավա-

ճան եմ)» (ՄԶ, 308): Բառն ավելի ճիշտ է բացատրում Ի. Միրզոյանը. «Խաղի կառուցվածքը,— գրում է նա,— ինչպես և տողի իմաստը մեզ հուշում է, որ «չի ման»-ը պետք է գրել միասին՝ «չիման» (մարգագետին—աղբը. պարսկ.): Եթե նախորդ տողում դասավորված լիներ «չիման»-ը, ապա հարթորոտողում կրկնում է բառը՝ հուշվել է՜լ ավելի շեշտված, ցայտուն դարձնելու համար: Ուստի երկրորդ՝ կրկնվող «չիման»-ի վրա պետք է լինի բացականչական նշան՝ կարոտի, բաղձանքի հույզն ընդգծելու համար: Նույն տան «մուրախաս»-ը մեկնաբանված է «Առձակուրդ ուտացած» (էջ 202): Դա պարսկերեն «մուրախաս» բառի այլ առումն է՝ «քույլ-լատրված մի տեղ մտնելու» (Миллер, Персидско-русский словарь, М., 1953, стр. 481): Երգիչը գյոզավին ոչ թե ասում է. «արձակուրդ տուր՝ ծոցիդ շայիր-չիմանը մըռնեմ» այլ՝ «թույլ տուր», շողանալով ավելացնել, որ ինքը կմնա շափի սահմաններում, կսանձի իր կամքը... Հայկական ժողովրդական հերթափոխում էլ ժողովուրդը «մուրախասը օգտագործել է նույնպես «թույլ տուր, թույլտվություն» իմաստով» (ԻՄ, 81—82, տե՛ս նաև ԱՔ—135, «Տեղեկագիր», 1964, № 5, էջ 74—75: Մուրախաս բառը գործածել է նաև Աբրահամ Կրետացին իր Պատմության մեջ—էջ 65, 86 և հտն.):

102-րդ տող. սիրտը վարիմ—ԳԱ՝ սիրտըս վառիմ. ՄԶ՝ վարիմ: Ըստ Հասարայանի, սա վառել, վառելի բայն է, ուստի «սանձահարիմ, սիրտըս վարիմ՝ անհնանալու գանձ կենամ» նշանակում է՝ «ինձ զսպեմ, սիրտս փորեմ, խոստումս և սերս թաղեմ որպես գանձ, որպեսզի չհնանա, չփչանա» (ՄԶ, 314): Բառն ավելի ճիշտ է բացատրում Ա. Քուշոյանը, ըստ որի վարիլ նշանակում է կառավարել, ղեկավարել (ԱՔ, 170):

111-րդ տող. Մի մոր ծըծած մի մոր դալ իս—այս տողի մասին Գ. Արվերդյանը գրել է. «Կարևոր է հասկանալ՝ թե զու ինձ քույր կամ եղբայր ես. ինձ հետ մի և նույն ստին ես ծծել, նույն կաթն ես կերել (համշիրակ)». ինձ հետ մեկ մոր խոյուն, դալ ես, դալ նշ. ծընդդին (puerpera) ծծելու առաջին կաթն (colos trum) էս խոսքերուն կարելի է տալ ևս ուրիշ մեկնություն, թե մեծացած ես միայն քո մոր կաթնով և ծծել ես քո մոր դալն, ուրեմն՝ հարազատ ես. զի Թիֆլիզում ասում են՝ դալի հիդ կերածը ջանի հիդ զոսս զուբաս» (ԳԱ, 166—167): Ավելի հավանականը երկրորդ մեկնությունն է: Մ. Հասարայանը դալ-ը թարգմանել է ճյուղը. «մի մորից սնված, մի մոր ճյուղը ես» (ՄԶ, 283): Դալ-ն իրոք ունի ճյուղը իմաստը, և այդ իմաստով բառը գործածված է նշանավոր Բաբանի վերջին ջան իմ» խաղում («Սալբու դալ բոլուն»), բայց այստեղ դալ նշանակում է՝ կաթ, ավելի ստույգ՝ ետմեղդյան առաջին կալ, այդ էն ապացուցում նաև դրան նախորդող մի մոր ծծած բառերը: Այս տողում, սակայն, խճողված է շարադասությունը. պետք է հասկանալ ոչ թե՛ մի մորից ծծած մի մոր կաթ ես, այլ մի մորից ես կաթ ծծել (հավանական է): Հանգի համար շարադասության նման խախտումներ կան երգչի հատկապես վաղ շրջանի հայերեն խաղերում: ՌԱ՝ Մի մոր ծընած:

114—117, 119-րդ տողեր. ջանում—ամենուրեք հրատարակված է ջանըմ: Մինչդեռ այս բառը Սայաթ-Նովան բնագրում միշտ ջանում ձևով է գրել (տե՛ս խաղ 33, տող 17—19, խաղ 38, տող 16): Հատկապես այստեղ ջանում ձևով երգիչն այս տունը վարպետորեն հարմարեցրել է նախորդի հանգին (անում):

119-րդ տող. աշխարհս ուս ու տես է—թիֆլիսահայերի մեջ հնուց տարածված ասացվածք է, որ թերևս Սայաթ-Նովայի այս խաղից է անցել ժողովրդին, թեև կարող է լինել նաև հակառակը (Գ. Աղևաճաղյան, Թիֆլիսցոց մտավոր կյանքը, էջ 67): Բնագրում՝ ուս ու տես է, սակայն նախորդ էս է, կես է, պես է հանգակապ բառերին

պատշաճում է տեսնել ձեռք (տե՛ս նաև ԳԼ, 172), ՄՇ՝ ուս ու տես է: Հաջորդ տողի ուս և տխուր ևս միօրինակության համար դարձրել ենք ուս ու տես:

124-րդ տողի անլի բառը Գ. Ախվերդյանն ընդգծել է բացատրել է. «սպետք է ըլի կամ անալի (ահեղ) կամ անբլի (թրք. նշ. դաշնավոր)» (ԳԱ, 67): Ըստ Հասարակացնի անլի շառ նշանակում է հոգևոր ատյան, արժանավոր օրենք, աստվածատուր կանոն (ՄՇ, 277): Մենք անլի բառի իմաստն, ըստ Ախվերդյանի առաջին բացատրության, համարում ենք ահեղ, և անլի շառը հասկանում որպես ահեղ ատյան, աստվածային ատյան, կապիով չբխտոնյա բանաստեղծի աշխարհայացքի հետ:

126-րդ տող. բնագրի լացիս-ը Գ. Ախվերդյանը դարձրել է լաց ըլիս, սլատճառաբանելով, թե «թիֆլիզցիք չեն գործածում լալ բայի կատարյալն և հրամայականն. չեն ասում լաց, կամ ինչպես Սայաթ-Նովեն է ասում՝ լացի, բայց՝ լաց ըլի» (ԳԱ, 167): Այս ուղղումով, սակայն, տողում մի վանկ ավելանում է, բացի այդ Սայաթ-Նովայի լեզուն որոշ դեպքերում շեղվում է թիֆլիսահայ լուրբառից, և այդ շեղումները հարկավոր է ոչ թե ուղղել, այլ միայն ցույց տալ, ինչպես և արել է Ախվերդյանը մյուս դեպքերում: ՄՇ՝ լացիս:

126—128-րդ տողեր. գայի, փայլի, չայի—ԳԱ՝ գայ, փայ, չայ: Ջայի-գայ, փայթ-փայ, չայի-չայ նույն բառերի տարբեր գրություններ են, բայց տվյալ դեպքում խաղի տաղաչափությունը պահանջում է նախընտրել առաջին ձևերը: ՄՇ՝ գայի, փայի, չայի:

129-րդ տող. չայալ—ամենուրեք՝ չաու:

132—133 տողերը պետք է հասկանալ՝ շահի, սլատառական կաշեգործը կամ խոհարարը (գուրխար քաբալլը) բերթում է, խարանում է վիրավոր մաշկը, հաշվի չառնելով վերքերը (տե՛ս ԻԱ, 167, ՄՇ, 288):

135-րդ տող. զուբամ—բնագրում՝ զու լամ, ԳԱ՝ կու լամ. Գ. Լևոնյանն առաջարկեց է ուղղել՝ կուլամ: ՄՇ՝ զու ֆամ:

5. «ԳԻՐԱ ՈՒ ՆՆԳԻԳՈՒՆԻՍ»

Գտնվում է Դավթարի 106 էջում, երգչի առաջին հայերեն դադալի-գաղելն է: Հորինված է հայալեզու աշուղ Դոստիի «Դոգալլար յըղնաղինա բախ դաստա բեղաստա թարփանուր» սկզբնատողով մեղ անհայտ թուրքերեն երգի հետևությունամբ (տե՛ս հաջորդի հեղինակային ծանուցումը):

Ննգիդունիա բառը Սայաթ-Նովան գործածել է երկու իմաստով՝ կտորի տեսակ և նոր աշխուրհ, Ամերիկա: Հայերեն խաղերի մեջ գործածված է միայն առաջին իմաստով: Այս բառը ոչ թե արբեջաներեն եեի յունիա բառի աղավաղված ձևն է, ինչպես ենթադրել է Մ. Հասարակյանը, այլ փոխառված է պարսկերենի յանգի-դոնիայից (նոր աշխարհ, Ամերիկա—Мирлер, 605), ինչպես նկատել է Ի. Միրզոյանը: Ցույց տալու համար, որ Դավթարում բառն աղավաղված չէ, վերջինս մեջ է բերել աշուղ Նարանդ-օղլու հետևյալ տողերը. «Քու տեսակն ոչ ով չըկա... Ննգի դունյա չի ճարվի» (Գուսանք, Բ, 489): «Մեղ թվում է,— դրում է Ի. Միրզոյանը,— որ Ննգիդունյա (Ամերիկա) բառից է հենց առաջացել «ննգիդունյա» կտորի տեսակը, որը և հետագայում կոչվել է «ամերիկի, ամիրկա» (սպիտակ բյուլ): Ինչո՞ւ ենք այդպես կարծում: Պարսկերենում Ամերիկա աշխարհամասը արտասանվում է «Ամրիկե», իսկ այդ նույն բառը որպես հասարակ անուն՝

կտորի տեսակ: Գ. Սունդուկյանը այսպես է մեկնաբանում. «Ամերիկա (ամրիկա) — բամբակյա գործվածք, բյազ» (Գ. Սունդուկյան, Երկեր, հտ. 4, էջ 67): Ամրիկա կտորն այժմ մեր բարբառներում դարձել է ամրիկա (սպիտակ բյազ): Համաձայնաբար ենթադրենք, ամրիկա կտորը այդպես է կոչվել այն պատճառով, որ սկզբնական շրջանում վաճառականները բերում էին «Ենդիդունայից» — Ամերիկայից» (ԻՄ, 85):

5-րդ տող. գումա ալիտ — բնագրում՝ գումա արխա: Ախվերդյանը զարժեքել է կալտաս ալիդ, ծանոթագրելով, թե «մե քանի ուրիշ օրինակներումն» այդպես է եղել և այդ ձևը «հաստատում են ևս խաղ ստուգներն» (ԳԱ, 128): Ախվերդյանի արխիվն ուսումնասիրելիս, չլուսանք խաղի ոչ մի ուրիշ օրինակ: Կասկածի տակ շտննելով հանդերձ Ախվերդյանի վկայությունը, հարադաս ենք մնում բնագրին և Մ. Հասարայանի հետևությունը: Գումա արխա-ի բացահայտ վերսկսելն ուղղելով, բողոքում՝ գումա ալիտ: Այս տողը պետք է հասկանալ՝ երբ դու գրոսնում ես պարտեկում, տարածում ես համայնիդ ծովի ալիքների նման: Այդպիսի «ալիքծման» մեկ այլ պատկեր հանդիպում ենք 27-րդ խաղում՝ «Տալլա տվիր, դեմիս տարար ծովի պես» (ալիք տվիր, ալիքծեցիր, նախ քան ծովի ծովի պես):

7-րդ տող. մամ-ջամալիտ — բնագրում և Ախվերդյանի մոտ՝ մամի ջամալիտ: Ն. Աղբալյանը նկատելով ալիքի վանկը առաջարկել է ուղղել մամջամալիդ, բայց նաև նկատել է, որ հավանաբար «մահի» բառը երգվել է՝ սահելով «ի»-ի վրայից, իբր թե զրված լինեք «մահջամալիդ»: Իսկապես պարսկերենում «մահի ջամալի»-ի «ա»-ն ալեբան է բացվում, որ «ի»-ն թռչելով է արտասանվում» (ՆԱ—156): Տաղաչափական անհարթությունից խուսափելու համար ընդունել ենք մամ-ջամալիտ (լուսնեբես) ձևը: Մշ՝ մամ-ջամալիտ:

10-րդ տող. էտ Բու ճման ջուրարումն—ջուրար պարսկերեն նշանակում է հանդը-նություն, խիզախություն: Սակայն այս իմաստով բառն ամենևին չի կապվում տվյալ տողին: Պետք է համաձայնել Մ. Հասարայանի այն ենթադրությանը, որ բանաստեղծը «հանդի համար այսպես է գրել ջուրայումն (տեսակումն) բառը» (ՄՀ, 310):

13-րդ տող. Թարիլըս դավթար իմ արի, փիլ պիտի վեր գիրքըն տան... հմմտ. «Յարիս բազը մտա» վրացերեն երգի 23—24 տողերի հետ (ՄՀ, 101):

16-րդ տող. սալրու-չինար (սալրի-չինար) — Գ. Ախվերդյանը և նրա հետևությունները մյուս բոլոր հրատարակիչները կարդացել են սալր ու չինար (սալր և չինար): Մինչդեռ սալրի բառը Սայաթ-Նովայի լեզվում ունի երկու ձև՝ սալրի և սալրու: Վերջինս էլ բառի ուղիղ ձևն է և ոչ թե սեռականը, որովհետև 10-րդ խաղում երգիչը բառի սեռականը կազմել է սալրուի ձևով (տե՛ս 10-րդ խաղի 13-րդ տողի ծան.): Այստեղ էլ, ուրեմն, սալրի բառը զրված է սալրու ուղիղ ձևով, ինչպես 24-րդ խաղում (տող 5): Դավթարում այս երկու խաղերի մեջ էլ սալրու և չինար բառերի միջև երգիչը գրել է վերջակետի նմանվող անջատման նշան: 24-րդ, ինչպես և 39-րդ խաղի (տող 7) սալրու-չինարն էլ Ախվերդյանն ու մյուսները հրատարակել են այս անգամ սալրու չինար (սալրիի չինար) ձևով, որ նույնպես սխալ է: Բոլոր դեպքերում ճիշտ ձևն է սալրու-չինար: Թիֆլիսահայերի շրջանում տարածված մի ժողովրդական երգի մեջ ես ասվում է.

Բոլորտ սալրու-չինարի,

Մուցըտ դուլի շանուրի

(Դ. Աղեքսանդրյան, Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, էջ 45):

19-րդ տող. Սայաթ-Նովեն — բնագրում՝ Սայադ-Նովեն:

Գտնվում է Դավթարի 107 էջում: Խաղի առաջին ծանուցումը (էս Արուրինի ասած է), որ դրված է բնագրի սկզբում, հայերեն է:

Խաղը իրավացիորեն համարելով երգչի առաջին հայերեն փորձերից մեկը, Ն. Աղբալյանը նկատել է, որ այստեղ Սալաթ-Նովան «Ոչ այնքան տունների իմաստին, որքան տողերի կազմության և հանգին է հետամուտ: Տաղն, իբր ամբողջություն, վրիպած մի գործ է, թեև հաջող տողեր ունի: Նա մի խճաղարդ է, ուր տողերը շարված են իրար հետ անաղերս, հորինելով մի ձև, բայց ոչ իմաստասիրիկ բովանդակություն» (ՆԱ, 113): Սի քանի էջ հետո, սակայն, Աղբալյանն ասես մի նոր տպավորություն, գրում է, թե այդ թցրիվ տողերը, որոնցից մի քանիսը հղված ադամանդ են, արդյոք բուն հափշտակության հետևանք չէ՞ն, թվում է, թե շժժած է երգիչն իր գեղուհու տեսից, պահվածքից, նազանքից և չի կարողանում իր բուն ապրումների մի կաշու հորինվածք տալ: այլ իր տողերը շաղ է տալիս Բանկարժեք քարերի նման: Այդ շարացի թիվը փրթած է ղգացական ցունցի հետևանքով, և ուրեմն տաղը լիովին արտահայտում է երգչի հոգեկան վիճակը: Արվեստը կարգ ու կապ է ամենից առաջ, բայց թվում է, թե կա և կարող է լինել մի արվեստարժեք անկապություն, մի գեղեցիկ ջրվածություն» (ՆԱ, 121): Սալաթ-Նովայի մի քանի խաղեր դրա լավագույն ապացույցն են:

Այս խաղում և այսուհետև երգիչն իրեն անվանում է ղարիր բլրու: Ն. Աղբալյանի մեկնաբանությունը. «Իր սիրեկանի հանդեպ, որ վարդն է, բայց մարդասիր, երգիչն իրան համարում է մի օտար (ղարիր) սոխակ: Ղափաղ արար բռնը, որ բարբառի մեջ հնչում է ղափաղա, նշանակում է վանդակ: Դու ոսկե վանդակի նման ես, ասում է երգիչը, իսկ ես մի օտարական սոխակ, որով նշում է իր և սիրեկանի կացությանց տարբերությունը. ոսկե վանդակը օտարական սոխակի համար չէ, նա տեր ունի, բայց այդ Բանկարժեք վանդակն է տեղում երգիչը» (ՆԱ, 113—114): Այս մեկնաբանությունն ավելի է խորացնում Պ. Սևակը. «Ղարիր-ը,— գրում է նա,— Սալաթ-Նովայի հայրենասիրության հետ կապակցվելը ղույլ է ամեն տեսակ հիմքից՝ ինչպես պատմական, այնպես էլ հոգեբանական ու խառնվածքային: Սալաթ-Նովան երբ կամեցել է շեշտել իր աղագին հպարտությունը՝ միշտ էլ դա արել է համարձակ ու արձակ... Սալաթ-Նովան իրեն ղարիր էր ղգում ոչ թե Վրաստանում, այլ այն պայմաններում, որոնց մեջ էր գտնվում ինքը Վրաստանն էլ՝ դասային անհավասարությունների մեջ, անարդարությունների ահռելի շատության և ճշմարտության հռոնի նվազության մեջ: Եվ իրեն ղարիր էր ղգում հատկապես արքունիքում, որտեղ առավել քան այլուրեք, ընդգծվում էին ղարի հակադրությունները, դասային տարբերությունների հակամարդկայնությունները... Ու երգում էր այդ ոլբուրդ ոչ թե լուի այն, ինչի համար ծնվել էր, այսինքն՝ սեր, այլ նաև այդ ղարիրությունն էլ, այսինքն՝ իր օտարությունն աշխարհի կարգ ու սարքին, ավելի ճիշտ՝ աշխարհի անկարգաճանարրությունը» (ՊՍ, 256—258):

2-րդ տող, վուսխտ—բնագրում՝ ոտխտ, ԳԱ՝ վուսխտ, ՄՂ՝ ոտխտ:

2-րդ և 10-րդ տողեր.

էրեսըս դի վուսխտ տակըն՝ անց կաց փիանդաղի նրման...

Քու դըռանըս նընգած ըլիմ, ով տեսնի, ասե, սուսաղ իմ...

Հմմտ. վրացերեն «Ի՞նչ կուլի, յար» խաղի 19—20 տողերի հետ.

Քու զըռանըտ յիս կու պառկում զուլի պէս՝

Հողի նըման ինձ կոխ տալով անց կենաս: (ՄՀ, 108)

և աղբբէջաներեն «Նաղլու յարի նախը տեսեր» խաղի 3—4-րդ տողերի հետ.

Յար, վուարտ դիր իմ էրեսին, վուտիտ տակի բուլըտ յիս իմ.

Համաշա բու զըռանն ընգած, տուսաղ արած զուլըտ յիս իմ:

(ՄՀ, 143):

6-րդ տողի առաջին հատվածում, ինչպես նկատել է Գ. Լեոնյանը, «մի վանկ ավելի է պահանջված 8 վանկից: Ուրեմն կամ պետք է նման է բառի է-ն դուրս գցել, և կամ պետք է աչպես կարդալ, որ շուղկդ բառը դուրս գա մի վանկ» (ԳԼ, 157): Սակայն տողի բարեհնչյունության տեսակետից նախընտրելի է նման է բառը կարդալ երկու վանկով, գաղտնավանկ ք-ի հաշվին:

10-րդ տողում, ինչպես նկատել է Գ. Լեոնյանը, «մի վանկ սրկաս է. անշուշտ ընդգրում հղած պիտի լիներ—Քու դրանքդ նընգած ըլիմ» (ԳԼ, 158): Դավթարում, սակայն, քու-ն բացակայում է: ՄՀ՝ քու զըռանըտ: Մենք ևս տողը լրացրեցինք քու դերանունով, որը վանկի պակասը վերացնելուց զատ ավելի որոշակի է դարձնում տողի իմաստը:

12-րդ տող. ուրղան—բնագրում՝ ուրղան: Ըստ Գ. Լեոնյանի ուրղան բառը անհասկանալի մնալուց բացի, «մի վանկով ավելացնում է առաջին ոտը: Ուրաղանը Ախվերդյանը ենթադրում է ուրազան, մրրիկ: Բայց մի՞թե այդ բառը ծանոթ է եղել մեր երգչին: Մեզ թվում է, թե այդ բառի տեղ պետք է որոնել մի ուրիշ, աճ մասնիկով վերջացող երկվանկանի բառ: Մի բանասեր (նկատի ունի Ն. Աղբալյանին—Հ. Բ.) առաջարկում է կարդալ ուրղան. մեր բարբառների մեջ (Շուրավեր) կա ուրկուն» (ԳԼ, 158): ԳԱ՝ ուրալան, ՄՀ՝ ուրղան:

15-րդ տողի ղալ-ը Ախվերդյանն ընդգծել է որպես անհասկանալի բառ: Ըստ Լեոնյանի դա նշանակում է աղմուկ, ըստ Ռ. Աբրահամյանի՝ խոսակցություն, խոսք, աղմկելի խոսակցություն, ըստ Մ. Հասրաթյանի՝ ղլխացավանք, նեղություն, հուզմունք, անհանգստություն (պարսկ. ղալն բառից) կամ թե վեճ, խոսք ու զրույց. բնադատություն, դալմաղալ (արաբ. ղալ, գալ բառից). ատելություն, բեն (արաբ ղըլ բառից—ՄՀ, 297): Ի. Միրզոյանի կարծիքով, այստեղ կամ բարբառային կալ-ղալ բառն է՝ կըստուրով շրջվել իմաստով (Մալխասյան, Բ, 364), կամ էլ պարսկական ղալ բառը, որ նշանակում է հիմար միճակի մեջ գցել, անհարմար դրության մեջ դնել (ԻՄ, 83): Թվում է, թե ամենահավանականը Ի. Միրզոյանի առաջին բացատրությունն է: Սակայն, եթե սիրուհին երգչի բարեկին պատասխան չի տալիս, լուր է, ապա ինչու է անմիջապես շարունակության մեջ բանաստեղծն ասում. «չունքի խոսկըտ անց է կենում բելլու շահանգաղի նըման»: Որ սիրուհին անպատասխան է թողնում երգչի բարեկ, չի խոսում նրա հետ, դա չիլտ է, բայց նա լուր չի մնում. շուտ է գալիս (շրջվում է) և ալմկում է, խոսում բարձրաձայն (ղալ է անում), այն է՝ հուզվում, բարկանում է, բանի որ նրա խոսքը անցնում է (անց է կենում) նշանավոր շահակահ խոսքի նման: Հատկանշական է, որ ղալ անելը՝ աղմկել, խոսք ու վեճ անել իմաստով դործածված է նաև «Առանց քիչ ինչ կոնիմ» խաղում («Ձիմ անի բալագըն չիմ անի ղալըն»): Այստեղ արդեն ղալ անելը բացարձակապես չի կարող կտրուկ շրջվել կամ հիմար միճակի մեջ դնել իմաստն ունենալ, ուստի և դժվար թե երգիչը ղալ անելու ասելով մի տեղ մի բան հասկանար, մյուս տեղ՝

այլ բան: Թիֆլիսահայերի մեջ տարածված է եղիլ «Մունջ կաց, թե չէ դալ կոնիմ» ասացվածքը, որտեղ նույնպես դալ անել նշանակում է աղմկել, վիճել, կռվել:

16-րդ տողի անց է կենում բարի իմաստը Թիֆլիսահայ բարբառում արտահայտվել է նաև խոսկալ դուս է գնում, խոսկալ նամիս է գնում, բուրս կտում է ձեռքով (ԳԱ, 72):

Նույն տողի բելլու-ն բնագրում՝ բելու: Շան-անդազ-ը Գ. Ախվերդյանը և մյուսները հրատարակել են միասին և ընդգծել որպես անհասկանալի բառ: Ըստ Ռ. Աբրահամյանի շանանդազ նշանակում է պարծենկոտ, պոռոտախոս, մեծ-մեծ բրդող (ՌԱ, 180, համար. Миллер, էջ 304): Իսկ ըստ Գ. Առնյանի դա թերևս պիտի թարգմանիլ արքայական երթ (ԳԼ, 158): Այդ թարգմանությունը Մ. Հասարթյանը համարել է բռնազրուսիկ: Նրա մեկնաբանմամբ. «էնդազը պարսկ. էնդախթեն (նետիլ, ձգել) բայի հրամ. եղանակն է, որից բարդվում է րիենդազ-նետաձիգ բառը: Գուցե Բահրամ Գուրի նետն է աղպակ կռվել բանավոր վեպում, որովհետև ասում է բելլու շանանդազ (հռչակավոր...), կամ լավագույն, ազնիվ տեսակի արքայական նետի մի տեսակն է, դժվարանում ենք ասել, բայց այլ իմաստ հավիվ թե ունենա» (ՄՀ, 236—37): Այս բացատրությունների անորոշությունն ու անճշտությունը բխել է նրանից, որ շան անդազ երկու տարբեր բաները դիտվել են որպես մի ամբողջություն: Շան անդազ նշանակում է շահական, քաղաքական խոսք: Պետք է լիներ շանի անդազ, սակայն այդպիսով մի վանկ ավելանում է, ինչպես մահի ջամալի (մահ-ջամալ) ժամանակ: Բացի այդ շանի անդազը որոշակի է ու կոնկրետ, մինչդեռ ալտեղ իմաստն առավել ընդհանրական է և ճիշտ է շան-անդազ հարադիր ձևը: Ինչպես նկատել է Ն. Աղբալյանը, «լրացրեն անդազա նշանակում է ասակ, իմաստուն խոսք և ուրեմն մեր հին լեզվով՝ վճիռ, այսինքն՝ կարճ ու կտրուկ խոսք: Թվում է, թե երկուսն ակնարկում է մի կտրուկ և իմաստուն խոսք, որ հայտնի է իր ունկնդիրներին... Շահերի խոսքը միշտ անց է կենում, այսինքն՝ անառարկելի կշիռ ունի, քանի որ շահի խոսք է» (ՆԱ, 118): Բառը նույն կերպ է բացատրել նաև Ի. Միրզոյանը: «Որ իբրեք երգչի վերոհիշյալ տողի անդազ բառը, պրում է նա,— նույնպես խոսք, ասացվածք իմաստով է, մեղ հուշում է հենց նույն տողի առաջին հասկածում օգտագործված «շունի խոսկալ անց է կենում» արտահայտությունը: Խոսք բառը երկրորդ անգամ նույն տողում չկրկնելու համար երգիչը օգտագործել է զրա համանիշ բարբառային ձևը: Երկառը հասկացվում է այսպիսի՝ յար, ես քեզ բարեւում եմ, իսկ դու չես սլառասխանում՝ դալ իս անում. որովհետև խոսքը անցնում է նշանավոր, հայտնի շահի (բելլու շահ) անդազի նման, խոսքի նման» (ԻՄ, 82):

17-րդ տող. չիմ լացիլ—ԳԱ՝ չիմ լաց բլի: Հմմտ. 4-րդ խաղի 126 տողի ծան.: Ն. Աղբալյանն ուղղել է չիմ լացիլ (ՆԱ, 119): Նույն ուղղումն առաջարկել է նաև Գ. Առնյանը (ԳԼ, 158): ՄՀ՝ չիմ լաց լի:

Նույն տողի գու լամ (կու լամ) բառաձևը հատուկ չէ Թիֆլիսահայ բարբառին (տե՛ս 4-րդ խաղի 52-րդ տողի ծան.):

20-րդ տողի առնում բայը, որ նշանակում է վերցնեմ, առնեմ, գրաբարյան ձև է և չի գործածվել Թիֆլիսահայ բարբառում, որտեղ գործածական են եղել վիր առնիմ, վիր կո. առնիմ ձևերը. առնիլ բայն առանձին նշանակում է գնել (ԳԱ, 72): «Առնում» ձևի «ուս» վախճանը,— ինչպես նկատել է Ն. Աղբալյանը,— մի տեսակ հավար ու ցուխիկ կերպարանք է տալիս առնելու գործողությանը, և «առնում տանիմ» ստությունը ստանում է «գրկեմ, տանեմ»-ի իմաստ. և «արք ունենալը» այդ «առնում» բառի շնորհիվ ստանում է

իր բուն արժեքը, որ ոչ թե իրավական իրավասություն է իսկապես, այլ բարոյական իրավասություն, մտերմական իրավունք, ինչպես ունի սիրող մամուսինն իր կնոջ հանդիպկամ ինչպես սիրեկանն՝ իր սրտով սիրածին (ՆԱ, 119)։

Նույն տողի մեջլիսները—բնագրում՝ մեջնիսներն։

7. «ԲԼԻՈՒԼԻ ՀԻԴ ԼԱՅ ԻՍ ԷԼԻ»

Գտնվում է Դավթարի 119 էջում։

2—5-րդ տներին հաջորդող կրկներգերը բնագրում ներկայացված են կրճատ ձևով. դրանք վերականգնելիս չենք դիմել անկյունավոր փակագծերի, քանի որ այդ կրկներգի հեղինակային ամբողջական ձևը տրված է առաջին տնից հետո։

9-րդ տող. Միւրնուրիւնտ էլալ աբբար—աբբար բառը արաբերեն է՝ տեր, տիրակալ, բռնակալ իմաստով, որ այստեղ նշանակում է տանջող, տիրական (հմմտ. ՆԱ, 108, տե՛ս նաև 8-րդ խաղի 19-րդ տողի և 20-րդ խաղի 10-րդ տողի ծան.)։

17-րդ տող. շամշ ու դամար—ԳԱ, ՄՂ՝ շամս ու դամար։ ՏՆ՝ս 34-րդ խաղի, 13-րդ տողի ծան.։

18-րդ տող. ամար—թիֆլիսահայ բարբառում դործածական ձևն է՝ ամա, համա. բանաստեղծն այստեղ հետամուտ է եղել հանգին։

27-րդ տող. Բարգ էրեսիտ խալ իս արի—հմմտ. խաղ 6, տող 13։

Տ. «ՓԱՀՐԱՊՆ ՄԻՌԱՄ»

Գտնվում է Օհանի ձեռագրի 60 ա էջում։ Օհանը չի հիշել խաղի վերջին տան տողերից մեկը (թերևս նաև տներից մեկը)։ Հրապարակել է Գ. Ասատուրը 1903 թ. «Աղղաբական հանդեսում» (գիրք 10)։

Ենթադրում ենք, որ խաղը գրված է 1753 թ., երգչի՝ արքունիքից առաջին անգամ վտարվելուց հետո, ուստի և որոշ նկատառումով և վերապահումով սեղադրում ենք Դավթարի խաղերի շարքում։

2-րդ տող. շարեն—ձեռագրում՝ շափարեն։ Մեկ ավելորդ վանկից խուսափելու համար Գ. Լեոնյանն առաջարկել է շափարեն-ը փոխարինել մեկ այլ նրկանկանի բառով, օրինակ «շարեն...» (ԴԼ, 173)։ Մ. Հասրաբյանը փոխարինել է խարեն բառով, իսկ երրորդ տողի խարեն-ը դարձրել է ֆարեն։ Մենք գերադասեցինք հետևել Գ. Լեոնյանի առաջարկած ուղղումին, դրսևելով, որ շարեն բառը ներդաշնակում է տողի իմաստին, իսկ խարեն բառը ճիշտ տեղում է։ Թերևս նախօրինակի շարեն բառի զուգորդմամբ է Օհանի հիշողության մեջ ծնվել շափարեն ձևը։ Սայաթ-Նովան այստեղ, ըստ երևույթին, ակնարկում է այն շարին (շար մարդուն, շար լեզուն), որի սլառհառով ինքը վտարվեց պալատից, բաժանվեց սիրուհուց։

4-րդ տող. մունջ իմ—ձեռագրում՝ մուշիմ, Գ. Ասատուրը կարդացել է՝ մուջամ։ Գ. Լեոնյանը շառարկելով դրա դեմ, բայց և չհասկանալով իմաստը, իր բառարանում բառի դիմաց հարցական նշան է դրել։ Մ. Հասրաբյանը մուշիմ-ը դարձնելով մունջ իմ. նկատել է, որ մուջամ բառ չկա հեղինակին ծանոթ լեզուներում և բարբառներում (ՄՂ, 249)։

9-րդ տող. դրելի իս դաւն—Գ. Ասատուրը դուն-ը տարել է բայից առաջ: Մենք նախ-ընտրել ենք ձեռագրի տարբերակը: Գ՛ւ, Մ՛Հ՝ դուն դրելի իս:

10-րդ տող. ռանգն է գուլգաղ—Մ. Հասարայանը սղել է օժանդակ բայը և ռանգն բա-ռը ներկայացրել երկու վանկով (ռանգըն):

15-րդ տող. փալըքամ է—Մ. Հասարայանը դարձրել է փալըքված է, մինչդեռ փա-լըքած է ձևն առավել հարազատ է թիֆլիսահայ բարբառին և կրում է նաև փալըքված է իմաստ: Այս և 20-րդ տողում կրկնված են մագիբըտ ունեան բառերը. թերևս աղավաղման արդյունք է. դժվար թե Սայաթ-Նովան նույն խաղի մեջ կրկենր միևնույն փոխաբերու-թյունը:

16-րդ տող. նամ չըկարի—բնագրում՝ նամ չի կարի: Կամ Օճանը սխալ է հիշել կամ էլ տառադարձելիս հայերենի ր-ն փոխարինել է վրացերեն ի-ով: Մ. Հասարայանը իր ժողովածուի առաջին երկու հրատարակություններում գրել է չը կարի, իսկ վերջին հրատարակությունում մեջ՝ չի կարի, որ ճիշտ չէ, քանի որ այս ստղը ոչ թե նշանակում է՝ կանաչ տերեխց նամ չի կաթում (չի կաթի) դարդի մեջ, այլ՝ կանաչ տերեխց նամ չկաթի դարդի մեջ: Հմմտ. խաղ 5, տող 6. «Դուրիքտ պահելով արա՝ նամ չըղիբջի խա-րսվալիտ»:

19-րդ տողի արբար-ը Մ. Հասարայանի կարծիքով պարսկերեն հարբար (բազմա-տեսակ) բառն է: Մեր կարծիքով, այստեղ էլ տիրական, իշխող, տանջող իմաստով արա-բական արբար (բարբ) բառն է, որ երգիչը գործածել է նաև 7-րդ և 20-րդ խաղերում:

20-րդ տող. կլապիտոն է—ըստ Գ. Լեոնյանի, այս է օժանդակ բայը մի վանկով ալի-լացնում է աղը: Նա առաջարկել է սղել է-ն և այն փոխարինել ստորակետով: Մ. Հաս-արայանն այդպես էլ վարել է: Մենք նախընտրել ենք ձեռագրի տարբերակը, կլապիտոն է բառը կարգաւով ոչ թե հինգ (կլըպիտոն է), այլ շորս վանկով (կլա-պի-տոն-է):

9. «ՅԻՍ ՔՈՒ ՂԻՄՆԹՆ ՉԻՄ ԳԻԳԻ»

Դտնվում է Դավթարի 108 լջում: Այս և հաջորդ ինը խաղերը, ամենայն հավանա-կանությունով, հորինված են 1753 թ.:

2-րդ տող. Բարի նըման իս—ԳԱ՝ Բարին նըմանիս: Մինչդեռ, ինչպես գրում է Ն. Աղ-բալյանը «թե՛ շեշտը և թե՛ իմաստը պահանջում են, որ տպագրվի ոչ թե նմանիս, այլ նըման իս: Որքան գիտենք, Թիֆլիսի բարբառի մեջ չկա նմանիլ բայը. և հետո՝ միտքն այն չէ, թե ջալա՛նի բարի նմանիս, այլ—նման ես ջալահիբ բարի» (ՆԱ, 186):

4-րդ տող. Լեյլու—բնագրում և ԳԱ՝ Լեյլի, Մ՛Հ՝ Լեյլու:

7-րդ տող. Պըռոշնիբըտ նաբար ունիս—ԳԱ՝ Պըռոշնիբիդ նաբար ունիս: Տողի իմաս-տըն է՝ շրթունքներից նաբաթ են, նաբաթի պես քաղցր շուրթեր ունես, և ոչ թե շրթունքներից վրա նաբաթ ունես:

8-րդ տող. դանդ ու շաբար—ԳԱ՝ դանդու շաբար: Պետք է հասկանալ ոչ թե դանդի շաբար (որ ճիշտ չէ, քանի որ դանդն էլ շաբարի մի տեսակ է), այլ՝ դանդ և շաբար:

19-րդ տողի յարիմ բառը պետք է լիներ սեռական հոլովով՝ յարի. «Սայաթ-Նովա, նաղլու յարի դնած նոքարի նման իս»: Այսինքն՝ Սայաթ-Նովա, նաղլու յարի կողմից (կամ յարի համար) գնած, առած ճորտ-ծառայի նման ես: Բայց երգիչը գրել է յարիմ՝ հար-մարեցնելով նախորդ տողերի շարին և արին հանգ կազմող բառերին (տե՛ս Մ՛Հ, 238—39):

Դտնվում է Դավթարի 108 էջում: Մանուցման մեջ երգիչը նկատի ունի այս և նույն էջում գտնվող նախորդ թասիլբը:

Խաղը հորինված է նաղաշ Հովնաթանի «Ուստի» կուգաս քաղցր բլբուլ» երգի աղ-
ղեցությունում, ունի նույն չափը և հավանաբար երգվել է նույն եղանակով (համառ. Նաղաշ
Հովնաթան, Բանաստեղծություններ, էջ 19—20): Հիմք ընդունելով Սայաթ-Նովայի սույն
խաղի և աղբյուրների աշուղ Սախլիի «Սոխակ» երգի որսւ նմանությունները, Հ. Արասլին,
առանց որևէ տարակուսանքի ընդունել է, որ Սայաթ-Նովայի այս խաղը Սախլիի երգի
«մասնակի թարգմանությունն է» (տե՛ս «КОММУНИСТ», Երևան, 1963, № 248): Նախ՝ վար-
դին ու տոխակին նվիրված գրեթե բոլոր երգերն ունեն ընդհանուր տեղիներ, երկրորդ՝
Սախլիի և Սայաթ-Նովայի ստեղծագործական առնչակցությունը վկայող ոչ մի ուղղակի և
անուղղակի փաստ չկա, երրորդ՝ Սայաթ-Նովան այլ հեղինակներից ոչ մի ամբողջական
կամ մասնակի թարգմանություն չի կատարել, և վերջապես չորրորդ՝ սույն խաղն անա-
ռարկելիորեն գրված է նաղաշ Հովնաթանի հիշյալ երգի աղղեցությամբ: Հիշենք նաև, որ
նաղաշ Հովնաթանի մեկ այլ երգի («Թասիրն չիսի») խաղի հետևությամբ (նույն հաւ-
գով-ձևով) է գրված նշանավոր «Քանի վուր ջան իմ»-ը: Այնպես որ Սայաթ-Նովա-բա-
նաստեղծը գալիս է աղգային ակունքներից, և նա ոչ թե աղղվել է աղբյուրներից աշուղից
(այն էլ՝ երկրորդական կարգի) այլ ինքը «իբր ստեղծագործություններով,— ինչպես գրում
է աղբյուրների մեկ այլ բանասեր՝ Ս. Շյուքրյուրովը,— մեծ աղղեցություն է գործել աղբ-
բեջանական աշուղների վրա...» («Գրական թերթ», 1963, № 40):

Այս թասիլբ խաղը Ն. Աղբալյանի բնորոշմամբ. «կատարյալ գործ չէ, բայց սիրուն
խաղ է և հուզիչ... հորինված է այնքան արտանց և ղուգահեռը քաշված է այնքան ար-
վեստով, որ թերին չի երևում վայելուղին» (ՆԱ, 129): Այս խաղի աղղեցությամբ է հո-
րինված Շամշի Մելիքի «Ուլ վարթ, յիս իմ քիղ մող գալու» երգը: Ռուսերեն առաջին
չափածո թարգմանությունը կատարված է 1854 թ. Ն. Բերգի կողմից (տե՛ս «Բանբեր երե-
վանի համալսարանի», 1967, № 2, էջ 198—200):

1-ին տող. ուստի բառը խորթ է թիֆլիսահայ բարբառին, որտեղ այդ նշանակու-
թյամբ գործածվել են «վո՛ւր դղանց, վո՛ւր տիղանց» ձևերը (ԳԱ, 74): Բառը փոխառ-
ված է Հովնաթանի վերոհիշյալ խաղից:

5-րդ տող. Արի, բլբուլ, խոսի բառը—Ն. Աղբալյանը հանգի պահանջով առաջարկել
է բառը գործնել բառ: Այդպես էլ վարվել է Գ. Առնյանը, գտնելով որ «բառը (պար)
արքա բառ է, որ ունի երկու նշանակություն՝ նվագարան և անգամ, նվագ. ուրեմն Սա-
յաթ-Նովան մեր կարծիքով ասել է՝ Արի բլբուլ, խոսի մի անգամ, մի նվագ, կամ խո-
սի նվագարանի պես» (ԳԱ, 158): Մ. Հասրաթյանն ընդունելով հանդերձ բառը ձևը՝ թե-
կուղ, գտնել իմաստով, ենթադրել է. որ այստեղ աղղի շուտ հայերեն բառի բառն է. այն
է՝ խոսի բարին, քան թե խոսի թեկուղ, խոսի գոնն (ՄՀ, 281): Ծիշտ չէ թե մեկ և թե
մյուս բացատրությունը: Բառը սխալ է բացատրում նաև Ա. Քոչոյանը, որ նույնպես ըն-
դունելով բառը ձևը, գտնում է, որ դա բառ (պտուղ) բառն է՝ բողբոջած սեր, արտում
նոր բացված սիր փոխարենական նշանակությամբ (ԱՔ, 46): Ծիշտ բառը ձևն է, ինչ-
պես և կարդացել է Գ. Ավիբեղյանը: Բառ-ը, որ ըստ Գ. Ասատուրի չկա թիֆլիսահայ
բարբառում, Սայաթ-Նովայի խաղերում հանդիպում է երեք անգամ՝ խոսք (զրույց, բան)
իմաստով (Մալխասյան, Ա, 332): «Արի բլբուլ, խոսի բառը» պարզապես նշանակում
է՝ ե՛կ, խոսի՛ր, մի բառ, մի խոսք ասա, բլբուլ: Դավթարում այս խաղին հաջորդող մու-

խամամադում ևս գործածված է բառ-ը այս նույն նշանակութեամբ. «Քիզիզ բաս ո՞վ կարա բըռնի՝ հազար բարաթէ բառ իս էլի», այսինքն՝ քեզ հետ ո՞վ կարող է վիճել, հազար տեսակ խոսքի տեր ես, բառ ունես:

9-րդ տողի պարսկերեն ղիլլար բառը, որի բուն իմաստն է դեմք, հայացք, այստեղ, ինչպես նկատել է Դ. Ախվերդյանը, նշանակում է սիրեկան, երբեմն էլ գործ է ածվում իդեալ, կատարելապիս իմաստով (ԳԱ, 74 «Գուսանք», Բ, 510): Բառն այս իմաստով է գործածված նաև «Խնշ կոնիմ հեքիմն» խաղում (տող 30), իսկ մնացած դեպքերում գուրծածված է իր բուն նշանակութեամբ: Այս երկու խաղի մեջ գործածված ղիլլար բառը համարելով թիֆլիսահայ բարբառում պարսկերեն ղիլլար (ավելի ճիշտ՝ դելլար-սիրուհի իմաստով) բառի աղավաղված ձևը, Մ. Հասրաթյանը, Ս. Օգանեզաշվիլու հետևությանը («Մարտակոչ», 1926, № 96), բնագրի ղիլլարը դարձրել է դիլլար: Դիլլարն այստեղ, ինչպես ուրիշ հայ աշուղների մոտ, ոչ թե դելլարի աղավաղված ձևն է, այլ բուն դիլլար բառը՝ սիրեցյալ կամ սիրած էակի կատարելապիս փոխարեքական նշանակութեամբ: Դա և՛ բնորոշ է Սալաթ-Նովալի սիրերգությանը, և՛ բխում է սույն խաղի բովանդակությունից: Ուստի թե՛ այստեղ և թե՛ վերոհիշյալ խաղում ղիլլարը թողել ենք անփոփոխ: Ն. Աղբալյանը ևս ղիլլարը բացատրել է գեղեցկացեմ, գեղեցկուհի նշանակութեամբ (ՆԱ, 126): Ռ. Աբրահամյանի համոզմամբ էլ «գիլլարը» «գիլլարով» փոխարինելու ոչ մի կարիք չկա» (ՌԱ, 154—155):

9—12-րդ տողերի հիդ-ը այստեղ նշանակում է ոչ թե հետ, այլ՝ ետևից, էղենեմ (ԳԱ, 71): Պետք է հասկանալ ոչ թե՛ ման եմ գալիս, դրոսնում եմ սիրուհու հետ, որին կորցրել և փնտրում է երգիչը, այլ՝ ման եմ գալիս, փնտրում եմ սիրուհուն, նրա պատկերը, ինչպես սոխակն է փնտրում վարդին: 17-րդ երգի մեջ ևս բանաստեղծն ասում է. «Շատ մարթ կոսե յիս յարի հիդ ման գուրամ»: Ն. Աղբալյանի ճիշտ մեկնաբանմամբ սա նշանակում է՝ «յարի ետևից քաշը գալ, գլուխ դնել յար սիրելու, սիրո գլխացավանքներին հանձնատու լինել» (ՆԱ, 153): ՄՀ-յիդ:

10-րդ տողի խար, ըստ Ա. Մնացականյանի, տվյալ դեպքում իմաստով համազոր է վարդին, որովհետև երգչի համար դիդար-ը նույնն է, ինչ որ խար-ը սոխակի համար («Տեղեկագիր», 1964, № 5, էջ 80): Մեր կարծիքով, խարը այստեղ էլ փոշ իմաստով է և տվյալ դեպքում խորհրդանշում է վարդ-սիրուհուն, որ կրկնակիորեն զաղել-խոցել է երգչին... Հատկանշական է, որ այստեղ, ինչպես և մի շարք այլ խաղերում (26, 27, 29, 39, 46) խար-ը մեկնաբանված է վարդենու որդ, միջատ, որ ճիշտ չէ՝ երգչին ամենուրեք խար բառը գործածել է փուշ իմաստով:

13-րդ տողի սալլրոի ձևը համարելով քերականորեն սխալ, Ս. Պալազատն այն փոխել է բռնազորոսիկ սալլրո ձևով: Այնինչ Սալաթ-Նովալի լեզվում սալլրի բառն ունի և՛ սալլրի և՛ սալլրու ուղիղ ձևերը. քնականաբար, երգիչը բառի սեռականը կաղմել է սալլրոի ձևով (տե՛ս 5-րդ խաղի 16-րդ տողի ծան.):

14-րդ տող. Ե՛կ—թիֆլիսահայ բարբառում գործածական է արի հրամայական ձևը (ինչպես 5-րդ տողում): Զանց առնելով այս, Ս. Պալազատը եկ-ը հարմարեցրել է թիֆլիսահայ բարբառին՝ Յիկ ձևով, որ մերժում ենք:

Նույն տողի ձայնիտ հաճանք իմ—քնագրում՝ ձայնտ հաճանք իմ. Ախվերդյանը կարդացել է ձայնդ հաճանքն (ձայնդ ճանաչեմ) բայական ձևով, մինչդեռ թե՛ շեշտը և թե՛ իմաստը պահանջում են կարգավ ձայնիտ հաճանք իմ. այն է՝ ճանաչ եմ, ծանոթ եմ ձայնիդ: Չայն-ը գրական ձև է, բարբառում եղել է ձեն: Այստեղ ձայն-ի նախընտրությունը «ապացույցն է մեր երգչի գերազանց նուր ականջի: Եթե իրար հետ համեմատեք ձայն ու

ծեն բառերն իրոք հնչական արժեք, կոտեսներ, որ ձեն-ը նեղ է, սուղ, իսկ ձայն-ը՝ լայն է, տարածուն» (ՆԱ, 128):

17-րդ տոդ. ձայնրտ մալում (ձայնդ իմանալի, հայտնի) — Գ. Ախվերդյանը կարդա-
ցել է՝ ձայնիդ մալում, որ բերականորեն ճիշտ չէ: Ըստ Գ. Լեոնյանի, բանասերներից մեկը
(նկատի ունի Ն. Աղբալյանին — ՆԱ, 154), որն անծանոթ է եղել ընդհանուր, կարծելով,
թե այնտեղ եղել է ձայնիտ (վրացերենում և տառը չլինելու պատճառով) իրավացիորեն
առաջարկել է Ախվերդյանի ձայնիդ մալում-ը դարձնել ձայնրտ մալում: Մինչդեռ բնագրում
էլ հենց ձայնրտ ձևով է: ՄՀ՝ ձայնրտ մալում:

11. «ԽՈՍՍԿԻՐՏ ՄԱԼՈՒՄ ԻՄ ԱՐԻ»

Գտնվում է Դավթարի 108—110 էջերում: Գ. Ախվերդյանը վերջին երեք խաղիկները չի
հրատարակել: Նա, ըստ երևույթին, հետամուտ է եղել խաղի ներդաշնակ կառուցվածքին
(ամեն մուխամաղ տնից հետո մեկ բայաթի-խաղիկ): Բացի այդ՝ նրան չի հաջողվել
ինչպես հարկն է վերծանել այդ խաղիկները: Նրա կազմած ժողովածուի ձևագրի 34 էջում
(Ն՝ 1—1-ին) կա այդ խաղիկների այսպիսի մի ընթերցում.

Արդ իս անում հաղարին,
Հաղար նաթին բաղարին,
Սիրտս խարալու արիր,
Աչկս դուլայ հաղարին:
Հաղարին հաղար պիտի,
էրած սրտին ճար պիտի,
Ես մե էլիս ջունուն իմ,
Ինձ մե դողու եար պիտի:
Եարի լիլուն բուլբուլ է,
Դաստամազն սնրուլ է.
Սայաթ-Նուին լալիս է.
Մաղար զարիր բուրուլ է:

Այս խաղիկները նույնպիսի անհաջողությամբ ու հարցականներով ընթերցել է նաև
Գ. Ասատուրը և հրապարակել էջմիածնի «Բանբերում» (Գիրք Ա.—Բ, 1921—22), որտեղից
և այն նույնությամբ ընդգրկվել է Գ. Լեոնյանի ժողովածուի ծանոթագրությունների բաժ-
նում (ԳԼ, 159):

Այս երեք բայաթի-խաղիկներն առավել ճշգրտությամբ վերծանել է Մ. Հասրաբյանը
և առաջին անգամ լույս ընծայել իր կազմած ժողովածուի առաջին հրատարակության մեջ՝
մուխամաղ խաղի վերջում, ինչպես Դավթարում է: Սակայն ժողովածուի հետագա հրա-
տարակությունների մեջ Մ. Հասրաբյանը գերադասել է Գ. Ախվերդյանի ընտրած ձևը՝
Բայց դրա հետ մեկտեղ, նա առանձին համարով (Ն՝ 56), որպես ինքնուրույն խաղ, հրա-
տարակել է բոլոր ութ բայաթի տները, և դա արել է հատկապես այն պատճառով, որ
«այս խաղիկները՝ բայաթիների ժանրով և հայ ժողովրդական խաղիկների բովանդակու-
թյամբ զրված մեծ երգչի միակ ստեղծագործությունն է, որը կորչում էր հիշյալ խաղի
մեջ» (ՄՀ, 252): Մենք գերադասեցինք, հարադատ մնալով Դավթարին, բոլոր բայաթի
խաղիկները հրատարակել մուխամաղ խաղի հետ: Ավելորդ ենք համարել բայաթի խաղ

ղիկները առանձին հրատարակությունը: Համաձայն չենք Մ. Հասարկայանի հետ, որը պրեն-
դում է, թի այս խաղիկներն ու մուխամաղը օրդոնապես չեն կապված իրար, ոչ մի իմաս-
տային առնչություն չունեն և ըստ ամենայնի տարրեր են իրարից: Նախ՝ խաղիկ ամենապարզ
ընթերցումն անգամ ջուլց է տալիս այդ սնկերի թե՛ կառուցվածքային և թե՛ իմաստային
աղերսը, յուրաքանչյուր խաղիկ, փաստորեն, շարահարկվելով մուխամաղ սնկին, շարու-
նակում է նրա միտքն ու տրամադրությունը: Երկրորդ՝ Սալթ-Նուլայի նման բանաստեղծ-
երերը տարբեր խաղերի միխանիկական կցում չէր կատարի: Համաձայն չենք նաև, որ
Հասարկայանն այս բաշտի-խաղիկները երգչի այս ժանրի միակ ստեղծագործությունն է
համարում: «Յիս կանչում իմ լալանին» խաղը ևս կազմված է հինգ տուն բաշտի-խաղիկ-
ներից, այդպիսի սնկեր ունի նաև «Սուսան սմբուլ» խաղը:

Խաղի որոշ տողերից և հատկապես «խաղի» (եղբայր) դիմումներից կարելի է են-
թադրել, որ այն ձևավորվել է ինչ-որ տղամարդու, գուցե՝ Հերակլ Թագավորին: Սակայն խաղի
որոշ տողերում և սնկերում էլ երգիչը նորից ու նորից դիմում է սիրած կնոջը, որ անհանգ-
շելի հօր լինելով, «հուրյան-բիրյան» է անում նրան, որ բաշտվել է չելանի նման, բալա-
սանի ծառի պես տարածում իր բուրմունքը և ունի: Իսկ վերջին մուխամաղ տան մեջ,
արդեն, նա որոշակիորեն խոսում է յարի մասին («Համաշա իմ յարի համփին կանգնած
իմ՝ ալախ իմ դուլա»): Ինչպե՞ս հասկանալ այս ամենը: Մեր կարծիքով, խաղն ունի այ-
լարերական իմաստ: Այդ մասին երգիչն անմիջապես ասում է առաջին բաշտի տան մեջ՝
«Խոսի իմ ասում առականց», այսինքն՝ ոչ թե ուղղակի, այլ առակավոր, այլարերական
իմաստով խոսք են ասում: Սա բնորոշ է «առակավոր-մասալով» ու ծածկազերծով խոսող
Սալթ-Նուլային: Հիշենք «Քուս դուն կոսիս» վրացերեն խաղը, որի մասին Մ. Հասարկ-
յանը գրել է. «Սովորաբար ենթադրվում է, թե երգիչն այս և նման խաղերով դիմել է
Հերակլ 2-ին, նրա տխուր և հուզված ժամերին, որ շատ հնարավոր բան է, սակայն այս-
խաղի որոշ տողերը հակասակ եղրակացության են բերում, որ էլի դիմում է իր սիրտ
օբյեկտին» (ՄՀ, 261): Սույն մուխամաղ խաղի մեջ էլ, թվում է, թե որոշ տողեր ար-
բունիքից վտարված երգիչը ուղղել է Հերակլին (ինչպես ամբողջ «Դուն էն ղլինեն» խաղը),
բայց ընդհանուր առմամբ, խաղը մի սիրտ երգ է՝ սիրահար և զմարտ բանաստեղծի հո-
գեկան տառապանքների արտահայտություն:

2-րդ տող. լրցված-բնագրում՝ լցիցած, ԳԱ՝ լցուցած, ՄՀ՝ լրցրած:

3-րդ տողի վունց-ի վրա Գ. Ալիբերդյանը և մյուսները գրել են բացականչական նշան,
որով կիսատողը հասկացվում է, թե՛ խոռոչ լավ կհաղենա: Այնինչ վունց-ի վրա հար-
ցական նշան պիտի դնել, որով իմաստը կփոխվի՝ խոռոչ ինչպե՞ս կհաղենա (չի հաղենա),
որովհետև ոչ թե սովորական այլ՝ կաթնաղբյուր է նա:

9-րդ տող. վարակված—ԳԱ՝ վարաղած. ՄՀ՝ վարակված:

19-րդ տողի բառ-ի վրա երգիչը գրել է հակական ու տառը, որդիսպի կարգացողն
իմանա, որ խոսքը ոչ թե բառ-ի այլ բառ-ի մասին է (տե՛ս նախորդ խաղի 5-րդ տողի
ծան.):

25-րդ տող. էշխի մեչքն հիմացի—այսպիսի, ինչպես և 34-րդ խաղում (տող 17), եր-
գիչը հանդի համար հիմնադրել (հիմնավորվել) բայը գրել է հիմնադր ձևով: Այս բանը
նկատելով հանդերձ, Մ. Հասարկյանը (ինչպես և մյուսները) երկու դեպքում էլ ուղղել է
հիմնացի (հիմնադր): Մենք նախընտրել ենք բնագրային տարբերակը:

29-րդ տողի էշխրտ բիգի նաբդ իս աբի—Մ. Հասարկյանը բացատրել է՝ «սերդ բեդ
համար խաղալիք ես դարձրել կամ վանդակ ես դարձրել, կամ կրակ (ար. նաբ, դ-ի հա-
վել=էո)» (ՄՀ, 304): Ի. Միրզայանը նույնպես նաբդ-ը բացատրել է նաբ-կրակ իմաս-

տով (հանդի համար Դ-ի հավելմամբ) և առաջարկել է ֆիզիկ-ն դարձնել ֆյոզի (ադրբ. բարբառային շիկացած ածխի շեղջ): Սակայն բնագրում շատ որոշակի գրված է՝ ֆիզի նարդ իս արի: Զիշտը Մ. Հասարթյանի առաջին բացատրությունն է՝ սերդ քեզ համար խաղալիք (նարդու խաղ) ևս դարձրել: Նարդ-նարդի խաղի հիշատակություն կա նաև երգչի վրացերեն և ադրբեյջաներեն խաղերում (տե՛ս ՄԶ, 121, 199), ինչպես և նրան վերագրվող «Տղեն ու ախիլիը» հայերեն խաղի վերջին տան մեջ:

39-րդ տող. ցրե՛ն—բնագրում՝ սրե՛ն, Մ. Հասարթյանը դարձրել է սրեփե՛ն, սակայն թե՛ իմաստը և թե՛ հաջորդ շաղ տու բառերը հուշում են, որ այստեղ ցրել բայն է և ոչ թե սրել: ԴԱ՝ սրել:

Նույն տողի վրտիտ—բնագրում՝ ոտիտ, ԳԱ՝ վրտիտ, ՄԶ՝ ոտիտ: Տե՛ս նաև խաղ 6, տող 2:

43-րդ տող. Դարսլրտ խանին արգ արա—վրաստանի վերջին թագավորները լինելով Պարսկաստանի գերիշխանության տակ, որպես շահի փոխարքա, կոչվում էին խան: Այս-տեղ և մի քանի այլ խաղերում խան ասելով, Սալաթ-Նովան նկատի ունի վրաց Հերակլ Բ թագավորին: Նախորդ տողի Քաղաքն էլ հասարակ անուն չէ, այլ կոնկրետ Թիֆլիս քաղաքն է նշանակում: Ուստի նման դեպքերում այս երկու բառերը գրվում են մեծ-ատուով:

46-րդ տող. Արգ իմ անում—բնագրում՝ Արգ իս անում: Ըստ Մ. Հասարթյանի. «Ամե-նայն հավանականությամբ արգիս-ը եղել է արգիմ. որը նույնպես նախորդ տողի ազդե-ցությամբ սխալ է գրվել» (ՄԶ, 252): Այսուամենայնիվ, նա թողել է արգ իս անում: Այս տողը Հասարթյանի ճիշտ բացատրությամբ նշանակում է՝ «աղերսում-խնդրում եմ հաղարին»: Հաջորդ տողը նա իրավացիորեն կարդացել է. «Հա՛ դարբարին, հա՛ դարին», բայց բացատրել է՝ «Աղերսում-խնդրում եմ հաղարին, հաղար բարին (հավասարին), հա-ղարին»: Այս զարն էլ նա նույնացնում է ար-ինընասիրություն կամ ար(հ)-պես, զլխավոր բառի հետ, գրված գոտարյան զ նախորդով: Մինչդեռ այստեղ, մեր կարծիքով, երկիշը գործածել է զարբաբ և զար (ոսկի և մետաղ) իր նախասիրած բառերը, սակայն, նրան-ցից բխող՝ հարուստ, ունեոր (զարբարի ու զարի տեր) փոխաբերական նշանակությամբ: Երգիչը զար բառը այդ նշանակությամբ գործածել է նաև իր ուշ շրջանի խաղերից մեկում. «Քանի կանչիմ դադ ու փիրչալ, զարի ձեռնեմեն դադ կոնիմ»: Սա ոչ թե նշանակում է ոսկու (կամ ոսկեթել գործվածքի) դեմ եմ բողոքում, այլ ոսկու տիրոջ՝ հարուստի: Այս բայաթի-խաղիկի մեջ, ուրեմն, երգիչը զիմում է հաղարին (շատերին), դիմում է հարուստ, ունեոր մարդկանց (զար ու զարբաբի տերերին): Իսկ 49-րդ տողում, Մ. Հասարթյանի բացատրությամբ, ասում է՝ աչբս անվերջ արյուն է լալիս, արյուն-արին բառը գործածե-լով գրարարյան զ նախդիրով:

50-րդ տողի Հաղարին հաղար սլիտի բառերը, ըստ Մ. Հասարթյանի, «պետք է հա-կանալ (պարսկ.) սոխակին գարուն պիտի կամ սոխակին հանգիստ, անդորր պիտի (գուցե և՛ սոխակին սոխակ պիտի)» (ՄԶ, 253): Առավել հավանականը փակագծում արված ենթադրությունն է (սոխակին սոխակ պիտի):

12. «ԷՄՍՐ ԻՄ ՅԱՐԻՆ ՏԵՍԱ»

Գտնվում է Դավթարի 110—111 էջերում:

2-րդ տողի օսկե՛ն նալ-ի մասին Գ. Ավվերդյանը գրել է հետևյալը. «Թիֆլիզու երի-տասարդներն ու աղջկուներ՝ մանավանդ հին ժամանակին, հագնում են եղել՝ զարդի համար,

կանաչ սաղրի բոշեր (կոշիկներ), որո կրնան ոսկե կամ արծթե նալ անելն՝ իմանում ենք մեր աշուղներու խաղերիցն» (ԳԱ, 91)։ Որպես օրինակ Գ. Ախվերդյանը մեջ է բերել իր ձեռքի տակ եղած «Բլբուլի պես ձայն է տալի» Սայաթ-Նովային վերագրվող խաղի 10-րդ տողը և մի հատված Շամշի-Մելքոյի մի երգից։

6-րդ տողի ղաժդ-ը Մ. Հասարայանի մոտ բացատրված է «նազով, աչքով-ունքով խոսել, աչքով անել, բամբասել» (ՄԶ, 298)։ Սակայն ղաժդ ձևով, ինչպես նկատել է Ի. Միրզոյանը. «ուպրսկերեն կան երեք տարբեր բառեր՝ ղամեզ (մուրթ, անհասկանալի), ղամզ (մեղադրանք, դրպարտանք) և ղաժդ (կոկիտ հայացք)։ Այս երեք տարբեր իմաստներից պետք է որևէ մեկը ընտրել և ոչ թե երեքը միացնել։ Հեղինակը մեզ պարզ հուշում է՝ «նազ ու ղամեզ»։ Ուրեմն «նազն ու ղամզը» համանիշ բառեր են, որ երգիչը համադրել է ու շաղկապով։ Հետևաբար պետք է ընտրել «ղամեզ»-ի՝ «կոկիտ հայացք» իմաստը։ Գ. Ախվերդյանը տվել է գեղեցիկ մեկնաբանություն՝ «պլբելով հայիլ» (ԻՄ, 84)։ Ղամզ-ը նազ, նազանք իմաստով է բացատրում նաև Ա. Քոչոյանը (ԱՔ, 117)։

Նույն տողի փել ու փանդ-ը Ախվերդյանը և մյուսները կարդացել են փուլ ու փանդ, և փուլ ու փանդ անել-ը բացատրել են փուլ տալ, քանդել, քարտուրանդ անել։ Մինչդեռ այս տողը նշանակում է՝ բո նազով ու կոկիտով հայացքով կախարհել, հմայել ես հոգիս (փել ու փանդ իս արի)։ Բարիթափոր խաղի մեջ էլ, ինչպես տեսանք, երգիչը դիմելով կախարհողի յարին ասում է. «Ջանս հանցիր»՝ չաղութար իս։ Ջաղութար իս փել ու փանդով...»։

8-րդ տող. խարուխալով—բնագրում՝ խարավխալով։ Գ. Ախվերդյանը կարդացել է խարու խալով։ Մ. Հասարայանը բնագրի խարուլ-ը դարձրել է խաբուլ և գրել՝ խաբուլ, խալով։ Սակայն յարը ոչ թե խաբուլ (բարի, մեղմ տրամադրությամբ), խալով և քաղցր լեզվով է գրավում, այլ՝ խարուխալով (այսինքն՝ գեղեցիկ դիմագծով) և քաղցր լեզվով։ Ինչպես գրում է Ի. Միրզոյանը. «Այս անհատու աղավաղված գրությամբ մեզ բերում է այն համոզման, որ խաղի բնագիրը եղել է հայատառ. «խաթու»-ի երկնյուղ ուն կարդացվել է ուլ (հին ուղղագրությամբ՝ ներկայիս «վ» տառը գրվում էր «ւ» ԻՄ, 84)։ Մեր կարծիքով երգիչը ոչ թե խաղը հայատառ բնագրից է արտագրել և իր գրածը սխալ կարդացել, այլ միանգամից վրացերեն տառերով է գրի առել և ու տառը, որ ունեցել է երկբարբառի արժեք (ո-ւ) վրացերեն տառադարձելիս գրել է ուլ։ Այդպես է տառադարձել նաև Արի համով ղոլուղ արա» խաղի շան ու շրբաբ-ը, որ մինչև այժմ սխալմամբ կարդացվել է շանով շրբաբ (տե՛ս խաղի ծան.)։

12-րդ տող. Պոռնշնառ միլը է կարում—հմտ. Երգ երգոց, դլ. Դ «Մեղր կաթուցանեն շրթունք բո»։ 12—13-րդ տողերը գրեթե նույնությամբ կրկնված են 47-րդ խաղի մեջ (տող 13—15)։

13-րդ տողի ծաղկի բառը չկա բնագրում և Գ. Ախվերդյանի մոտ վերականգնել է Մ. Հասարայանը 47-րդ խաղի 13-րդ տողի հիման վրա։

23-րդ տող. Մըտիկ սուա ֆու ստիղծողին—նույնությամբ կրկնված է 20-րդ խաղի 8-րդ տողում։

13. «ԳՈՒԶԻՄ ՈՒՄԲՐՍ ՀԵՆՑ ԱՆՑ ԿԱՑՆԻՄ»

Գտնվում է Դավթարի 111—112 էջերում։

Խաղն ունի ալլաբերական բովանդակություն։ Այստեղ բազմաբեռ քարավանը խորհրդանշում է րանաստեղծի ներքին, հոգևոր հարստությունը։ Իր այդ բեռները, ինչպես

գրում է Պ. Սևակը, Սալաթ-Նովա բանաստեղծը «երբում է խկուպես էլ «հեռու տիղացենք» իր ժողովրդի 4000 ամյա քաղաքակրթության ընդերքից՝ իբրև իր հինավուրց հողի հրահեղուկության էպիկենտրոն, իբրև լեզու նրա զարավոր արյան ձայների, նա գալիս է նաև պարսկական և արարական բազմահարուստ աշխարհի, վրացական և ադրբեջանական մեզանոս մշակույթի խորքերից» (ՊՍ, 173—174): Նման ալլաբերություն մի խաղ էլ երգիչը հորինել է ադրբեջաներեն լեզվով (հմմտ. ՄՀ, 135—136, տես նաև էջ 188, տող 10—12):

1-ին տող. օրլս—բստ Գ. Լևոնյանի ալատեղ այդ բառը տեղում չէ, պետք է լինի մի ուրիշ առ վերջավորությամբ միավանկ բառ, որովհետև հետևյալ տողերի, ինչպես և մյուս տների վերջին տողերի հանգերն են՝ դարբս, շարբս, սարբս, արբս, զարբս, կարբս, շարբս և յարբս (ԳԼ, 163): Մ. Հասրաբյանի ճիշտ ենթադրությամբ. «օրս բառը պետք է եղած լինել արբս, բայց հեղինակը, մեքենայաբար կամ հարկադրված գրել է սովորական ձևով» (ՄՀ, 239): Մենք ևս հանգի աննշան շեղումը գերադասում ենք արբս անհաշուղ բառաձևի գործածումից:

Ծ-րդ տող. զարար—Մ. Հասրաբյանը դարձրել է զարար (հավասարակշիռ իմաստով), համոզված լինելով, որ գ-ն գրչի սխալ է: Բայց քանի որ վրացական ղ և զ տառերը ձևով շատ հեռու են իրարից, ուստի նա ենթադրել է, որ երգիչը գուցե իր վրացատառ Դավթարն արտագրել է հայերեն գրածից և շփոթել հայերեն գ և ղ նման տառերը: Մեր կարծիքով այստեղ ոչ մի սխալ չկա, և սույն տողը պետք է հասկանալ ոչ թե՛ հեռու տեղից եմ գալիս, խելքին-իմաստությամբ հավասարակշիռ (զարար) շահ-հարստություն եմ բերել, այլ հակառակը՝ ինչից դուրս, խելքը քանոզ, վնասող (զարար) շահ-հարստություն եմ բերել: Զարար և շահ բառերի հակադրություն կա նաև «Ինչ կոնիմ հերիմն» խաղի 21-րդ տողում. «Ասաց թե. Քի դարար շինեցիր շահլում»:

13-րդ տողի փարալար—Գ. Ախվերդյանը համարել է անհասկանալի բառ և ներկայացրել ընդգծված ձևով: 1903 թ. Հայոց Ազգագրական Բնկերության «Հայ աշուղներ» հրատարակության մեջ, ինչպես մատնանշել է Գ. Լևոնյանը, փարալար—ը բացատրված է՝ «ազատ»: Մոտավորապես նույն կերպ թարգմանելով արաբերեն այս բառը (հանգիստ, խաղաղ) Մ. Հասրաբյանը տալիս է սույն տողի հետևյալ բացատրությունը. «մի բևու Չինումաշինին հանգիստ կերպով, լրիվ կգնի, այսինքն՝ հանգիստ կերպով ամբողջ Չինումաշինի հետ կփոխանակվի» (ՄՀ, 317):

14-րդ տող. փարշալի խալար—ունգրում և ամենուրեք՝ փարշալի խալար: Մինչդեռ այստեղ, ինչպես նկատել է Ի. Միրզոյանը, ոչ թե փաշա (փաշան—փաղիշահ, թագավոր), այլ՝ փարշա (թանկագին կտորի տեսակ) բառն է՝ աղավաղված գրությամբ (Բ-ի սղումով): «Փարշան» և նույն տողում գործածված ենգիդունյան կտորի տեսակներ են: Երգիչն ասում է, որ ինքը հեռու տեղից եկել է, մի բևուր «ենգիդունյա» կտոր է, իսկ մյուսը «փարշալի խալաթ է»՝ մետաքսյա կտորից նվերներ» (ԻՄ, 84, ենգիդունյալի մասին տե՛ս անդ, էջ 85 և սույն հատորի Ա՝ 5 խաղի ծան.):

18-րդ տողի բեհնիբը բառը Գ. Լևոնյանի բացատրությամբ պետք է հասկանալ ոչ թե բեհնե, այլ՝ բեհանե: Այսինքն՝ «հակներ» էնպես լինե ն, որ նրանց բերանն չէ կապվում, բերնի եղերն չեն մերձենում» (ԳԱ, 116):

5-րդ տան առաջին չորս տողերում երգիչը է օժանդակ բայի փոխարեն գործածել է ա, թեև այստեղ է-ն բնավ չէր խանգարի հանգավորմանը: Այստեղ երգիչը հետամուտ է ձեղել ալիտերացիային: Տե՛ս նաև խաղ 41, տող 17—19:

Գտնվում է Դավթարի 112—113 էջերում:

1-ին տողի նուրի բառը Գ. Ախվերդյանի ճիշտ մեկնաբանմամբ նշանակում է ծովային հուշկապարիկ, սիրեն: Դա, ինչպես գրում է Մ. Հասրաթյանը. «Հայտնի չէ, անմիջականորեն դուրս է գալիս Հոմերոսի Ոդիսականից—սիրենների մասին եղած գեղեցիկ առասպելից», թե՞ որևէ արևելյան հեքիաթից, որտեղ նույնպես կան նավ զավթող հուրիներ, ծովային փերիներ՝ մեղ շահողվեց պարզել: Պատկերը և անմիջականությունը շատ ավելի նման է Ոդիսականին» (ՄՀ, 240): Առավել հավանական է, որ երգիչը նավեր գերող այս հավերժահարս-հուրիների մասին լսել է արևելյան հեքիաթներից: Հատկանշական է, որ հուրիները, որպես դրախտային կույսեր բաղմիցս հիշատակված են մուսուլմանական (հատկապես սուֆիական) գրականության մեջ E. Յ. Бертелс, Райские девы (гурни) в исламе, («Избранные труды», М., 1965, стр. 84—96):

5-րդ տողի լիզիդ դառնալը ըստ Գ. Լևոնյանի «մեր երգչի հասկացողությամբ հավասար է եղել գովելուն, խնջադարձելուն» (ԳԼ, 156): Մ. Հասրաթյանը լիզիդ-ը թարգմանել է անհավատ, անաստված իմաստով, քանի որ եզիդ (եզդի) բառն այդ իմաստն էր ստացել Թուրքիայում քուրդ-եզիդ հատվածի հավատալիքների պատճառով: Ավելացնենք, որ հեթանոս քուրդ-եզիդները ապրել և ապրում են ոչ միայն Թուրքիայում, այլև Հայաստանում և Վրաստանում: Ինչպես նկատել է Մ. Հասրաթյանը երգիչն իր մի աղբբեշաներեն խաղի մեջ ևս համարյա նույն իմաստով ասել է. «էշխիցտ դառել էմ թալիշ»: Մ. Հասրաթյանի ենթադրությամբ թալիշները (կովկասյան-իրանական ցեղ) XVIII դարում գերազանցորեն եղել են կրակապաշտ (ՄՀ, 240):

17-րդ տողի արգ աճիմ հանձն արտահայտությունը, մեր կարծիքով, ունի իրական հիմք: Պալատից վտարված բանաստեղծը սույն տողում ակնարկում է վրաց թագավորին ուղարկելիք իր արգ-խնդրագրի մասին, որն, ըստ երևույթին, պաշտոնական գրությունից բացի արտահայտվել է ձոն բանաստեղծությամբ (խաղ 20):

20-րդ տող. խուզ (հող)—ըստ Գ. Ախվերդյանի, հող և օրհնել բառի ճ-ն է միայն, որ քիֆիսահայ բարբառում փոխվել է խ-ի:

15. «ԷՇԽՆ ՎԱՌԻ ԿՐԱԿ Է»

Գտնվում է Դավթարի 113 էջում:

2-րդ տող. լիս լալի հիդ ման գուխամ—տե՛ս 10-րդ խաղի 9—12 տողերի ծան.:

4-րդ և 8-րդ տողի ջան գուխամ-ը Ախվերդյանի մոտ դրված է լակերտներում, որոնք Ն. Աղբալյանն առաջարկել է հանել, քանի որ «իմաստն այն է, թե ով յար սիրի, թող այլևս շատ թե ջանի կգու, որ լիովին ղուգընթաց է մյուս տողի բուն իմաստին, թե՛ հալվեցի, մաշվեցի. էլ ինչ ջան կգամ» (ՆԱ, 153): Մ. Հասրաթյանը ևս հրաժարվել է լակերտներից:

13-րդ տող. Թե դուռն էշխի հիդ մանգալըն հարցընիս—Մ. Հասրաթյանի ճիշտ մեկնաբանմամբ, սա պետք է հասկանալ «ոչ թե սիրո հետ կամ սիրո ետեից ման գալը, փրկությունը, այլ սիրո սուր, կատաղի (արաբ. հիդ) մանգալը—գերանդին, որին չի դիմանա անգամ Զալի որդի Ռուստամը» (ՄՀ, 240):

17-րդ տող. շատ ի—ԳԱ՝ շատի, ՄՀ՝ շատ ի: Այստեղ ի-ն ոչ թե սեռական հոլովի վերջավորություն է, այլ՝ օժանդակ բայ (կի): Ոչ թե շատի, շատ բանի ջանք դրեցի, այլ՝ շատ էի ջանք դրել, շատ ջանք դրեցի:

18-րդ տող. Մե բափա շլոնեսա հում կաքնակիրի—այս տողը բխում է «հում կաթնակիրի մեջ բափա շկա» կամ «Աղամավորի մեջ բափա շկա» ժողովրդական ասացվածքից, որն ընկած է եղել հին Թիֆլիսում տարածված մի ժողովրդական հեքիաթի հիմքում («Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» էջ 379): Հում կաքնակիրի մասին տե՛ս 22-րդ խաղի 22-րդ տողի ծան.:

19-րդ տող. յիս է՛լ չիմ սիրի—պետք է հասկանալ ոչ թե ես ևս չեմ սիրի, այլ՝ ես ազնվի չեմ սիրի, այսինքն՝ նրան, ով ինձ չի սիրում, ես առավել ես չեմ սիրի:

20-րդ տող.

Աերըն սեր կու բերե՝ սիրեկան գու բամ...

Հմմտ.

Ի սիրո սեր ծանուցեալ... սիրով ընդ սեր միաբանեալ:

(Գրիգոր Նարեկացի)

Աերըն սեր կու բերե տողը հավանաբար պոկվելով այս խաղից, տարածվել է թիֆլիսեցիների շրջանում որպես ասացվածք, («սերը սերով պիտի», «սերը սեր է բերում») հնարավոր է նաև հակառակը, որ Սայաթ-Նովան է գործածել այդ ժողովրդական ասացվածքը (տե՛ս «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» էջ 45): Առած-ասացվածքի արժեք ունի նաև նախորդ տողը: Ի դեպ, այս երկու տողերի հիման վրա, անտեսելով ոչ միայն այս նույն խաղի մյուս տողերը, այլև երգչի ողջ սիրերգությունը, Մ. Մկրչյանը գտել է, որ հիշատակվող Սայաթ-Նովային մերժված, անպատասխան սիրո երգիչ համարել (տե՛ս, «Մովսես. գրակ.» 1963, № 10, էջ 94, նաև «КОММУНИСТ», Երևան, 1963, հոկտ. 23): Մերժելով այս, ինչպես և Ա. Մնացականյանի հայտնած համոռնման կարծիքը, Պ. Սևակը գրել է. «Բնագրից կտրած և իրենց համար փրկարար «զարդար վրան» սարքած այս երկտողի նման մեկ ուրիշ երկտող էլ կարո՞ղ են բերել Սայաթ-Նովայի «ողջ կոլորիտն ու ոգին» անտեսող և սայաթնովայականությունը հովնաթանյանականությունում փոխատեղել ջանաջոհներու ջե՛ն կարող, որովհետև շկա» (ՊՍ, 380): Նկատենք, որ այս երկու տողն էլ հիմք չի տալիս ենթադրելու, որ Սայաթ-Նովայի սերն անպատասխան չի եղել: Ընդհակառակն, պաշատից վտարված, սիրեցյալից բաժանված ու մերժված երգիչը սիրահարի, բանաստեղծի պարզամտությամբ «սպասում է», որ ինքն առավել ես չի սիրի իրեն շարժող յարին:

16. «ՁԵՆՏ ԲԱՂՑՐ ՈՒՆԻՍ»

Դտնվում է Դավթարի 113—114 էջերում:

1-ին տող. լամգուլ կու խոսիս—Ախվերդյանը լամգ-ը մեկնարանել է «անույշ խոսակցություն» լավ արտաբերությունով (ԳԱ, 89): Մ. Հասրաթյանը լամգ-ը թիկնեցելով արարական ռեմիգ բառից՝ ակնարկություն, շարախոսություն իմաստով, լամգուլ խոսել-ը բացատրել է՝ ակնարկով, քողարկված խոսել (ՄՀ, 290): Սակայն «Ձենտ բաղցր ունիս» կիսատողը խոսում է Ախվերդյանի բացատրության օգտին, այն է՝ բաղցր ձայն ունես, անուշ, դուրեկան ես խոսում: Ի. Միրզոյանը նույնպես կողմնակից լինելով այս բացատրությանը, նկատել է, որ այդ բառը Դ. Սունդուկյանը ևս օգտագործել է «հաճելի խոսվածք» իմաստ-

տով. «Խոսկ ու ջուղարդ լավ, լամդդ լաղաթի» (Գ. Սունդուկյան, Երկեր, հ. 2, էջ 377)։

2-րդ տող. ծառա իս—ԳԱ՝ ծառայիս. ուղղումն առաջարկել է Ն. Աղբալյանը (ՆԱ, 185)։ Տողի իմաստն է՝ բեղ պահպանի նա (Աստված), որի ծառան ես դու։ Ծառա բառը ֆիֆլիսահալ բարբառում չի նշանակել սպասավոր. այդ իմաստով գործածվել է պարսկերեն նոֆար կամ վրացերեն բլն բառերը։ Իսկ ծառա բառը գործածվել է միայն «կրոնաբարեպաշտական ասությանց մեջ» (ՆԱ, 186)։ Այդպիսի մի օրհաներ-ասություն է սույն տողը։

4-րդ տող. Փռանգստաննու—ԳԱ՝ Փռանգստանեն։

8-րդ տող. վունց—բնագրում՝ մունց։ ԳԱ՝ վունց։ Նույն տողի մարա—բնագրում՝ մի-րա, այդպես էլ տպագրել է Գ. Ախվերդյանը և ծանոթագրության մեջ նշել. «Կարելի է կարգալ և մեռա. բայց կարծում եմ, որ էս տեղ երգիչն կամեցել ըլի գործ ածել պարսից բառն միրա, որն նշ. սիրելություն, երկին» (ԳԱ, 89)։ Գ. Լևոնյանն իրավացիորեն առաջարկել է միրա-ի փոխարեն կարդալ մարա, քանի որ նրա համապատասխան հանգավոր քառերը ունեն—արա վերջավորությունը (ԳԱ, 110), և «երովհեստ խաղը դափալ է, ապա նման տարբերություն լինել չի կարող։ Մարա բառը միանգամայն համապատասխանում է իր իմաստով» (ՄՇ—240)։ Գ. Լևոնյանը մարա-ն բացատրել է ուրախություն, ցնծություն, մինչդեռ այդ իմաստով այն չի կապվում տվյալ տողին։ Բառն ալեկի ճիշտ է բացատրել Մ. Հասարաբյանը, ըստ որի դա պարսկերեն մարե բառն է՝ հերիաբային վիշապ-օձի գլխի անցին բար իմաստով։

12-րդ տող. փարա—այս բառի մասին Գ. Ախվերդյանը գրել է հետևյալը. «միտքն չէ խմացվում. պր. ֆեր, փեր կամ փերթել նշ. լույս, ճառագայթ. նշ. ևս՝ բոլորակ. վրաց. փարի նշ. վահան» (ԳԱ, 89)։ Հովհաննես Թումանյանի ճիշտ մեկնաբանությամբ այս բառը նշանակում է լուսեղեն, լուսավոր («Երկերի ժող.» հ. 4, էջ 322)։

14-րդ տող. Աշխիրբու, կա՛րմիր վարք, նուր բացարաժ տովստ։—Մինչև այժմ հրաշարակվել է առանց առաջին ստորակետի, որի պատճառով կարմիր վարք-ը նուր բացարաժ տովստ-ի հետ վերաբերվել է սիրուհու աչքերին։ Սակայն նրաճաշակ բանաստեղծը երբեք իր գողալի աչքերը չէր համեմատի և չի համեմատել կարմիր վարքի հետ։ Այդ փոխաբերությամբ նա միայն դիմել է յարին, նրա աչքերը համարելով նորարաց տուղտ, որ միանգամայն համեմատելի է գեղեցիկ աչքերին։ Ուղղումն առաջարկել է Ն. Աղբալյանը (ՆԱ, 151)։

16-րդ տող. զարա—Այս բառը Գ. Ախվերդյանը համարել է անհասկանալի և ենթադրել, որ այն գուցե արարերին զենե, կլար բառն է, որ նշանակում է ծաղիկ։ Գ. Լևոնյանի մոտ բացատրված է ուլունք, իսկ Մ. Հասարաբյանն այն կապելով պարսկերեն զեհե՝ մանրագույն հատիկ. մասնիկ իմաստով բառի հետ, նրանից դուրս է բերել ակն իմաստը։ Մինչդեռ, ինչպես ցույց է տվել Ի. Միրզոյանը, վկայակոչելով Սա. Մալխասյանի բառարանը, զարա (զարե) բառը նշանակում է «ծովային ծաղիկ, բույս անձանոթ ցեղի (Ստ. Մալխասյան. Հայերեն բացատրական բառարան, հտ. 2, էջ 12)։ Երգիչը «զարե»-ն հանգի պահանջով հարմարեցրել է խոսքի տների հանգակալով «խարա» և «փարա» բառերին (բ տան «մարա»)» (ԻՄ, 86)։ Ինչպես շարունակության մեջ նկատել է Ի. Միրզոյանը, «ծովմանն դուս էկած՝ ծովային ծաղիկ» պատկերավոր արտահայտությունը երգիչը գործածել է նաև «Պատկերազարկում քաշած» խաղի մեջ («Նովափար, ծաղիկ ծովային»)։

17-րդ տող. սիրալիմբու—Գ. Ախվերդյանը կարդացել է՝ սիրո սիրմբդ, բայց ծանոթագրության մեջ նշել է, որ ղես բառի վերջավորությունն ջնջված էր և չէր կարդվում. էս

բառն դրել եմ էստեղ կարծիքով. կարելի է ևս կարդալ՝ սիրա» (ԳԱ, 89)։ Մ. Հասարակյանը կարդացել է սիրա և այն համարելով պարսկերեն սիրե (բոց, կրակ) բառը, տողը բացատրել է այսպես. «կրակիդ (սիրող) կայծերը սրտիս մեջ ցանկցիր—հրդեհեցիր» (ՄՀ, 313)։ Մեր կարծիքով երգիչն այստեղ սեր և սիրմ (սերմ) հայերեն բառերից ա հոգակապով կաղմել է սիրասիրմ բարդությունը։

17. «ՇԱՏ ՄԱՐԹ ԿՈՍԵ»

Գտնվում է Դավթարի 114—115 էջերում։

5-րդ տող. շարքին—ԳԱ՝ շարքն—ուղղումն առաջարկել է Գ. Լևոնյանը (ԳԼ, 159)։ 9-րդ տող. կորցրցեմ—բնագրում և ԳԱ՝ կորցրցեմ, ՄՀ՝ կորցրեմ։

12-րդ տող. խոսալով—այս ձևը խորթ է թիֆլիսահայ բարբառին, ըստ որի պետք է լինենր՝ խոսելով։ Այս տողին (երրորդ տնին) հաջորդում է մի անսովորաբար լուստող՝ հեղինակի կողմից ջնջված։ Առաջին անգամ հրապարակել է Գ. Ասատուրը էջմիաձնի բանբերում։

Ահլի Թարավուր իս, յաղուժ ալմաս իս.
Մին արդուհալ ունիմ, աջար ինչ կոսիս.
Գուզիս քն դըռանըտ ծառա դառնամ յիս,
Չուն դիդարեսու...

16-րդ տող. տխալով—տեսնել բառի այս բռնադրոսիկ թերումը կատարված է հանդի համար։ Սակայն համաձայն չենք Մ. Հասարակյանի հետ, ըստ որի այս տողը իմաստով չի կապվում նախորդին։ «Ավելի հավանական է թվում,— գրում է նա,— թե այստեղ պետք է լիներ տիս գալով, այսինքն՝ վարդին ի տես եկող զարիս բլրույի նման երկար ժամանակ կարոտ եմ մնում իմ յարին, բայց գ հնչյունը խախտել է ...սալով վերջացող վարսադի հանգը, և հեղինակը չի գրել գ—ն» (ՄՀ, 240)։ Մեր կարծիքով տխալով բռնադրոսիկ ձևին հատկացված է նաև բռնադրոսիկ իմաստ, այն ոչ թե նշանակում է տեսնելով (տես գալով), այլ՝ տեսնելուն, ըստ այսմ տողի իմաստն է՝ կարոտ եմ յարին, ինչպես զարիս բլրույը՝ վարդին տեսնելուն։ Մ. Հասարակյանի ենթադրությամբ այս տխալով բառը «թվում է, պահված է հեղել ջնջված տան համար, բայց Շչիմ կշտանում» րառերն արդեն զբաղված են եղել 3-րդ տան մեջ, և այդ պատճառով էլ 4-րդ տունը ջնջվել է, որի վերջին տողը երևի պետք է լիներ—Չուն դիդարեստ լիլիմ կըշտանում, տխալով], որովհետև դեմքը տեսնելով չեմ կշտանում» (ՄՀ, 241)։ Կարելի է ենթադրել նաև, որ երգիչը խաղը գրի առնելիս պարզապես չի հավանել այդ տունը (որ իսկապես անհասկացի է), ջնջել է և հորինել նորը։ Բացառված չէ նաև, որ երգիչն այս խաղը հիշողությամբ է գրի առել և սխալմամբ գրել է իր մեկ այլ մեղ անհայտ խաղերից մեկի մի տունը, ապա վերհիշելով ջնջել է, չհասցնելով ավարտի։

20-րդ տող. արտասուեմքս հուսալով—հուսալով ձևը նույնպես խորթ է թիֆլիսահայ բարբառին, որտեղ ասվել է՝ հուսելով (հոսելով)։ Ձի ասվել նաև արտասուեմ հուսիլ, այլ՝ արտասուեմ րափիլ, անիլ (ԳԱ, 80)։

18. «ԱՌԱՆՑ ՔԻԶ ԻՄՁ ԿՈՆԻՄ»

Գտնվում է Դավթարի 115 էջում։ Այս լուսվ դափիան» երգիչը թարգմանել է աղբբեջաներեն, որը հայերեն է վերաթարգմանված Մ. Հասարակյանի կողմից (ՄՀ, 203)։ Ինչպես նկատել է վերջինս «երգիչը թարգմանելու ընթացքում հստակ պատկերացում է ունեցել

տարրերը բարբեր և կրոնական համոզմունքներ ունեցող ուկնդրի կամ ընթերցողի մտքին ու հոգուն իր խոսքը պարզությամբ տեղ հասցնելու մասին: Եվ խաղի շորս-հինգ տողը, որ այնքան հայկական է և խորթ ու դժվար հասկանալի թուրքին, աղբրեջանցուն՝ մահմեդականին, նա զարմանալի ճաշակով ու վարպետությամբ փոխել է ամբողջությամբ» («Տեղեկագիր» 1963, № 10, էջ 18):

2-րդ տող. շանգիր—ըստ Ախվերդյանի նշանակում է կաստանյաններ (ԳԱ, 65): Գ. լեռնյանն առարկելով, նկատել է, որ «շանգ լայն մտքով նշանակում է նվազածություն: Դրանից էլ «Մշու սուրբ Կարապետին», որ աշուղներին, երգ-երաժշտության հովանավորն է համարվել, կոչում են «շանգլի փիր ս. Կարապետ»: Չանգ բառից է շանգուռ, հետագայում շոնգուր կոչվող փոքրիկ սաղի անունը» (ԳԼ, 156): Մ. Հասրաբյանը շանգը թարգմանելով տավիղ, դտել է, որ այս տողում անկասկած տավիղի լար խմաստով է, այն է՝ «ձեռքիցս մեկ-մեկ կթափեմ (կկտրեմ) տավիղի լարերը» (ՄՇ, 307): Համամիտ ենք լեզվոյանի բացատրությանը, որ շանգ նշանակում է առհասարակ երաժշտական գործիք, նվագարան (լարային), և այս տողում թամբուրա, շոնգուր և բամանչա նվագող Սայաթ-Նովան ասում է, թե մեկ-մեկ ցած կդնի իր նվագարանները:

12-րդ տող. Ռադիվին էկավ միգ էս ռանգիրն մեմեկ—էս-ը թեև տողը մեկ վանկով ավելացնում է, բայց որոշակիություն է հաղորդում ռանգիրն (խարդախությունները) բառին: Գ. Ախվերդյանը պահպանել է էս-ը, բնագրի ռադիվին իրավագիտրեն կարգալով ռադիվին: Մ. Հասրաբյանը ավելորդ վանկից ազատվել է ռադիվին բառի հաշվին, հետևելով բնագրի կրճատ ձևին (ռադիվին էկավ): Սակայն այդպիսով խախտվում է խճողվում է տողի խմաստը, որը Հասրաբյանի կողմից այսպես է բացատրված. «ամրցակից խանգարիչն եկավ մեղ (մոտ) այս խարդախություններով, խաղերով մեկ-մեկ՝ կամ—այս ռադիվին եկավ (դեպի) մեղ խարդախություններով մեկ-մեկ» (ՄՇ, 316): Ոչ թե մրցակից խանգարիչն է գալիս խարդախություններով, խաղերով (ի դեպ ռանգիրն ուղղական հոլովով է ոչ թե գործիական), ոչ ամրցակից խանգարիչից են գալիս այդ խարդախությունները, խաղերը: Հատկանշական է, որ այս երգի աղբրեջաններն տարբերակի թարգմանության մեջ Մ. Հասրաբյանը հրաժարվել է հայերենի էս բառից և ռադիվին բառը (որ այստեղ էլ պիտի լիներ ռադիվին) դարձրել է հուլանկ (ռադիվին):

14-րդ տող. չիմ անի ֆալագըն չիմ անի դալըն—Գ. Ախվերդյանը կարգացել է՝ Ձիմանա ֆալագըն, չիմանա վալըն. ընդգծելով ֆալագը և դալըն, որպես անհասկանալի բառեր: Հոլհանես Թումանյանը փորձելով մեկնաբանել այդ բառերը, ենթադրել է, որ ֆալագը պետք է լինի ֆալաֆըն, որ Ռիֆլիս քաղաքն է նշանակում, իսկ դալըն Ռիֆլիսի քերդն է (դալալ): Ուրեմն և այդ տողը նշանակում է՝ չիմանա քաղաքը, չիմանա բերդը: Այդպես է հասկացել նաև Ն. Աղբաբյանը (ՆԱ, 98): Նախ, Սայաթ-Նովան բաղաբին բաղաբ է ասել («Թեմբուր ֆալաֆ տիղ հանդիբիս...») և ոչ թե ֆալագ կամ ֆալաֆ, երկրորդ, նա դալա բառի որոշյալ ձևը չէր կաղմի դալըն ձևով, այլ՝ դալին կամ դալան: Բացի այդ, կա նաև այս խաղի աղբրեջաններն թարգմանությունը, որտեղ ասված է՝ «էթմանամ ֆալագը, էթմանամ դալը», որ նշանակում է ոչ թե չիմանա, այլ՝ չեմ անի ֆալագը, չեմ անի դալը: Այս փաստարկով Ս. Օզանեզաշվիլին առաջարկել է չիմանա-ն կարդալ չիմ անի (ինչպես բնագրում է) և տողը բացատրել է այսպես. «չեմ անի խարեություն, չեմ անի համրտակություն» («Մարտակոչ», 1926, № 96): Տողի ավելի հիշտ բացատրությունն է՝ չեմ անի, չեմ պատճառի գլխացավանք, անհանգստություն, չեմ անի աղմուկ, խոսք ու զրույց, այսինքն՝ չեմ անհանգստացնի, աղմուկ ու վեճ չեմ անի, լուռ, ինքնակամ կառանձնանամ վանքերում:

15—16-րդ տողերը որոշ սայաթնովագեոնների կողմից սխալ են ընկալվել: Նրանց մեկնաբանությամբ այստեղ արտահայտվել է Սայաթ-Նովայի հոգեկան երկրիզվածությունը և հուսահատ մղումը դեպի վանք-մենաստան: Այս սխալը, ինչպես նկատել է Պ. Սև-վակը, գալիս է դեռևս Գ. Ախվերդյանից, որն իր կազմած ժողովածուի առաջարկում գրել է. «Հենց էն գլխին հոգուն ու մարմնու խնդիրն չէ տալի սրան դադար, ու շատ ժամանակ պահում է տագնապում. վերջապես ձանձրացած էս երազական կյանքի վայելչությունները Սայաթ-Նովու խանդակաթ սիրտն, ասելով:

Կու հաքնիմ մաղեղեն, կու հաքնիմ շալըն.

Կերթամ ու ման գու քամ վանքիբըն մեկմեկ,

պտուտմ է մենակեցություն, որո ծարալն էնքան է ըլում, որ իր զավակներուն Թիֆլիզում թողած՝ դնում, հեռանում է Հաղպատա Սուրբ Նշանի վանքն» (ԳԱ, Ժ): Սակայն, ինչպես գրում է Պ. Սևակը. «Դ. Ախվերդյանը չէր կարող ծանոթ լինել Սայաթ-Նովայի բռնի քահանայացման և վանական դառնալու պատմությանը, ուստի և նա հիմք ուներ Սայաթ-Նովայի արեղայության պատճառները փնտրելու նրա խաղերում (ասել է թե խառնվածքում)՝ հասնելով մինչև իսկ սուլն խաղին, որի մեջ հոգեկան ներհակության հետք անգամ չկա» (ՊՍ, 414): Զմիտելով Սայաթ-Նովայի ապրած հոգեկան ներհակությունն ու երկվությունը, հմուտ սայաթնովագետը այն բացառում է սուլն խաղից, և քննվող տողերը ընդունում միայն ու միայն որպես փոխարերություն. «Իբրև համայնիչ լինձ սար ու ձոր կգցեն», լինձ քարով ու սարով կտամ» արտահայտությունների» (ՊՍ, 413): Որպես ապացույց Պ. Սևակը հիշատակում է աղբրեջաներեն տարբերակի համապատասխան տողերը, որտեղ երգիչն ասում է.

Վունց դերվիշ կու հաքնիմ փոստըն ու շալըն,

Վըղեմես կախ կոնիմ զանգիրըն մեմեկ:

Անշուշտ, երգչի այս ցանկություն-սպառնալիքի մեջ իրական հիմք փնտրել չի կարելի:

19-րդ տող. յոթն իմաստասիրաց—այս իմաստասիրները անտիկ Հունաստանի յոթ փիլիսոփաները չեն, ինչպես ենթադրել է Գ. Լեոնյանը: Ըստ Ն. Աղրալյանի դրանք «Պատմություն կայսերի Փոնցինոսի... և յոթն իմաստասիրացն» գրքի փիլիսոփաներն են: Այդ կարծիքն է հայտնի նաև Մ. Հասարթյանը, նկատելով, որ այդ գիրքը «մանավանդ 18—19-րդ դարերում մասսայականացված է եղել նույնրան, որքան «Պղնձե քաղաքի» և «Ալեքսանդրի» պատմությունները: Գիրքը լույս է տեսել նաև 1740 թ. Պոլսում» (ՄՀ, 241): Մեր կարծիքով, յոթ իմաստասիրները երաժշտական արվեստը ստեղծող յոթ իմաստուններն են, որոնց մասին արևելքում տարածված են իզել զանազան լեգենդներ և ավանդություններ: Այդ իմաստունների մասին մանրամասն տեղեկություններ կան Քուշուկ Արուժինի «Արևելյան երաժշտության ձեռնարկում» (Тамбурист Арутин, Руководство по восточной музыке, Ереван, 1968, стр. 47)։

Իմաստասիրացն բառը Մ. Հասարթյանը տպագրել է իմաստասիրացն միեղդեռ բնագրում շատ որոշակիորեն գրված է՝ իմաստեասիրացն: Հաջորդ տողի բառերը Ն. Աղրալյանի կարծիքով նշանակում է ոչ թե խոսքեր, այլ՝ միջադեպեր, պատահարներ, արկածներ: «Յոթն իմաստասիրաց» գրքի մեջ ամենքը,— գրում է նա,— պատմում են իրենց գլխով անցած բաները, ուր կանայք երևում են նենգավոր: Նրգիչն ուղում է ասել «թե իր

գլխին շատ ավելի փորձանք է պատահած քան յոթ իմաստասերներին» (ՆԱ, 100)։ Համաձայն շինք այս բացատրությունը, քանի որ քանի բառը Սայաթ-Նովայի լեզվում ունի ոչ թե արկած, պատահար, այլ՝ խոսք, երգ, բանաստեղծություն իմաստը։ Հմմտ. խաղ 37, տող 14. «Նոսոկիրըս մեմեկ շի սավլի՝ իմաստենեբու քանիք Նման»։ Սրանով էլ հաստատվում է, որ այստեղ երգիչը նկատի է ունեցել ոչ թե Փոնցիանոսի պատմության ծերունիներին, այլ հրգ-հրաժշտությունն արարող առասպելական յոթ իմաստուններին։

19. «ԱՐԻ ԻՆՉ ԱՆԳԱՃ ԿԱԼ»

Գտնվել է Դավթարի այժմ բացակայող տեղում։

1-ին տող. անգամ կալ—թիֆլիսահայ բարբառում գործածվել է անգամ արա, ըստ Ն. Աղբալյանի՝ ուղեցուցչուն է լուռվա բարբառի (ՆԱ, 163)։

4-րդ տող. յար սիրե—յար բառն այստեղ գործածված է ոչ թե իր սովորական՝ սիրած, սիրելիան, այլ՝ ընկեր, բարեկամ նշանակությամբ (տե՛ս ՆԱ, 52)։ Յարն այդ իմաստով է գործածվել նաև Կոստանյոյին Նրզնկացին։ Չիմանալով այս, խաղի ռուսերեն թարգմանիչը թյուրիմացաբար սույն տողը թարգմանել է «Бога возлюбил, душу возлюбил, душу возлюбил»։ «Սայաթ-Նովային այսպես կարդացողները, բնականաբար, ոչ միայն իրենք են կոպտորեն սխալվել,— գրում է Պ. Սեակը,— այլ ընթերցողներին են շփոթեցրել և ապակոդմնորոշել։ Սուրեն Գայսարյանը, օրինակ, գրում է, որ Սայաթ-Նովան «ի շարս բոլոր առարկությունների, սիրուն միացնելով գիրն ու ընթերցանությունը, պահանջում է նաև պատվել սիրած կույսին»՝ ընդգծածս բառերը մակարերելով «յար սիրե»-ից» (ՊՍ, 383)։

5-րդ տող, էն քանն արա, վուր Աստրծու շաբուում է—տողի իմաստն է՝ «այն լուսնն արա, որ աստծու պատվիրանների շարքումն է» (ՆԱ, 53)։

9-րդ տողը Գ. Ավելերդյանը բավական անհաջող է ընթերցել՝ «Ե՛կ, ա՛րի, սիրտ, մի կենա դուն մե դամադր»։ Խախտվել է ոչ միայն տողի շարքը, այլև իմաստը։ Մ. Հասարթյանը տեքստարանական վարպետությամբ ուղղել է այդ սխալ ընթերցված տողը, ծանոթագրության մեջ տեղեկացնելով հետևյալը. «Նախապես ենթադրում էի, թե եկ կամ, ավելի շուտ, դուն բառերից մեկն ու մեկը սխալմամբ մնացել է տողի մեջ, բայց ամբողջ երգն ուշադիր կարդալուց, արձակի վերածելու միջոցով բովանդակությունը վերծանելուց հետո հանդես է գալիս Գ. Ավելերդյանի սխալն այս տողում։ Ստացվում է այնպես, որ երգիչը զիմում է իր սրտին, որպեսզի այն շման մեկ տրամադրությամբ (դամադրի)—«մի կենա դուն մե դամադր», իսկ սա ամբողջությամբ հակասում է խաղի ոգուն։ Մեղ համար կասկածից վեր է, որ բնագրում գրված է եղել «մենա դուն մե դամադր»։ Մրեա բառը վրացերեն գրված է եղել մինա (ը տառը չլինելու պատճառով)։ Գուցե մի ավելորդ կ տառ կամ նման մի դիժ ևս ընկած է եղել բառի մեջ, և Ավելերդյանը կարդացել է «մի կենա=մի կենա», որից ազդավազվել է ամբողջ երգի միտքը և տողում ավելացել է մեկ վանկ։ Մենք այս սխալն ուղղեցինք» (ՄԶ, 239)։

16-րդ տող. տար սիրե—Ն. Աղբալյանի ճիշտ մեկնաբանությամբ տար նշանակում է օտար, բոտ որում «ոչ թե նույն ազգի օտարական, այլ՝ տարազգի մարդ» (ՆԱ, 57)։

19-րդ տողի տեքստիստ Ն. Աղբալյանն առաջարկել է դարձնել տես անիս, վերացնելու համար «գրաբարի անխորժ միջամտությունը» (ՆԱ, 58)։ Այս առաջարկն ընդունելի չէ, քանի որ երգչի խաղերում, ինչպես ցույց է տվել նաև ինքը՝ Աղբալյանը (տե՛ս.

նԱ, 16Պ), շատ կան գրաբարյան բառեր ու բառաձևեր, որոնք ոչ միայն անախորժ միջամբնություն չեն, այլև առանձին հմայք ու ինքնատիպություն են հաղորդում բանաստեղծի լեզվին:

20. «ԴՈՒՆ ԷՆ ԳԼԽԵՆ ԻՄԱՍՏՈՒՆ ԻՍ»

Դավթարից այժմ բացակայող խաղերից է Այստեղ, ինչպես նկատել է Գ. Ասատուրը, բանաստեղծը դիմում է Հերակլ թագավորին: Սայաթնովադիտության մեջ ընդունված այս կարծիքը վիճարկել է միայն Ն. Աղբալյանը, որի համոզմամբ, այս խաղի մեջ էլ «երգիչն իր սիրածին նկատի ունի» (ՆԱ, 104): Զհամաձայնելով Ն. Աղբալյանի հետ, մենք ևս կարծում ենք, որ Սայաթ-Նովան 1753 թ. վտարված լինելով արքունիքից այս խաղով, որպես արգ-խնդրագիր, դիմել է վրաց թագավորին:

2-րդ տող. Էրազումըն տեսածի հիդ միգի մե հեսաբ մի՛ անի—Էրազումն տեսածը նշանակում է ևրևակայած, անիրական բան: Տողի իմաստն է երևակայած, մտացածին, անիրական բանի հետ ինձ մի շփոթիր, մի նույնացրու (բամբասանքի մի հավատա): Տե՛ս նաև ՆԱ, 105, ՄԶ, 296:

6-րդ տող. համդ ունիս—Գ. Ախվերդյանը կարդացել է համ դուն իս (և դու էս): Մ. Հասարթյանն իրավացիորեն փոխել է՝ համդ ունիս (փառք ունես), «որովհետև,—գրում է նա,—նման դարձվածք (—«համ դու ես գողալ թագավոր») «ազգջ ազգերումն գոված» բառերից հետո լինել չէր կարող և Ախվերդյանին, համդ (արար.) բառին անծանոթ լինելու հետևանքով, հնչողությամբ շփոթության մեջ է գցել բարբառային դուն իս ձևը» (ՄԶ, 237):

Նույն տողի գուգալ բառը գործածված է ոչ իր սովորական՝ գեղեցկուհի իմաստով, քանի որ վերաբերում է Հերակլ թագավորին: Դուգալ, ինչպես և յառ բառը գործածվել է թև՝ կնոջ և թե՛ տղամարդու համար. նույն բանն ենք տեսնում նաև հայրեններում:

8-րդ տող. Նընախ տիղ ղազար մի՛ անի—ղազարը Մ. Հասարթյանը բացատրել է ցասում, բարկություն, ինչ որ իսկապես նշանակում է այդ պարսիկրեն բառը: Սակայն, ինչպես նկատել է Ի. Միրզոյանը, Սայաթ-Նովան այստեղ գործածել է ոչ թե ղազար-ի պարսկական այլ բարբառային իմաստը: «Այդ բառը պարսկերենից փոխանցվելով հայ ժողովրդական խոսակցական լեզվին, իմաստային նոր երանգ է ստացել՝ «ղատ, զատաստան, պատիժ» (ԻՄ, 83): Այդպես էլ բառը բացատրել է Ախվերդյանը (էջ 67), ինչպես և Գ. Աղեքսանդրյանը «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» գրքում (էջ 150, հմմտ. նաև «Հայ ժողովրդական հնրիաթներ», հ. 1, էջ 294):

9-րդ տող. Յարայուն հեխիմն էնդուր գուզն—այստեղ մեկ վանկ ավելի է. ըստ ևրև-վույթին Դավթարում էլ այսպես է ևղել: Օհանի տարբերակում էնդուր-ը բացակայում է և ճեֆիմըն բառը երեք վանկով կարդալու դեպքում վանկի խախտումը վերանում է: Սակայն էնդուր-ի կրճատումով լիովին խախտվում է տողի որոշակիությունը, ուստի մենք ևս զեղաբանքինք թողնել տողն անփոփոխ:

10-րդ տող. Քանի գուզն արբաբ քլի՝ ղույն աղին ղալ տալու չէ—արբաբ բառը, որպես ձակղոր վերագրվել է ղույին և մեկնաբանվել՝ զրկված (Գ. Ախվերդյան) կամ տերթ՝ ձենր-հաս՝ ճարտար (Մ. Հասարթյան): Մինչդեռ արբաբը արաբերեն տեբ բառն է (բաբբ)՝ բռնակալ (պատժող, տանջող) ածականական իմաստով և վերաբերում է աղա (տեբ) բառին: Տողի իմաստն է՝ որբան էլ տեբը բռնակալ, տանջող, պատժող լինի, ծառան չի դա-վի նրան: Արբաբ բառը գործածված է նաև 7-րդ և 8-րդ խաղերում:

12-րդ տող. Աստծու սերբն կանչողի պես—ԳԱ՝ աստուծու սերբն: Գ. Լեոնյանի բացատրությամբ «Աստծու կամ սրբի սեր կանչող կոչվում էին այն ուխտավորները, որոնք որոշած ուխտատեղին զնայուց առաջ, մի քանի օր տանից դուրս էին գալիս ու կամավոր մուրացկանություն մանր դրամների հավաքում, ապա այդ իսկ դրամներով խունկ ու մոմ առնում, հավատ ունենալով, որ այդ եղանակով իրենց ուխտն ավելի ընդունելի կլինի: Մինչև վերջին ժամանակներս էլ մեր քաղաքներում դեռևս պատահում էին սրբի սեր ման եկող կանայք» (ԳԼ, 157, տե՛ս նաև ՆԱ, 108):

Նույն տողի ջուլաբ արարերեն բառը նշանակում է մերժում, ջուլաբ անիլ՝ մերժել, ձեռնունայն թողնել: Այդ իմաստով էլ բառը գործածված է սույն տողում: Սակայն մեր բարբառներում ջուլաբ անել, ջուլաբ տալ բառը ձեռք է բերել պատասխանել, պատասխան տալ իմաստ: Այդ իմաստով էլ բառը գործածված է 61-րդ խաղի 40-րդ տողում: Մանթազըվող տողի իմաստն է՝ «ինձ շմերժես, քո ղռնից հեռացնելով, ինչպես անում են անկարեկիր մարդիկ աստծու սերը կանչողներին» (ՆԱ, 109):

15-րդ տող. Բուճիաբըս ավագ շիմաֆառ—բաճիաբ բառի մեջ ինն արտասանվում է յ կլիսաձայնի նման, ուստի այն ունի երկվանկ բառի արժեք:

21. «ՅԻՍ ԿԱՆՉՈՒՄ ԻՄ ԼԱԼԱՆԻՆ»

Գտնվում է Դավթարի 139 էջում: Կառուցվածքով բարդ այս խաղը, որ երգիչն անվանել է ուրբայի-բայաթի-բասլիք, երկու տարբեր խաղերի միակցություն է: Այդ երկու խաղն էլ գրված են նղել 1753 թ.: Ուշագրավ է, որ «Քի սազ գուբա» դափիս-վարազը, որպես առանձին խաղ (առանց բայաթիների և մեկ տան պակասով) գտնվում է Օհանի ձեռագրում (էջ 59, տե՛ս այս հատորում, տարբերակ № 5): Այդ վարազը առանձին համարով (№ 55) Մ. Հասրաթյանը հրատարակել է իր ժողովածուի մեջ: Մենք ավելորդ ենք համարում խաղերի այդ առանձնացումը, քանի որ դրանք երգիչ կողմից ներկայացվել են որպես մեկ միասնական խաղ: Խաղի բայաթի տները երգիչը վարպետորեն կազմել է վեցական տողերից, որոնցից հանգավորված են 1-ին, 2-րդ, 4-րդ և 6-րդ տողերը: Ի ղեպ, այս բայաթի տները ևս ճիշտ չեն տողատվել: Գ. Ախվերդյանը դրանք բաժանել է երեքական երկար տողերի (14-վանկանի), իսկ Մ. Հասրաթյանը՝ հնգական. առաջին շորը՝ 7, հինգերորդը՝ 14 վանկանի: Մինչդեռ, հարկավոր էր հատել այդ տողը ևս: Այդ բայաթի-խաղիկներն ամբողջությամբ ներկայացնում են մեկ թասլիք: Յուրաքանչյուր բայաթի-խաղիկին հաջորդում է վարսադի մի տունը, որն առանձին վերցրած մի ռուբայի-բառակ է: Այս պատճառով է, որ երգիչը խաղն անվանել է ռուբայի-բայաթի-թասլիք: Այս խաղը նաև թեքնիս բառախաղ է՝ ուղղված արքայազույր Աննային: Ինչպես ցույց է տվել Գ. Ասատուրը, Աննայի անունն են ծածկադրաբար հայտնում խաղի բայաթի տների առաջին տողերի վերջին բառերը, իսկ 3-րդ և 5-րդ բայաթի-խաղիկների մեջ երգիչը հայտնել է իր և սիրուհու անունների առաջին տառերը (Այս միտքն է հայտնել նաև Մ. Աղայանը 1940 թ. «Գրական թերթի» 30-րդ համարում հրատարակած «Սայաթ-Նովան և նրա սիրո առեղծվածք» հոդվածում): Մ. Հասրաթյանը շղտնելով որևէ առարկություն Գ. Ասատուրի սրամիտ և արասրանական մեկնաբանության դեմ, որ լավանի, յարանի, մերանի և այլ նման բառերը ոչ թե արևելյան երաժշտական մոտիվներ են, ինչպես ենթադրել է Գ. Ախվերդյանը, այլ Աննայի անունը կրող, հեղինակի կողմից հնարված հոստուկ բառեր, տվել է դրանց ճիշտ մեկնաբանությունը. «Յիս կանչում իմ լալանին, յարանին... զայանին... մերանին... մասանին» նշանակում են.—ես կանչում (հրավիրում) եմ լալ Աննային (լալ—

անգլին քար, սուտակ), յար Աճնային, զայ Աճնային—քաղցր, կամ հոգի և կենդանություն Աճնային (զայ-պարակ.—հոգի և կենդանություն, արաք-քաղցր), մեր Աճնային կամ մայր Աճնային և այլմաս զոնար Աճնային: Նու ու այլիք զայ անին»-ը կարելի է կարգալ նազ Աննային, կամ Նադանին, ինչպես նաև Ն(ովային) ու Ա(ննային) զայ անն, կանն (զայ—անմիտ կորուստ, փշացում, կործանում): «Սե ու Այլիք մաս անին»—Ա(այաթին) ու Ա(ննային) մասնատեն, բաժանեն. կամ թև ոտքը կապ զցեն, պարսկ. մէս (—հանցադորի ոտնակապ) բառից» (ՄՀ, 238, տէս նաև «Դրական թիրթ», 1940, № 30., Մ. Աղալանի «Ս.—ն. և նրա սիրտ առնվածը» հոդվածը): Բայց ինչպե՞ս է Աճնա անունը թերվել Աճին ձևով: Բանն այն է, որ այդ անունը վրացիների մոտ տարածված է եղել նաև Աճա ձևով. այդ անվանաձևով են վկայված որոշ թագուհի-իշխանուհիներ:

«Սուսան սմբուլ» սկզբածրով խաղի մեջ ևս Սայաթ-Նովան հայկական տառանունների միջոցով հայտնել է իր սիրեցյալի անունը՝ նորից Անա («Այլիք ու Նու Այլիք» ձևով: Այդպես է նա յարի անունը հայտնել նաև վրացերեն ու ադրբեջաներեն ծածկադրերում (Անա շենիա, ադ Անա): Համաձայն թիֆլիսահայ բարբառի հոլովման համակարգի, Աճա անունը տրական հոլովում ստանում է Աճին ձևը: Այստեղից էլ՝ լալ Աճին, մեր Աճին և այլն: Ի դեպ, նման մի թեքնիս խաղ ունի նաև Սայաթ-Նովայի նախորդ բանաստեղծներից մեկը՝ Ստեփանոս Դաշտեցին: Ահա մի հատված այդ խաղից.

Մարիամ կամի լալ Աննա,

Թող ով կամի լալ՝ լայ նա.

Բամբասարարի լեզուն

Թող կարկամի, լալանա: («Տեղեկագիր», 1956, № 12, էջ 109):

17-րդ տող. նովաբու նաջար—ընդհրում և Օհանի մոտ՝ նովաբու նաջար: Գ. Ախվերդյանը տպագրել է նովար ու նաջար և ընդգծել որպես անհասկանալի բառեր: Մ. Հասրաթյանը դարձրել է նովաթին աջար (փթթյալ, ծաղկած ու դալար, պերճ): Մինչդեռ վարսաղի առանձին օրինակի մեջ թողել է նովար ու նաջար: Ինչպե՞ս կարելի է նույն խաղի նույն տողում ընդունել մեկ նովաթին աջար, մեկ՝ նովար ու նաջար ձևը: Ընդ որում Հասրաթյանն իր բառարանում չի բացատրել նովաթ բառը: Նովաթն ըստ Քոչոյանի արաբերեն բառ է և նշանակում է հնդկական պալադառ, աղնվական. փոխաբերաբար՝ աղնիվ հատկությունների տեր անձ: Իսկ նաջար նշանակում է ատաղձագործ՝ Քոչոյանն առաջարկել է Մ. Հասրաթյանի նովաթին աջար-ը ուղղել նովաթի-նաջար, որ փոխաբերաբար կնշնակակ արվեստագետ ատաղձագործ, ընտիր՝ աղնիվ իրեր պատրաստող: Աջար բառ չկա» (ԱՔ, 142-ի ծան.): Ընդունում ենք Ա. Քոչոյանի բացատրությունը հետևյալ վերապահումներով: Նախ նովար (նավար) բառը ոչ թև արաբերեն է այլ՝ հնդկերեն, որտեղից այն անցել է արաբերենին ու պարսկերենին («Хинди-Русский словарь», М., 1959, стр. 603): Եվ հետո, ինչո՞ւ դարձնել նովաթի նաջար, երբ երկու ձևադրերն էլ որոշակիորեն տալիս են նովաբու նաջար, որ առավել ընդունել է Սայաթ-Նովայի լեզվին և արտահայտում է նույն իմաստը: Նովաբու նաջար-ը երգիչը գործածել է նաև Դավթարի 36-րդ էջում գտնվող «Նազուլ յարը բաց է էլի» աղբյուրներին խաղի մեջ (տող 13): Այստեղ էլ որոշակիորեն գրված է՝ նովաբու նաջար, և այս անգամ էլ Մ. Հասրաթյանը կարգացել է նովաթին-աջար, իսկ աղբյուրներին երգերի հրատարակողը՝ նովաթե՛նաջար («Սայաթ-Նովա», Բաբու, 1963, էջ 38): Ի դեպ, այս աղբյուրներին խաղի 13—14-րդ տողերը բառացի կրկնություն են սույն խաղի 17—18-րդ տողերի (հմմտ. ՄՀ, 150):

18-րդ տող. Բըլբուլին գըծվեցնող—բնագրում այսպես է, իսկ Օհանի մոտ՝ սպանող: Հետևելով Օհանի տարբերակին և աղբյուրներին մի երգի համանման տողին, Մ. Հասրաթ-յանը գծվեցնող-ը փոխարինել է սպանող-ով, դառնելով, որ գծվեցնող բառը խախտում է տողի շափու: Սակայն այդ բառով ամենևին չի խախտվում 11-վանկանի տողի շափը («Բըլ-բու-լին գծ-վեց-նող թոփ վար-թի սա-ջառ»): Ընդհակառակն, գըծվեցնող-ը փոխարինելով սպանող (հասնեց ը գաղտնավանկի) բառով, տողում մի վանկ պակասում է:

Նույն տողի քափ բառը Գ. Ախվերդյանը կարդացել է քուփ, մինչդեռ թե՛ այս և թե՛ վերոհիշյալ աղբյուրներին խաղի բնագրում երգիչը գրել է քուփ (սլարսկ. գնդաձև, ամփոփ): ՄՇ՝ քափ:

19-րդ տող. աչկիրուտ ունփիրտ—Դավթարում երգիչը հավանաբար մեխանիկորեն գրել է աչկիրտ ունփիրտ, Օհանի մոտ՝ ունփիրտ աչկիրտ: Մ. Հասրաթյանը բնագրի սխալն ուղղելով, դարձրել է՝ աչկիրտ ունփիրտ, սակայն առանձին վարսաղ խաղի մեջ հետևել է Օհանի տարբերակին (ունփիրտ աչկիրտ): Տողի իմաստն է՝ աչքերիդ համար ունքերդ ցանկապատ դարձան:

22-րդ տող. Նու ու Այիբ զայ անին—բնագրում և ԳԱ՝ Նու Այիբ զայի անին: Ն. Աղ-րալյանն այս տողում կարդալով միայն նազանին բառը, առաջարկել է փոխել՝ Նու Այիբ ու զայ անին (ՆԱ, 159): Սակայն ավելի ճիշտ է ու-ով շաղկապել Նուն և Այիբը (համա. տող 26), քանի որ Նու ու Այիբ զայ անին ոչ միայն նշանակում է նազանին, այլ՝ առաջին հերթին՝ Ն(ովային) և Ա(ննային) կործանում են: Այսպես է ուղղել նաև Մ. Հասրաթ-յանը:

25-րդ տող. չեւ դիմնա—ՄՇ՝ չեւ դիմանա: Այսպիսով տողում մեկ ավելորդ վանկ է առաջանում:

29-րդ տող. կըռնիրտ շիմշատ է, մատնիրտ է մում—համա. խաղ 31, տող 12՝ կուտըտ շիմշատ, մատնիրտ մում...

33-րդ տողի դոստիրը և հաջորդ տողի բշնամիք բառերը Մ. Հասրաթյանը կարդացել է՝ դոստիրս և բշնամիքս:

39-րդ տող. դում ինձ լալիդ չիս անի—Գ. Ախվերդյանի մոտ դուն-ը բացակայում է: Ն. Աղբալյանն առաջարկել է վանկի պակասը լրացնելու համար ինձ-ը դարձնել ինձի: Այսպես թերևս ավելի նպատակահարմար կլինեք, քանի որ հաջորդ տողն էլ սկսվում է դուն-ով: Այսուհանդերձ, բնագրից չլքվելու համար դուն-ը թողնում ենք իր տեղում:

43—44-րդ տողերը բնագրում չկան: Հավանաբար, խաղը վերականգնելիս երգիչը չի վերհիշել կամ պարզապես սխալմամբ բաց է թողել այդ տողերը: Մ. Հասրաթյանը ելնելով թե՛նիսի սկզբունքից, մոտավորապես վերականգնել է այդ երկտողը, «համարյա չկասկածելով, որ հիմնական թե՛նիս ըստը ան-մասն բառն է, Անմաս անել նշանակում է առանց հաղորդության, անօրեն սպանել, նահատակել» (ՄՇ, 238):

48-րդ տող. սերտ սիրտըս կես անի—բնագրում՝ սերտ սիրտ կես անի. անկասկած գրելի սխալ է՝ կաստարված նախորդ տ-ի աղղեցություն: Օհանի մոտ՝ սիրտս:

22. «ԴԱՍՏԱՄԱՋՏ ՍԻՄ ՈՒ ՇԱՐԲԱՔ»

Գտնվում է Դավթարի 117 էջում:

6-րդ տող. վարքն [խափն, աքա] խարին քամամն—բնագրում՝ մարքն. հաջորդ երկու բառը չի երևում (թուղթը մաշված է): Այս պատճառով Գ. Ախվերդյանը սույն տողը բաց է թողել: Իր սեպագրերում նա ևս մարքն բառը դարձրել է վարքն: Աղճատված բառերը ենթադրաբար վերականգնել է Մ. Հասրաթյանը:

7-րդ տող. Ումնոր կանց միգի լավ սիրիս՝ Աստված շարին քամամն—*թիֆլիսահայերի մեջ տարածված է եղել մի նմանօրինակ անեծք. «թն ինձ ավել յար սիրիս, ղիւի ճութ ու պատառ ըլիս»։ Հմմտ. նաև խաղ 48, տող 3—4՝ «Թն քիզ ավիլ յադ յար սիրիմ, ումբրիս շանիմ խեր, նազանի»։*

13-րդ տողը նույնությամբ կրկնված է 28-րդ խաղի 7—8-րդ տողերում։

22-րդ տող. Հում կաքնակիր՝ Արամի գաք, նալար քու էյքիբարին—հում կաքնակիր—*ու Ախվերդյանի և ոչ էլ Հասարոթյանի մոտ չի մեկնարանված։ Ըստ Ա. Քոչոյանի, նշանակում է անաղնիվ, տմարդի (ԱՔ, 113)։ Մինչդեռ հում կաքնակիր—ը հոմանիշ է Արամի գաքին (աղամորդուն), մարդ արարածին, Ըստ այսմ սույն տողը նշանակում է՝ մարդ արարած՝ աղամորդի, անեծք քո վստահելությանը։ Այլ կերպ ասած՝ մարդ արարածը, սղտմորդին վստահելի չէ։ Հում կաքնակիր—ը երգիչը գործածել է նաև 15-րդ խաղի մեջ, արտահայտելով գրեթե նույն իմաստը, ինչ որ սույն տողում. «Մե բափա չըտեսա հում կաքնակիրի»։ այսինքն՝ մարդ արարածի մեջ հավատարմություն չտեսա, չգտա։ Ի. Միրզոյանը ևս հում կաքնակիր—ը բացատրելով մարդ արարած իմաստով, նկատել է, որ վերոհիշյալ արտահայտություններ ժողովրդական շաղախ ունեն, դալիս են ժողովրդական հեքիաթներից (ԻՄ, 86)։ Որպես ասպետույց հա համառոտակի շարադրել է «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» գրքում (էջ 379) տպագրված «Աղամավորթու մեջը բափա չկա» հեքիաթը և մեկ այլ հեքիաթ, որի հիմքում ընկած է «Հում կաքնակիրին էյթիբար չկա» գաղափարը («Հայկ. ժող. հեքիաթներ» հ. 1, էջ 550)։*

23-րդ տող. յարասուն—ԳԱ՝ յարսուն. ուղղումն առաջարկել է Ն. Աղբալյանը (ՆԱ, 188)։

23. «ՁԻՍ ԱՍՈՒՍ ԹԵ ԱՍՅ ԻՍ ԷԼԻ»

Գտնվում է Դավթարի 130 էջում։

15-րդ տող. Ման իս գալի բաղի մեշլն յարեռով—յար բառը այստեղ ունի ընկեր, մտերիմ իմաստը (տե՛ս 19-րդ խաղի 4-րդ տողի ծան.)։

18-րդ տող. Աշկիրըտ օսկն փընջան ա—այս և երգչի մի քանի այլ տողերի աղբյուցությամբ հորինվել է հետևյալ ժողովրդական երգը, որ գրի է առել Գ. Տեր-Աղեքսանդրյանը «Թիֆլիզեցոց մտավոր կյանքը» գրքում (էջ 45)։

Աճկիրըտ օսկն փնջան,
Ունքիրըտ կամար ունիս,
Մենակ իմ տերը զուն իս.
Ինչ որ անիս, հախ ունիս,
Թար քու ձեռով սպանիս,
Դիվուն սուլթան, խան ունիս։

24. «ԱՇԽԱՐՈՒՄՍ ԱՍ ԶԻՍ ՔԱՇԻ»

Գտնվում է Դավթարի 116 էջում։ 25-րդ խաղի հետ միասին գրված է 1754 թ. ապրիլի 1-ին։ Մանուցման մեջ նշված այս խաղի «հատը» Ռինձ սիրեցյոր էշխն ննգար» պատասխան դադելն է, որը Գ. Ախվերդյանի ժամանակ անմիջապես հաջորդել է սույն խաղին, իսկ այժմ գտնվում է 131-րդ էջում (տե՛ս ՊԲՀ, 1976, № 3, էջ 210)։ Հենվելով երկրորդ խաղի հեղինակային ծանուցման վրա, Գ. Լեոնյանը գտել է, որ Գ. Ախվերդյանը ճիշտ չի որոշել այս երկու խաղերի հաջորդականությունը։ Եվ հետո, «սրա հատը դիմացն

է» ծանուցումն էլ ցույց է տալիս, որ «ինձ սիրեցիր էշին ննպար» պատասխան գա-
ղելը հետեւի է այս խաղին և ոչ թե հակառակը:

Ուշագրավ է, որ այդ պատասխան գաղելի մեջ երգիչը սիրուհու անունից ուղղակի
կամ անուղղակի կերպով պատասխանում է սուլն խաղի որոշ տողերի: Այսպես, սուլն
խաղի 3-րդ տողում երգիչն ասում է՝ «ճըստիմ, վըրես շըվաբ անիս»՝ զարբար վրան իս ինձ
ամա»։ Հաջորդ խաղի նույնպես 3-րդ տողում սիրուհին պատասխանում է. «Ձիմ թողնի
արեգագումըն՝ բաղլի սաջար իմ քիզ ամա»։ Սուլն խաղի 4-րդ տողում երգիչն ասում է.
«Սուշա իմացի, էնենց սպանե՝ սուլթան ու խան իս ինձ ամա»։ սիրուհին նույնպես 4-րդ
տողում պատասխանում է. «Յիս քու մահըն վո՞ւնց կու խնդրիմ՝ նուղլ ու շաբար իմ քիզ
ամա»։ Հմմտ. նաև. «Ռանգրտ փրտանգի ատլաս է»։ «Փռանգրտանու միշեն էլած դար
ատլաս իմ»։ «Վարթ, մանուշակ, սուսանբար իս»։ «Վարթ, սուսանբար իմ քիզ ամա»։
«Ի՞նչ կուլի մեկ հիզըս խոսի»։ «Եկ քիզիդ սիրով դամ անիմ»:

Այս խաղի անմիջական ազդեցությամբ է գրված աշուղ Շիրինի «Գովասանություն» եր-
գը (տե՛ս «Նոր քնար Հայաստանի», Բ. Մոսկվա, 1856, էջ 8: Այս առթիվ տե՛ս նաև
Գ. Լևոնյան, Երկեր, էջ 95 և ՊՍ, 480—481):

10-րդ տող. Մետասունմա աբուն շինեցիր—այստեղ արտասունմա բառը կարդացվում
է երեք վանկով, բռնի որ հաջորդ բառը ձայնավորով է սկսվում: Ճիշտ այսպես, 14-րդ
տողի աշխարհ բառը կարդացվում է երկու վանկով: Մ. Հասարթյանը նախընտրել է արտա-
սունմա անհաջող ձևը:

13-րդ տող. յիս զարբուն իմ, սիրտս է քնած—հմմտ. Երգ երգոց, գլուխ Ե. «Ես նըն-
ջեմ և սիրտ իմ արթուն կա»։ Նրգիչն ստեղծել է աստվածաշնչյան պատկերին հակադարձ
պատկեր: Վրացերեն 19-րդ խաղի մեջ էլ կարդում ենք. «Ձինի թասն ինձ բան չի անի...
յիս զարթուն իմ, սիրտս է քնում» (ՄՀ, 116): Պ. Սևակը սալաթնովյան այս տողին հա-
մանման տողեր է մեջ բերել Շեքսպիրի 47-րդ սոնետից.

Իմ հայացքը քննիս մեջ էլ բո պատկերն է ամվերջ ծնում,

Ու ես բնած, նա քնածիս սիրտն է կրկին զարթնեցնում

(ՊՍ, 436):

16-րդ տող. Կրակե, ծովմեմն դուս էկած. ուշ ու ջեյրան իս ինձ ամա:—Այս տողը,
Մ. Հասարթյանի բացատրությամբ, նշանակում է ոչ թե կրակի ծովից դուրս եկած ուշ ու
ջեյրան ես ինձ համար, այլ՝ ծովից դուրս եկած կրակի ուշ ու ջեյրան ես: Այսպիսի շարա-
դասությունը բնորոշ է Սալաթ-Նովալի լեզվին: Տողի իմաստը ճիշտ տեղ-հասցենու հա-
մար Մ. Հասարթյանն, իրավամբ, կրակե բառն անջատել է ստորակետով: Մեր կարծի-
քով, այս տողը բխել է Սալաթ-Նովալին քաջ ծանոթ Պղնձի քաղաքի պատմությունից,
որակոյ ասված է. «Եւ այլ բուլում հրեղէն ձի հանինի ծովէն» («Պատմութիւն Պղնձէ քաղա-
քին», Տփլիս, 1857, էջ 46): Վ. Բրյուսովն այս թողը թարգմանել է. «Конь Рашь из
огненных вывел, Степная лань ты дая меня»։ 2. Թումանյանն առարկել է, որ այս
«թարգմանության մեջ կրակի ծովմեմն դուս էկած եղբերուն դարձել է степная лань,
Ճինչդու Սալաթ-Նովին ակնարկում է կովկասյան առասպելների հրեղեն ձին ու հրեղեն
եղբերուն» («Թումանյանը քննադատ», էջ 361): Անդրադառնալով այս հարցին, Մ. Հաս-
րաթյանը գրել է. «Թումանյանը ճիշտ է ընութագրում՝ ճրեղէն ձի, ճրեղէն եղբերու, բայց
ծովը ևս կրակից է համարում: Համաձայն չլինելով այս կրակի ծովի հետ, համաձայն
ենր Բրյուսովի թարգմանության հետ, որ հրեղեն ջեյրանը դարձրել է Степная лань,
որովհետև հրեղեն ձի, նույնիսկ հրե ալիք հակամալի է ոռու ընթերցողին, իսկ огненная

ЛАНЬ, (հրեղին եղնիկ-հեյրան), խորթ է նրան և հարազատ՝ степная лань-ը (ղաշտի մա-
րալ-եղնիկ) («Տեղեկագիր», 1963, № 10, էջ 19)։ Համաձայն լինելով ծովից դուրս եկած
հրեղեն ձի ու հեյրան բացատրությանը, ավելացնենք, որ ռաշ-հրեղեն ձիու մասին հին
Թիֆլիսում տարածված է եղել մի ժողովրդական հեքիաթ՝ «Ռաշը, ան թիվալուր հրեղեն
ձին, որին հավանաբար ծանոթ է եղել մեր երգիչը (հերիաթը տպագրված է «Թիֆլիսեցոց
մտավոր կյանքը» գրքում, էջ 361—368)։

18-րդ տող. արեգագի դեմն փար իս—ըստ Գ. Ախվերդյանի փար-ը վրացերեն փարթ
(վահան) բառն է։ Սա ես բանավեճի նյութ է եղել (տե՛ս «Թումանյանը բննադատ», էջ
325, 361)։ Զրեղունելով արեգակի դեմ վաճան, շղարշ, վարագույր եւ բացատրությունը,
մենք եւ կարծում ենք, որ այստեղ պարսկերեն ֆեր (պերճ, ճոխ, փայլուն) բառի բար-
բառային ձևն է, և սույն տողը նշանակում է՝ «արևի հանդեպ կամ համեմատությամբ
պերճ, շքեղ, հոյակապ, բարձր ես» (ՄՀ, 242)։ Փար բառն այս նշանակությամբ գործած-
ված է նաև 42-րդ խաղի 10-րդ տողում։

20-րդ տող. դաշտի ծաղիկ, հովտաց շուշան—հմմտ. Երգ երգոց, դուխ Բ. «Ես ծա-
ղիկ դաշտաց, շուշան՝ հովտաց»։

25. «ԻՆՁ ՍԻՐԵՑԻՐ, ԷԾԽՆ ՆՆԳԱՐ»

Գտնվում է Դավթարի 131 էջում։

12-րդ տող. մանդիլի զար իմ-մանդիլ նշանակում է թանկարժեք թաշկինակ, գլխա-
շոր՝ ոսկե թելերով բանված։ Այսպիսի մի «ղարու մէնտիլ» էր նվեր ստացել հայոց կա-
թողիկոս Աբրահամ Կրետացին Նադիր Շահից («Պատմություն», էջ 122)։

15-րդ տող. յիս ֆու խսկեճ չիմ անց կենա-ից հետո բնագրում գրված է՝ ինչ դու՛
ասիս, ապա ջնջված է և գրված լուֆ ֆու դամաղն չաղ ըլի կիսատողը։

20-րդ տող. ռանգ ու ռուֆար իմ փիզ ամա—ըստ Գ. Ախվերդյանի ռուֆարը «ոստայնի-
նուրը և առավել աշխատութենով գործած ծայրն է» (ԳԱ, 972)։ Մ. Հասարթյանը ռուֆարը
բացատրելով ապավեն, հույս, ռանգը՝ նույնպես հույս իմաստով, սույն տողը մեկնաբա-
նել է այսպես. «երգարանդ ծալիք և սնդուկը դիր (այսինքն՝ անհույս սիրո հոգեմաշ եր-
գեր մի գրիր), որովհետև հույս ու ապավեն եմ քեզ համար» (ՄՀ, 311)։ Իր բառարանում
Մ. Հասարթյանը ռուֆարը թարգմանել է նաև «ծոպ. կերպասե կամ ալլ, գործվածքի
ծպենքը՝ ծայրերի չգործած հենքի նուրբ փնջերը»։ Ճիշտ այնպես, ինչպես բացատրել է
Գ. Ախվերդյանը։ Այստեղ ռուֆարը հենց այս իմաստով էլ գործածված է։ Ինչպես գրում
է Ի. Միրզոյանը. «ուրար»-ը գործվածքի ծոպն է, զա կարող է գործվածքի հենքի թելերից
լլինել, տարրեր արտագրություն լինել։ Հիշենք երգչի հետևյալ տողը՝ «Ծըպնիրն Հինդե-
է բանդ արիկ, գործվածկըն էլ Շամ շըհարը» (աղբր. խաղ 50)։ Որ իրոք վերոհիշյալ տո-
ղի «սուֆար»-ը կապ չունի հույս, ապավեն» իմաստի հետ, ալլ գործվածքի «առավել
աշխատութենով գործած ծայրն է», ծոպը, մեղ հուշում է նախորդ տողի «զար առլաս»-ը՝
եթե նախորդ տողում գլոգալն ասում է, որ ինքը Եվրոպայից բերված ոսկեհուռ առլաս է՝
ապա հաջորդ տողում ավելացնում է, որ այդ ոսկեհուռ առլասի «ռանգ-ու-ուրարն է»
(պարսկ. իլգֆենով միացած), փայլուն, գունավոր զարդափունջն է («ռանգ» բառը պարս-
կերենում բացի «գույն» իմաստից նշանակում է նաև «փայլ»)։ Համանման մակդիր-համե-
մատություն ունի Քուչակը. «Հա՛յ, իմ արծաթն գուրա, մարբրտի ծածկոցն ի վերա» («Քու-
չակ, «Հայրենի կարգավ», 1957, էջ 210)։ Եթե Սայաթ-Նովան իր գլոգալին համեմատում
է սնդուկի գունավոր, փայլուն զարդափնջեր ունեցող ոսկեհուռ առլասայ ծածկոցի հետ,

ապա Քուչակը իր սիրուհուն համեմատում է (սնդուկի) մարգարտազարդ ծածկոցի հետ» (ԻՄ, 87—88)։ Աղբրեջաններն 50-րդ խաղի վերը բերված տողի բնագրում (Դավթար, էջ 12) երգիչը գործածել է հենց ռուսար բառը, որ Մ. Հասարթյանն իրավացիորեն թարգմանել է ծրպնիւր։

26. «ԱԶԱՐ ՔԱՆԻ ԺԱՄԱՆԱԿ Է»

Գտնվել է Դավթարի աժմ բացակայող տետրում։

2-րդ տող. Մոլորտ նստող յարիտ էրենկ—ծողողորդական մի սիրերգի մեջ էլ ասված է՝ «էրենկ կու տամ քու յարին» (Տեր-Աղեքսանդրյան, էջ 45)։

7-րդ տող. ձնիւտ ունիւ [նիտով] նիւրն—փակագծում գրված բառերի փոխարեն Ախվերդյանի մոտ տպված է զանջափին, սակայն այդ բառն արդեն գործածված է նույն տան մեջ, որպես հանգակիր բառ, և երգիչը երբեք այն չէր կրկնի։ Կամ Ախվերդյանն է տխալ կարգացել կամ էլ խաղը գրի առնելիս հեղինակն է սխալվել։ Գ. Լեոնյանը նկատելով այդ, գրել է, որ «այս բառի տեղ եղել է դարանվիլը և զանջափիլը բառերի հանդը կրող մի այլ բառ» (ԳԼ, 168)։ Մ. Հասարթյանը գրել է «հուսով հիւրն»։ չգտնելով առավել հաջող բառ։

8-րդ տող. ունիւտ, սամանդարիտ էրենկ—Գ. Ախվերդյանը սամանդարը ընդգծել է տրպես անհասկանալի բառ։ Գ. Լեոնյանը ենթադրել է, որ այն կազմված է պարսկերեն սաման (ծուծկալություն) և դար (կրող) բառերից։ Բայց այդ իմաստով բառն ամենեւին չի կապվում սույն տողին։ Ի. Միրզոյանը ենթադրել է, որ սամանդարը տխալ արտագրության արդյունք է. պետք է լինի Բամանդար (աղեղնակիր, նետածիգ), գտնելով, որ այդ բառն այստեղ գործ է ածված աղեղ, աղեղներ ունեցող նշանակությամբ։ Սակայն այս բացատրությունը ճիշտ չէ, քանի որ սամանդար բառը գրության այս նույն ձևով Լր-գիչը գործածել է նաև աղբրեջաններն խաղերից մեկում (Դավթար, էջ 75, ՄՇ, 207)։ Մ. Հասարթյանը նույնպես սամանդարը ընդգծել է որպես զծվար մեկնաբանելի բառ և ենթադրել, որ «հեղինակն ինքը տարակ. սաման (խելք, խոհանոթյուն...) կամ սամ-սաման (հոգն. ծխածաններ) բառերից բարդել է նոր բառ՝ հանգի համար։ Ավելի հավանական է վերջինը, որովհետև ասում է—«ունքիտ, սամանդարիտ էրենկ», այսինքն՝ աղեղներ, Ֆիաժաններ կրող հոներդ երենկ» (ՄՇ, 242)։ Մ. Հասարթյանն իր ծողղվածուի բառարանում տալիս է այս բառի ավելի հավանական բացատրություն. նրա կարծիքով սամանդարը գուցե և հեղկերեն (ուրդու) սամունդար բառն է՝ ծով, օվկիանոս նշանակությամբ. փոխարևարարը ծով աչքեր (ՄՇ, 312)։ Ըստ այսմ տողի իմաստն է՝ ուներիդ, ծով աչքերիդ երենկ (հմտ. խաղ՝ 60, տող 9՝ Աչկիրտը ծով, էրեսըտ շովդ)։ Ասացիներ, որ և երգիչը սամանդար բառը գործածել է նաև աղբրեջաններն խաղերից մեկում. դա նրա հայտնի ինքնակենսագրական բանաստեղծությունն է, որտեղ նկարագրելով իր ծնունդը, երգիչն ասում է. «Փա՛ռք արարչին, գոյ անողին, սիրով սնող-պահպանողին. դեռ հող ու ջուր, հայտնի եղա ես էն ոսկի սամանդարին» (ՄՇ, 207)։ Այստեղ էլ նույն հեղկերեն սամանդար—սամունդար բառն է՝ ծով իմաստով («Хинди-русский словарь», М., 1959, стр. 1126)։ Այս երկտողում արտահայտվել է մարդու պոչացման մասին երգչի պատկերացումները, որոնց վրա ներգործել է նաև Արևելքում տարածում գտած և տեղայնացած հեղկական բաղմարարդ դիցաբանությունը։ Ըստ այդ դիցաբանության, մարդու արարչագործման նախասկզբը ծովն է (ջուրը)։ Նրանից առաջացել է ոսկե ձուռն (հմտ. ոսկի սամանդար), որից և շուրջ մեկ տարի հետո ծնվել է առաջին մարդը։ Այդ է պատճառը, որ մեկ տարի

հետո է ծնեղաբերում կինը, կամ կովը, կամ ձին («Древнеиндийская философия», М., 1972, стр. 67—68):

10-րդ տող. Ով չէ տեսի՝ մե՛կ ախ կոնե, ով կու տեսնե՛ն հազար հարու: Հմմտ. խաղ. 40, տող 7.

Ով չէ տեսի, ախտ է ուղում. ով տեսնում է՝ միռանում է:

11-րդ տող. Քու զարքն Բու նըման կուլի, կըշտիտ ունիս օսկե բարու: Հմմտ. վրացերեն խաղ 7, տող 3—4.

Հուրի-փերին մեշըն պառկած

Օսկե օրորանըն տեսա (ՄՀ, 104):

Պ. Սեանն իրավացիորեն այս տողերի տակ իրական հիմք է տեսել և գտել, որ «Սա-
յաթ-Նովայի Յարը 1755-ին ունեցել է նորածին զավակի Քանի՝ զավակ է ծնել Աննա Բա-
տոնիշվիլին,—մենք չգիտենք: Բայց մեզ հայտնի են նրա գոնե երկու զավակի անուն-
ները (Բամազ և Մամուկա)» (ՊՍ, 56):

27. «ԻՆՁ ԿՈՆԻՄ ՀԵՔԻՄՆ»

Գտնվում է Դավթարի 132 էջում: Եթե այս խաղի նախորդ երկու գաղենները միասնա-
բար ներկայացնում են երգչի ու սիրուհու երկխոսություն-զուգընթաց, ապա այս խաղն
ինքնին մի զուգեղագ է, որի տները սկզբում Գ. Ախվերդյանն ավելացրել է «Սայաթ-Նովին»,
«Սիրեկանն» բառերը, որոնք Մ. Հասրաբյանն իրավացիորեն հանել է, մասնավանդ որ այդ
տներն սկսվում են «ասի, ասաց»-ներով: Խաղի այն բառատողերը, որոնք երգչի անունից
են ասված, ավարտվում են «Քու ավաճն ուրիշ տիղ է, ուրիշ դիղ» տողով, իսկ սիրուհու
անունից ասված տները վերջին տողն է՝ «Քու ասածն ուրիշ տիղ է, ուրիշ տիղ»: Դավթա-
րում խաղի երկրորդ տան վերջին տողն ունի «ուրիշ տիղ, աման, ուրիշ տիղ», իսկ ին-
ներորդ տան վերջին տողը՝ «ուրիշ դիղ, աման, ուրիշ դիղ» կրկնակը: Այդ կրկնակները
համապատասխանաբար վերականգնել ենք մյուս տներում (հմմտ. երգչի աղբյուրներն
շիրվանիները—ՄՀ, 152, 168):

10-րդ տողում, ինչպես և 43-րդ խաղի 6-րդ տողում բան ասելով, երգիչը ըստ
ն. Աղբալյանի, նկատի ունի իր արհեստը, որով ղեաղվում էր աշուղությանը համատեղ
(նԱ, 173—174):

25-րդ տող. Մալիբուս սիրմա իս անում—Դավթարում՝ մալիբուս սիրմասիմ անում:
Գ. Ախվերդյանը դարձրել է սուրմա իս անում, ծանոթագրության մեջ նշելով, որ այս-
պես է գրել ոչ միայն իր «կարծիքով», այլև «մեկ խաղ առողի խոսքով» (ԳԱ, 101): Ըստ
ն. Աղբալյանի, ճիշտը բնագրի սիրմասիմն է, որ բաղկացած է սիրմա (արծաթ) և սիմ
(լար) բառերից, և տողի իմաստն է «մաղերդ արծաթյալի են տալիս, այսինքն՝ մեջն ար-
դեն ճերմակ է նշմարվում» (նԱ, 152): Մեր կարծիքով, երգիչն այստեղ ոչ թե սիրուհու
ճերմակելու մասին է ակնարկում, որ շատ անհավանական է, այլ ցանկանում է ասել,
որ նա մաղերին արծաթի կամ ոսկու փայլ է տալիս, ուստի ճիշտ է՝ սիրմա իս անում:
Բացի այդ, սիրմասիմ անում-ի մեջ բացակայում է օժանդակ բայը, առանց որի խոսքն
անորոշ է դառնում: Ծիշտ է Մ. Հասրաբյանը, որ գրում է. «Սայաթ-Նովան չէր ասի
սուրմա անել, որովհետև սուրման (ծարիր) բաշում են (կամ դնում են) գերազանցորեն
ալբերին: Նա գրել է սիրմա (թ. սրմա-արծաթ), ինչպես 13-րդ խաղում ևս ասում է

«իմ սիրմա էրծաթ ակապեր»։ Անշուշտ բնագրում գրչի սխալ է—սիրմա սիւմ-ը, ընայած սիւմ բառը պարսկ. նշ. է արծաթ, բայց այստեղ այդ բառը չէ, այլ իս-ը շրջվել դարձել է սի և անում բառի վերջին մ-ն մեխանիկորեն միանալով սի-ին՝ ստացվել է սիւմ» (ՄՀ, 242)։ Համաձայն շենր միայն, որ Մ. Հասրաթյանը սիրմա բառը դարձրել է սիրման։

36-րդ տողի երրորդ ուրիշ դիդ կրկնակը բացակայում է Գ. Ախվերդյանի մոտ, իսկ երկրորդ դիդ բառը՝ Մ. Հասրաթյանի մոտ։ Բանն այն է, որ Դավթարի այդ էջում տեղ չլինելու պատճառով սղված է տողի վերջին դիդ բառը, իսկ կրկնակը շարունակված է աջ լուսանցքում։

28. «ՄԵԶԼՈՒՄԻ ՊԵՍ ԿՈՐԱՎ ՅԱՐԱ»

Գտնվում է Դավթարի 118 էջում։ Հաջորդի հետ միասին գրված է նույն օրը՝ 1757 թ. ապրիլի 5-ին (տե՛ս Հաջորդի հեղինակային ծանուցումը)։

Քանի որ առաջին տան մեջ 1-ին և 3-րդ տողերն ութավանկ են, իսկ 2-րդ և 4-րդ տողերը՝ յոթավանկ, Գ. Լեոնյանը ենթադրել է, որ Հաջորդ տներն էլ պիտի ունենան նման տաղաչափություն։ Մինչդեռ, ինչպես բնորոշ է երգչի թասլիքներին, հանգով ու շափով իրար համապատասխանում են առաջին տան 2-րդ, 4-րդ և մյուս տների 4-րդ տողերը։ Իսկ մյուս տների առաջին երեք տողերն իրար են ներդաշնակում։

2-րդ տողի մամ իմ գայի-ն, ինչպես նկատել է Ն. Աղբալյանը, այստեղ ոչ թե նշանակում է մամ և՛ գայիս, զբոսնում եմ, այլ՝ որոնում եմ (ՆԱ, 85)։

3-րդ տողի խունի ջիգար-ը նշանակում է աշունուտ լլարդ և գործածված է ոչ թե՛ հարազատս փոխարեքական նշանակությամբ, ինչպես ենթադրել է Մ. Հասրաթյանը (ՄՀ, 293), այլ՝ վիրավոր սիրտ (տե՛ս նաև խաղ 64, տող 12)։

7—8-րդ տողերը հմմտ. խաղ 22, տող 13։

9-րդ տող. չիգիդ—բնագրում՝ Եգիդ (իեգիդ), ԳԱ՝ Եգիդ, ՄՀ՝ չիգիդ։

18-րդ տող. հուտովին—ըստ Ն. Աղբալյանի սա հուտելվան բառն է՝ հանգի համար դարձրած հուտովին։ Այդ բառը Կովկասի հայ բարբառներին անծանոթ է, և հավանաբար Սայաթ-Նովան լսել է իր հորից, որ արևմտահայ էր (ՆԱ, 89)։

29. «ԷՇԽՍԵՄԵՆ ԷՆՊԵՍ ՎԱՌՎԻԼ ԻՄ»

Գտնվում է Դավթարի 118—119 էջերում։ Մանուցման մեջ հիշված «Բլբուլն նստած է վարթին» խաղը գրել է ոչ թե Սայաթ-Նովան կամ աշուղ Օղլանը, ինչպես ենթադրել է Մ. Հասրաթյանը, այլ ոմն Զաքարիա, ինչպիսի ցույց է տվել Ա. Մնացականյանը (ՊՐՀ, 1963, № 3, էջ 271—273)։

Խաղի առաջին բառատողը Ախվերդյանի մոտ բաժանված է երկու երկար երկտողի։ Նրա մոտ բացակայում են նաև «էնտիղեմին, էնտիղեմեն» կրկնակները, որոնք համարժեք են նախորդի «յանա-յանա»-ներին։

8-րդ տող. Դիխոս բառ իմ ասում—այս տողը, ինչպիսի նկատել է Ն. Աղբալյանը, ոչ թե նշանակում է գլուխս բարը, այլ՝ թեկուզ գլխիս տակ բար լինի (ՆԱ, 154)։

20-րդ տող. Կառստ իմ, բառ իմ ասում—ԳԱ՝ բառ իմ ասում։ Ինչպիսի նկատել է Հ. Թու-մանյանը, նախորդ տողի քաղն բառը հուշում է, որ պետք է կարգալ բառ (պտուղ)։

Գանձել է Դավթարի ալմ բացակայող տևորում:

4-րդ տող. Արտասունք՝ անիմ—ԳԱ՝ արտասունք հանիմ: Ուղղումն առաջարկել է Գ. Լեոնյանը, նկատելով, որ «հանգ ընդունող բառերը չէին կարող կրկնվել» (ԳԼ, 170):

16—17-րդ տողեր. Նկ նընգնիմ շուրն, վուր հասնիմ գոլն—Օհանի մոտ՝ Ն՛կ գնանք շուրն, վուր անիմ գոլն: Մ. Հասրաթյանի կարծիքով գնանք շուրն ձևը ավելի ճիշտ է, իսկ ննգնիմ շուրն ձևը սխալ ընթերցանության արդյունք է, նկատի առնելով, որ պոլիպո, մաշված թիրթի վրա է կղև և «որոշ ձայնավորներով պակաս, վրացերեն գրված գննք. նգննք, վուրս անիմ, վուր հասնիմ բառերը շատ հեշտ էր շփոթվել իրար հետ: Այսուհանդերձ մենք վուր հասնիմ բառերը չենք փոխարինում վուրս անիմ բառերով, որովհետև որս անելու տրամադրություն չկա երգում, այլ խաղաղ գիշերվա մեջ, երբ անգամ բլբուլն է քնած վարդի թփին, պետք է որ գնային լճի ափ ու եղջերուների գիշերվա ջուր խմելը դիտեն: Նընգնիմ—ը փոխարինեցինք գնանք բառով» (ՄԶ, 243): Մեր կարծիքով Ախվերդյանը ճիշտ է կարդացել ննգնիմ բառը, քանի որ ժողովրդական շաղախ ունեցող շուրն ընկնել արտահայտությունն ավելի ճիշտ է ներկայացնում սիրահարի հոգեկան վիճակը: Ուստի մենք նընգնիմ—ը թողնցինք անփոփոխ:

20-րդ տողը Գ. Ախվերդյանը կարդացել է՝ վարբըն բաղին: Այս ձևով, սակայն, տուղում մեկ վանկ պակասում է: Գ. Լեոնյանի կարծիքով «բնագիրն ունեցած կլիներ վարլ՝ բառից առաջ ու (ու վարթն բաղին), կամ ավելի հավանականը կլիներ այսպես. «Բլբուլըն վարթին, վարթըն բլբուլին, սեյրանի վախտ է» (ԳԼ, 170): Այս երկու ենթադրություններն էլ ճիշտ չեն, քանի որ ո՛չ բաղին և ո՛չ էլ բլբուլին բառերը ըստ պատշաճի չեն ներգաշնակում այդ տան հանդերին: Օհանի մոտ էլ վարթն ի բաղին ձևով է, որտեղ թեև վանկի խախտում չկա, բայց դարձյալ խախտում է հանգը: Միանգամայն ընդունելի է Մ. Հասրաթյանի կատարած վարբն բաղաբին ուղղումը:

41—42-րդ տողերի մասին տես ՊՍ, 417—418:

51-րդ տող. Սալբու դալ բովուն—Գ. Ախվերդյանը կարդացել է Սալբու դալ բովուն, ենթադրելով, որ բովուն—ը բոյին (հասակին) բառն է: Ըստ երևույթին, այդպես է ընկալել այդ տողը նաև երգչի որդին, որի օրինակում այսպես է. Ղուրբան իմ բոյուն: Մ. Հասրաթյանի կարծիքով էլ բովունը բոյին բառն է՝ գրված հանգի համար: Ժիշտ է, Սալաթ—նովան հանգի համար կատարել է բառերի մի քանի արհեստական թերմաներ, բայց ոչ այս աստիճան: Ինչպես նկատել է Ի. Միրզոյանը. «բովուն»—ը ոչ թե «բոյ» բառն է՝ հարմարեցրած հանգակազմ «ովուն» և «բովուն» բառերին, այլ պարսկերեն սրովան, բավան» (սահուն քայլող) բառի սղափաղված ձևն է: «բովան—բովուն» բառը արտադրողի կողմից թյուրիմացաբար դարձել է «բովուն»: Այս փաստը ևս մեկ անգամ վկայում է, որ Սալաթ—նովայի խաղերի քնադիրը եղել է հայատառ (հայերեն Բ—ն կարդացվել է Բ): Երգչի գողալը սալբու սահող, օրորվող ճյուղ է (ճկուն է, դյուրաթեք): Ի դեպ, նույնանման պատկերավոր համեմատություն ունի Քուչակը. «Քու մեջքն է բարակ, երկայն և պոյիկա է սալրի բովան» («Հայրենի կարգավ», էջ 89: ԽՄ, 88): Ուշագրավ է, որ Գ. Ախվերդյանն անդրադառնալով 14-րդ տողի փաստ բառին, գրել է. «Պարսիկ բանաստեղծն՝ բացարձակ պոետիկ բերանին ասում է փխտեխ խենդան (ծիծաղող պիստակ), նույնպես և նուրբ հասակին սեղվի Բելվան (գնալուն նոճի)» (ԳԱ, 155):

53-րդ տող. Լըցնիս ու ինձ տաս—ԳԱ՝ լըցնիս ինձ տաս: Այս ձևով տողում մեկ վանկ պակասում է: Ն. Աղբալյանն առաջարկել է դարձնել կամ լըցնիս ինձ տաս կամ լըցնիս

ու ինձ տաս (ՆԱ, 157): Մենք դերադասեցինք երկրորդը՝ Լըցենիս ինձի տաս (նույնն է նախընտրել նաև Մ. Հասարաթյանը):

54-րդ տողի ֆոնուն բառը Գ. Ախվերդյանն ընդգծել է և ենթադրել, որ դա նշանակում է ֆեղ: Գ. Լևոնյանը բացատրել է՝ ֆոլտ, ֆեզ մոտ: Բառն ավելի ճիշտ է բացատրված Մ. Հասարաթյանի և Ա. Քոչոյանի կողմից, որոնց կարծիքով դա պարսկերեն ֆոլա (ֆյոլա) բառն է՝ ջրի կամ դինու մեծ աման նշանակությամբ: Ըստ այսմ, նախորդ երկու տողերի հետ այս տողը նշանակում է՝ ձևերից թաս ունես, լցնես տաս ինձ, մատաղ լինեմ ալն ամանին (ֆոլա), որից պիտի լցնես թասը (տե՛ս ՄՀ, 319): Քուվա բառը, ըստ թիֆլիսահայ բարբառի հոլովական համակարգի, տրական-հայցականում դառնում է ֆովուն:

31. «ՎՈՒՆՅՈՐ ՎՈՒՐ ՂԱՐԻԲ ԲԼԲՈՒՆ»

Գտնվում է Դավթարի 120—121 էջերում:

9-րդ տող. յիս ֆիզ նուրմեկ զով իմ աբի—վերջին երկու բառը Մ. Հասարաթյանը կարդացել է՝ զովիմ, ա՛բի: Մինչդեռ այս տողը ոչ թե նշանակում է՝ դու ի սկզբանե գոված ես, արի ես քիչ նորից գովեմ, այլ՝ դու ի սկզբանե գոված ես, ես նորից քո գովքն եմ արիլ:

11-րդ տող. Իրեֆ հաբուր վացուն ու վից—բնագրում և ԳԱ՝ Իրեֆ հաբուր ու վացուն ու վից: Ինչո՞ւ է 366 անգամ ասում բանաստեղծը, Ինչպես նկատել է Մ. Հասարաթյանը. «դա պատահական թիվ չէ, և հազիվ թե որևէ առնչություն ունենա «հայրապետաց» թվի հետ: Ավելի շուտ կարող է կալ ունենալ տարվա օրերի քանակի հետ, և պարզ է, որ գալիս է շատ խոր անցյալից՝ հին Արևելքից: Այժմ էլ դեռ արևելյան ժողովրդական պատկերացման մեջ մարդու երակների քանակը համարվում է 366. Սայաթ-Նովան իր աղբր-բեջաներն մի խաղում ևս ասում է, որ աջալը կպա և «366 դամարներդ կես կանխ»: Մեզ զրադեցնող տողում հնդկական ցանկանում է սասի, որ իր սիրածը ոչ մի թերություն չունի, որ մարմնի բոլոր անդամները (և երակները) մի զարարի են, այսինքն՝ ներդաշնակ են» (ՄՀ, 243—44): XVIII դարի թամբուրահար Քյուչուկ Արութինի «Արևելյան երաժշտության ձևերի մասին», որտեղ արտացոլվել են մարդու մասին հին արևելյան պատկերացումները, ասված է՝ «Մարդն ունի երեք հարյուր վաթսուհինգ հոգ» (Тамбурецъ Арутинъ, Руководство по восточной музыке, стр. 68): Ըստ Գրիգոր Նարեկացու, մարդը կազմված է 360 հոգից և հինգ զգայարաններից (Բան ԽԶ, բ): Այս առթիվ տե՛ս նաև Абусяид, О строении человека, Сербия, 1974, էջ 172:

15-րդ տող. Լողմայի—ԳԱ՝ Լողման, ՄՀ՝ Լողմանի: Այս տողը, ինչպես նկատել է Ն. Աղբալյանը, ոչ թե նշանակում է՝ թեկուզ թագավորը կանչի, թեկուզ Լողման բժիշկը, այլ՝ թեկուզ թագավորին կանչիր, թեկուզ Լողման բժիկն (ՆԱ, 69):

16-րդ տող. կու հասկանան—ԳԱ՝ կու հասկանա նա: Ուղղումն առաջարկել է Ն. Աղբալյանը (ՆԱ, 69):

32. «ՄԵ ԽՈՍԿ ՈՒՆԻՄ ԻԼԹԻՄԱԶՈՎ»

Գտնվում է Դավթարի 121—122 էջերում: Այս խաղը գրեթե նույնությամբ ընդօրինակել է աշուղ Եգորը, վերջում իր կողմից ավելացնելով մի տուն (տե՛ս «Գուսանք», Բ, էջ 83—84):

5-րդ տող. Մականմ օշով յար չէ սիրի՝—Բնագրում և ԳԱ՝ մականմ էլ օշով յար չէ սիրի՞: Մ. Հասարթյանն, իրավացիորեն հանել է տողի վանկերի չափը խախտող էլ-ը: Օհանի մոտ՝ մագառ մե մարք յար չէ սիրի՞...

Նույն տողի էս ինչ աբիւ-ը Մ. Հասարթյանը, հավանաբար Օհանի տարրերակի հե-տևությամբ, դարձրել է էս ինչ աբի, որ ճիշտ չէ:

3-րդ տան առաջին հրեր տողի հանգերը, ըստ Գ. Լեոնյանի, «չեն բռնում իրար: Եթե ընդունենք, որ դա երգչի կողմից լապսուս է, ապա պիտի ընդունենք, որ աղավաղված է վերծանման մեջ»: Սակայն այստեղ վերծանման աղավաղում և մանավանդ լյապսուս չկա, ընդհակառակն այս տողերում փայլուն կերպով արտահայտվել է երգչի հանգակաղ-մության վարպետությունը: Երգիչն ստեղծել է մի խոր ու ինքնատիպ հանգ, որ գտնվում է այդ տողերի վերջին երկու բառերի մեջ, այդ հանգն է՝ ստանիմ (դոստ անիմ, զաստ անիմ, դուս տանիմ):

10-րդ տող. Անցկացած օրըն չիմ տեսնում, քանի գուզե վուր դաստ անիմ—թիֆլիսա-հայերի մեջ տարածված են եղել նման ասացվածքներ. «Անցկացած բանին էլ չիս հասնի, հազար դուզե դաստ անիս»:

14-րդ տողի շարիփ բառը, ինչպես նկատել է Մ. Հասարթյանը, «բնագրում, նախորդ փաղիշահի բառի աղդեցությամբ, սխալ գրված է շահիփ, տվյալ դեպքում անիմաստ մի բառ, որը և չի համապատասխանում այս տան մյուս երկու հանգավոր բառերին—թարիփ, Ղարիբ» (ՄՀ, 244): Շարիփ նշանակում է իշխան, կուսակալ, բարձրաստիճան պաշտոն-յալ Գ. Ախվերդյանը թողնելով շահիփ, այն համարել է շերիֆ բառը՝ մեծ, բարձրագահ, շահապ իմաստով: Այս տողում Սայաթ-Նովան, ըստ երևույթին ակնարկում է իր ժամա-նակ հայտնի մի զրույց, հեթիաթ՝ տաս տարի ապարդյուն ման եկած ինչ-որ շարիփի մասին:

20-րդ տող. Ենեչաֆ—ԳԱ՝ Ենեչափ:

33. «ԱՆԳԻՆ ԱԿՆ ՎՐԵՏ ՇԱՐԱՄ»

Գտնվում է Գալթարի 122—123 էջերում:

5-րդ տողի ֆուլիշով բառը Գ. Ախվերդյանը մեկնաբանել է քսանյակ, քսան-քսան (ադրբ.), Մ. Հասարթյանը՝ ընդհանրական, լրիվ, ամբողջական, տեհաշիվ. իսկ ամբողջ տողը՝ «Գովքը դառավ աշխարհով մեկ» (ՄՀ, 319): Ինչպես նկատել է Ի. Միրզոյանը, «Քուլլու» բառն է ամբողջական նշանակում՝ «Քուլլու բաղարի մեջ շատ սիրեկան իս. գովելի» (Գ. Ախվերդյան, Հայ աշուղներ, էջ 315), իսկ «քուլիշով»-ը, իրոք, «քսանյակն է», այն է՝ «գյուլմինը»: Ապրեհշանյիները «քսանյակ» ասելով հասկանում էին «մեկ գյուլ-ժին»: Այդ հավաստում է նաև Գ. Սունդուկյանը. «Քուլիշով, քսանյակ, գյուլմին...» (Գ. Սուն-դուկյան, Երկեր, հ. 2, էջ 675): Սայաթ-Նովան ուզում է ասել, որ գյուլալի գովքը մեկ-մեկ (նորից է կրկնում բառը), մեկ-մեկ չի ասվի (այնքան շատ են նրանք), այլ պետք է գյուլմին-գյուլմին ասել (այնքան հմայքառատ է նա)» (ԻՄ, 88):

8-րդ տող. Խոսում վաշայեմեն րողած, դուն, Թովուզի րախտ իս, զո՛ղալ—Թովուզի րախտը հնդկական մեծ մողղի սիրամարգյա զահն է, որը 1739 թ. Նադիր Շահը Հնդկաս-տանի մայրաքաղաք Դեհլիի (Ջիհանաբադ) գրավումից հետո երկու այլ զահերի և այլ զանձերի հետ մեկտեղ բերեց Պարսկաստան: Այդ զեպրերի ականատես Քյուշուկ Արուսիքը այսպես է նկարագրել այդ զահը. «Թովուզի րախտը միակառուր գոհարներից, թանկագին

քարհրով զարդարված հինգ հոգի նստելու տեղ ունեցող զահ է: Դահի վերեր լուսնաձև, նման էր կախովի խաղողի որթատունկի: Ամրոզը զահի մեջն ու դուրսը շինված էր միակտոր գոհարներից: Վերևի լուսնաձևի վրան գոհարներից մի սիրամարգ էր շինվել, և սիրամարդի փետուրների վրա ինչքան որ գույներ կան, բոլոր գույներն էլ գտել ու համապատասխան ձևով դասավորել էին: Եվ որովհետև զահի վերևի լուսնի վրա սիրամարդ էին տեղավորել, այդ իսկ պատճառով այդ զահը կոչվում է թավուզի (սիրամարգի) թախտ: Այս զահի բոլոր ձողերն ու մասերը մասնատվում և պետք եկած ժամանակ միացնելով, հատակ կառուցվածքով պնդացնում են: Այնպես որ ցանկացած բույսերի կարելի է մասնատել և սնդուկի մեջ տեղավորել: Ահա լայնիս հմտությամբ շինված էր» (Մատենագրարանի գիտական նյութերի ժողովածու, № 1, Երևան, 1941, էջ 118): Թավուզի թախտի մի ընդարձակ նկարագրություն է թողել նաև պարսիկ պատմագիր Մուհամմադ Քադիմը («Поход Надир-шаха в Индию», М., 1961, стр. 154—155): Սայաթ-Նովայի սույն տողից ելնելով, Մ. Հասրաթյանն, իրավացիորեն, ենթադրել է, որ թերևս ժամանակին ավանդություն է եղել, ինչ որ այդ զահը մնացել է Պարսից արքա Նոուրով Նուշիրվանից (531—579): «Այս վերական կարող էր հորինվել հենց նույն ժամանակ, անգամ Դեհլիում, Նադիրի կամ նրա մերձավորների կողմից, որպեսզի նախախնամությամբ կամրով արդարացվեր իրանի պատահական նոր աշխարհակալի իրավունքը՝ ղսմաբը հաստատվեր նաև Սասանյանների գահին տիրանալով» (ՄՀ, XI): Այս մասին Սայաթ-Նովան կարող էր լսած լինել հենց Հնդկաստանում կամ՝ Աֆղանստանում, որտեղ էլ թերևս տեսել է Թավուզի թախտը: Ինչպես վկայում է Քյուշուկ Արուսինը, Նադիր Շահը այդ զահը սարքավորեց Հերաթում և Քերուր մարդիկ գնացին դիտելու: Մենք էլ դնացինք: Դիտողների մեջ է եղել նաև վերոհիշյալ պատմագիր Մուհամմադ Քադիմը: Հավանաբար այնտեղ է եղել նաև պատանի Արուսին-Սայաթ-Նովան: Երբիշն այդ զահը հիշատակում է նաև 35-րդ խաղում և վրացիներեն երեք խաղերում, որ արգելված է այդ նշանավոր թախտն անձամբ տեսնելու տպավորվածության (տե՛ս ՄՀ, 105, 107, 124, «Վրացական երգեր», էջ 34, 55):

9-րդ տող. Սկանդարի Զուլդարի բողած ջալսախի իս. անգին լալ իս:—Սկանդարի Զուլդարը Ալեքսանդր Մակեդոնացին է, որի շուրջ դեռևս հին ժամանակներից հյուսվել են բազմաթիվ լեգենդներ ու զրույցներ: Ամենահինը կեղծ Կալիթենեսի Պատմությունն է, որ V դարում արգեն թարգմանվել է հայերեն և ողջ միջնադարի ընթացքում տարածվել գրավոր և բանավոր ուղիներով: Հայ իրականության մեջ Ալեքսանդրի մասին հյուսվել են նաև մի շարք ավանդություններ, որոնք, ի դեպ, տարածվել են նաև աշուղների միջոցով: Այսպես, Ե. Լալայանը Օձունում աշուղ Առաքելից և մի քանի ձերուխներից լսել և գրի է առել որոշ ավանդություններ Ալեքսանդրի մասին և հրապարակել «Ճգագրական հանդեսում» (1903, գիրք 10, էջ 305—309): Արևելյան գրականության մեջ Ալեքսանդրի մասին հյուսված լեգենդներն արտացոլում են գտել Ֆիրդուսու «Շահ-Նամեում»: Ալեքսանդրի անվան հետ են կապված Մերձավոր Արևելքի և Միջին Ասիայի մի շարք տեղանուններ: Սայաթ-Նովան, անկասկած, լսել է որոշ ավանդություններ մեծ աշխարհակալի մասին, և հավանաբար իր ճամփորդությունների ժամանակ տեսել նրա անվան հետ կապվող կամ նրան վերագրվող անտիկ հուշարձաններ և թանկարժեք իրեր: Այդպես ենթադրում ելնելով սույն և 49-րդ խաղի 12-րդ տողից (տե՛ս ծան.)։ Հավանական է նաև, որ այս տողում Սայաթ-Նովան նկատի ունի այն նշանավոր ջալաճիլ-գոհարը և լալ ուրիշներ, որ Նադիր Շահն ավարի ենթարկեց Մեծ մոգուլի զանձարանից (տե՛ս խաղ 49, 1-ին տողի ծան.): Այդ անգին քարերը, ըստ երևույթին, ժողովուրդը վերագրել էր աշխարհի ամենա-

հարուստ գահակալին՝ Ալեքսանդր Մակեդոնացուն: Վերջինս հիշատակված է նաև երգչի աղբրեջաներեն խաղերից մեկում (ՄՀ, 167):

12-րդ տող. Փափ չունիս փաշազաղիմեն—թիֆլիսահայերը, սովորաբար քաջ, աներկյուղ մարդկանց մասին ասում էին. «Շահինեն փաք (փախ) չունի»:

Նույն տողի սախտ բառը Գ. Ախվերդյանն ընդգծել է որպես անհասկանալի բառ: Ըստ Գ. Լեոնյանի՝ «պարսկերեն կա սախթ, որ բացի ամուր, պինդ նշանակությունից, ունի և 2-րդ նշանակություն, որ է՝ վշտացած: Մենք կարծում ենք, վերջինը բանաստեղծի մտքին լիովին հարմարվում է» (ԴԼ, 161): Սույն տողի իմաստն է՝ Վախ չունես արքայորդուց, անհոգ, անվիրտ ես, գողալ:

15-րդ տողի նուրիզաղա բառը Գ. Ախվերդյանը չի բացատրել: Գ. Լեոնյանի ենթադրությամբ դա նշանակում է «հուրի-ի, հավերժահարսի զավակ, հավերժահարսի ցեղից» (ԳԼ, 161):

34. «ԹԱՄԱՍ ԱԾԽԱՐ ՊՏՈՒՏ ԷԿԱ»

Գտնվում է Դավթարի 124 էջում:

2-րդ տող. դիփունեն—բնագրում՝ դիփունին, ԳԱ՝ դիփունեն:

3-րդ տողի զար-ը, ըստ Մ. Նարյանի, նշանակում է «հասարակ կտոր» («Սով. Հայաստան», 1963, № 74): Մինչդեռ այդ իմաստն ունի նույն տողի խամ բառը, և երգիչը երկու հոմանիշ բառերը չէր հակադրի իրար: Զար-ը և խամ-ը հականիշ բառեր են: Զարը նշանակում է ոսկեթել գործվածք և այդ իմաստով երգչի խաղերում գործածված է տառնյակ անգամ («Աստված կու սիրիս զար մի հաքնի, զարեն էրված իմ», «Հարիտ դարըն ալ իս արի», «Մանգիլի դար իմ քիզ ամա» և այլն): Սույն տողի իմաստն է՝ թե հասարակ կտավ (խամ) հագնես թե ոսկեթել գործվածք (զար) հագնես, դարձնում ես ընտիր, նուրբ կերպաս (զումաշ): Այլ կերպ ասած՝ վատն էլ, լավն էլ լավագույն ես դարձնում: Ինչպես նկատել է Ի. Միրզոյանը, երգիչն իր վրացերեն և աղբրեջաներեն խաղերի մեջ էլ հակադրել է խամ և զար (խաս) բառերը, ինչպես. Զուրիս զարի գինը չունիմ, էնդու խամի համա էկա», «Հին քարխանի զար ու զարքաք՝ ինձ ամա քու խամն իմ ուղում», «Խամը թող տա, արբեշում ու խաս տանի» (ՄՀ, 112, 117, 161, ԻՄ, 88—89):

8-րդ տողի նաղաջ բառի փոխարեն որոշ օրինակներում գրված է դարաղաջ: Իր ժողովածուի ձեռագրում Գ. Ախվերդյանը ևս նաղաջը չնչել և վրան գրել է դարաղաջ (տե՛ս ԳԱԹ, Գ. Ախվերդյանի արխիվ, № 1-ին, թերթ 28), սակայն հրատարակելիս՝ բնագրի նաղաջ-ը թողել է անփոփոխ: Նրան թերևս տարակուսանք է պատճառել, որ նաղաջ (նկարիչ) բառն իմաստով չի կապվում տվյալ տողին: Բայց ծանոթության մեջ ես իրավացիորեն նկատել է, որ երգիչը նաղաջ-ը գործածել է նաղը (նկար) բառի իմաստով: Այդ նույն նշանակությամբ է բառը գործածված նաև 49-րդ խաղի 2-րդ տողում:

9-րդ տողի ջումարդառ բառը Գ. Ախվերդյանը հարցականով թարգմանել է պաղպաղալու, որ նշանակում է պաղպաջ, փայլ ունեցող (փայլուն): Իսկ «էնդուր աշկա չէ ցամաքում» խաղի մեջ գործածված ջումար բառը նա թարգմանել է աշխի լույս: Ընդունելով այս մեկնաբանությունը, Գ. Լեոնյանը գրել է, թե «պաղպաղավորը բոլորովին չի բռնում այստեղ. Թեք ջուհարն աչքի լույսն է, փայլը, ջուհարդաք՝ աչքում ջուհար ունեցողը կամ կողը (ԴԼ, 162): Ըստ էության, Գ. Ախվերդյանի պաղպաղալուրն էլ այդ է նշանակում: Ի. Արքահայրանի մեկնաբանությամբ ջումարդառը (ջանվարդառ) նշանակում է դամառ-կոսյան, եկարեն (պողովատ), ծաղիկ, իսկ տողի իմաստն է՝ ՊՏՈՒՆ է՛ն գլխեն նկարեն պո-

դեմատ եւ, վրադ դարեշան է քաշած» (ՌԱ, 184): Դժվար թե Սայաթ-Նովան սիրած կնոջը համեմատեր պոդպատի (Ֆեկուդ եկարեն) հետ: Առավիլ համոզիչ է «փայլուն, գոհարակերպ, անգին քարեր կրող» բացատրությունը (ՄԶ, 310):

13-րդ տող. շամշ ու ղամար—ԳԱ, ՄԶ՝ շամա ու ղամար: Այս արարքերն բառերը, ըստ Մ. Հասրաթյանի, բանաստեղծը «փարսեվար է ասում ոչ թե չիմանալուց, այլ վաճկերի և այդ բառերը պարսկերեն լեզվում շատ գործածական լինելու պատճառով» (ՄԶ, 245), իսկ ըստ Պ. Սեակի, դա պարզապես պարսկերենի վատ իմացության արդյունք է (ՊՍ, 410): Մեր կարծիքով ևս երգիչը այս բառերը «փարսեվար» է համարում, քանի որ փոխառել է այդ լեզվից և ինչպես 7-րդ խաղում, այստեղ էլ դործածել է շամշ ու ղամար ձևով:

17-րդ տող Յիս և՛ Սայաթ-Նովասին չիմ, վուր ալգի վրա հիմանամ—Այս տողի հիմքում ընկած է «Ավդի վրա է հիմք դրի» ժողովրդական սոսացվածքը: Հմմտ. խաղ 20, տող 15. «Բուռնիաթս (հիմքս) ալազ չիմանաս»: Այս տողը միակ օրինակն է, որտեղ հրեգիչն իրեն անվանել է Սայաթ-Նովասի: Նովասի-ն, որ պարսկերենում (ինչպես և թուրքերենում և հնդկերենում) նշանակում է բռն, առավել հաստատում է Սայաթ-Նովա անվան՝ Սայադի բռն բացատրությունը:

Ինչպես 11-րդ խաղի երրորդ բայթի տան մեջ, այստեղ էլ երգիչը թերևս հանգավորման համար, հիմնադալ բայը գործածել է հիմնադալ ձևով: Ամենուրեք ուղղված է՝ հիմնադալ: Մենք նախընտրել ենք հեղինակային ձևը:

35. «ՄՈՂԵՏ ՆՍՏՈՂՆ ԿՈՒ ՀԱՐՓԻ»

Գտնվել է Դավթարի այժմ բացակայող տետրում:

2-րդ տող. ազա—Ասվերդյանի մոտ տպագրված է ջազա (արաբ. պատիժ): Բայց ջազա բառը, որպես հանգակիր բառ, գործածված է նույն խաղի 12-րդ տողում և իմաստով էլ չի համապատասխանում սույն տողին: Մ. Հասրաթյանն, իրավամբ, ջազա-ն գրչի սխալ համարելով, այն փոխել է ազա (արաբ. էզա-տանջանք) բառով. «...տեսնողին՝ ազա իս, աղիզ» նշանակում է՝ տեսնողի համար տանջանք ևս, սիրելիս: 40-րդ խաղի 7-րդ տողում էլ կարդում ենք. «Ուլ չէ տեսի, տիստ է ուզում, ով տեսնում է՝ միռանում է»:

10-րդ տող. Բաբալուրի փախալնի գար՝ ծաղրն ծաղրն չի քարզանա—քարզանա բառի իմաստը չհասկանալով, Գ. Ախվերդյանն այն տպագրել է շղազի: Գ. Լևոնյանը ենթադրելով, որ դա ժողովրդական քաբզ անել հարապրություն է, փորձել է մեկնարանել այդ տողը. «Քարխանի զմուի հետ ի՞նչ կապ ունեն ծաղրը: Մնում է կարծել, որ կամ պետք է կարգալ «ծաղրն ծաղրն չի թարգանա» և կամ ընդունել, որ աշուղը ծառ ասելով աշխատաջ է ունեցել գառ-ի, այսինքն՝ ոսկեկար կերպասի վրայի ծաղկանկարները, որ իրենց բարդ հյուսվածքներով միմյանցից չեն քարզանում» (ԳԼ, 170—171): Մեզ համար համոզիչն ու ընդունելին երկրորդ ենթադրությունն է: 1963 թ. «Գրական թերթ»-ում լույս տեսած իր մի հոդվածի մեջ (ՁԶ 34) Մ. Նարյանը առաջարկել է ծառ բառը փոխել գառ-ով՝ «զարքն զարքն չի թարգանա». զարքնից մեկը համարելով Սայաթ-Նովային, մյուսը՝ նրա գողալին: «Համեստների՝ համեստ, իր Յարի համեմատությամբ իրեն մշտապես իջեցնող ու փոքրացնող Սայաթ-Նովան կարո՞ղ էր իրեն մեկից-մեկ «զարք» անվանել և այն էլ «թաքավորի քարխան»-ից ելած: Ով քիչ թե շատ ծանոթ է Սայաթ-Նովայի մարդկային խառնվածքին, կտա միայն մեկ պատասխան. ո՞չ» (ՊՍ, 423):

13-րդ տողի 2-րդ կեսը բնագրի մաշվածության պատճառով Գ. Ախվերդյանը չի կարողացել վերծանել և կարդացել է միայն «էն... բուլի պես» բառերը: Օճանի ձևագրում դրանց տեղ գրված է «փարշեանգի բմբուլի պես», որ իմաստով լիովին կապվում է 1-ին կիսատողին: Մ. Հասրաթյանը Օճանի տարբերակով լրացրել է պակասավոր տողը և միաժամանակ ենթադրել, որ գոցեց հեղինակի ձևագրում եղել է «էն թովուզի բմբուլի պես»: Մենք ընդունել ենք այս վերջին տարբերակը, քանի որ բնագրում եղել է է՛ն: է՛ն քովուզի բմբուլ ասելով, երգիչը նկատի ունի խոսքովի գահի սիրամարգի փետուրները (տե՛ս 33-րդ խաղի 8-րդ տողի ծան.):

16-րդ տող. Դուն ինձնից շուտով մի քրոշի՝ շավաղան բազա իս, ագիգ:—Մ. Հասրաթյանն առաջին կիսատողը դարձրել է՝ «Դուն ինձ շուտով մի թրոցընի», ենթադրելով, որ Դավթարում մաշված թերթ է եղել և Գ. Ախվերդյանը ճիշտ չի վերծանել, քանի որ երգիչը նախորդ տողում ասում է. «Թուզ վըրետ լալով պըտուս գամ՝ վարթի, կարոտ բըլբուլի պես». ուստի չէր կարող լարը,— գրում է Մ. Հասրաթյանը,— որ հանդես է գալիս որսի բաղնի դերում, թույն փախչի բլբուլից, որովհետև հակառակը պետք է լիներ: Այս խաղը բացի երրորդ տնից, կա լենինգրադի ձևագրում, որտեղ հիշած տողը հետևյալ ձևով է. «Դուն ինձ շուտով մի փախցնի» և այլն: Հավանաբար հեղինակի ձևագրում եղել է. «Դուն ինձ շուտով մի թրոցընի, որը և ընդունեցինք, նույնպես համոզված կերպով» (ՄՀ, 246): Այստեղանայիմ մենք նախընտրում ենք Գ. Ախվերդյանի վերծանությունը, որ կատարված է անմիջապես բնագրից: Մ. Հասրաթյանը մեզ չի համոզում նաև այն պատճառով, որ երգչի երկու տարբեր տողերում կատարած համեմատությունները դիտել է միասնաբար և ընկալել մի փոքր աուարկայական ձևով: Բանաստեղծը մի ղեպքում իրեն համեմատել է բլբուլի, սիրածին՝ վարդի հետ, մյուս ղեպքում՝ սիրածին համեմատել է իրենից («բալս դժբախտ որսորդից») փախչող, թուշող բաղնի հետ:

19-րդ տողի կապակցությամբ Գ. Ախվերդյանը գրել է. «էրակլե-Սանի և Թիֆլիզեցվոց սիրեկան Սայաթ-Նովեն, փողոցի կամ հրապարակի աշուղներից չէ եղել. մեկ խրախճանք մեծարք և շնորհք չէր ունենալ, թե չէին հրավիրել իս հոգելի խաղ ասողին և քաղցր սաղ ածողին. էնդոր էլ՝ ինքն իր արժանավորությունն իմանալով, ասում է իր սիրեկանին՝ որ կանչողս՝ ա՛խ ասելով ղարդակ է գնում» (ԳԱ, 158):

20-րդ տող. Թափ դուն տիս գաս, վիր կու կենամ—Օճանի տարբերակում՝ Թե ղու գու-ֆաս կլավանամ:

86. «ԱՌԻ ՀԱՄՈՎ ՂՈՒՂՈՒՂ ԱՐԱ»

Գտնվում է Դավթարի 135 էջում:

1-ին տողի նամուլ-ը ոչ թե մեղ ծանոթ բառն է ուղղակի (բաղցր, հաճելի) կամ փոխարերական (հաշտ, համերաշխ) նշանակությամբ, այլ, ինչպես ցույց է տվել Մ. Հասրաթյանը, պարսկերեն նամ (հեմ)՝ վիշտ, հոգս, տագնապ բառն է, որ երգիչը գործածել է նաև 4-րդ խաղի մեջ («էտ փըրսանդով համ իս անում»):

2-րդ տող. շան ու շֆար—բնագրում և ամենուրեք՝ շանով շֆար: Մտածողությամբ ու կրթությամբ հայ բանաստեղծը վրացատառ հայերեն գրելիս ու ձայնավորը, որ հայերենում երկրարբառ է (դիֆտոնգ)՝ կազմված ու և տառերից, տվյալ ղեպքում տառադարձել է ռՅ (ն վ), ուստի շան ու շֆար-ը կարդացվում է շանով շֆար, որ ճիշտ չէ: Նույնպիսի տառադարձում, ինչպես տեսանք, նա կատարել է նաև «էսօր իմ յարին տեսա» խաղը գրի առնելիս (տե՛ս 12-րդ խաղի 8-րդ տողի ծան.): Շան ու շֆար-ը կարդալով շանով շֆար՝

սայաթնովագետները սխալ են բացատրել սույն տողը: Մ. Հասարթյանը մեկնաբանել է այսպես. «Ամեն մարդ չի կարող ճանկել, ձեռք բերել շահով-վարձով (?) որս (հազվագյուտը, ընտիրը)». ենթադրում ենք պարսկ. շահին շիրքար (բազեի որս,— ընտիր, հազվագյուտ բան) ոճի աղավաղվածն է» (ՄՀ, 306): Պ. Սեակել նույնպես, հետևելով Մ. Հասարթյանին, գրել է. «ամեն մարթ չի կանա ճանգի շահով շրթար»-ը (այսինքն՝ ընտիրն ու հազվագյուտը, այսինքն՝ արվեստի ճշմարիտ գործը» (ՊՍ, 326): Միևնույն ժամանակ տողում ժողովրդին ծառայող բանաստեղծը որդակիրոն են ասում է, մեծ ամեն մարդ չի կարող ճանկել, այսինքն՝ հափշտակել շահ (օգուտ, հարստություն) ու շխար (խնձ, պերճանք. շխար՝ բառի մասին տե՛ս 46-րդ խաղի 5-րդ տողի ծան.)։ Սա ըստ ամենայնի ներդաշնակում է խաղի ընդհանուր բովանդակությանը, որտեղ ժողովրդի վշտով տառապող բանաստեղծն իրեն հակադրում է շահ ու ինչը հափշտակող, «լիզի պարբիվող», «բեղասըլ» մարդկանց։

5-րդ տողի ծնծով ու խեղճն բառերը բնագրում գրված են ծիւծով և խիւճն. հավանաբար լոռվա բարբառի ազդեցությամբ է։ Ի դեպ, այս և հաջորդ երեք տողերը ստեղծված են ժողովրդական առած-ասացվածքների հիման վրա («Սեկն սապոնը, խնին խրատը ինչ կանի» և այլն)։

7-րդ տող, Բեղասըլն ասըլ չի դառնա—նույնությամբ կրկնված է 47-րդ խաղի 18-րդ տողում։

Նույն տողի սիպտակի-ն բնագրում՝ սիվտակի, ԳԱ՝ սիպտակի։

9—10-րդ տողերի մասին Ն. Աղրալյանը գրել է. «Այս գիծը հատուկ է հայ մտքին՝ Հովհան Մանդակունին մինչև իրիմյան Հայրիկ և բովանդակ հայ եկեղեցին» (ՆԱ, 145)։

11—12-րդ տողերը հմմտ. «Մի արկանէք զմարդարիտս ձեր առաջի խոզաց» (Մատթ., է, 6)։

13-րդ տող. կենաց—բնագրում՝ կենանց. ԳԱ՝ կենաց։

15-րդ տողը բնագրում բացակայում է. լրացրել է Մ. Հասարթյանը Օհանի տարբերակի հիման վրա։

37. «ԷՇԽԵՄԵՏ ՀԻՎԱՆԴԱՑԻԼ ԻՄ»

Գտնվում է Դավթարի 138 էջում։ Որպես վերնադիր գրված է առաջին տողը։

Խաղն ունի յուրահատուկ տաղաչափություն։ Առաջին տան բոլոր և մյուս տների 4-րդ տողերը 15 վանկանի են, իսկ այդ տների առաջին երեք տողերը՝ 16 վանկանի։ Երրորդ տան առաջին տողի զուգուրն բառը կարդալով զուգուն, Գ. Ախվերդյանը այդ և հաջորդ երկու տողերը դարձրել է 15 վանկանի (հաջորդ տողերի սաղաղըն և բաղըն բառերից հանելով գաղտնավանկի ը-ն)։ Այդպիսով, սակայն, նրա մոտ խախտվել է խաղի տաղաչափական սկզբունքը։

6-րդ տող. Վի կենա լողմայի նեփմըն—ինչպես 31-րդ խաղում (տող 15) այնպես էլ այստեղ երգիչը լողման անունը գրել է լողմայի։ Մենք թողնում ենք բնագրային ձևը, թեև դրանով տողում մի վանկ ավելանում է։ Օհանի տարբերակում վի կենա-ն փոխված է՝ ո՛ւր է, որով տողի ավելորդ վանկը վերանում է։ ԳԱ՝ լողմա, ՄՀ—լողման։

8-րդ տող. Զուրն էլիալ, գերանըս սաւալ. ծիլի համա իմ լալի—այս տողի հիմքում ընկած են «Իր ալբի գերանը չի տեսնում, ուրիշի ծեղն է տեսնում» և «Զուրն էկել է, նրանցը տարիլ է» ժողովրդական ասացվածքները։

13-րդ տող. մն չուրացած—բնագրում և ԳԱ՝ մեչ չուրացաց։ Հավանաբար դրել սխալ է. չուրացած բառի սկզբնատառի ազդեցությամբ մե-ն դրվել է մեչ։ Մեչ բառը երգիչը

կրքեր մեշըն ձևով, որը, սակայն, կխախտեր տողի չափը Օհանն այդ հարցը լուծել է շուրացած-ը փոխարինելով ցամաք բառով (մեշըն ցամաք) :

15-րդ տող. ծովի ծածկած վաճիքի նման—Այս կապակցությամբ Գ. Ախվերդյանը գրել է. «Արարել է, որ երգիչն ունեցել ըլի մորթումն Գեղամա ծովի Սևան կղզին»։ Գուցս և նկատի է ունեցել Վանա ծովն ու Աղթամարը։ Հմմտ. վրացերեն 5-րդ խաղ, տող 16՝ «էլ վո՛ւնց զըթնիմ ծովումըն պահածին յիս» (ՄՀ, 99) :

20-րդ տող ցիլի համա իմ լալի—ինչպես գրում է Պ. Սևակը. «Որքան էլ դաշթակղիչ լինի՝ շատ զովար է այտոեղ «ցիլ» բառը հասկանալ «ազդ (հայ ժողովուրդ)» իմաստով։ Ավելի շուտ՝ դա համանիշն է «ժառանգ», «դավակ», «հետևորդ» բառերի։ Ու եթև աչս «ցիլ»-ը չի օգտագործված փոխարեարար, ապա դրանով իսկ կարելի է ապացուցել, որ Սայաթ-Նովան երևիա շունը «Քրոնիկոնի 446-ին», որ է 1758-ը» (ՊՍ, 472—473) :

38. «ԽՄԵՑՈՒՐ ԶԵՌԻՏ ԹԱՍԵՄԵՆ»

Գտնվել է Դավթարի այժմ բացակայող տետրում։ Գ. Ախվերդյանի վկայությամբ. «Թերթն՝ որո վրա գրած էր էս խաղն՝ պատուած էր, և շատ տեղ էլ իսկի չէին ջողում բառերն» (ԳԱ, 172)։ Այս իսկ պատճառով Ախվերդյանի կողմից խաղը վերծանված է մի շարք սխալներով ու բացթողումներով, որ ուղղել և լրացրել են հետագա հետազոտողները։

2-րդ տողի տուր Բասեմեն բառերն Ախվերդյանի մոտ բացակայում են։ Տուր բառը լրացրել է Մ. Հասրաթյանը, Բասեմեն-ը՝ Գ. Լևոնյանը։

3-րդ տողի մնացի բառի փոխարեն Ախվերդյանն ունի՝... ացի։ Լրացումը կատարել է Գ. Լևոնյանը։

4-րդ տող. ջուր իմ ասի—ԳԱ՝ Բուր իմ ասի։ Ուղղումը կատարել է Մ. Հասրաթյանը։ Հաջորդ ուղղումները և լրացումները ևս Մ. Հասրաթյանին են։

10-րդ տող. զուր իմ ասի—ԳԱ՝ սու իմ ասի։

11-րդ տող. Սուր չիմ ասի, սուր չիմ ասի—ԳԱ՝ Զուր չիմ ասի, զուր չիմ ասի։

12-րդ տողում Գ. Ախվերդյանը կարդացել է միայն զու վանկը։

17-րդ տողը Գ. Ախվերդյանը կարդացել է՝ Նուր չի ասի, նու... իսկ հաջորդ տողն, առհասարակ չի վերծանել։

22-րդ տող. մուր իմ ասի—ԳԱ՝ կուր իմ ասի։

23-րդ տող. շուր—ամենուրեք հրատարակված է շուր։

24-րդ տողը Գ. Ախվերդյանը չի վերծանել։

26-րդ տող. ոսստ էկած.—ԳԱ՝ վախտ էկած։ Ուղղումն աստճարկել է Ն. Աղբալյանը (ՆԱ, 189)։

28-րդ տող. Ո՛ւր իմ ասի—նշանակում է՝ և՛ որ, որտե՞ղ ևմ ասել (հմմտ. ՆԱ, 187)։

39. «ԷՆԴՈՒՐ ԱԶԿՍ ԶԷ ՅԱՄԱՔՈՒՄ»

Գտնվում է Դավթարի 128 էջում։

2-րդ տողի դար-ը մեկնաբանվել է հնար, դեղ, ճար։ Մինչդեռ երգիչը դեղ-սպեղանին մեկում է ասում, ինչպես այս նույն տողում։ Եվ բացի այդ այստեղ դար-ը դեղ չի կարող նշանակել, քանի որ երգիչն անմիջապես հետո ասում է, թե մեկում. դեղս մնաց լարիս (սի-

բութուս) մոտո ձիշտ է միլամս հիդ յարին մնաց կիսատողը կարելի է հասկանալ ղեզս խոցի նետ, խոցի վրա մնաց (տն՝ նԱ, 150), բայց, ինչպես գրում է Գ. Ախվերդյանը. «առավել հարմար է սալ մեկնությունն՝ մհլամս (ցալիս դեղն) մնաց իմ յարի մոտ, սիրեկնիս մոտ» (ԳԱ, 85): Եվ այսպես, դար բառը այստեղ էլ ունի այն նշանակությունը, ինչ որ երգչի մյուս խաղերում, այն է՝ դժվար, ծանր վիճակ, տառապանք, նեղություն: Ըստ այսմ, սույն տողի իմաստն է՝ ույնչ (ոչ մի վերք) տառապանքով, չարչարանքով չբուժվեց. քանի որ սպեղանիս մնաց սիրութուս մոտ: Այս խաղի մեջ երգիչը դար բառը գործածել է երեք անգամ (տող 2, 12 և 20), և Մ. Հասրաբյանը այս դար-երը բացատրել է երեք տարբեր իմաստներով: Լին 2-րդ տողի դար-ը նա թարգմանել է դեղ, ճար, ապա 12-րդ տողի դար-ը մեկնարանել է վիճակ, դրություն, իսկ 20-րդ տողի դար-ը՝ կախաղան: Մինչ-դեռ այս երեք դարերն էլ միևնույն բառն են և նույն իմաստն ունեն՝ տառապանք, չար-չարանք, ծանր, դժվարին վիճակ: Հետաքաբար, վա՛յ քու դարին, դարիբ բլբլբուլ, նշանա-կում է՝ վա՛յ քո դժվար, տառապալից վիճակին, իսկ՝ Սայսր-նովեն դարին մընաց, ոչ թե նշանակում է Սայսր-նովան կախաղանին մնաց, այլ՝ Սայսր-նովան մնաց ծանր, դժվար, տառապալից վիճակի մեջ:

3-րդ տողի պտոկեցա և աչկլա բառերի միջև բնագրում դրված է անիմաստ և ավե-լորդ մի բառ՝ աչկեցա, որ ստեղծվել է այդ բառերի աղղղեցությունը:

9-րդ տող. Ալ պունպունեն ասաց խալիս—ԳԱ՝ Ալ պունպունեն ասաց՝ խալիս: Այս կետագրությամբ տողի իմաստն է՝ ալ կակաչը ասաց՝ խալիս: Մինչդեռ պետք է հաս-կանալ՝ ալ կակաչը մտածեց (որոշեց) խաբել: Ուղղումն առաջարկել է Ն. Աղբալյանը (ՆԱ, 150—51):

15-րդ տող. Շափարլն օխտն օր ին ասի՝ քու հաֆաժըն քուր բաբար է—ԳԱ՝ Շա-փարլն օխտն օրին, ասի, հաֆաժը բաբար բաբար է: Այս տողը ոչ թե նշանակում է շա-բաթվա յոթ օրին ասացի. հազածդ տեսակ-տեսակ է. այլ՝ շաբաթը յոթ օր են ասում (ինչպես ասում են՝ տարին տասներկու ամիս), այդ յոթ օրվա մեջ քո հազածը նոր տե-սակ է: Այն է՝ ամեն օր նոր շոր է հագնում: Սույն տողն այսպես վերծանելով ու բա-ցատրելով, Մ. Հասրաբյանը անհաջող է համարել խաղի այս շորորդ տունը: Նա գրում է. «Այս խաղը, բոլոր տեսակետներից, երգչի ամենաուշագրավ և նշանավոր գործերից մեկն է, բայց անհասկանալի պատճառով 4-րդ տունը ոչնչով չի առնչվում այս շատ ան-միջական գործի ամբողջականության հետ» (ՄՀ, 244): Կարելի է ենթադրել, որ խաղը Դավ-թարում գրի առնելիս երգիչը ձեռքի տակ գրավոր շորինակ շունենալով, չի հիշել շորորդ տունը և ինչ-որ խաղի մի տունը բերել, հարմարեցրել է այստեղ կամ էլ նույն պահին հորինել է մի նոր քառատող, որը տարբեր տրամադրության ու վիճակի արգասիք լինի-լով, չի մերթիվ ընդհանուր խաղին: Սրանք, անշուշտ, միայն ենթադրություններ են: Բայց մի բան պարզ է, որ երգիչը խաղը դժվարություններ է վերհիշել. այսպես, նա առաջին քա-ռատողից հետո սխալմամբ գրի է առել նախորդ խաղի («Խնձ ու իմ սիրեկան յարին») ամբողջ 4-րդ տունը, ապա ջնշել է ու գրի առել սույն խաղի երկրորդ տունը:

40. «ԵՇԽԵՄԵՏ ԱՆԴԱՆԱԿ ԼԼԱ»

Գտնվում է Դավթարի 126 էջում:

1-ին տող. էլխեսմեռ անդանակ էլա—նշանակում է՝ սիրուցդ անդանակ մորթվեցի, տանջահար եղա: Թիֆլիսահայերի մեջ տարածված է եղել «Անդանակ ինձ մորթում է» ասացվածքը:

10-րդ տողի Շահրադիւր Գ. Ախվերդյանը մեկնաբանել է. տոնալաճառէ Մ. Հասրաթ-յանի ենթադրությամբ, այն կազմված է «պարսկ. շահր—բաղաբ և դիլ—սիրտ, կենտրոն՝ շուկա բառերից»։ Այս բացատրությունը համողիչ չէ, քանի որ բնագրում շահրադիւր է և ոչ թե շահրադիլ։ Եվ ապա Լթե շահրադիւր նշանակում է քաղաքի շուկա, ինչո՞ւ պիտի երգիչը գրեր նաև բազաբ բառը, որ նույնպես շուկա է նշանակում։ Համողիչ է Ի. Միրզոյանի բացատրությունը, ըստ որի Շահրադիլի տակ թաքնված է քաղաքի անուն և այդ բառը «նշանակում է «Դելի քաղաք՝ շահր-Յ-Դել» (պարսկ. իզաֆեով միացած)։ Տողի շարիք լիսխտեւու, ինչպես նաև բարեհնչունության համար նա Դելի բառի Ի-ն սղել է։ Սալաթ-նովան իր գլոգալին համեմատում է Դելի քաղաքի ընտիր ապրանքի հետ («Մաթա՛ շահր-Օ-Դել բաղարի»)։ Երգիչը «Հնդկաստանի կենտրոն» արտահայտությունը օգտագործել է նաև 15-րդ խաղում. «Հընդու միշեմեն դուս էկած դիմեթիվ մաթահ իմ բերի» (ԻՄ, 89)։ Ուշագրավ է, որ բանաստեղծը երկու դեպքում էլ գործածել է մաթան (հաղվագչուստ ապրանք) բառը։ Հմմտ. նաև՝ «Հընդու էկած ղալամբար իս», «Հընդու դիարեմեն էկած ղար-ղալամբար իս, դովիլի», «Հընդու միշեմեն դուս էկած վարաբուրբս՝ ղալամբարով», «Հըն-դու քաղաքեմեն հանած ջալահիր, լալ արմանալու»։ Եթե ընդունում ենք, որ Սալաթ-նովան Նադիր-Շահի սուլթանների ժամանակ եղել է Հնդկաստանում, ապա ավելի համոզիչ է դառնում Շահրադիլ բառի փաղափ-Դելի բացատրությունը Ի դեպ, շահր բառը քաղաք իմաստով գործածվում է նաև հնդկերենում («Хинди-русский словарь», М., 1959, стр. 1068)։ Շահրադիլ բառը գործածված է նաև ադրբեջաներեն խաղերից մեկում (Դավթար, էջ 12, ՄՀ, 188)։ Այդ խաղում Շամ (Դամասկոս) քաղաքն էլ երգիչը գրել է Շամ չրիար ձևով։ Շահրադիլի բառարարդման սկզբունքով են կազմված նաև արևելյան մի քանի այլ քաղաքների անուններ (Շահրիսաբադ, Շահրադուլ և այլն)։

20-րդ տող. Խարաբանդով շարա-շարդախ, փոչկ ու ամարաբըն դուն իս։—Բնագրում և ԳԱ՝ շարա ու շարդախ։—Տողի ութմի խախտումը վերացնելու համար Ն. Աղրալյանն առաջարկել է ու շաղկապը տեղափոխել փոչկ ու ամարաբ բառերի միջև (ՆԱ, 156)։ Այդպես են վարվել նաև Գ. Լեոնյանը և Մ. Հասրաթյանը։

41. «ՅԱՐ, ՔԻՉ ԻՍԿԻ ԶԱՎԱԼ ՉԼԻ»

Գտնվում է Դավթարի 125 էջում։

4-րդ տող. Լուսնի ասղ—Գ. Ախվերդյանը շղատառերով տպագրել է՝ լուսնի աստղ։ Գ. Լեոնյանն ափելորդ վանկը վերացնելու համար առաջարկել է կարդալ լուս աստղ։ ՄՀ՝ Լուսն-աստղ։ Գրություն ճիշտ ձևն է Լուսաստղ (Արուսյակ, Վինեբա). սակայն մենք նախընտրեցինք բնագրի տարբերակը։ Հմմտ. խաղ 47, տող 6։

6-րդ տողի յարսուն կարմունք-ը ըստ Մ. Հասրաթյանի «անհասկանալի է. բայց, անշուշտ, աննպատակ չի գրված։ Սովորաբար երեսուն թիվը հաճախ է գործածում Սալաթ-նովան։ Առանձին անհատներ, երբեմն իրենց սիրած, միայն իրենց հատուկ թիվն են ունենում շատ, բաղմաթիվի զաղափարն արտահայտելու համար։ Այդպիսի մի «սեփական» թիվ չէ՞ և այս յարսուն, յարսունները։ № 22 (ս) խաղում, գրված 1754 թ., ասում է—«Իդրարեմետ շուտ անցկացար՝ ո՞ւր է յարսուն տարին»։ Այս բոլորը, սակայն, ավելի շուտ մեզ տանում են դեպի այն ենթադրությունը, որ այդ «յարսունները» կապ չունեն տարիքի հետ, այլ կարծես նրա սիրածը մի զրույցի մեջ ասել է, թե 30 տարի էլ անցնի, անդամաճան կսիրի, բայց շատ չանցած, դրժում է այդ իղարարը։ Այստեղ

ևս այդ «յարսուն կարմունքներն» արդյոք չե՞ն արտահայտում այդ երեսուն տարիները» (ՄՀ, 246): Սայաթ-նովայի խաղերի քննությունը մեզ բերել է այն համոզման, որ բանաստեղծը և նրա սիրած կինը՝ արքայաքույր Աննան փոխադարձ սիրով կապված են եղել և երիտասարդ հասակում կնքել են սիրո և հավատարմության դաշնադրություն: Նրանք իղրաւ—խոստում են արել սանձել իրենց զգացմունքը մինչև առավել հասուն տարիքը, իսկելի կոնկրետ՝ մինչև իրենց երեսուն տարին (նրանք հասակակիցներ էին): Այդ երեսունն, անշուշտ, քմահաճ թիվ չի եղել, այլ կապված է եղել ինչ-որ պատկերացում—հավատալիքների հետ: Ուշագրավ է, որ երգիչն իր արվեստին տիրապետելու, իր հասունության սահմանը ևս համարել է հրեասուն տարին: Երգչի հայրենի խաղերում հիշատակված բոլոր յարսուն—յարսսունները կենսագրական հիմք ունեն և կապվում են երգչի և սիրուհու իղրաւ—խոստումին: Միայն սույն տողի յարսունն է, որ մեր կարծիքով, ուղղակի կապ չունի բանաստեղծի կենսագրական երեսունի հետ, այլ նույն պատկերացում—հավատալիքներից բխող միատիպական թիվ է: Սայաթ-նովայի մոտ այն չի կարող արտահայտել շատի, բավաժանի զաղափար, քանի որ այդ զաղափարը այս խաղի մեջ արտահայտված է լորսանսուն թվով:

7-րդ տողի սալիդ սաղախը Գ. Ավվերդյանը ներկայացրել է շղագիր: Գ. Լևոնյանը անհասկանալի համարված սալիդ-ը թարգմանել է կրծող, ծակող, խոցող, իսկ սաղախը՝ կապարճ, նետ (ԳԼ, 169): Ըստ Ռ. Աբրահամյանի սալիդ նշանակում է տերևներ, իսկ սալիդ սաղախ՝ տերև և կապարճ (ՌԱ, 185): Ավելի հավանական է թվում Մ. Հասրաթյանի բացատրությունը, ըստ որի սալիդը պարսկերեն սալիհ—ղենք բառն է: Ըստ այդմ սույն տողը նշանակում է ուներեղ զենք ու կապարճ, թարթիչները նետեր են: Գուցե և՛ ուներեղ տերևսձև կապարճ, թարթիչները նետեր են:

10-րդ տող. տուլի—բնագրում և ԳԱ՝ տուլի: Հանգավորման պահանջով Գ. Լևոնյանն առաջարկել է տուլ-ը դարձնել տուլ, սակայն չի կարողացել գտնել այդ բառի ճիշտ իմաստը: Մ. Հասրաթյանի բացատրությամբ տուլ նշանակում է շղարշ (տլու):

11-րդ տող. վրովրոսում իս—ԳԱ՝ վառվրոսում իս: Օցի բերնի հուլի-ի մասին Գ. Ավվերդյանը գրել է. «էս երկրի բնակիչներու ավանդութենով՝ օձերու թագավորն զլիսին թագի պես՝ կամ բերանում պահած ունի մեկ փոքր խնձորի շափ ավաստ քարի նման լուսափայլ ակն (հուլ), որն որ աստղի կամ արեգակի նման ճառագայթում է: Պատմում են՝ թի էս օձն պարզ գիշերին դուս է գալի տափ տեղն, և էն անգին քարն բարձր վեր ու վեր գցելով, և կրկին բերանով բռնելով զվաբճացնում է ինքն իրան ևս խաղալումն» (ԳԱ, 152): Գ. Ավվերդյանը մեջ է բերել աշուղ Լազաթ-Օղլանի հետևյալ տողը. «Պատկերքդ կրակ է տալիս՝ հենց դիզում իմ օցի հուլ իս»:

13-րդ տող. Բառովոլիին բառով չիս տա—բնագրում և ԳԱ՝ բառովին բառով չիս տա: Պակաս վանկը լրացնելու համար ն. Աղբալյանն առաջարկել է բառովին-ը դարձնել բառովոլին կամ տա-ն դարձնել տալիս: Մենք նախընտրեցինք առաջինը: ՄՀ՝ բառովին բառով չիս տա:

17-րդ տողը նույնությամբ կոնկրետ է 19-րդ խաղի նույն տողում:

19—20-րդ տողեր. Իրեխ քսան ու տասըն խալըն էրեսիտ բոլորքն շառ ա, Վունցոր Սալաթ-նովու լիզուն յաթանասուն բառ բացառած:

«Առաջին երեք թվերը,— գրում է Մ. Հասրաթյանը,— մենք հասկանում ենք ոչ թե 70՝ խալ, որ անհնարին և անճաշակ բան է, այլ՝ զիժ-գծվեցնող խալեր (Գ—3, Ի—20, և Ժ—10)». այնպես, ինչպես Սայաթ-նովայի լեզվի բազմաթիվ (չթանասուն) բառերը, որոնք նույնպես խենթացնող են իրենց գեղեցկությամբ» (ՄՀ, 246): Մ. Հասրաթյանի այս բացատրու-

թյունն անհամոզիչ է: Իրեր քսան և տաս թիվը ոչ թե դիմ-գովեցնող բառի ծածկագրութ-
յունն է, այլ 70 թվի վրացական ձևը՝ սամօցղաաթի—երեքսանևտաս: Դա երևում է նաև
հաջորդ տողից, որտեղ երգիչը սիրուհու յոթանասուն (բաղմաթիվ) խալը համեմատում է
իր յոթանասուն (բաղմաթիվ) բառերի հետ: Բացի այդ «համեմատների համեմատ» Սայաթ-
Նովան իր բառերը չէր համարի «խենթացնող զեղեցիկություն»: Սրանով էլ հերքվում է
Իրեմ Բաբե և աաս-ի «դիմ-գովեցնող» բացատրությունը: Բերված տողերի մեջ յոթանա-
սունը արտահայտում է շատի, բաղմաթիվի գաղափար: Ուստի յոթանասուն խալը չպետք
է բառացի հասկանալ և համարել անձաշակ: Արեւելցու ճաշակով խալերը առավել զեղեց-
կացնում են կանացի դեմքը:

42. «ԻՆՁ ՈՒ ԻՄ ՍԻՐԵԿԱՆ ՅԱՐԻՆ»

Գտնվում է Դավթարի 127 էջում:

1-ին տող. Ինձ ու իմ սիրեկան յարին մե տարի բերած գիղեմաֆ—*Ինչպես նկատել*
է Պ. Սեակը այս տողն ունի կենսագրական արժեք: «Եթե տողն իրեն փոխարենովյուն
ընկալելուց վերանանք,— գրում է նա,— ապա դրա իմաստը պիտի հասկանանք ոչ այլ
կերպ, քան պարզապես՝ «Իմացեք, որ ես ու իմ սիրեկան յարը ծնվել ենք միևնույն տա-
րեթվին» (ՊՍ, 37), եվ իսկապես, վկայակոչելով Գ. Լեոնիձեի «Բեսիկի» աշխատության
43-րդ էջը, Պ. Սեակը ցույց է տվել, որ Սայաթ-Նովայի «սիրեկան յարը»՝ արքայաքույր
Աննա Բատոնիշվիլին ծնվել է 1722 թվականին:

2-րդ տող. Ախ—բնագրում Աղխ, ԳԱ՝ Ախ:

5-րդ տող. Սիրտը փութումըս քուլացամ—*Թիֆլիսահայերի մեջ տարածված է եղել*
որպես ստացվածք:

8-րդ տողի կերած բառը Գ. Լեոնյանն առաջարկել է կարդալ կորած: Սակայն, կե-
րածը թիֆլիսահայ բարբառում նշանակում է մաշված և այդ իմաստով ասվել է համա-
պատասխանում սույն տողին: Բացի այդ կերած բառը առավել ներդաշնակ է ճիղֆերած,
չխեռած հանգակալմ բառերին: Ժողովրդի մեջ էլ ասվել է՝ «օրը կերած մարթ է», այսինքն՝
ծերացած, հոգնած, իր դարն ապրած մարդ է:

9-րդ տողի մար-ը Գ. Ախվերդյանն ընդգծել է, որպես անհասկանալի բառ: Թու-
մանյանը ելնելով Գ. Ախվերդյանի կողմից հաջորդ տողերի վրա և դար հանգակիր բա-
ռերի սխալ ընթերցումից (փառդ, դառդ), առաջարկել է մար-ը կարդալ մարդ, որ ընդու-
նելի չէ: Ընդհանուր բնագրի մար ձևն է, որը ոչ թե ասորերեն մար՝ տեր բառն է, ինչպես
ենթադրել է Մ. Հասրաթյանը, այլ հայերեն մարել բառի արմատը (մար-մարումն), որ
հարցականով ենթադրել է նույն Մ. Հասրաթյանը: Տողի երած, խորված բառերը նույնպես
խոսում են մար-ի մարել, հանգչել բացատրության օգտին: Տողի իմաստն է՝ այլոված,
կրակված ման եմ գալիս. մի տեղ չկա, ուր կարող է մարել, հանգչել այրող հուրը...

10-րդ տողի վար բառը բնագրում և ԳԱ՝ վարդ: Հաջորդ և նախորդ մար և դար
հանգակիր բառերը թևալարում են, որ պետք է կարդալ վար (դ-ն գրչի սխալ է), Փա-
(պարսեկ. ֆեր) բառը, որ նշանակում է շողշողուն, փայլուն, ճոխ, երգչի բառապաշարից
է (տե՛ս խաղ 24, տող 18. «արևգալի դեմըն փար խս»): Սույն տողի իմաստն է՝ լիզվով շնմ
կարողանա ասել, թևկուզ փայլուն խոսել իմանամ:

11-րդ տող. դար—ԳԱ՝ դարդ:

14-րդ տողի կապակցութեամբ Գ. Ախվերդյանը գրել է. «էս երկրի բնակիչներու կարծիքով ամպիրն իջնում են ծովը, էն տեղ ջուրն ծծած՝ բարձրանում, և իրանցմէն ջուրն բաց թողնելով անձրև են բերում» (ԳՄ, 83):

43. «ԱՋԱԲ ԲՈՒ ՍԻՐՏՆ Ո՛Վ ԾԻՆԻՑ»

Դտնվել է Դավթարի այժմ բացակայող տետրում: Գ. Ախվերդյանը գրել է, թե «էս թերթի մէկ կողմն գլում էր» և կարողացել է կարգաւ խաղի վերջին տան միայն հետեւյալ բառերը.

Անց կացաւ աշու.... խաղաւ է ուզում
Հասաւ զարունքվան հոսանքն բըլ....
Սայաթ-նովին առանց նրեցիր ճիտըն գ...
... կորցըրած խոնթկարի պես նստա....

Այս խաղի մեկ ալ տարբերակ կա Օհանի ձեռագրում (էջ 68), որտեղ բացակայու է 3-րդ տան փոխարեն գրի է առնված այս վերջին տան հետեւյալ տարբերակը.

Հասաւ զարունքվան վախտըն, բլբուլներն գալ է ուզում,
Կարմիր ու գուլգաղ ա հարի, սարվիքն խաղաւ է ուզում,
Սայաթ-նովին առանց (ն)նգիր վիզն գցած լալ է ուզում,
Ջար կորցըրած խոնթկարի պես նստած ա խաղնից բեղամաղ:

Երկրորդ տողի սարվիքն բառը Գ. Ասատուրը կարդացել է սարիակն: Սակայն սարյակը, ինչպես գրում է Մ. Հասարթյանը. «Կարմիր ու գուլգաղ չի կարող հագնել, ինչպես նաև այդ գույները չեն կարող հագնել մշտադալար նոճիկները (սարվիքը), որից երևում է, որ երգչի որդին ես սխալ է կարդացել կամ հիշել բնագիրը» (ՄՀ, 247): Մ. Հասարթյանն այնուամենայնիվ հարցականով թողել է սարվիքն բառը: Մինչդեռ երգիչը գործածել է սալթի ձևը: Ինչ վերաբերում է «կարմիր ու գուլգաղ ա հարի» կիսատողին, ապա այն երգչի որդին շփոթել է «Բարապուր իս» խաղի 6-րդ տողի հետ («Կանանչ փոթուրն բացվիլ է՝ կարմիր ու գուլգաղ ըլիլով»):

Գ. Ախվերդյանը, իր իսկ վկայութեամբ, ձեռքի տակ է ունեցել այս խաղի վեց օրինակ: Նրա կազմած ժողովածուի ձեռագրերի մեջ մենք գտանք այս խաղի վերջին տան երկու տարբերակ, որ ավելորդ չենք համարում մեզ բերել.

Եկավ գաւնտան վախտիրն, սալթիներն խաղաւ ին ուզում,
Մեր բաղումն վարդն բաց էլած բլբուլներն գալ ին ուզում,
Բեշարա Սայաթ-նովին ճիտն գցած լալ է ուզում.
Ճարն կտրած խոնդկարի պես սարիթի վազմեն բեղամաղ:

Անցկացաւ աշունքվան հովն, սալթիքն խաղաւ է ուզում,
Հասաւ զարունքվան հոսանքն բլբուլներն գալ է ուզում,
Սայաթ-նովին առանց նեցիր ճիտն գցած լալ է ուզում.
Ջառ կորցըրած խոնթարի պես նստած է խաղնից բեղամաղ:

(Գ. Ախվ. արխիվ, Ն՝ 1—1-ին, թերթ 124—125):

1-ին տողի խոնարհից բառը Մ. Հասարթյանի կարծիքով խոնարհի բայի անցյալ կա-
տարյանն է՝ փուլ եկավ, կոտորվեց իմաստով, իսկ նիզնիդ-ը պարսկերեն նիզան (պահանջ,
հենակ) բառն է։ Ըստ այդմ տողի իմաստն է՝ արդյոք քո սիրտը ո՞վ էր շինել, որ փուլ
եկավ, կոտորվեց՝ հենակից դժգոհ (ՄՀ, 296)։ Այս բացատրությունը մեզ չի համոզում։
Մեր կարծիքով, այստեղ խոնար (խոնարհ) և հիզ (հեզ) բառերն են, ինչպես և բացատրել
է Գ. Ախվերդյանը։ Տողի իմաստն է՝ արդյոք ո՞վ շինեց, ինչի՞ց է շինված քո սիրտը, որ
դժգոհ է մնում, նեղանում, վիրավորվում է խոնարհից ու հեզից (խոնարհ և հեզ մար-
դուց. նկատի ունի իրեն, հմմտ. տող 3)։

8-րդ տողի միզնից բառը, ինչպես ցույց է տվել Գ. Լևոնյանը, ոչ թե 3-րդ տողի միզ-
նից (մեղանից) հանգակիր բառի կրկնությունն է, այլ՝ պարսկերեն միզան—կշեռք բառի
բացատրական հոլովածինը։

16-րդ տող. վուսնուրբի նիզնից—ԳԱ՝ վուսնուրբին գեներից։ Բնագրում, ըստ երե-
վույթին, եղել է վուսնուրբինգեներից և Գ. Ախվերդյանը նիզնից բառի առաջին ե-ն կցելով
վուսնուրբի բառին, գեից-ը կարդացել է գեներից։ Սակայն այդպիսով խախտվել է ընդ-
հանուր հանդը (—գեից բեղամաղ)։ Օհանի օրինակում՝ նիզնից բեղամաղ, որի հիման
վրա ուղղել է Մ. Հասարթյանը։

18-րդ տողի հուսանըն ըստ Գ. Ախվերդյանի՝ հուսանք բառի բարբառային ձևն է։
Ըստ Մ. Հասարթյանի, հուսանը պետք է կարդալ հուսուն՝ արաբերեն հյուսներ (հրաշա-
լիք, սրանշիլիք) բառից (ՄՀ—247)։ Մեր կարծիքով զարնան հուսանըն. պետք է հաս-
կանալ ձևաւ, զարնանային գետերի, անձրենների հոսանք իմաստով։

20-րդ տող. ջառ-ամենուրեք՝ ջառ։ Մեր կարծիքով, սա ջառ (զորաշար-շքախումբ)
բառն է, որ գործածված է նաև 41-րդ խաղի 16-րդ տողում։ Ջառ ձևն ունի նաև Գ. Ախ-
վերդյանի ձևերի տակ եղած վերոբերյալ երկրորդ տարբերակը։

44. «ԲԵԳԱՍԼԻՆ ՎՈՒՐ ԽՈՍԵՑՆԻՍ»

Գտնվում է Դավթարի 136 էջում։

1-ին տող. լալ անիլ—Գ. Ախվերդյանը բացատրել է լաց բլիլ։ Սակայն այստեղ, ինչ-
պես գրում է Մ. Հասարթյանը, «ալիլի համապատասխանում է լոնցնել, մունջ (լալ) անել
իմաստը. այսինքն՝ բեղաւ մարդուն խոսեցնելուց հետո լոնցնելը դժվար է, օգուտ չի
ունենա» (ՄՀ, 247)։

3-րդ տող. գալ անիլըն—ըստ Գ. Ախվերդյանի, նշանակում է. «մեռելու վրա գալն»
(ԳԱ, 144)։ Մ. Հասարթյանը մեկնաբանել է՝ սուգ, ողբ անել (արար.—գալ բառից, ՄՀ,
282)։ Ալիլի հավանական է Գ. Ախվերդյանի բացատրությունը։ Դավթարում գալ անիլը
բառերից հետո գրված է՝ էլ, որը սողը ծանրացնելուց զատ խախտում է հանգը. Գ. Ախ-
վերդյանի և մյուսների մոտ բացակայում է։

7-րդ տող. ասրլաղեմեն—բնագրում և ամենուրեք՝ ասրլաղեմեն։ Ուղղումն առու-
շարկել է Ի. Միրզոյանը, գտնելով, որ այստեղ ասրլաղա պարսկերեն բառն է, որ նշա-
նակում է «ազնիվ ծագում ունեցող, ազնվացեղ» (Муллер, էջ 28)։ Տողը նշանակում է
«թեկույզ ոսկեհուռ շորեր հագցնես, որ մարդ ի ծնե րարեկիրթ չլինի, ազնվազարմ չլինի,
ինչ օգուտ» (ԻՄ, 89)։ Գ. Ախվերդյանը թողնելով ասրլաղա ձևը, տվել է նրա ճիշտ
թարգմանությունը (բաշատոհմիկ)։

9-րդ տող. հրիշտակներու—բնագրում՝ հրտակներու, ԳԱ՝ հրիշտակներու։

10-րդ տող. իմաստուններն էլ չըտեսան—բնագրում, ԳԱ, ՄՀ՝ իմաստուններն չըտեսան: Լրացրել ենք Օհանի տարբերակի միջոցով:

11-րդ տող. Չուս գլխանի ուշ—եթև սա երգիչը ժողովրդական հեքիաթներից չի վերցրել, այսպե՛ս հնարավոր է, որ դրանով, պատկերավոր ձևով, արտահայտած լինի ժամանակի գաղափարը, այսինքն՝ տարիներն իրենց օրինաչափ կրկնվող շոքս եղանակներով» (ՄՀ, 248):

17-րդ տող. Շուտ էրիտ շարխը փալազը, դավաքը միգնից խոսվ ա—տողի իմաստըն է՝ երկինքը (փալազը) շուտ տվեց (էրիտ) իր անխը (շարխը), հարստությունը մեզանից խոսվ է: Բնագրում և ԳԱ՝ շարխ ու փալազն: Մ. Հասարթյանը դարձրել է շարխի-փալազը: Սակայն այս տողում ենթական ոչ թե շարխի փալազն է, այլ միայն փալազը, որ շուտ տվեց իր անխը (շարխը): Ուրիշ բան, եթե բայը լինեք շուտ էկավ (ինչպես Օհանի տարբերակում է), բայց քանի որ երգիչը գրել է շուտ էրիտ (շուտ տվեց, շրջեց) ներդրողական սեռով, ապա շարխը դառնում է ուղիղ խնդիր և պետք է գրվի շարխը ձևով: Տողն այսպես է հասկացել ն. Աղբալյանը (նԱ, 193):

19-րդ տող. Յարովլտ մեկ—Բնագրում և ԳԱ՝ յարովալ մեկ: Սա ոչ թե յարտ՝ խոցավոր, վիրավոր բառն է, ինչպես բացատրել է Գ. Ախվերդյանը, այլ յարա՝ խոց, վերք բառի գործիական հոլովածը, ա(դ) ստացական հոդով: Յարովլտ մեկ նշանակում է խոցովդ մեկ, խոցիդ չափով, համապատասխան: ՄՀ՝ Յարովլտ մեկ:

45. «ՊԱՏԿԻՐՔՏ ՂԱԼԱՄՈՎ ՔԱՇԱԾ»

Գտնվում է Դավթարի 129 կշում:

2-րդ տող. Էրեսիտ խալըն ծածկում է—բնագրում՝ Էրեսիտ խալըն ծածկում է: Վրացերենում ք տառը չլինելու պատճառով, երգիչը, ինչպես բոլոր դեպքերում, այստեղ էլ Էրեսիտ բառը գրել է Էրեսիտ ձևով: Գ. Ախվերդյանը և մյուսները կարդալով Էրեսիտ, սխալ են վերծանել տողը: Ոչ թե Էրեսիդ խալը ծածկվում է, մաղերդ արձակում ես, այլ՝ խալը (խալերը) ծածկում է երեսը, մաղերդ արձակում ես: Էրեսի, խալերի ու մաղերի նմանօրինակ պատկերները երգչի մոտ, մեր կարծիքով, սուֆիական պոեզիայի ազդեցության արդյունք են: Հմմտ. խաղ 41, տող 19. Ֆրեբ քսան ու տասըն խալըն էրեսիտ բոլորըն շար առ:

3-րդ տող. շանգ շովսի-շաբանգ իս անում—Առաջին երեք բառերը չկարողանալով բացատրել, Գ. Ախվերդյանը ներկայացրել է շղատառ: Գ. Լևոնյանը նույնպես չգտնելով դրանց իմաստը, խաղի մի ժողովրդականացված տարբերակի հիման վրա առաջարկել է այդ բառերի փոխարեն դնել շամ շրաղը բանգ իս անում: Մ. Հասարթյանի համոզիչ բացատրությամբ շանգ շովսի-շաբանգ անել նշանակում է գեղեցիկ (շանգ, շենկ) կերպով զվարճանալ (շովսի), դալայել (շաբանգ անել):

12-րդ տող. Ի՞նչ կոնիս—ՄՀ՝ Ի՞նչ կոնիս:

16-րդ տող. Աշխարհըն ծով, դուն մեչն ո՞վ» ասացվածքը: Եղև «Աշխարհը ծով, դուն մեչն ո՞վ» ասացվածքը:

18-րդ տող. Նավափար, ծաղիկ ծովային—բնագրում՝ Նովափարծիկ ծվային: Գ. Ախվերդյանն այս բառերը չի վերծանել և դրանց տեղը բաց է թողել: Վերծանությունը կատարել է Մ. Հասարթյանը:

Նույն տողի ճովին բառը բնագրում և ԳԱ՝ ծովին: Ըստ երևույթին, ծաղիկ ծովային բառերի ազդեցությամբ ճովին-ը սխալմամբ գրվել է ծովին: Հմմտ. խաղ 28, տող 17. «Մանուշակ բաց արած հովին»: Ուղղումը կատարել է Մ. Հասարթյանը:

46. «ԱՇԽԱՐՍ ՄԵ ՓԱՆՋԱՐԱ Է»

Գտնվում է Դավթարի 133 էջում:

1-ին տող. Աշխարհս մե փանջարա է—այս ասացվածքը տարածված է եղել ժողովրդի մեջ: Հմմտ. «Աշխարհքը մե փենջարա յի» («Քյոտ-Օղլի, ժողովրդական վիպասանություն» Երևան, 1941, էջ 37): Նույն տողի քաղ բառը մեկնաբանված է՝ կամար՝ թաղակապ պատուհան: Ըստ Գ. Ախվերդյանի «Երգիչն զանգառովում է էս աշխարհից՝ որն որ ինքն իրո մե պատուհան դուռով, ունի բազմատեսակ կյանքի եղանակներ, ձևեր (թաղեր)» (ԳԱ, 137): Ավելի համոզիչ է Ի. Միրզոյանի մեկնաբանությունը, ըստ որի «թաղը» այստեղ կամար իմաստով չէ, այլ «պատուհան» (պոսկ). քաղն-պատուհան, Միլեր—էջ 332: Տողը նշանակում է «Աշխարհս մի պատուհան է, և ինքը այդ պատուհաններից (աշխարհից, աշխարհներից) հոգնել է (կյանքից արդեն ձանձրացել է): Ի. Միրզոյանը նկատել է, որ Երգիչը այս տան յուրաքանչյուր տողի, ինչպես և մյուս տների շորրորդ տողերի երկրորդ հատածները սկսել է նախորդ բառի նույնանիշով կամ հականիշով. «փանջարա-թաղ (պատուհան), խուց-ղաղ (խոց), դուռ-ուղա, դուռման-լաղի (դուռման)» (ԻՄ, 91): Այս բառերի հոգնակի բացառականը երգիչը կազմել է բարբառին ոչ հատուկ ձևով (խաղի բնույթի-ի փոխարեն խաղերումն):

5-րդ տողը երգիչը ցանկացել է գրել «Աշխարս մե էրաղի պես իմաստնասիրաց...» ապա ջնջել և գրել է «Դովլաթն էյթիբար շունհ...» հայտնի տողը: Այս տողի իր շրջառով-ը Գ. Ախվերդյանը չկարողանալով մեկնաբանել, գրել է շղատառ: Մ. Հասարթյանը հենվելով Օհանի տարբերակի վրա, (ուր շխառով), այդ բառը դարձրել է ուրուշ-խառով: Սակայն Օհանի մոտ ուր շխառ-ը վրացերեն տառադարձված յուր շխառն է, որ իմաստով համարժեք է Դավթարի իր շխառին: Շխառը բացատրված է որս կամ հազվագյուտ ընտիր բան: Սակայն պարսկերեն այդ բառը ունեցել է նաև դարդ, դարդարանք, ինչք իմաստը և այդ նշանակությամբ էլ գոծածված է միջնադարյան բնարևդություն մեջ: Այսպես, Կոստանդին Երզնկացին իր սաղներից մեկում ասում է.

Այն որ հագնէր ինք հանդերձ ոսկեկար,

Շարած յիր վերայ էր մարգարտով շրբար

(Կոստանդին Երզնկացի, Տաղեր, 1962, էջ 211, 289):

Այս իմաստով էլ բառն օգտագործել է Սայաթ-Նովան: Ուստի սույն տողը պետք է բացատրել այսպես. հարստությունը (դովլաթը) արժեք, վստահություն (էյթիբար) շունի, քանի որ (յիփուր) անցնում է իր դարդ ու պերճանքով (իւր շխառով) և լավ մարդը նա է, շարունակում է երգիչը, որ ապրում է արժանապատվությամբ, քանի որ անցողիկ է կյանքը, ինչքան էլ նստենք խնջույքի (զոդ ու սափին):

11-րդ տող. խալիխ սուտըն—բնագրում՝ խալի սուտն: Գ. Ախվերդյանի վկայությամբ «էս խաղի մե քանի օրինակներումն գրած էր խալի, ևս խաղ ասողներն երգելիս ասում են խալի սուտն (սուտ, շինած սևանիչն)» (ԳԱ, 138): Քիֆլիսեցիների շրջանում տարածված է եղել «Դուրթը ճանիպ չէ գնում, շունքի շատացիլ է խալիխ սուտը» ասացվածքը (Աղեհ-

աւնդրյան, էջ 130): Դժվար է ասել Սայաթ-Նովայի այս խաղի՞ց է անցել ժողովրդին, թե՞ հակառակը:

17-րդ տողի նաւրն բառը Գ. Ախվերդյանը դրել է շղատառ և ենթադրել, որ դա վրաց այբուբենի Ճ (ճառ) տառն է՝ 5000 թվային արժեքով: Ըստ Հ. Թումանյանի դա նաւ-դենդ բառն է, որը քիչ է հաւանական: Գ. Լեոնյանը թարգմանել է ծորան, մշտահոս: Ըստ Ռ. Աբրահամյանի դա թերևս վրացերեն նաւի բառն է՝ վտակ իմաստով: Մեզ հաժմանա-կան է թվում վերջին բացատրութիւնը:

47. «ԱԶԿ ՈՒ ՈՒՆՔՏ ՎԵՐ ԻՍ ԹՈՂԻ»

Գտնվում է Օհանի ձեռագրի 68ա էջում: Հրապարակել է Գ. Ասատուրը «Ազգագրական հանդեսում» (գիրք 10, էջ 102): Խաղի շորորոդ տունը Օհանը լավ չի հիշել և գրեթե նույնությամբ կրկնել է «էսօր իմ յարին տնսա» մոխամմազի 3-րդ տան հետևյալ տո-զիրը.

Պողեմիս միդր է կաթում, թուչիս՝ յախտ թաց կուլի.

Գարնան շնչի ծաղկի նման, կարմիր վարթրտ բաց կուլի.

Ի՞նչ օրուս է քու բաղմընչուն՝ դարիբ բլրույն լաց կուլի:

1-ին տող. Հումմըտ մի ոռս ցարի բաբաբ (հրամանդ մի ոռս ցարի նման)—Օհանի մոտ՝ հումմըր մե ոռս շարի բաբաբ: Գ. Ասատուրը կարդացել է՝ հեֆիմըր աննարի բա-բաբ: Ճիշտ վերծանութիւնը պատկանում է Մ. Հասրաթյանին, որի հետևությամբ մենք ևս շար (ցար—|ուրբ.—պարսկ. արտասանությամբ) բառը տարբերելու համար 2-րդ տողի շար-ից դրել ենք ալվիի հասկանալի ցար ձևով: Հատկանշական է, որ վրացերեն խաղերից չեկում է իրգիչը դիմելով իր «սով ծամավոր» յարին, գրեթե նույնն է ասել՝ «Ա՛յ դու ոռսս թաբլուրի պես զորավոր» (ՄՀ, 124, «Վրացական երգեր» էջ 72):

6-րդ տող. Լուսնի ասդ—Օհանի մոտ Զոհրա աստղ (Լուսաստղ, Վեներա): Այս բա-ռը, ինչպես նկատել է Մ. Հասրաթյանը. «մի վանկ է ավիացնում տողում. շատ հաժմա-կան է, որ երգչի լուսնաստղ բառը որդին դարձրել է արար. Զոհրա (աստղ)» (ՄՀ. 249): Մենք ևս գերադասեցինք փոխարինել Զոհրա աստղը, բայց ոչ թե Լուսնաստղով, այլ՝ երգչի գործածած Լուսնի ասղով (հմմտ. խաղ 41, տող 4):

12-րդ տող. Փահրադ-Շիրենի—ամենուրեք՝ Փահրադ-Շիրին: Տողի իմաստն է՝ խառ-նակիչին (անգալին) աստված սպանել, ինչպես Փահրադ-Շիրինի պառավ վհուկին (ղարի):

20-րդ տողի բլլու Բամաղարը (հուսկավոր նետածիգ) Մ. Հասրաթյանի ենթադրու-թյամբ, պետք է լինի—Շահ-Նամե դյուցազնավիպի հերոս Բահրամ Գուրը:

48. «ԿԻՍԱՄՈՒՐԱԶ ՄԻ ՍՊԱՆԻ»

Գտնվում է Օհանի ձեռագրի 62 ա էջում: Այս խաղը ևս հրապարակել է Գ. Ասատուրը: Վերջինս խաղը վերծանել է թերութիւններով, որոնք ուղղված են Մ. Հասրաթյանի կողմից:

1-ին տող. Կիսամուրազ մի սրպանի—Գ. Ասատուր՝ է՛յ քեմուրազ, մի սրպանի:

2-րդ տող. աբիւր—Օհանի մոտ՝ ապիւր: Գ. Ասատուր՝ աբիւր ասիւր բառը,—գրում է Մ. Հասրաթյանը,—աբիւր դարձնելու համաձայն ենք և մենք, եթե, իհարկե,

երգիչը այդ երկու բառերով շի ցանկանում ասել՝ «որովհետեւ դու ասացիր՝ քեզ սիրում եմ» (ՄԶ, 248)։

13-րդ տող. Կրակեն ավել—Գ. Ասատուր՝ Կրակն ավելի։

14-րդ տող. Չալմախ էլ ունիս դու, ղալ էլ —Գ. Ասատուր՝ Չալմախ ունիս դուն ցալելի։

15-րդ տող. Աշխարումս փղնից ավել—Գ. Ասատուր՝ Աշխարում փղնից ավելի։

20-րդ տող. Իզրարս էտ էր—Գ. Ասատուր՝ Իզրարը գրբար։

49. «ՀՆԴՈՒ ՔԱՂԱՔԵՄԵՆ ՀԱՆԱԾ»

Գտնվում է Օհանի ձեռագրի 65 էջում։ Խաղի վերջում Օհանը գրել է. «էսպես մուլամ-մազ», մինչդեռ խաղը զագալի—զաղել է։ Օհանը հիշել է խաղի բոլոր հինգ տները, բայց որոշ տողեր ու բառեր շփոթել է։ Այս խաղը ևս հրապարակել է Գ. Ասատուրը։

Ինչպես այս, այնպես էլ մյուս խաղերը գրի առնելիս, Օհանը սայաթնովյան որոշ բառեր ու բառաձևեր պարզեցրել է, մոտեցրել իր ժամանակի խոսակցական լեզվին։ Խաղի հրատարակողները, այդ թվում նաև Մ. Հասարաթյանը, Օհանի կատարած այդ փոփոխությունները չեն վերանայել, չեն վերականգնել բնագրի լեզուն։ Խաղի առաջին երկու բառերը Օհանը գրել է՝ Հեղկաց ֆաղաֆիցն. մինչդեռ Սայաթ-Նովան, ինչպես հատուկ է թիֆլիսահայ բարբառին, բացառական հոլովածներ կազմում է ոչ թե ից, այլ մեն (եմեն) վերջավորությամբ։ Իսկ Հեղկաց-ի փոխարեն ամենուրեք ասում է Հրնդու, ուստի և մենը Հեղկաց ֆաղաֆիցն—ը դարձրել ենք Հրնդու ֆաղաֆմեն (Հմմտ. խաղ 5—Հրնդու դիարեմեն, խաղ 13—Հրնդու միչեմեն) 9-րդ և 17-րդ տողերի զրմար բառը Օհանը դարձրել է դժվար. 16-րդ տողի ձեռնեմեն—ը՝ ձեռիցն, 18-րդ տողի էլխեմետը՝ էլխիցը. 20-րդ տողի ձեռլար—ը՝ ձիոհրը։

1-ին տող. ջալանիր, լալ արմանալու—Օհանի մոտ և ամենուրեք՝ ջալանիր ֆար արմանալու։ Քանի որ խաղի ընդհանուր հանդն է՝—ալ արմանալու, մենք ֆար-ը փոխարինել ենք լալ-ով (Հմմտ. խաղ 33, տող 9. «Սկանդարի Զուլդարի թողած ջալանիր իս, անդին լալ իս»)։ Այս տողում Սայաթ-Նովան, մեր համոզմամբ, նկատի ունի այն նշանավոր ջալանիր-գոհարը և լալ-ուրիներ, որ Նադիր-Շահը հանել էր (բիրել էր) Հեղկաստանի մայրաքաղաքից (Հնդու ֆաղաֆմեն)։ Ջալանիր—գոհարը կոչվել է Դարչա-ի ֆուր (Լույսի ծով), իսկ լալ-ուրիներ՝ Ալն-ալ-ֆուր (Հուրիի ուր)։ Այդ քարերից յուրաքանչյուրը ժամանակին դնահատվել է մի ամբողջ զեզ մարուր ոսկի (*Myxammað Kazum, Ποход Надир-шаха в Индию, стр. 155*)։

2-րդ տող. նաղալ—Օհանի մոտ և ամենուրեք՝ նաղը։ Նաղալ բառն այստեղ ունի ոչ թե նկարիչ, այլ եկար իմաստ (Հմմտ. խաղ 34, տող 8)։ Նկարիչ իմաստով Սայաթ-Նովան գործածում է նաղալբար բառը։

3-րդ տողը՝ Ամեն մարք չի կանա նաբի շան ու շրֆար արմանալու. Օհանը շփոթել է «Արի համով զուլուղ սոռ» խաղի 2-րդ տողի հետ (Ամեն մարթ չի կանա նաբի շահ ու շրբար, Սայաթ-Նովա)։ Ինչպես վերջինիս մեջ, այնպես էլ այստեղ շան ու շրֆար-ը գրված է շանով շրֆար, որ ճիշտ չէ (ա՛հա խաղ 36, 2-րդ տողի ծան.)։ Սույն տողը, հիրավի, սխալմամբ է բերվել այստեղ, քանի որ ո՛չ իմաստով, և ո՛չ էլ հանգով չի կապվում մյուս տողերի հետ։

7-րդ տող. խաս ա՝ մուրասա—ամենուրեք՝ խասա մուրասա, որ մեկնարանված է

ընտիր, ոսկեհուռ կտոր (ԳԼ, 184), «նուրբ գործվածք, մուսլին՝ դարդարած, դրվագած ոսկեթելով կամ ընդելուզված անդին քարերով» (ՄՇ, 292): Ինչպես նկատել է Ի. Միրզոյանը, այստեղ պարսկերեն մուրասա (մուրասամ) բառն է, որ նշանակում է նկարված (Միլլեր, էջ 483): «Երգիչը դիմելով գոյություն ունում է՝ ղեմքդ (առանց այն էլ) ընտիր նկարված է (Վասա-ա-մուրասա)», նորից «զայամ քաշիլը», նորից նկարելը պետք չէ» (ԻՄ, 89): Այս բացատրությունը ընդունում ենք որոշ վերապահումով: Բանն այն է, որ խաս բառը երգիչը չի գործածել ընտիր ածականական իմաստով, այլ՝ ընտիր կտոր գոյականական իմաստով: Եվ հետո, խաս-ին հաջորդող ա-ն (խաս ա) ոչ թե հոգակապ է, այլ օժանդակ բայ (խաս է), առանց որի տողը քերականորեն սխալ կլինի: Ըստ այսմ, տողի իմաստն է՝ երեսդ ընտիր կտոր է (խաս ա)՝ նկարված (մուրասա), և նորից նկարելը (զայամ քաշիլը) հարկավոր չէ: Մուրասա բառը նույն այս իմաստով գործածել է նաև Նազաշ Հովնաթանը (տե՛ս «Բանաստեղծություններ», էջ 21, 36):

11-րդ տողում անգլին բառը կրկնված է կրկու անգամ, որ թերևս աղավաղման արդյունք է:

12-րդ տող. Սկանդարի Զուլդաի քողած ջնաղ հեֆալ աբմանայու:—Ըստ Գ. Լևոնյանի ջնաղ նշանակում է կրկնյալ, իսկ հեֆալ՝ հուռույթ, բժժանք: Ի. Աբրահամյանը հեֆալ-ը թարգմանել է կերպարանք, հասակ, իսկ Ի. Միրզոյանի ենթադրությամբ ջնաղ հեֆալ-ը վրաց մեծադարձ կանանց օգտագործած ծնոտի ուլունքաշարն է (ջնաղ-ծնոտ բառից, ԻՄ, 90): Բայց չէ՞ որ երգիչն ասում է՝ Սկանդար Զուլդաին (Ալեքսանդր Մակեդոնացու) թողած. ուրեմն ծնոտի ուլունքաշար բացատրությունը ճիշտ չէ: Ավելի ճիշտ է Մ. Հասարթյանի մեկնաբանությունը, ըստ որի ջնաղ նշանակում է անբակ (հմտ. «Յիս վուրսնուրթ իմ, թվանգըն իմ ջընաղին» (ՄՇ, 220), իսկ հեֆալ՝ արձան, անդրի, գեղարանիցակ, իսկ ջնաղ հեֆալ՝ կիսանդրի (ՄՇ, 296, 310): Ճիշտ է, հերթ բառը մեր աշուղների մոտ ուլունք, մանչակ, վրի շար իմաստն է ստացել (տե՛ս «Դուստան», Բ, էջ 517, «Հայ աշուղներ XVII—XVIII դդ.», էջ 315, Նաղաշ Հովնարան, Բանաստեղծություններ, էջ 6), սակայն այստեղ նշանակում է արձան: Այդ է ապացուցում նաև երգչի վրացիներն յաղերից մեկի հետևյալ տողը. «Մարմար հերալ՝ քարգահ քաշած ու նախշած» (ՄՇ, 98), որ նշանակում է կտորի վրա նկարված, ասեղնագործված մարմարն արձան: Մանթապըվող տողում երգիչը նկատի ունի Ալեքսանդր Մակեդոնացու թողած, նրա օժանդակներից մեկացած, այն է՝ անտիկ դարաշրջանի արձանները (գուցե և Մակեդոնացու հայտնի կիսանդրին), որոնք թիրևս նա տեսել է իր կրկարամյա ղեկերումների ժամանակ (տե՛ս խաղ 33, տող 9): Հատկանշական է, որ երգիչը հեֆալ բառը գործածել է բուն պարսկերեն նշանակությամբ (արձան) և ոչ թե այն իմաստով, որ բառն ստացել է անցնելով մեր խոսակցական լեզվին (մանչակ): Այս ևս, ի թիվս այլ փաստերի, վկայում է երգչի՝ պարսկերենի քաջիմացության մասին:

15-րդ տող. Թաֆալուրի քաղի ջիղա, օսկե լիլլու շաղմաղում իս—Ըստ Գ. Ախվերդյանի ջիղա բառը հայ աշուղները գործածել են «շահի թագի աղամանյա դարդարանք» իմաստով («Դուստան», Բ, էջ 521): Ըստ Գ. Լևոնյանի՝ նշանակում է «թագի զլխի փետուր» (ԳԼ, 187), իսկ ըստ Մ. Հասարթյանի՝ «թագ, պսակ, թագի վրա դրվող ջալամի փետուր» (ՄՇ, 319): Ավելի ճիշտ՝ ջիղան թագի (զխարկի) ճակատամասի վրա դրվող պսակ է՝ ոսկե կամ արծաթե թել, որի վրա ամրացվում էին փետուրներ: Սույն տողի օսկե լիլ-ը հենց ջիղայի մաս կազմող պսակն է: Մայաթ-Նովան ոչ թե գողալի ճակատի ոսկե թելն է համեմատում թագավորի շողողուն թագի հետ, ինչպես բացատրել է Ի. Միրզոյանը, այլ գողալին համարում է թագավորի թագի փետրազարդ պսակ (ջիղա), որի ոսկե

թելը շողշողում է (տե՛ս նաև ՄՀ, 137, 194, դուշի ջիղա, ջիղա-քաջ): Նման ջիղաներ Սա-
յաթ-Նովան հավանաբար տեսել է պարսկական միջավայրում: Նկարագրելով Նադիր-Շահի
աստիճանավորներին, Աբրահամ Կրետացին գրել է. «Այլ և ի դիմացն պար առեալ
կանգնէին Բ(2) կարգ: Որոց մի կարգն էր շանտալուր, որք ունին ի գլուխ իւրեանց նղալս,
որպէս զագի արաղաղին, որպէս և էր իսկ թէպուր արաղաղիաց: Եւ երկրորդն՝ նասախ-
չիք: Որ և մեծաւորն իւրեանց ունի Գ(3) հատ նղալ ի վերա ճակատին ի գտակն իւր: Եւ
անդ ի ծայրս և ի մէջս նղալին՝ թէպուրք» («Պատմութիւն», էջ 99):

17-րդ տողը՝ Յար, Բիգանից հիռանալըս միռնելուս վրա դըծար ա — Բառացի կըր-
կընութիւնն է 41-րդ խաղի համապատասխան տողի: Սա էլ, անշուշտ, Օհանի կողմից
շփոթութիւն արգելուք է, քանի որ երգիչը երբեք նույն տողը չէր կրկնի կրկու տարբեր
խաղերում:

20-րդ տող. Շատ ա էտ ալ արմանալու—Օհանի մոտ՝ էտ էլ շատ ա արմանալու: Եւ-
նելով խաղի ընդհանուր հանգից, Մ. Հասրաթյանն, իրավացիորեն—դարձրել է Շատ ա էտ
ալ արմանալու՝ «արեւմտահայ բարբառների ձևով» (ՄՀ, 248):

Ա Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ

1 (50) «ԹԵԳՈՒԶ ՔՈՒ ՔԱՇՆ ՄԱՐՔՈՒՏ ՏԱՆ»

Գտնվում է Դավթարի 130 էջում: Առաջին անգամ հրատարակել է Գ. Ախվերդյանը:
խաղի ծանուցումը Գ. Ախվերդյանը սխալ է կարդացել ու վերծանել. «Գուլխսանդղանի
հանգով: Ռադխանի»: Այս խաղը ոչ թե ռադխանի է, այլ՝ քասլիք. այդ է նշանակում «նույն
հանգով» արտահայտությունը, որ մատնանշում է Դավթարում այս խաղին նախորդող
«Զիս ասում թե լաց իս էլի» Ուսլիք խաղի տեսակը: Սույն խաղը թերի է, և ըստ հրե-
վույթին, «Գուլ իս անգին» սկսվածքով ամբողջական խաղի մի հատվածն է: Այդ է ցույց
տալիս նաև խաղի վերջում հեղինակի անվան բացակայությունը: Մ. Հասրաթյանը համոզ-
ված գրում է, որ խաղը բաղկացած է եղել 6—7 տնից: Սակայն այսպես կարծելու ոչ մի
հիմք չկա: Կարող ենք միայն ենթադրել, որ այն ունեցել է հինգ տուն, ինչպիսին է երգչի
խաղերի մեծագույն մասը: Ի դեպ բնադրում այսպես անավարտ ձևով է գրի առնված
«Վարթն ու բլրուր էսպես խոսեցին» աղբյուրներն խաղը (ՄՀ, 218):

Խաղի կրկնակներում գործածված բոլի-բոլի-ները Գ. Ախվերդյանը բացատրել է
անշափ և անհամար: Ինչպես գրում է ն. Աղբալյանը. «Այլ բացատրություն մի կոհհում
է ավելի, քան այդ կրկնավոր ասության բուն նշանակությունը... Այս բառն իր բուն նշա-
նակությամբ դործ են ածում խորբերդի բարբառում: Այսպես, ասում են. ճակտին բրոյ
բրոյ մարբրիտ ունի, ճակտին բրոյ բրոյ զագիններ (հին ոսկեդրամի մի տեսակն է) ունի
և այլն. և նշանակում է. «շարան-շարան», «շարեշար»: Ուրեմն բրոյի բառի բուն իմաստն
է «շարան»: Գուցե այս բառը գործ էր ածում Սայաթ-Նովայի հայրը, որ հայեպից էր, և
Սայաթ-Նովան, որ հմտագույն բանաստեղծն է մեղանում՝ բառերի նկարչական բայց մա-
նավանդ երաժշտական արժեքը հասկացող ու ղեհահատող, առել ու գործ է ածել իրրեւ
հնչուն բառ» (ՆԱ, 168):

Գտնվում է Դավթարի 137 էջում: Էջի ներքևում երգչի որդին՝ Մելքոնը (Մելիք-սեթ) անվարժ ձեռագրով վրացերեն գրել է իր անունը և որոշ բառեր ու տառեր, հաղը խիստ պակասավոր լինելով, տեղ չի գտել Գ. Ախվերդյանի ժողովածուում: Առաջին անգամ հրատարակել է Գ. Ասատուրը էջմիածնի «Բանբերում» (1921—22), որտեղից այն նույնությամբ ընդգրկվել է Գ. Լեոնյանի կազմած ժողովածուի մեջ:

Ինչպես ցույց է տվել Պ. Հակոբյանը, խաղը գրված է ոչ թե 1751-ին, ինչպես ենթադրել էր Մ. Հասրաթյանը, այլ՝ 1759 թ., Թիֆլիսի հին հեղեցիներից մեկի՝ Մոդնուս. Գևորգի վերակառուցման առթիվ (տե՛ս ՊՐՀ, 1969, № 3, էջ 219):

Երրորդ տնից հետո երգիչը գրել է Ամեն բոռտըն կու սրփիլի, ֆիզի կու գա ով փափախով անհաջող տողը և ապա ջնջել և խաղը թողել է անավարտ: Ի՞նչն է խանգարել նրան ամբողջացնելու այս ձոնը: Մ. Հասրաթյանի հավանական ենթադրությամբ, անկախ երգչի «խորին հավատքից» խանգարել է իր սրտին ոչ այնքան հարազատ թեման, որքան էլ պարտավորված լիներ արձագանքելու այդ եկեղեցու կառուցմանը (ՄՀ, 255):

2-րդ տողը Գ. Ասատուրը չի կարողացել լրիվ վերծանել: Տողի ամբողջական վերծանումը կատարել է Մ. Հասրաթյանը:

3-րդ տող. բռուկ նաղ աբին—Գ. Ասատուրը կարդացել է՝ բռուկ ջան դարին: Ժիշտ ընթերցումը կատարել է Գ. Լեոնյանը:

6-րդ տող. վարաֆուտ—բնագրում՝ վարաֆուտ:

9-րդ տող. տախտակ—բնագրում՝ տախտակով:

10-րդ տողի մոն-ը գրաբար մոյն, մույն (կարգին, վայելուչ, վայելչակազմ իմաստով) բառը չէ, այլ, ինչպես նկատել է Ի. Միրզոյանը՝ վրացերեն մոնա-ն (ծառա, դուլ): «Երգիչը դիմելով սուրբ Գևորգին, ասում է, որ ով նրա մոտ է գնում, որպես հնազանդ, խոնարհ ծառա, հոգով ու մարմնով մաքրվում է (մեղքերից)» (ԻՄ, 91): Մոնա բառը զործածված է նաև վրացերեն «Մատաղ իմ քի, արի ինձ մի շարշարի» վրացերեն խաղի մեջ («Վրացական երգեր», Թբիլիսի, 1963, էջ 42: Մ. Հասրաթյանը թարգմանել է նոֆար. ՄՀ, 99):

3 (52). «ԽԱՒԱՐ ԳՆԱՅ ԲԼՈՒԼԻ ՄՈՂ»

Գտնվում է Օհանի ձեռագրի 69 ա էջում: Բավական աղավաղված է, և մեր կարծիքով բացակայում է մեկ տուն: Խաղի վերջում Օհանը, ձգտելով բացատրել վերջին տողը («Շահ-Աբասի կալի նման, Շահի՛ վրեն զալուն մընում է»)՝ թողել է հետևյալ խրթին ու անհասկանալի վրացերեն ծանուցումը. «Էսն մոխամբադիա. Սալաթնովամ իփիբրա, ումա դաննի ունդա իմիսի սափալվեդ յովիդես դիդիս դիժինիթա, միսթվիս լուկմալուկմաթ դակուծոս. ձալի (զուլի?), վիսաց կացոբա էխմարաթ իմիսթանա վաժիկացիս սիվիլիլի»: Գ. Ասատուրը, որ խաղի առաջին հրապարակողն է, այս ծանուցումը ենթադրաբար ու մոտավորապես թարգմանել է. «Այս մոխամբազը Սալաթ-նովան հորինեց, որ Շահը (Աղա-Մահմադ խանը) պետք է գա մեծ ժխորով նրա դերեղմանի վրա, այս է պատճառը, որ նրան մաս-մաս արին...»: Սրանով 1903 թ. ի

վեր փորձել են հիմնավորել Սայաթ-Նովայի սպանության ավանդական վարկածը, որն ինչպես գրում է Մ. Հասարթյանը. «առանց սրան ավելի հիմնավոր է, քան այս «հավելյալ ապացույցով» (ՄՀ, 250): Մ. Հասարթյանը կատարել է խաղի ծանուցման հետևյալ թարգմանությունն ու բացատրությունը. «Սա մոլիսամազ է, Սայաթ-Նովան Կարծեց, որ թագավորը պետք է նրա գերեզմանին գա մեծ ժխորով նրա համար, (որ) պատառ-պատառ անի (այն) ուժը (կամ սիրտը?), որը արիություն է ցույց տվել նրա նման տղամարդու մահը»։ (մահով կամ սպանությամբ) բառացի-«կտրճի ուժը, ով որ մարդկություն է) գործադրել նրա նման տղամարդու մահը»: Այս ծանուցումից հիմնավոր «բացարձակ կերպով, համոզված ոչինչ չի կարելի ասել, ընդհակառակն, ավելի շատ կարելի է այնպես հասկանալ, որ Սայաթ-Նովային սպանել են ոմանք, և թագավորը (եթե ընդունենք մի Շահ կամ Աղա Մահմեդ խանը) պիտի գա և այդ «արիություն» ցույց տված ուժը կործանի, կտոր-կտոր անի» (ՄՀ, 250): Ավելի համոզիչ է թվում Լ. Մելիքսևի-Բեկի թարգմանությունը. «Սա մոլիսամազ է. Սայաթ-Նովան կարծեց, որ դանքը պիտի նրա գերեզմանի վրա գա մեծ ժխորով, որպեսզի նրան մաս-մաս անի: (Հապա) ո՞վ կարող էր ուժ քանացնել: (Նրեակայեցիք) այսպիսի տղամարդու մահը» (ՊԲՀ, 1963, № 3, էջ 28): Սակայն Օհանի այս ծանոթությունից, որ ըստ էության ոչ մի վավերական ինֆորմացիա չի պարունակում և միայն երգչի եղերական մահվան արձագանքն է, Մելիքսևի-Բեկը հետևյալ եզրակացությանն է հանդիմ. «Իման Սեփրուկի ծանոթագրությունը արժեքավոր է նրանով, որ վկայում է երգչի «հաղթանդամ» լինելու մասին, որին «մահը» չի խնայել» (նույն տեղում, էջ 29):

7-րդ տող. Փունի գուլե քրնած տիղըն իր իրջնամին կուղըն կապե: Խաղի մեկ այլ օրինակում (տե՛ս աստ 28-րդ տարբերակ) այսպես է՝ Հազար գուլե դույաբ անե, Սիպտա դիվըն կուղըն կապե:

8-րդ տողի էլի վիրչումըն մեյդանըն բառերը Գ. Ասատուրը կարդացել է էլի վերջում մեղան լանորոշ ձևով, Իսկ նույն տողի Զալուն և 12-րդ տողի խանջալուն հանդակիր բառերը կարդացել է Զալին և խանջալին ձևով. ուղղումն առաջարկել է Կ. Լեոնյանը:

20-րդ տող. Շան-Աբասի լալի նման, Շանի՝ վրեն գալուն մրնում է:—Մ. Հասարթյանը լալա բառը գրել է մեծատառով և տողը բացատրել հետևյալ կերպ. «Շահի մերձավոր լալայի գերեզմանը, կամ հենց ինքը՝ Լալան, սպասում է Շահի (իր) վրա գալուն (այցին) և ոչ Շահի լալը (սուտակ քարը) սպասում է Շահի դալուն, ինչպես մեկնարանվել էր մինչև այժմ» (ՄՀ, 250): Զիշտ է լալան լալ-սուտակ բառը չէ, բայց ոչ էլ հատուկ անուն է. դա դալակ, դաստիարակ, ծառայապետ նշանակությամբ պարուկերեն բառն է, որ երգիչը գործածել է նաև իր վրացերեն խաղերից մեկում (տե՛ս ՄՀ, 109): Այդ բառը գործածել է նաև Փյուշուկ Արուժինին իր Պատմության մեջ (տե՛ս Մատենադարանի ղիտական նյութերի ժողովածու, № 1, Երևան, 1941, էջ 121): Սույն տողը ոչ թե նշանակում է Շահ-Աբասի լալան սպասում է Շահի (իր) վրա գալուն (այցին), այլ ինքը՝ ջրատար Սայաթ-Նովան է (տե՛ս նախորդ տողը) Շահ-Աբասի լալայի նման սպասում Շահի այցին (իր գերեզմանի վրա. այստեղ երգիչը նկատի ունի Շահ-Աբասի և նրա լալայի հետ կապված ինչ-որ պատմություն): Սույն տողում Շահ անվան տակ Սայաթ-Նովան, ըստ երևույթին, համեմատության կարգով նկատի ունի Հերակի թագավորին, որը երգչին վտարել էր արքունիքից և որը, նրա կարծիքով, պիտի զղջա և այցի գա իր գերեզմանին: Լ. Մելիքսևի-Բեկի կարծիքով այս տողի Շահ-Աբասը ուղղակի նշանակում է

Հերակլ թագավոր, քանի որ վրացերեն խաղերից մեկում երգիչն ասել է. «Սայաթ-Նովայի արքան՝ Ղան-Շահբաղն է՝ Իրակլին» (ՊՔԶ, 1963, № 3, էջ 28, հմմտ. «Վրացական երգեր», էջ 14, ՄՀ, 103): Սակայն այդտեղ շահբաղը ոչ թե նշանակում է Շահ-Աբաս, այլ՝ ինչպես բացատրել է Մ. Հասրաթյանը. բազմ. փոխաբերաբար՝ կեռոս (ՄՀ, 305):

4 (53). «ՄՏԱ ԷՇԽԻ ԲՈՒՐՆԵՆ»

Գտնվում է Օհանի ձեռագրում (էջ 58): Բնագրի վերջում Լրգչի որդին գրել է. «էս հայերեն ղարահեջա է»: Խաղը Գ. Ասատուրի կողմից հրապարակված է բավական թե-րություններով, որոնք սրբագրված են Մ. Հասրաթյանի կողմից:

2-րդ տողի Բն ու այլիք էրկու բեճ-ը կաղմում է քաբաբ բառը:

3-րդ տող. կամով-բնագրում և ամենուրեք՝ կամով, Նրգիչը կամով բառածնը գործածել է նաև 54 և 64 խաղերում: Նույն տողի սովյեճ բառը Գ. Ասատուրի մոտ բացա-կայում է:

4-րդ տողի էլ բառը Մ. Հասրաթյանի հավելումն է: Նույն տողի սև ու այլիք էրկու բեճ-ը կաղմում է սաբաբ բառը:

7-րդ տողը Գ. Ասատուրը չի վերծանել:

8-րդ տողի Շու ու այլիք էրկու բեճ-ը կաղմում է ճաբաբ բառը:

10-րդ տող. սախաբ կովի-Գ. Ասատուրը կարդացել է՝ սաղաբ ըլի:

12-րդ տողի էրկու այլիք, էրկու բեճ-ը կաղմում է ար-ար բառը, որ չուր-չուր (փխր. արտասուր. ՄՀ, 277) նշանակելուց զատ ունի ծածկագրի արժեք: Դրա վերծանու-թյամբ ստանում ենք տվյալ խաղի գրության թվականը՝ 1763 ($\alpha=1$, $\beta=2$, $\text{արաբ}=1212+551=1763$):

5 (54). «ԱՅԻԲ ԱՍՏՎԱԶ ՍԻՐԻՍ»

Գտնվում է Օհանի ձեռագրում (էջ 60): Առաջին անգամ հրատարակել է Գ. Ասա-տուրը: Նրգչի որդին խաղն ամբողջությամբ չի հիշել կամ ձեռքի տակ չի ունեցել նրա ամբողջական ընագիրը: Ինչպես ենթադրվում է տառերի հաջորդականությանից, խաղն ունեցել է վեց տուն, որոնցից պակասում են երկուսը՝ չորրորդը և հինգերորդը: Իրանք ընդգրկել են հայոց այրուբենի Մե-Տյուն տառերը: Պակասող հինգերորդ տունը, բնա-կանաբար, ավարտվել է... այդն ու այլիք թո ձեռով, որը կաղմում է տաբ բառը (թուրք. համ, ճաշակ), իսկ չորրորդ պակասող տունը հավանաբար ավարտվել է շա ու այլիք քո ձեռով, որ կաղմում է արաբական ծագումով շաբ բառը (թուրք. լայն ճանապարհ. սեճա Ստ. Մալխասյան, հտ. Գ, էջ 7, Հր. Աճառյան, Հայ գավառական բառարան, էջ 874): Մ. Հասրաթյանը ևս զոնելով, որ խաղից երկու տուն պակասում է, ենթադրել է, թե այդ տներն ավարտվել են մաբ և զաբ հանգ փակող բառերով (ՄՀ, 67): Սակայն քա-նի որ զ տառն առաջին տան մեջ արդեն ընդգրկվել է, իսկ մ-ն չորրորդվել է 4-րդ պա-կասող տան հենց սկզբում, ուստի դրանցով երգիչը չէր կարող հանգ կաղմող բառեր հոգել, այլապես կշեղվեր այրբենական ղարահեջայի սկզբունքից:

1-ին տողի Այլիք բառը Գ. Ասատուրը կարդացել է Այբը, իսկ Մ. Հասրաթյանը՝ Այր: Այդպիսով, սակայն, խախտվում է տողի չափը (խաղի բոլոր տողերն ունեն 11

վանկ), բացի այդ, երգիչը այլ տառանունը ամենուրեք, ինչպես և այստեղ գրել է այլիք ձևով:

2-րդ տողում դա ու այլիք քռ-ով ստացվում է դար բառը, որ նշանակում է ցածր: «Գազաթըտ արա դա ու այլիք թո» տողի իմաստն է՝ գլուխտ ցածր պահիր (խոնարհ, համեստ եղիր):

4-րդ տողի բռ ու այլիք քռ-ն կազմում է բար (ձեռք) բառը. այդ տողի իմաստն է՝ երեսդ ծածկիր ձեռքով (ամոթխած, համեստ եղիր):

8-րդ տող. վախ փաշեցի—Գ. Ասատուր՝ նախ փաշեցի: Այս տողում դարահեջայով ստացվում է խար (խարա-փռճաւնֆ) բառը: Տողի իմաստն է՝ այդ պատճառով ախ քաշեցի փորձանքից:

12-րդ տողում ճն ու այլիք քռ-ն, որով ստացվում է նաք բառը, ձեռագրում գրված է ճն ու այլիք ցռ, որից ստացվում է հաց բառը: Օհանը ննթագրելով, որ նաք բառը կարող է չհասկացվել, գիտակցարար դարձրել է հաց, թեև այդպիսով խախտվում է թե՛ այբուբենի կարգը և թե՛ ընդհանուր հանգը: Գ. Լեոնյանն իրավացիորեն առաջարկել է այստեղ դնել նաք բառը, որ նույնպես հաց է նշանակում:

14-րդ տող. փենը փառ ունի-Գ. Ասատուր՝ փե շքփառ ունի: Մշ՝ փենը փառ ունի:

16-րդ տողի կեն ու այլիք քռ-ն կազմում է կար բառը և այդ տողը հասկացվում է՝ հալալ Սայաթ-Նովային իր կերած կաթը: Սակայն կեն ու այլիք քռ-ն մեր կարծիքով նաև ծածկագրի արժեք ունի: Այն հաղորդում է երգչի տարիքը՝ խաղի գրության ժամանակ: Կեն-ը ունի 60 թվային արժեք, այլը՝ 1, թռ-ն՝ 9, հետևաբար՝ $60 + 1 + 9 = 70$: Ուրեմն այս խաղը երգիչը գրել է 70 տարեկան հասակում՝ 1792 թ. ($1722 + 70 = 1792$): Ուշագրավ է, որ խաղի մեջ ժե տառից սկսած երգիչը հաղորդում է որոշ ինքնակենսագրական տվյալներ: Մինչև Հռ-70 տառը նա գրել է անցյալ ժամանակով, իսկ այն տողը, որտեղ խոսում է իր 70-ամյա տարիքի մասին, գրված է ներկա ժամանակով. «Հռ համան կանչում իս Ձա ձայնով դալըտ»։ այսինքն՝ 70 տարեկան հասակում անվերջ բարձրածայն բողոքում է. (տե՛ս ՊԲՀ, 1975, № 4, էջ 170):

13-րդ տող. րե՛ րուն ցռ ցամֆիլ է՝ րուն Գ. Ասատուրի և Գ. Լեոնյանի կողմից չի բացատրվել, իսկ Մ. Հասրաթյանը դարձրել է՝ րե-րըն ցռ ցամֆիլ է, բացատրելով, որ երգիչն այստեղ ցանկացել է ասել, որ րե-նով ոչ մի բառ չի գտնում գրելու (ընն ցամֆիլ է): Սա հավանական է, բայց մենք թողնում ենք բնագրի ռուն, հավանական համարելով նաև վրացի բանասեր Ձ. Մեղուլաշվիլու մեկ հայտնած կարծիքը, թե ռուն պարսկերենից փոխառված վրացերեն ռու-տու, գիտակ բառն է: Այդ է ապացուցում նաև հաջորդ ցամֆիլ է բառը: Այս վերջին երկու բացատրությունները կարելի է համատեղել, այսինքն՝ րե-ն որպես առու ցամաքել է. հալերենում այդ տառով բառեր չեն գրվում: Այդպիսին են նաև մեր այբուբենի վերջին երեք տառերը, որոնց մասին էլ երգիչը 15-րդ տողում ասում է. «եվ օ ֆին կարթալու Մտոված ճար ունի»։ Հյուն (վյուն) տառով նույնպես բառ չի սկսվում, բայց այդ տառը «հունար ունի», նա, ինչպես գրում է Մ. Հասրաթյանը. «ու ձայնավորի հավասար կեսն է և մյուս ձայնավորների հետ կազմում է երկրարբաններ, ուստի հունարով առաւ է: Փյուր (փ) և ֆն (ֆ) տառերով փակվում է Մևսրոպյան այբուբենը»:

Այս խաղը ևս պահպանվել է միայն Օհանի ձեռագրում (էջ 59 ա)։ Հավանաբար խաղից մեկ տուն պակասում է։ Հրապարակել է Գ. Ասատուրը։

1-ին տող. Այբբբբմմմ—Գ. Ասատուրը կարդացել է Այբբմմմ, ՄՁ՝ Այբբբբմմմ։ Այս տողի դասնդսս բառը պետք է կարդալ դասն դաս, այն է՝ այբուբենը կարդացել եմ դասերով, շարքերով, սյուն առ սյուն։ Այբուբենի այդպիսի դասդասում կատարում են տառերի լիվային արժեքները ըստ միավորների, տասնավորների, հարյուրավորների ու հազարավորների որոշելու համար։ Սույն տողը հաջորդ ծածկագիր տողի բանալիներից մեկն է։

2-րդ տողը՝ Հասա Ռա, է, հասա Ջե, հասասե, ծածկագիր է, որտեղ հեղինակը հայտնում է սույն խաղի գրության թվականը (այդ է թելադրում հասա բառը)։ Հասասե թեջնիսային բառը պետք է կարդալ՝ հասա Սե (ինչպես՝ հասա Ռա)։ Այս խաղում երգչի ընձեռած բանալիների համաձայն $\text{Ռ}=1$, $\text{է}=7$, $\text{Ջե}=9$, $\text{Սե}=2$, որոնց համագրումից ստացվում է 1792, այն է՝ սույն խաղի գրության թվականը (տե՛ս ՊԻՁ, 1975, № 4, էջ 171—73)։ Այս տողը թեև մեկ վանկով պակաս է, սակայն մեր կարծիքով պահպանվել է անաղարտ ձևով և որևէ խմբագրման կարիք չի դրում։

3-րդ տողի դասնդասը նշանակում է հաջորդաբար, ալիք-ալիք։ Տողի իմաստն է՝ հանկարծակի մի ձայն եկավ ալիք-ալիք (մահվան ձայնը)։

4-րդ տողի հասսսսե բառը, ինչպես ցույց է տվել Մ. Հասարթյանը, պետք է կարդալ՝ հա՛ սաս է։ Տողի իմաստն է՝ ականջ դրի չիմացա ինչ ձայն է (սաս)։

5-րդ տողի քաֆալուր բառը պետք է հասկանալ երկու իմաստով՝ քաֆ ավուր (մեկ օր) և քաֆալուր (միավոր)։ Ուստի Հազար տարին մարդու աչքին մեկ օր (քաֆ ավուր) է երևում և բ) հազար տարին (կամ Ա-ից Ռ) տե՛ս որպես քաֆալուր (միավոր)։ Այս է ծածկագրի հիմնական բանալին։ Այբուբենը կարդալով քառասուն դասերով, երգիչը դասերի մեջ ընդգրկված տառերը հաջորդաբար հաշվել է միավորներով։ Այսինքն՝ Ռ-ն ոչ թե հազար է, այլ՝ մեկ, որպես շարքի առաջին տառ, Ս-ն 2, Վ-ն՝ 3 և այլն։ Նույնը նաև մյուս դասերում։

6-րդ տողի քաֆալուրը, ըստ Մ. Հասարթյանի, պետք է հասկանալ քա գա վուր (թե վուր գա,— եթե գա), իսկ հաջորդ տողի քաֆալուրը նշանակում է արբա, թագա-վոր։

8-րդ տողի հասսսե-ն պետք է կարդալ հասսս է (ՄՁ, 68)։ Տողի իմաստն է՝ մահն անկաշառ, անաշառ պահակ է (հասսս—հսկիչ ոստիկան—ՄՁ, 295)։ Հին Թիֆլիսի հասսսների մասին տե՛ս Մ. Полневков, Старый Тифлис, (Թիֆլիս, 1929, էջ 56—57) աշխատությունը։ Նույն տողի կաշառ բառը Գ. Ասատուրը կարդացել է կըշիբf։

9-րդ տող. քըրվեցավ-Գ. Ասատուր՝ ավելցավ։

Նույն տողի ծովացավ բառը Մ. Հասարթյանը մեկնարանել է՝ զովացավ (սառեց), սակայն ավելի հավանական է վրացի բանասեր Զ. Մեղուլաշվիլու այն ենթադրությունը, որ այստեղ վրացերեն ծուս (կծու) արմատով ծուացավ-ծովացավ բառն է. այսինքն՝ կյանքս դառնացավ, թթվեց, կծուացավ։

10-րդ տողի ծովացավը նշանակում է ծովա ցավ, այսինքն՝ ծովի չափ ցավ, և միայն հաջորդ տողի ծովացավն է, որ նշանակում է ծովանալ, ծով դառնալ (ՄՁ, 68)։

12-րդ տողի հասսսե-ն Մ. Հասարթյանը բացատրել է՝ աս ասն (ասել բայի կրկնությամբ)։ Տողի իմաստն է՝ մի մարդ չկա, որ ինձ անվերջ խրատե։ Բր ժողովա-

ծուրի բառաբանում, սակայն, Մ. Հասրաթյանին այս նույն հասասն-ն կարդացել է հասասն, հաս-ը, (հէս, էս) մեկնաբանելով խնդր, միտք, դիտակցություն: Ենթադրել է նաև, որ դա «գոցի և ճիսսա բառից է—խրատ, խորհուրդ տալ» (ՄՀ, 295):

13-րդ տողի ֆաբասուն-ը պետք է հասկանալ՝ ֆաուսայուն: Ըստ այսմ «Հազար տարին մարթու աշխին քարասուն» նշանակում է՝ հազար տարին (կամ Ա.-ից Ռ.) տե՛ս որպես քառասուն, այսինքն՝ չորս դասով, շարքով, ինչպես սոված է առաջին տողում:

14-րդ տողի ֆաբասունը պետք է հասկանալ լաբ ասուն (քարի պես խոտող-ՄՀ, 68), իսկ 15-րդ տողի ֆաբասունը՝ ֆաուսայուն: Այս և հաջորդ տողերը պետք է հասկանալ՝ Սայաթ-Նովա արդեն բառասուն տարի է, ինչ մահը քիչ, դու մահին հետամուտ ես (հասասն-հասվեհաս է. ՄՀ, 68): Սա ունի որոշակի կենսագրական հիմք: Հիշենք, որ սույն խաղը գրված է 1792 թ., երբ Սայաթ-Նովան արդեն 70 տարեկան էր, իսկ դրանից ուշից քառասուն տարի առաջ՝ 1752 թ. սկսվել էր նրա սիրտ ողորկողությունը: Ահա այդ քառասուն տարին է ակնարկում երգիչն այս ծածկագիր խաղի մեջ և ոչ թե իր տարիքը, ինչպես հասկանում են տողի ուղղակի ընկալումով:

16-րդ տող. մանրն քիչ ճիղ—Գ. Ասատուրը կարդացել է՝ ման քիլի ճիղ: Ուղղումն առաջարկել է Գ. Լեոնյանը:

7 (56). «ՄԱԶԻՐ ՈՒՆԻՍ ԴԱՍՏԱՌԵՀԱՆ»

Այս երկկղզյա (հայերեն-թուրքերեն) խաղը գտնվում է Դավթարի ագրեբջաններին երգերի բաժնում (էջ 7—8): Գրված է հայերեն բոլորգրով: Հայերեն են առաջին տան առաջին կիսատողերը, մյուս տների առաջին երեք տողերի երկրորդ կիսատողերը և չորրորդ տողերի առաջին կիսատողերը, որոնք Մ. Հասրաթյանի հետևություններով ներկայացրել ենք ընդգծված ձևով: Բնագիրը հրատարակել է Գ. Լեոնյանը: Թուրքերեն կիսատողերի թարգմանությունը հայերեն կատարել է Մ. Հասրաթյանը:

15-րդ տողի բաղ ու բաղչան Մ. Հասրաթյանի հավելումն է. բնագրում այդ տողի վրա թանաք է թափված:

17-րդ տող. Սայաթ-Նովա—բնագրում՝ Սայաթ-Նովա:

19-րդ տող. ղանլու մարալ-նշանակում է արյունոտ, վիրավոր եղնիկ, ոչ թե ոճագործ, ինչպես բացատրել է Մ. Հասրաթյանը (ՄՀ, 298): Հմտ. խաղ 43, տող 16. «Տեսա արուևուտ չեխրանը՝ վուրնուրթի նիզնից բեղամաղ»: Նույն տողում՝ ինճ կու սըլանն—ԳԷ՝ ինճի կու սըլանն:

8 (57). «ՄՇՈՒ ՍՈՒՎԹԱՆ ՍՈՒՐԵ ԿԱՐԱՊԻՏ»

Այս երկկղզյա (հայերեն-թուրքերեն) խաղը ևս գտնվում է Դավթարի ագրեբջաններին երգերի բաժնում (էջ 9—10): Բնագիրը հայատառ է: Հայերեն են առաջին տան բոլոր առաջին կիսատողերը, մյուս տների առաջին չորս տողերի երկրորդ կիսատողերը և հինգերորդ տողերի առաջին կիսատողերը, որոնք ներկայացրել ենք ընդգծված ձևով: Նրալի միակ խաղն է, ուր թիֆլիսահայ բարբառին գերակշռում է գրաբարը, ավելի ճիշտ՝ բարբառայնացված գրաբարը: Առաջին անգամ հրատարակել է Մ. Հաս-

րաՅյանը 1959 թ. ժողովածուի մեջ՝ թուրքերին կիսատողերի հայերին թարգմանությամբ: ՀասարաՅյանն, իրավացիորեն, բանաստեղծության ամրողջութունը պահպանելու, այն մեկ ունով ներկայացնելու համար, թուրքերին բաժինը ձգտել է թարգմանել մոտավորապես հեղինակի «գրաբարով»: Սակայն նա թուրքերինը գրաբարյան որոշ երանգով փոխադրելով, հայերեն բաժնի որոշ բառեր ու բառաձևեր նույնպես թարգմանել է գրաբար կամ մոտեցրել գրաբարին: Այսպես, 7-րդ տողի երրորդութիւնը (բնագրում այսպես է) դարձրել է երրորդութիւն, 19-րդ տողի ջալլաքի փոխարեն դրել է գրական հայերեն համարմանը (դյանի), նույն տողի շուտով բառը դարձրել է իսկույն, 21-րդ տողի սանթարամիտըն-ը՝ սանդարամիտըն:

Դավթարում խաղն սկսվում է գլխատառերով գրված «Եթևի Գիւլնե ՍԲ ԿԱՐԱՊԻՏ» («Դու մեղ հասիր, սուրբ Կարապետ») կիսատողով: Մինչդեռ, ինչպես նկատել է Մ. ՀասարաՅյանը, ըստ այս երկնկողմյա խաղի սկզբունքի, այդ կիսատողը պետք է հայերեն լիներ, և ինքը իրավացիորեն այն ներկայացրել է հայերեն կիսատողերի բաժանով, բայց ոչ թե թարգմանել է, այլ հետևելով Օհանի ձևագրում պահպանված օրինակին, ախլել է «Մշու սուլթան սուրի Կարապետ» ձևով: Մինչդեռ, ինչպես տեսանք, երգչի մոտ այդ կիսատողն այլ իմաստ ունի («Դու մեղ հասիր, սուրբ Կարապետ»): Մենք հետևեցինք Մ. ՀասարաՅյանի օրինակին երկու պատճառով. նախ, որ խաղն արդեն հայտնի է դարձել «Մշու սուլթան սուրի Կարապետ» սկսվածքով, երկրորդ, որ Օհանի ձևագրում էլ այդպես է, և մենք ևս հակված ենք կարծելու, որ Օհանի մոտ եղած տարբերությունների մի մասը հեղինակի կատարած հետագա փոփոխությունների արդյունք է:

Խաղն ամբողջությամբ մի ձոն է՝ նվիրված Հովհաննես Մկրտչին, որի յոթ անուններից մեկն է Կարապետը: Վերջինիս հաճախ են դիմել թե՛ Սայաթ-Նույան և թե՛ առհասարակ հայ աշուղները, որպես շնորհատու փրկ-մուսալի: Սուրբ Կարապետը Մշու սուլթանն է կոչվել շնորհիվ Մշու դաշտում Աշտիշատի մոտ գտնվող հնօրյա մի վանքի, որը կառուցվել է հեթանոսական մեհյանի ավերակների վրա և կոչվել Գլակա վանք, Իննակնյա վանք, իսկ ամենից ավելի՝ Սուրբ Կարապետի վանք: Ըստ աղանդության, այս հուշակամոր վանքն էր շնորհում աշուղության ու լարախաղացության ձիրքը: «Սայաթ-Նույան մեծ հավատով ու սիրով էր լցված սուրբ Կարապետի դրուսթյան հանդեպ՝ որպես իր միակ մուսան: Սա է փոխարինել հեթանոս հայերի արվեստների ու դարսթյան աստված Տիրին՝ վերջինիս մեհյանը քրիստոնեական տաճարի վերածելուց հետո: Հետաքրքրականն այն է, որ այս ձոնը Սայաթ-Նույանի փորձել է գրել, որպես իր մուսալին պատշաճ լեզու, գրաբարով, թեև էլի ստացվել է դերագանեցական գրաբարախառն թիֆլիսահայ բարբառ» (ՄՀ, 254): Իր առաջին հայերեն խաղի ծանուցման մեջ Էրգիշյանն էլ. «...սուրբ Կարապետի կարողութենով սովորեցաւ քամանչին ու շոնգուրն ու (Ռ)ամբուրն»: Իսկ 38-րդ խաղի մեջ.

Ովոր ինձ շինից դիվանա,
Սուրբի Կարապետն իսկականա...

6-րդ տող. մրկըտեցիր—բնագրում՝ մրկըտիցիր:

7-րդ տող հայտնեցիր—բնագրում՝ այլտընեցիր:

10-րդ տող. Մեղրը վայրի վայրիցար-Դավթարում և Օհանի մոտ՝ Մեղրը վայրենի մայրիցար: Ըստ աղետարանի (Մատթ. Գ, 4), Հովհաննես Մկրտիչը սնվում էր մորեխով ու մեղրով:

11-րդ տող. Ովհաննես մի՛ ի ծնունդկանաց-Մ. ՀասարաՅյանը կարդացել է՝ Ովան-

նեա միծի ծնունդիւնաց: Մինչդեռ այստեղ ոչ թե մեծ բառի սեռական հոլովածն է, այլ գրաբարյան ի նախդիրը, որ ունի մեջ կապական իմաստ: Այս կիսատողի իմաստն է՝ Հովհաննես, մեծդ ծնվածների մեջ:

12-րդ տող. պարծան իս—բնագրում՝ պարծանըս:

13-րդ տող. լուսո առիւր—բնագրում՝ լուսու առեւր:

4-րդ տան մեջ վերապատմվում է Հովհաննես Մկրտչի գլխատման մասին ավետարանական վրույցը, ըստ որի Հերովդես թաղավորը մի խրախճանքի ժամանակ իր եղբոր աղջկա (Սալոմե) պահանջով, որպես «պարի վարձ» սկուտեղի վրա մատուցում է Հովհաննես Մկրտչի գլուխը (Մատթ., ԺԴ):

24-րդ տող. Սայար-նովեն-բնագրում՝ Սայիադ նովայ:

9 (58). «ԷՍ ԻՆՉ ԷԼԱՎ ԻՆՉ ՀԻԴ»

Այս շորսլեզվյա խաղը գտնվում է Դավթարի աղբրեջաներեն երգերի բաժնում (էջ 52):

Մեկ այլ օրինակ, շնչին տարբերություններով, կա Օհանի ձեռագրում (էջ 22ա): Խաղի վերջում Օհանը գրել է. «էս չորս լեզվով լավ զափիա է, Սայաթ-նովայի ասած այլևալ իմաստներով»: Խաղի այդ օրինակը ավելորդ ենք համարել ներկայացնել «Տարբերակներ» բաժնում:

Խաղի հայերեն թարգմանությունը և հայատառ բնագիրը առաջին անգամ հրատարակել է Մ. Հասարթյանը 1945 թ.: Հայերեն են խաղի առաջին տան երկրորդ և չորրորդ տողերի երկրորդ կիսատողերը և մյուս տների չորրորդ տողերը, որոնք ներկայացրել ենք ընդգծված ձևով:

Մ. Հասարթյանը խաղի սուաջին հրատարակության ծանոթագրության մեջ նշել էր՝ որ 3-րդ տողի 2-րդ կերպ և 6-րդ տողը (պարսկերեն)՝ «համարյա անհասկանալի են և խիստ վիճելի»: Հետագա հրատարակության ծանոթագրության մեջ նա տեղեկացրել է, թե «այժմ այդ կարծիքին չենք»: Մենք ևս ինչպես այդ, այնպես էլ մյուս տողերի թարգմանությունը համարում ենք ճիշտ և միանգամայն ընդունելի: Ինչպես նկատել է Մ. Հասարթյանը. «Ընդհանրապես մինչև Սայաթ-նովան չորս լեզվով գրված բանաստեղծություններ չեն հանդիպում, մանավանդ նման բովանդակությամբ: Խեթ ժանրի, կամ քեֆի ու գինու սաղական դործ չէ սա, այլ թախծով լի բանաստեղծություն» (ՄՁ. 255, այս խաղի մասին տես նաև ՊՄ, 64, 478—479):

Բ ՀԱՎԵԼՎԱՍԾ

1 (59). «ԹԱՔԱՎՈՒՐ ԻՍ, ԴԻՎԱՆՍ ԱՐԱ»

Այս սիրերգը չի պահպանվել ո՛չ երգչի և ո՛չ էլ Օհանի ձեռագրերում, բայց ժողովրդի մեջ սիրված ու տարածված խաղերից է եղել: «Հովիտ» շառաթներում տպագրված մի հոդվածում (1913, № 15, էջ 231) Սկանդար-նովան վկայում է, թե ինքը

1863 թ. 105-ամյա դարադ Օսեփից լսել է, որ Սայաթ-Նովան իր կնոջ՝ Մարմարից բացի ունեցել է Տալիթա անունով «մե սրտով սիրած աղջիկ», որին խաղեր է նվիրել։ Այս Տալիթային ձեռնված խաղերից Օսեփը հիշել է միայն սույն խաղի առաջին երկու տողը հետևյալ ձևով.

Թաքավուր իս, դիվանս արա, ա՛ռ քու արիվը կու սիրիս,
Ու վուր էրթաս, ինձ էլ հիդտ տար, քու արիվը կու սիրիս:

Սկանդար-Նովան ինքը անձանոթ լինելով այդ խաղին, գրել է. «Սրա թամամը չկանացի ճարի, շատ օրմիններուն հարցրի, բայց օւղվ չէր գիդում ու չէր իմանում, հենց իրա դավթրումն էլ չկար գրած, կարելի է ձեռաց (հանպատրաստից—Հ. Բ.) ըլի ասած կամ կորած ըլի էս խաղը»։ Սակայն արդեն 1885 թ. «Արձագանքում» (№ 1), ապա նույն թվականին նաև «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» գրքում Գ. Տեր-Աղեքսանդրանը հրապարակել էր այդ խաղի մի աղավաղված ժողովրդական տարբերակ (9 տող)։ Այս տարբերակն էլ հենց, առանց փոփոխությունների, Գ. Լևոնյանը մտցրել է իր կազմած ժողովածուում (Խաղ Մե) և ծանոթագրությունների բաժնում առաջարկել խաղի իր մոտավոր վերակազմությունը (ԳԼ, 175)։ Իր ձեռքի տակ եղած մի քանի բեկորների օգնությամբ Մ. Հասարթյանը ևս փորձել է մեկ տան պակասով (չորս բառատողով) վերականգնել այդ խաղը։ Այդ բեկորներից կարևորը նա համարել է աշուղ Թուրինջի անունը կրող մի կիսատ ու աղավաղված ոտանավորի ձևագիրը։ Վերջինս Սայաթ-Նովայի օրինակով, համարյա կրկնությամբ «ստեղծել է» նման մի երգ, որից Մ. Հասարթյանը զատել է սայաթնովայի տողերից մի քանիսը, հնարավորին չափով ամբողջացնելով երեք տունը և չորրորդ տան երեք տողը, իսկ մի տողը ներմուծել է իր կողմից, դնելով փակագծերի մեջ։ Այնպես որ Մ. Հասարթյանի վերակազմությունն էլ ավելի բան մոտավոր էր։ Չնայած դրան նա այդ խաղը ղետեղել է իր կազմած ժողովածուի 2-րդ և 3-րդ հրատարակությունների հիմնական բաժնում։ 1947 թ. ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագրում» (№ 5, էջ 87) Աս. Մնացականյանը Գ. Ավիլիդյանի կազմած «Հայ աշուղներ և երգիչներ» ձեռագիր ժողովածուից (Մասնադարան, ձեռ. № 3751, էջ 421) հրապարակում է այս խաղի ևս մի աղավաղված տարբերակ և առաջարկում խաղի իր մասնակի վերակազմությունը, որ նույնպես խիստ անբավարար էր։ Միայն 1966 թ. նույն Աս. Մնացականյանը Մատենադարանի № 10293 ձեռագիր Տաղարանում (էջ 27ր—28ա) հայտնաբերում է խաղի առաջիմ եղած միակ ամբողջական տարբերակը և նրա հիման վրա կատարելով նոր վերակազմություն, հրապարակում է «Գրական թերթում» (գեկտեմբերի 16)։ Այստեղից էլ Ս. Պալազասը վերահրատարակել է խաղն իր կազմած ժողովածուի մեջ (էջ 117—118), կատարելով որոշ, հիմնականում անհաջող շտկումներ։ Որպես հիմք ընդունելով № 10293 ձեռագրի ամբողջական տարբերակը և մեր ձեռքի տակ ունենալով մյուս բոլոր հայտնի տարբերակները, մենք կատարել ենք մի շարք շտկումներ, որոնցից ամենակարևորները նշում ենք ստորև։

3-րդ տողը ձեռագրում, Աս. Մնացականյանի և Ս. Պալազասի մոտ՝ կարմիր վառքս մի՛ փուլ ածիւ, փոխել ենք՝ կարմիր վառքս մի՛ փուլ ածի, որն ավելի բանաստեղծական է և իմաստով ներդաշնակում է հաջորդ՝ խա՛ր, քու արիվն կու սիրիւ կիսատողին։ Ի զեպ, այս խառ-ը Պալազասը դարձրել է մաւր (տեք իմաստով) և այն դրել 8-րդ տողի հանգակապ բառի փոխարեն, որ ճիշտ չէ։

7-րդ տող. Ամեն ծիտ բլբլբու շի դառնա—Ս. Պալազասը փոխարինել է՝ շուրս բալբուր ծաղիկներ ին անհաջող կիսատողով։

9-րդ տողը Աս. Մնացականյանը դարձրել է՝ Վարբն էն ամսին բաց կռիլի, վուր կռի տանին դիմաց խեշըն: Մինչդեռ ձեռագրում տողն առավել հնչեղ է ու իմաստալից:

10-րդ տող. քառամի, ձեռագրում՝ քամշկի:

12-րդ տողի Ուլ շավանիր-ը Աս. Մնացականյանը դարձրել է նույն շավանիր:

14-րդ տող. ամեն ռանգի-ձեռագրում և ամենուրեք՝ ամեն ըռանգ(կ):

15-րդ տողի մանգալով (մանգաղով) բառը Ս. Պայազատը շփոթելով ման գալ (քայլել) բալի հետ, դարձրել է ման գալով:

16-րդ տողի հանգակապ բառը ձեռագրում սխալ է. —աբ վերջավորությամբ բառի փոխարեն դրված է՝ վարդ, որ, անշուշտ, աղավաղման արդյունք է: Բանաստեղծը Լորենց նման շեղում թույլ չէր տա: Աս. Մնացականյանն այս տողում պահպանել է վարդ-ը, իսկ Ս. Պայազատը փոխարինել է ծառ բառով, մինչդեռ ձեռագրում այդ բառն արդեն գործածված է 8-րդ տողում: Մենք այստեղ գերադասեցինք դնել բար (պտուղ) բառը, որ իմաստով ավելի է կասկածում այդ և նախորդ տողին:

18-րդ տող. ակրոֆները—ձեռագրում և Աս. Մնացականյանի մոտ՝ առամենեհն, Ս. Պայազատի մոտ՝ ակոնես: Սակայն բանաստեղծը ոչ թե իր մասին է ասում, թե՛ առամենեհն թափվեցին ախ կանչելով, այլ՝ բլրույի մասին, ուստի և հիշտ է՝ ակրոֆները: Ձեռագրում և Աս. Մնացականյանի մոտ հանգակապ բառն է՝ աղաչելով, մինչդեռ այս տան մեջ կանչելով-ը ռեդիֆ է, և միանգամայն իրավացի է Ս. Պայազատը, որ աղաչելով-ը դարձրել է ախ կանչելով:

19-րդ տողը Աս. Մնացականյանը և նրա հետևորդները Ս. Պայազատը շեղվելով ձեռագրից, դարձրել են՝ Սայար-նովեն, վուր բեգրի է, շատին էրից խաղ կանչելով: Մինչդեռ այս ոչ համեստ հայտարարության փոխարեն երգիչն ընդամենն ասում է, որ հոգնել-բեղարել է շատ սիրո երգ (յարաւա խաղ) ասելով:

20-րդ տողի հանգակապ բառն է յար, որը որպես այդպիսին գործածված է նաև առաջին տողում: Կասկածելի համարելով, որ երգիչը հանգի համար Լերիու անդամ կարող էր գործածել նույն բառը, մենք, այնուամենայնիվ, յար-ը թողնում ենք անփոփոխ, խուսափելով խաղի մեջ նոր բառեր ներմուծելուց, մանավանդ որ, մեր կարծիքով, այնքան էլ անհավանական չէ, որ խաղի առաջին ու վերջին տողերում Երգիչն ուղղակի դիմեր յարին: Ձեռագիրն էլ երկու դեպքում տալիս է յար: Ս. Պայազատի մոտ տողն անհաջող փոփոխություն է կրել՝ Սրտումս կա ինքիզար-իդբար, քու աբիվը կու սիրիս:

2 (60). «ՍՈՒՍԱՆ ՍՄԲՈՒՆ ԴԱՍՍԱՄԱԶՏ»

Այս խաղը Լորենց այլ հայերեն, մեկ հայերեն-թուրքերեն և 11 ադրբեջաներեն խաղերի հետ զրի է առել Գ. Թարվերդյանը 1908 թ. Թիֆլիսում, ծերունի նազըքար Աղաթ Գևորգյանին պատկանող մի հին ձեռագիր Տաղարանից: Թարվերդյանը խաղն առաջին անգամ հրատարակել է 1937 թ. իր կազմած «Հայ դուստններ» անտիպ երգերի ժողովածուում (էջ 20) և ապա մեկ տարի անց՝ նաև Պատմության և Գրականության ինստիտուտի Տեղեկագրում (գիրք 1-ին, էջ 248): Մ. Հասարկյանը գրեթե առանց վերապահության խաղը համարել է Սայաթ-Նովայի ստեղծագործությունը և մտքեղ իր կազմած ժողովածուի հիմնական բաժնում (№ 65), միայն նրա մեջ որոշ նմանություններ տեսնելով Շամշ-Մեկրոյի ոճին: Բարդ ու գեղեցիկ այս խաղը բայարի-թեջնի դարա-

հեջա է (նաև շարակապ) և Սայաթ-Նովայի տաղաշափական վարպետության փայլուն օրինակներից մեկը:

Երկրորդ բայաթի տան մեջ ասված է. Ջրհեղեղից Նոյի, որից փրկվեց նա (Նոյը), Նոյին տապանն ազատեց, ինձ՝ Անան (Աննան, տե՛ս Մ. Աղայանի հոդվածը. «Գրական թերթ», 1940, № 30):

1-ին տող. Էրեսիտ խափանե՛գ իս արի—Թարվերդյանի մոտ՝ Էրեսիտ դե՛մ բանե՛գ իս արի: Շտկումը կատարել է Մ. Հասրաթյանը, դիմելով հենց իր՝ Սայաթ-Նովայի պատկերների դիմանդին. հիմա. 45-րդ խաղ, տող 2 «...մաղիրըս խափանե՛գ իս անում»: Այս բառերը կան Թարվերդյանի օրինակի 7-րդ տողում, մինչդեռ այստեղ դրանք իմաստով չեն կապվում տողին, և դրանց փոխարեն Մ. Հասրաթյանը իրավացիորեն գրել է ղաղանե՛գ իս արի:

14-րդ տողը Գ. Թարվերդյանի մոտ այսպես է՝ Ինձ այբը եմ եմ այիբ: Անշուշտ, կարելի էր ընդունել նաև այդ՝ Ինձ այիբ եմ, եմ այիբ սրբագրումով, ըստ որի կկարդանք ոչ թե Անա, այլ՝ Աննա: Սակայն չենք ընդունում այս ձևը, ելնելով քերականական կառուցվածքից և այն հանգամանքից, որ իր բոլոր ծածկագրերում երգիչն Աննա անունը հայտնի է Անա ձևով, որը նույնպես տարածված է եղել վրաց իրականության մեջ:

17-րդ տող. զայար—Գ. Թարվերդյան՝ ղայար: Մ2՝ զայար

19-րդ տող. Սայար-Նովեն իմ՝ Սայալ — այստեղ երգիչը ներկայացրել է իր անվան ճիշտ գրության ձևը՝ Սայալ: Այդպես է նա իր անունը գրել նաև Դավթարի հայատառ աղբյուրներին երգերում, հայերեն 5-րդ խաղի մեջ և իր ընդօրինակած ձեռագրերի չիշատակարաններում:

20-րդ տող. Անուճըս հաշլիբ՝ սայ-աղ—սայ-աղ աղբյուրներին նշանակում է՝ հաշվիր, կարդա անուն(ս): Ինչպես 18-րդ տողում երգիչը որսորդ իմաստը ավելի և սայաղ բառերով է արտահայտել, այնպես էլ այստեղ անուն հաշլիբ-ը ասել է երկու լեզվով, ստեղծելով գեղեցիկ բառախաղ:

3 (61). «ԱՍՏՈՒԶ ԽԻԱԼ ԱՐԻՑ»

Այս շարակապ-գինջիրամա խաղը ևս հրապարակել է Գ. Թարվերդյանը («Հայ աշուղներ», էջ 21—212): Ինչպես նախորդ, այնպես էլ այս խաղը Մ. Հասրաթյանը գետնի է իր կաղնած ժողովածուի հիմնական բաժնում (ՆՊ 64) և ծանոթագրության մեջ ենթադրել է, որ «այս խաղը ևս հեղինակի ուշ շրջանում հորինված գործերից մեկն է, երբ նա տարիք էր առել և, մանավանդ, որպես հոգևորական, հարկադրված էր ավելի շատ դործ ունենալ Աստվածաշնչի-Ավետարանի հետ» (Մ2, 256):

Իր կառուցվածքով խաղն առանձնահատուկ տեղ է դրավում երգչի ստեղծագործության մեջ: Այն հորինված է ութվանկյա թասիքների շափով ու հանգավորման եղանակով, բայց սենքի կառուցվածքով ու քանակով տարբեր է: Թեև խաղը, ինչպես նկատել է Մ. Հասրաթյանը, պահպանված է համարյա անվթար, այնուամենայնիվ, նրա 11-րդ տողը հասել է բավական աղավաղված: Թարվերդյանի մոտ այդ տողն այսպես է՝ «Կամ տվից սատանի ձեռն»: Ելնելով իմաստից և հանգավորումից, Մ. Հասրաթյանը դարձրել է՝ «Կամով ընկավ շարի թողուն», որ անվերապահ ընդունում ենք:

Գրի է առել Գ. Թարվերդյանը և առաջին անգամ հրատարակել է 1934 թ. «Կուսական թերթի» № 17-ում, ապա նաև «Հայ աշուղներ» գրքում (էջ 16) և Պատմության ու Գրականության ինստիտուտի Տեղեկագրում (էջ 246): Մ. Հասարայանը այս խաղն ընդգրկելով իր ժողովածուի հավելվածում, նկատել է, որ այն «Տների քանակով, տաղաչափությամբ, հանգերի ներդաշնակությամբ և մանավանդ բովանդակությամբ համապատասխանում է երգչի կենսագրությանն ու թողած ժառանգությանը, բայց որոշ բաներով չի հարազատանում նրա ուրույն ստեղծագործական ոգուն, ուստի թողնում ենք հավելվածի մեջ» (ՄՀ, 257): Լիովին համաձայն ենք, բացի այն մտքից, թե տների քանակով էլ խաղը համապատասխանում է երգչի ժառանգությանը: Այստեղ մեր համոզմամբ մեկ տուն պակաս է (քանի որ երգչի բոլոր գաղենները կազմված են հնգական տներից), և մենք հակված ենք կարծելու, որ սույն գաղեն խաղը իսկապես Սայաթ-Նովային է պատկանում:

6-րդ տող. 'Իստիրըս դուշման ին դառի. յայլի ձեռնմեն գուլամ յիս-համտ. խաղ 32, տող 9, խաղ 46, տող 16:

9-րդ տողում է՝ աղալաթ հուֆմի-հեֆիմ ասելով, բանաստեղծը նկատի ունի իրեն կրոնավորության բռնադատող Հերակլ թագավորին, որին «Դուն էն գլխեն», խաղի մեջ ևս անվանել է հուֆմի-հեֆիմ րաֆավուր: Եթե վրացերեն հայտնի խաղի մեջ Հերակլին դիմելով բանաստեղծը կոչ է անում՝ «Արթար դատե, չէ՛վուր թագավուր իս դուն, Վրաստանում տեր ու զորավուր իս դուն», ապա այստեղ նա դատափնտում է արդար դատ չանող թագավորին՝ «Հեղուտ մեջ ինսափ (մարդկություն), սըրտումըտ շընուփսկ ու քառամ (ազնվություն) չկա, չէ»: Հմտ. նաև սույն խաղի 14-րդ տողը՝ «Դովրաննմես դուս ին գըցի...» վրացերեն հիշյալ խաղի 16-րդ տողի հետ՝ «Դովրաննմես ընդար, ալա՛ղ, Սա՛յաթ-Նովա (ՄՀ, 128):

5 (63). «ԻՂՐԱՐ ՈՒ ԱՄԱԳ ՉՈՒՆԵՑՈՂ»

Այս խաղը ևս հայտնաբերել և հրապարակել է Գ. Թարվերդյանը: Մ. Հասարայանը աս էլ ղեռնղեղով իր ժողովածուի հավելվածում, գտել է, որ նրա «մեկ տունը պակաս է և ըստ ամենայնի մի քիչ ավելի հեռու է երգչի՝ մեզ սովոր ժառանգությանը հարազատ լինելուց» (ՄՀ, 258): Մեզ թվում է, պակաս է ոչ թե մեկ, այլ երկու տուն, քանի որ ինչպես բազմիցս նկատել ենք, երգչի բոլոր գաղենները հնգատուն են: Ի դեպ, տաղաչափությամբ. հանգերով ու բովանդակությամբ խաղն այնքան էլ անհարազատ չէ երգչի մեկ ծանոթ ժառանգությանը: Խաղի տրամադրությունը հուշում է, որ այն գրված է ժողովածուից առաջ է լինի երգչի՝ պալատից երկրորդ անգամ վտարվելուց հետո: Ուշագորավ է, որ բանաստեղծի այս շրջանում գրած երգերի մեջ ավելի ու ավելի դալի է դառնում սոցիալական բողոքի շեշտը: Խաղն ամբողջությամբ «աշխարհի ցավով» տարված պոետի ըմբոստ ելույթն է, նրա դատը ընդդեմ անմարդասեր իշխանավորի, անբարեպաշտ կրոնավորի, խառնակիչ ու ավերող շարի, անգութ ղորեղի, աղքատին զորկող հարուստի, իսկ իր ցավն ու մտածմունքը միշտ «Խիղճի, նաշարի, տընանգի, բարու ու լավի մասին է»: Սա հումանիստ բանաստեղծի ղեմնկրատական հայացքի թերևս ամենալավագույն արտահայտությունն է, որ իր սոցիալական հնչեղությամբ համարժեք է ֆրիկյան գանգատին:

1-ին տողի յարի ձեռնմանն դադ կանխմ-ը նույնությամբ կրկնված է 68-րդ խաղի 1-ին տողում (սճարի ձեռնմանն դադ կոնիմ, փըշին գերի բըլբուլ իմ յիս)։

7-րդ տող. արտաք ու իման շըմընաց-համադ. 1758 թ. գրված աղբբջաններնն «էն-դուր կուլամ» խաղի 15-րդ տողի հետ՝ «էլ ճըշմարիտ, արթար իման շըմընաց (Մ2, 197)։

9-րդ տողի հարգան (մշատսլես)՝ բառի փոխարեն Թարվեդդյանն ունի՝ հարգիգ (երբեր)։ Մ. Հասրաթյանը, իմաստից էլնելով, կատարել է այդ փոփոխությունը, որն անվերապահորեն ընդունում ենք։

6 (64). «ԱՄԵՆ ՄԵ ՄՏԻԿ ՏԱԼՈՎ»

Առաջին անգամ հրատարակել է Գևորգ Բաշինջաղյանը 1924 թ. «Մարտակոչ» թերթում (№ 181)։ Խաղը նրան էր տրամադրել երաժիշտ Սաշա Օդանեզաշվիլին (Ալ. Հովհաննիսյան), գրի առնելով Վրաստանի արխիվի մի ձեռագրից։ Բիմ կարծիքով,— գրում է Գ. Բաշինջաղյանը,— սա պատկանում է Սալաթ-Նովայի գրչին, սակայն աղավաղված է, նաև սկզբից առնվազն մի տուն պակաս է։ Ինչպես հայտնի է, Սալաթ-Նովայի հանդերևույթն ու տեխնիկան կատարյալ են։ Մենք այս բանը տեսնում ենք նրա ինքնաձեռագիր Դավթարի մեջ, իսկ Դավթարից դուրս գտնվող նրա հեղինակությունները, մանավանդ, վրացերեն լեզվով, չափազանց ալլանդակված են» («Մարտակոչ», 1924, № 181)։ Մ. Հասրաթյանն այս խաղը որոշ վերապահությամբ համարելով Սալաթ-Նովայի ստեղծագործությունը, ղեկնել է իր ժողովածուի հավելվածում (№ 66)։ Մ. Հասրաթյանին ևս կասկածի տեղիք է տվել խաղի անկատար տեխնիկան, ինչպես և Սալաթ-Նովա անվան փոխարեն գործածված Արուրին անունը, որի նման ուրիշ փաստ չկա։ «Հնարավոր է (և անիմաստփելի),— գրում է Մ. Հասրաթյանը,— որ լեզուն ենթարկված լինի խմբադրումների, հնարավոր է և այն, որ մեկը Սալաթ-Նովա կեղծանունը բաց է արել, գրել Արուրին։ Կարելի է ենթադրել, որ սա գրվել է շատ վաղուց, մինչև կեղծանուն ընտրելը և այլն։ Բայց բանն այն է, որ երգիչն այս տաղաչափությամբ հայերեն մուսամ-մազներ չունի. փոշմանելու, բարիշելու, փարաքվելու նման բառերով հանգերի սիմֆոնիա չէր ստեղծի, վերջապես՝ «կամով ու ճիտ անելով փաթափվելու վախտն է» գոհհիլ պրոգնոզով խաղ չէր ավարտի, մի հեղինակ, որի շարի զգացումն ու բարոյական նորմաները մեր են ամեն տեսակ երևակայությունից... Թեև պետք է խոստովանեմ, որ միայն նույն վերջին տան առաջին երեք, նույնիսկ չորս տողերը միանգամայն համապատասխանում են Սալաթ-Նովային։ Առաջին տունը, իր բովանդակությամբ և սկզբվելու ձևով, համապատասխանում է այդպիսին լինելուն, բայց հանդավորումը բնավ հաստիկ չէ առաջին տանը, որի բոլոր տողերի հանգերը պետք է լինեին... «-ելու վախտն է»։ Պետք է ենթադրել, որ սկզբից մեկ, կամ ավելի ճիշտ՝ երկու տուն պակասում է» (Մ2, 257)։ Համաձայն չենք միայն Մ. Հասրաթյանի այն ենթադրությանը, որ այս խաղը կարող է գրված լինել շատ վաղուց, մինչև Արուրիի կողմից Սալաթ-Նովա անունն ընտրելը։ Ինչպես հայտնի է, երգիչը հայերեն սկսել է ստեղծագործել 1752 թվականից, երբ վաղուց արդեն կոչվում էր Սալաթ-Նովա։ Հստակեցնական է, որ այդ թվականից ուղիղ տաս տարի սուսջ գրված աղբբջաններն առաջին խաղում նա իրեն արդեն Սալաթ-Նովա է կոչում (տես Մ2—137)։

Վրացական ձեռագրերի ինստիտուտում սալաթնովյան խաղեր ընդգրկող ոչ մի ժողովածուի մեջ մեղ չհաղորդվեց գտնել այս խաղի բնագիրը, չնայած դրա հայտնաբերումը գծվար թեև նոր բան ավելացներ Գ. Բաշինջաղյանի հրապարակածին։

4-րդ տողի էշխեմետ-Գ. Բաշինջաղյանի մօտ՝ էշխեմետ, շտկումը կատարել է Գ. Լեոնյանը:

6-րդ տող. շախիր քե—ամենուրեք՝ շասացիր:

10-րդ տող. մե խալվար օրախումբն—ամենուրեք՝ մեռ խալվար օրախումբն, որ ճիշտ է, քանի որ այդ տողի իմաստն է՝ մի առանձին սենյակում հաշտվելու ժամանակն է և ոչ թե մեր առանձին սենյակում: Հմմտ. վրացերեն «Անգաճ կտրած դուլտ յիս իմ» խաղի տող 8. «էրեհկ մհնակ օթախումբն համաշա յիս ու դուն ըլինք» (ՄՀ, 105):

14-րդ տողի շախ-ը, ինչպես նկատել է Խ. Միրզոյանը. «շախշուխի»-ի («ուրախ, զվարճասեր» իմաստով) «շախը» չէ, այլ «շախն-շախն»-ի («մաս-մաս արված, կտոր-կտոր արված» իմաստով) «շախ»-ը (Միլլեր, էջ 202): Այլապես կրկնը ինչո՞ւ է ասում. «էս իմ խունի ջիգարըս հաղար փաբա մի՞ անի»—այս իմ արյունոտ սիրտը հաղար կտոր մի անի: Կոմ ինչո՞ւ է ասում. «Արութինի շախ սիրտը մեկ էլ յարա մի՞ անի»: Նշանակում է սիրտը էլի է պարա արված»-վիրավորված: Իսկ կրկնակի վեբը ստացած սիրտը ինչպե՞ս կարող է «ուրախ, զվարճասեր» լինել: Տողը նշանակում է. «Արութինի մաս-մաս արված (վիրավոր) սիրտը նորից մի վերքոտիր» (ԽՄ, 92):

7 (65). «ԳԵԼՆ ՈՒ ՁՈՐԱՆՆ»

Այս առակ խաղը մեղ հատել է միայն հետագա գրառումների միջոցով: Իրանը բուլորն էլ բանավոր ճանապարհ անցած, աղավաղված տարբերակներ են: Տես աստ, տարբերակներ 33—37: Այս տարբերակներից միայն մեկը ունի երեք տուն, իսկ մնացածը հնգատուն են: Մ. Հասարթյանը, սակայն, վերականգնելով խաղը (№ 58) ստացել է վեց տուն, իր կողմից ներմուծելով մի առանձին տող՝ «համարյա չկասկածելով, որ այդպես պետք է լիներ բնագրում»: Տնաքանակը վերականգնելիս Մ. Հասարթյանին թերևս խանգարել է մյուս առակը՝ «Մախուխն ու Օխչիի միսը», որի մեզ հասած միակ տարբերակը ունի վեց տուն (տե՛ս հաջորդ ծանոթագրությունը): Պետք է նկատել, որ այս «Գելն ու չորանը» առակը Մ. Հասարթյանի կողմից ամենից ավելի անհաջող վերակազմված խաղն է, թեև իր իսկ վկայությամբ նա երկար ժամանակ աշխատել է այդ վերականգնության վրա: Նա չի վերականգնել ոչ ընդհանուր հանգը և ոչ էլ հանգավորման եղանակը: Ինչպես հաստել է Սայաթ-Նովայի այս կարգի դափիա (11 վանկանի) խաղերին, նույն հանգն են ունենում առաջին տան 2-րդ և 4-րդ տողերը, իսկ 1-ին և 3-րդ տողերը չեն հանգավորվում: Առաջին տան հանգն ու ռեզիդիբ կրկնվում են մյուս բոլոր տների չորրորդ տողերում: Խնդրո առարկա խաղի ընդհանուր հանգն ու ռեզիդիբն է՝ քն շանց կու տամ, որը և չի վերականգնված Հասարթյանի կողմից: Վերջինիս համար այս առիթով լավագույն ուղեցույց կարող էր հանդիսանալ Գ. Ախվերդյանի զրի առած և Աս. Մնացաթեանյանի կողմից հրապարակված տարբերակը, որը որքան էլ աղավաղված, այնուամենայնիվ, մյուսների համեմատ, պահպանել է բնօրինակի հանգավորումը: Դատելով Մ. Հասարթյանի ծանոթագրություններից, խաղի այդ օրինակը նրան անծանոթ է եղել: Մեր ձեռքի տակ եղած տարբերակների հիման վրա մենք կրկին վերականգնել ենք խաղը, կազմելով հինգ տուն, կատարելով որոշ լեզվական շտկումներ: Հրաժարվել ենք նաև առաջին տան մեջ գելի ու չորանի երկխոսությունից, զբոսնելով, որ դա տարբերակներից մի քանիսի մեջ մուտը է գործել Սայաթ-Նովային վերագրվող մեկ այլ դուետ-խաղի («Տղեն ու ախչիկը») առաջին տան աղեկցությամբ: Ամենելին հսկված չենք խաղի մեր վերականգնությունը համարել վերջնական և անթերի:

Չենք բացառում, որ խաղի ընօրինակը կարող էր և վեց տուն ունենալ: Սակայն եղած օրինակներով առանց էական շեղումների վեց տուն կազմել, պահպանելով հանգն ու հանդավորումը, թերևս անկարելի է:

17—18-րդ տողերի հիմքում ընկած է կարմիր կովի մասին հայտնի առածը, որ թիֆլիսահայերն ասում էին հետևյալ կերպ. «Կարմիր կովի պես կլիվում իս, կլիվում. վերջի վամը վուտը խիտում, շուռ տալիս» (Ֆ. Տեր-Աղևապետյան, էջ 121):

20-րդ տողում կրկնվող կու տամ բառը, իմաստից խնդրով դարձրել ենք կու տա. քանի որ վերջին երկտողի իմաստն է՝ դայլի հետ գործ չունեմ, հովվին եմ գովում. գոնե մի անգամ կաթի համը ցույց կտա:

8 (66). «ՄԱՍԽՈՒԽՆ ՈՒ ՈՒՉՐԻ ՄԻՍՆ»

Այս առակը նախորդ խաղի մի տարբերակի հետ հրապարակ է հանել Սկանդար-Նովան «Կովկասի լրարեր» թերթում (1912, № 36): Խմբագրությունը խաղին կից կատարել է հետևյալ ծանոթությունը. «Սկանդար-Նովան գրի է առել սրանից (1912) 15—20 տարի առաջ ուստա Փարսիդ ստեղծով մի 130 տարեկան ծերունուց (արհեստով խարաղ) և երկեն Օսեփ անվանած մի դաբաղից (կաշեգործ): Մի քանի անհասկանալի տեղեր Սկանդար-Նովան իր ուղղումներն է մտցրել»: Ի դեպ, Սկանդար-Նովան խարաղ Փարսիդից և դաբաղ Օսեփից լսել և գրի է առել ոչ միայն այս խաղերը, այլև մի քանի ուշադրալ հուշ-ալիանություններ Սայաթ-Նովայի մասին, որոնք տպագրված են «Հովիտ» շաբաթաթերթում (1913, № 13—15): Ինչպես տեսանք, 59-րդ ծանոթագրության մեջ դարաղ Օսեփը հիշել է նաև «Բաբալուր իս» երգի առաջին երկտողը: Գ. Լևոնյանը «Կովկասի լրարերից» խաղն առանց փոփոխությունների ղեկավարել է իր կազմած ժողովածուում (խաղ Սե), նշելով, որ խաղի մեջ Սկանդար-Նովան ուղղումներ է մտցրել: Թե ինչ ուղղումներ են դրանք, հնարավոր չէ ցույց տալ, բայց երևույթին նրա կատարած միջամտությունները բավական շատ են եղել: Այսպես են կարծում նշելով հետևյալ փաստի: Նույն ծերունի խարաղ Փարսիդը, ինչպես և մի քանի այլ ծերեր, հիշել են որոշ հատվածներ Սայաթ-Նովայի ինչ-որ մի կատակ-խաղից, որ կոչվել է «Երևիկ իսանի փեղբաշ արած էլը, վուրն վուր տվից խալաթի տիղ թունդ իխտիլաթի ժամանակ Սայաթ-Նովային»: Այս կատակ-խաղի հատվածները Սկանդար-Նովան վերականգնելով և իր կողմից առատորեն հավելումներ կատարելով (սաղագսելով) հրապարակում է «Հովիտ» շաբաթաթերթում (1913, № 15, էջ 231—232):

Անշուշտ, «Մասխուխն ու Ուչրի միսն» խաղի մեջ Սկանդար-Նովայի միջամտություններն այս աստիճան չեն եղել: Սակայն վեց տան առկաությունը և այն հանդամանքը, որ երգչի գրեթե բոլոր խաղերը հնգատուն են, մեզ ենթադրել են տալիս. որ զուցե Սկանդար-Նովան խաղի մեջ իր կողմից մի ամբողջ տուն է ներմուծել. գուցե և՛ երկրորդ տունը, որի չորրորդ տողի հանդերձ «...մուրաղըն յիս իմ», որոշ չափով շեղվում է խաղի ընդհանուր հանդից (...ազեն յիս իմ): Մյուս կողմից էլ, սակայն, հաշվի առնելով տների միջև եղած իմաստային-տրամաբանական կապը, բնորոշում են, որ ընօրինակը կարող էր և իսկապես ունենալ վեց տուն:

Խաղն ընդգրկելով իր կազմած ժողովածուի 2-րդ և 3-րդ հրատարակություններին մեջ (№ 59), Մ. Հասարթյանը կատարել է որոշ լեզվական, տաղաչափական ճշգրտումներ: Նա վիճելի է համարել 18-րդ տողը՝ «Դիփունըն ինձ ին գովում» քալան ու բողբոս:

«Եթե այս տողում,— գրում է նա,— աղավաղում չկա, ապա նախորդ տողում ասված «պակսիլ է օրըն» բառերը պետք է հասկանալ, որ մեծ պասի օրերը վերջանում են, և անգամ աղբատներն ու պակասավորները ոգևորված են վերահաս ուտիսով: Իսկ եթե «պակսիլ է օրըն» բառերը պետք է հասկանալ՝ վատացել են ժամանակները, ապա ա. տողին ավելի շուտ պետք է հետևեր՝ «վուր դիվի քիդ ին գովում քաշլն ու քոռըն» (Մ2, 254):

9 (67). «ՏՂԵՆ ՈՒ ԱԽԶԻՆՆ»

Այս խաղը բավական աղավաղված պահպանվել է Կ. Կեկելիձեի անվան վրաց ձեռագրերի ինստիտուտի S—2385 երգարանում (էջ 48ր, վրացատառ): Բնագրից հետո վրացերեն գրված է՝ «Ավարտվեց թնջիսը»: Առաջին անգամ, լեզվական որոշ շտկումներով, հրապարակել է վրացի բանասեր Մ. Ռափայան «Առվետական Վրաստան» թերթում (1963, № 76): Ըստ Ռափայանի, խաղը հաստատապես հեղինակել է Սայաթ-Նովան, քանի որ ա) նրա վերջին տան մեջ հիշատակված է երգչի անունը, բ) խաղում նկատվում է երգչին բնորոշ բառապաշար և գ) կառուցվածքը հիշեցնում է Սայաթ-Նովայի մի քանի այլ խաղեր («Գեյն ու շոբանը», «Ինչ կոնիմ հեթիմըն» և այլն): Ավելացնենք, որ խաղը գրված է երգչի դավիաներին բնորոշ ոտանավորով ու հանդավորման եղանակով: Խաղի մեջ հանդիպում են նաև սայաթնովյան որոշ պատկերներ: 18—19-րդ տղերը՝ «Շուտով շուտ էկար դուն, իլթիմադ արիր, նրնգա վուտիտ տակըն՝ փիանդադ արիր» հմմտ. «Յիս մե ղարիբ քյրուլի պես» խաղի 2—3-րդ տղերի հետ. «Էրեսըս դի վուտիտ տակըն՝ անց կաց փիանդադի նըման. Յար, քիդիդ խոսիլ իմ ուզում շահի իլթիմադի նըման»:

Խաղի 3-րդ տունը հետևյալ ձևով տարածված է եղել ժողովրդի մեջ.

Դարդտ դարդիս կեսն է.

Արի, ճանփեն դեսն է.

Էնպիս բան բունինք

Ոչով շտեսնե.

Թամամ աշխարումս

Դուն կուլիս գոված:

(Գ. Տեր-Աղեքսանդրյան, էջ 44)

Խաղն առաջին անգամ է մտնում սայաթնովյան երգերի ժողովածուի մեջ: Մ. Հասարայանը ծանոթ է եղել Մ. Ռափայանի հրատարակությանը, րալց ըստ երևույթին, չի հասցրել ուսումնասիրել և իր վերաբերմունքն արտահայտել, քանի որ նրա վերջին ժողովածուն լույս է տեսել նույն 1963 թ.: Միայն «Մախուլսն ու Օխըրի միսը» խաղի ծանոթագրության մեջ նա նշել է. «Երգչի անունով նման մի դուետ՝ «Տղեն ու ախիկը» վ. ԳԱ Ձեռագրերի ինստիտուտում հայտնաբերել է երիտասարդ հայագետ վրուհի Մայա Ռափայան: Դեռ ուսումնասիրված չէ» (Մ2, 254): Մենք առիթ ունեցանք ծանոթանալ խաղի բնագրին, ուսումնասիրել այն և կատարել մեր վերծանությունը, որը և հրատարակում ենք լեզվական ու տաղաչափական ղգալի շտկումներով:

Այս խաղը Սայաթ-նովային վերագրվող մի ագրեզաներին երգի հետ հրապարակել է Սերո Խանդադյանը «Գրական թերթի» 1963 թ. № 41-ում: Խաղը Ս. Խանդադյանը գրի է առել 1946 (թե՞ 1947) թ. ուսուցիչ Լյուդվիգ Նաղարյանի կողմից հավաքված հայ ժողովրդական ու գուսանական երգերի ձեռագիր ժողովածուից, ժողովածուում գետնից հանված երգերի մեծ մասը, Ս. Խանդադյանի վկայությամբ, «հայտնի գործեր էին: Կային նաև ինձ անհայտ շատ ժողովրդական ու գուսանական երգերի տեքստեր»:

Խաղը բավական աղտավաղված է, հավանաբար երկու տուն դուրս է մնացել, որոշ բառեր փոխվել են կամ նրանց տեղ այլ բառեր ու բառակապակցություններ են ներմուծվել, խախտվել են երրորդ տան հանգերը: Սա տարակուսանք է պատճառել հրապարակողին, որը խաղի մեջ որոշ տողերի, արտահայտությունների և պատկերների կողքին, որոնք «անտարակույս մեծ բանաստեղծին են», նկատել է նաև վերջինիս անհարազատ «պարզունակ տողեր, այսպես ասած՝ ոչ սայաթնովյան արտահայտություններ»: Ուստի խաղն ամբողջական ու անվերապահորեն Սայաթ-նովային պատկանելու կասկածի տակ առնելով, Ս. Խանդադյանն, այնուամենայնիվ, հարկ է համարել հրապարակել այն, «ներառյալ որոշակի, պատկանելությունը որոշելը թողնելով մասնագետներին»:

Խաղը, մեր կարծիքով, պատկանում է Սայաթ-նովային և հորինված է երգչի կրոնավորության տարիներին: Այդ է վկայում երկրորդ տողը՝ «Ինձ համա զրոնիրըն փակին, վանքի դուռն մե ղուլ իմ յիս»: Երգչի կուսակրոնության տարիներին գրված «Այիբ աստված սիրիս» խաղի մեջ ևս կա համանման մի տող. «Փյուր փակեցին դուռն, քենը բար ունի»: 63-րդ խաղի մեջ կարդում ենք. «Իզրար ու ամագ չունեցող յարի ձեռնեմեն դագ կոնիմ»: Նույնը ասում է նաև սույն խաղի սկզբում. «Յարի ձեռնեմեն դագ կոնիմ, փրշին գերի բըլբուլ իմ յիս»: Իսկ Դավթարի վերջին խաղերից մեկում (№ 43)՝ գրված 1759 թ., երգին ասում է. «Ումբըր էրադի պես գրնաց՝ ծաղըս չըխերած գիղենաք»: Այս նույն տրամադրությունը երգին արտահայտում է նաև սույն խաղի վերջին տողում. «Ասա չունիմ ումբր ու արիվ, ձըմիւ շանցած կու հալիմ յիս»: Սայաթնովյան տողեր կան նաև խաղի մյուս տներում (հատկապես նկատի ունենք 3—4-րդ և 7—8-րդ տողերը): Ինչ վերաբերում է խաղի մեջ եղած ոչ սայաթնովյան բառերին ու արտահայտություններին, ապա պիտի ենթադրել, որ դրանք աղավաղման արդյունք են: Այդպես աղավաղված են նաև այլ աղբյուրներում պահպանված հայտնի խաղերի տարբերակները, և եթե մեր ձեռքի տակ միայն այդ տարբերակները լինեին, այսինքն՝ եթե մեզ չհասներ երգչի ինքնաձեռագիրը, ապա այդ խաղերի հեղինակային պատկանելությունը ևս բավական տարակուսելի կլիներ:

5-րդ տող. վունց—տալված է՝ ֆունց:

6-րդ տող. կրոնեմեն—տալված է՝ ձեռնեմեն:

7-րդ տող. ֆանի—տալված է՝ ինչֆան:

9—11-րդ տողերի հանգերը բավական աղտավաղված ձևով են հասել՝ օրերը անցան—եղեցեղ կան—փիզ փաշ աըվին: Ավելորդ է ասել, որ Սայաթ-նովյան երգեր այս կերպ չէր հանգավորի: Մենք աշխատելով քիչ թե շատ մոտենալ Սայաթ-նովային, այդ բառերը համապատասխանաբար փոխել ենք՝ օրերը դար—խաղերը յար—փիզ տը—վին խար:

Այս խաղը ծանոթ է եղել Մ. Հասրաթյանին (Ս. Խանզադյանի վկայությամբ), բայց նա կամ չի կամեցել, կամ չի կարողացել այն զետեղել իր կազմած ժողովածուի մեջ, որն արդեն գտնվում էր հրատարակության ընթացքում:

11 (69). «ՅԱՐ, ՔՈՒ ԿԱՐՈՏՆ ՔԱՇՈՒՄ ԻՄ»

Գրի է առել Գ. Թարվերդյանը 1908 թ. Թիֆլիսում, Աննա Մուրադյանից և առաջին անգամ հրատարակել «Գրական թերթի» 1936 թ. X 3-ում՝ երգչի մահվան 140-ամյակի կապակցությամբ: Նշված թերթում արդեն հրապարակված լինելու պատճառով Գ. Թարվերդյանը այն չի զետեղել իր կազմած «Հայ աշուղներ» գրքում (Երևան, 1937), որտեղ նա հրապարակել է միայն անտիպ երգեր: Տպագրել է հաջորդ տարին (1938) Պատմություն և գրականության ինստիտուտի «Տեղեկագրում» (էջ 250):

Խաղը, մեր կարծիքով Սայաթ-Նովային է պատկանում, բայց բավական աղավաղված է. հավանաբար նրանից երկու տուն դուրս է մնացել: Գրված է երգչի գաղանթների չափով ու հանգավորման եղանակով, լեզուն և պատկերները հարադատ են Սայաթ-Նովային:

3-րդ, 11—12-րդ տողեր.

Սերբտ սիրտըս կես է արիւ ճահվարդարի թըրի նըման...

Թեմուր կորցնիս, էլ չիս զըթնի նորից մեկ էլ Սայաթ-Նովեն,

Նա մի հատ էր, աշխար էկավ քանց մի ղարիբ հուրի նըման:

Հմտ. խաղ 21, տող 48—50.

Վախում իմ, թե սերբտ սիրտըս կես անի.

Կու մեռնիմ, էլ ինձի պես չիս տեսանի.

Քու Սայաթ-Նովեն իմ, մի անի ղիմիշ:

Խաղը հրատարակել ենք մի շարք շտկումներով ու սրբագրումներով:

2-րդ տող. փըռի—տպված է փիբի

4-րդ տող. էրից—տպված է՝ վառեց:

5-րդ տող. յար բեմուրվար—տպված է՝ այ բեմուրվար:

7-րդ տող. Թե ղադ կոնիս, էս էլ շատ է. սպանեցիր ինձ քամա բարաք-տպված է՝ Թե պատծում իս, էս էլ բավ է, տանջեցիր ինձ քամա բարաք:

12 (70). «ՅԻՍ ՄԵ ՂԱՌԻԲ ԲԼԱՌԻԼԻ ՊԵՍ ԳՈՒՆ ՄԵ ԳՈՒԼՇԱՆ»

Գ. Թարվերդյանի հայտնաբերած խաղերից էլ Առաջին անգամ տպագրվել է «Հայ գուսաններ» գրքում, ապա Պատմության և գրականության ինստիտուտի Տեղեկագրում (էջ 247): Բավական աղավաղված է և թերի. հավանաբար այստեղից էլ երկու տուն պակաս է: Գրված է սայաթնովյան թասլիբների չափով և հանգավորման եղանակով: Լեզվով, ոճով ու պատկերներով հիշեցնում է երգչի որոշ խաղեր: Այսպես, առաջին տողը կազմող համեմատությունը գործածված է 6-րդ խաղի առաջին տողում («Յիս մե ղարիբ բլրուլի պես...»): Հմտ. նաև տող 6 «Լիզուտ նուղուլեմեն քաղցըր» և խաղ X 48, տող 16՝ «Քաղցր իս խոսում՝ լիզուտ է շաքարի բարաթ» կամ տող 7—8՝ «Գանա

օրեն մի օր հարցուր, իմացա՞ր ահալլես աչաք» և խաղ № 64, տող 4՝ «շիս հարցրեում իմ հալլես» նաև խաղ № 55, տող 10՝ «մեկ օր շահարցրիր յարին»։ Այնուամենայնիվ գեղարվեստական արժեքով խաղը բավական ցածր է երգչի հայերեն ստեղծագործություններից և մեր կարծիքով ավելի շուտ մի նմանակութուն-իմիտացիա է։

13 (71). «ԲԼԲՈՒԼԻ ՊԵՍ ԶՍՅՆ Է ՏԱԼԻ»

Գտնվում է Գ. Ախվերդյանի կազմած «Հայ աշուղներ և երգիչներ» ձեռագիր ժողովածուում (Մատենադարան, ձեռ. № 3751, էջ 421)։ Էջի ձևկատին գրված է՝ «Սաեադ նով»։ Նրանից քիչ հեռու, ուսերին տառերով՝ «Աշուղ Բանգի»։ Խաղը հրապարակել է Աս. Մնացականյանը 1941 թ. Մատենադարանի գիտական նյութերի ժողովածուի 1-ին համարում (էջ 186)։ Աս. Մնացականյանը խաղի ձեռագրական տարբերակը հրապարակել է նույնությամբ, առանց շտկումների ու սրբագրումների։ Սակայն իր առաջաբան խոսքի մեջ կատարել է մի քանի դիտողություններ։ Ինչպես ցույց է տվել Աս. Մնացականյանը, խաղը ծանոթ է եղել Ախվերդյանին, որը իր կազմած խաղերի ժողովածուի հրատարակության մեջ (ԳԱ, 91) նրանից մեկըբրում է կատարել։ Աս. Մնացականյանը, սակայն, զարմանում է, որ այս խաղը Գ. Ախվերդյանը իր կազմած ժողովածուի մեջ չի մտցրել։ Պատճառը պարզ է. Գ. Ախվերդյանը անվերապա՞հ ընդունելի համարելով միայն երգչի ինքնաձեռագիր Դավթարը. իր իսկ խոստովանությամբ հրատարակել է սոսկ նրա մեջ եղած խաղերը...

Խաղը բավական աղավաղված է, և տարբեր է երգչի մեկ ծանոթ ժառանգությունից, այս իսկ պատճառով Մ. Հասրաթյանը կտրականապես մերժել է այն կապել երգչի ստեղծագործությանը։ Զլինելով այդքան կատեգորիկ, մինքն խաղը բավական շտկումներից ու սրբագրումներից հնաո զետեղել ենք Բ հավելվածում, թեև մենք ևս հակված չենք այն Սայաթ-Նովայի ստեղծագործությունը համարել։ Բայց և պիտի խոստովանել, որ նրա հանգերն ու որոշ տողեր սայաթնովյան շունչ ունեն։ Ինչպես հաստիկ է երգչի գաղելներին ու մոխամաղներին, այս խաղը հօրինված է 16 վանկանի ոտանավորով և կաղմված է հինգ տնից։ Սակայն տներում տողերի քանակն անհավասար է. առաջին տունը քառատող է, երկրորդ, երրորդ, չորրորդ տները՝ հնգատող, վերջին տունը՝ վեցատող։ Դա, ըստ երևույթին, աղավաղման արդյունք է. հավանաբար խաղը հղել է մուխամազ, այսինքն ամբողջությամբ կազմված է եղել հնգատող տներից։ Խաղի մեջ այնքան շատ են Սայաթ-Նովայի մեզ ծանոթ բառապաշարի մեջ չմտնող բառերը, որ Աս. Մնացականյանը ստիպված է եղել մի ամբողջ բառարան կազմել (էջ 187)։ Տողերի ղղայի մասը թույլ է և անհարազատ Սայաթ-Նովայի արվեստին։ Եվ դա միայն աղավաղման արդյունք չէ։ Ն. Աղրալյանը ծանոթ լինելով միայն Գ. Ախվերդյանի բերած տողին, նկատել է, որ այդ «տողն իր վերլուծական կաղմով գոհհիկ մտածության արդյունք է և անկարելի է համարել իբր Սայաթ-Նովայի համադրող տաղանդի գործ» («Հանդես ամսօրյա», 1924, էջ 368)։

1-ին տող. ինչ ֆաղբը ավազ է աճում—Աս. Մնացականյանը ավազ-ը նույնացրել է ավաջ բառի հետ և բացատրել ժայն, երգ, հնչյուն, միալար ձայն»։ Սակայն այստեղ գործածված է ոչ թե ավաջ այլ ավազ պարսկերեն բառը, որ նույնպես նշանակում է ձայն, հնչյուն, մեղեդի (Тамбурнет Арутни, Руководство по восточной музыке, стр. 45)։

2-րդ տող. դուլ-դարավաշ—ձեռագրում՝ դուշ դարավաշ:

3-րդ տող. փոքալըն—ձեռագրում՝ ջոտկը:

15-րդ տող. էրեօըն—ձեռագրում՝ քըշերն:

17-րդ տող. կու հանն—ձեռագրում՝ հանիլ է:

22-րդ տող. ջավաճիր ու արմագ փար է—ձեռագրում՝ անգին ջավաիր արմագտ փար է:

23-րդ տող. ճարն—ձեռագրում ճառն: Այս տողը ոչ թե նշանակում է՝ ով հոտո չի զգացել, աշխարհում էլ ի՞նչ կարող է խոսել (ճառել), այլ՝ ով հոտո չի զգացել, աշխարհում էլ նման բան չի գտնի (ճարի):

24-րդ տող. քե հարցընիս—ձեռագրում՝ հարցրին:

14 (72). «ԱԶԿԻՐՏ ՕՍԿԵ ՓԻԱԼԱ»

Այս երկկիզվյա խաղի բնաղիբը հայտնաբերել և հրապարակել է Գ. Թարվերդյանը: Ամբողջական հայերեն տարբերակը հրապարակվում է առաջին անգամ: Ընդգծված տողերը հայերեն են, մյուսները մեր կողմից թարգմանված են աղբյուրաբաններից:

Խաղի՝ Սայաթ-Նովային պատկանելու օգտին են խոսում հետևյալ հանգամանքները. ա) Սայաթ-Նովան հեղինակել է երկու այլ հայերեն-թուրքերեն ինչպես և երկու պարսկերեն-թուրքերեն և մի քառալեզու խաղ: բ) Խաղը գրված է սայաթնովյան թաս-լիբների հիմնական շափով և հանգավորման եղանակով (հմտ. № 9 թասլիբի հետ): Ինչպես բնորոշ է Սայաթ-Նովայի արվեստին, անթերի է հանգավորումը (աղլա-քաղլա-բաղլա, պահիր-շահիր-ջավահիր): Ընդ որում հրկրորդ տան հանգավորված բառերը գտնում ենք նաև 12-րդ խաղի 4-րդ տան մեջ: գ) Խաղի մեջ կիրառված որոշ պատկերներ ու արտահայտություններ հիշեցնում են երգչի այլ խաղերը («Բոլբոլ նրման սալբու ծառի» հմտ. խաղ 24. տող 5: «Ղուլի պես դըռնումըտ պահիր» հմտ. խաղ № 47, տող 5 և այլն): Ուշագրավ է, որ խաղի առաջին տողը կազմող փոխաբերությունը գործածված է նաև № 58 հայերեն-թուրքերեն խաղի 4-րդ տողում, ինչպես և թաժամ աշխար» երգի 11-րդ տողում: Հավանաբար խաղից մեկ տուն պակասում է՝ լալ բառի փոխարեն երկու դեպքում տպված է դուռ (աղամանդ), որ խորթ է երգչի բառապաշարին: Բացի այդ լալը ոչ միայն նշանակում է թանկագին քար, ուրբին, այլև՝ պայծառ կարմիր գույն: այս իմաստով էլ այն առաջին տան մեջ կապվում է «ռանգըն արունի նման է» տողին:

ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ

1. Գտնվում է Օհանի ձեռագրի 70 ա էջում: Խաղի վերջում Օհանը գրել է. «Այսպես, Սայաթ-Նովան գովում է մեր հայրական քամանչան»: Հրապարակվում է առաջին անգամ:

2. Գտնվում է Օհանի ձեռագրի 58ա էջում: Հրապարակվում է առաջին անգամ:

3. «Դուն էն զլխեն» երգի այս տարբերակը գտնվում է Օհանի ձեռագրի 64 էջում: Հրապարակվում է առաջին անգամ:

4. Գտնվում է Գ. Ախվերդյանի արխիվում պահվող վրացատառ ձեռագիր տետրում (№ 56—1-ին, էջ 4): Սկսվում է «Դուն էն գլխեն» երգի առաջին տան վերջին տողով, որին հաջորդում են նույն երգի առաջին և երրորդ տողերը: Բացակայում է երկրորդ տողը: Հաջորդ երկու տները համապատասխանում են «Աջաք քու սիրտն ո՛վ շինից» խաղի երկրորդ և երրորդ տներին: Իսկ վերջին՝ չորրորդ տունը համապատասխանում է «Դուն էն գլխեն» երգի վերջին քառատողին: Հրապարակված է մեր կողմից «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում (1976, № 2, էջ 134):

5. Այս վարսաղ խաղը, որ Երգչի Դավթարում հյուսված է ժիս կանչում իմ լալանին» երգին, գտնվում է Օհանի ձեռագրի 59 էջում: Պակասում է բնագրի չորրորդ տունը: Հրապարակվում է առաջին անգամ:

6. Գտնվում է Օհանի ձեռագրի 62 էջում: Պակասում է բնագրի չորրորդ տունը: Առաջին անգամ հրապարակել է Լ. Մելիքսեթ-Բեկը 1936 թ. «Պրոլետար» օրաթերթում (№ 3, տե՛ս նաև «Տեղեկագիր», 1949, № 4, էջ 34—35):

7. Գտնվում է Կ. Կեկելիձեի անվան վրացական ձեռագրերի ինստիտուտի S 3686 ձեռագիր երգարանի 46—47 էջերում: Վրացատառ է: Զունի տների չորրորդ տողերը կազմող «Բարով տեսա իմ սիրեկան» կրկնատողերը, խաղի վերջում կա մի վրացերեն ծանուցում, որտեղ ասված է. «Սայաթ-Նովայի ասած մոլիամբաղը. նախ հայ տերտեր էր, իսկ երբ կուսակրոն դարձավ, այն ժամանակ ասաց այս» (թարգմ. Լ. Մելիքսեթ-Բեկի): Այս վկայությունն, անշուշտ, հավաստի չէ, քանի որ սույն խաղը, որի բնագիրը գտնվում է Դավթարում, Սայաթ-Նովան գրել է մինչև հոգևորական դառնալը: Այստեղ ուշագրավն այն վկայությունն է, որ մեր երգիչը մինչև կուսակրոնությունը ընդունելը եղել է քահանա, մի բան, որ հաստատվում է մի քանի այլ փաստերով: Սույն տարբերակն առաջին անգամ հրապարակել է Լ. Մելիքսեթ-Բեկը 1930 թ. լույս տեսած «Սայաթ-Նովայի անձնավորությունը» վրացերեն շխատության մեջ (նույնը տե՛ս նաև «Պրոլետար», 1936, № 3, «Տեղեկագիր», 1949, № 4, էջ 34—35): Ներկայացվող տարբերակը հրապարակված է ձեռագրից: Այս և նույն ինստիտուտի ձեռագրերում պահպանվող մյուս տարբերակները մատնանշել է Պ. Մուրադյանը «Սայաթ-Նովան ըստ վրացական աղբյուրների» շխատության մեջ:

8. Գտնվում է Օհանի ձեռագրի 70 էջում: Պակասում է բնագրի չորրորդ տունը: Հրապարակվում է առաջին անգամ:

9. «Էշխեմենն էնպես վառվիլ իմ» երգի այս տարբերակը գտնվում է Մաշտոցյան Մատենադարանի № 9212 ձեռագիր երգարանում (էջ 7): Պակասում է բնագրի 4-րդ տունը: Հրապարակվում է առաջին անգամ:

10. Գտնվում է Օհանի ձեռագրի 61 էջում: Պակասում է բնագրի 4-րդ տունը: Հրապարակվում է առաջին անգամ:

11. Գտնվում է Օհանի ձեռագրի 67ա էջում: Պակասում է բնագրի 4-րդ տունը: Հրապարակվում է առաջին անգամ:

12. Գտնվում է Օհանի ձեռագրի 65ա էջում: Պակասում է բնագրի 4-րդ տունը: Հրապարակվում է առաջին անգամ:

13. Գտնվում է Օհանի ձեռագրի 66 էջում: Հրապարակվում է առաջին անգամ:

14. Գտնվում է Ախվերդյանի արխիվում (№ 56—1-ին, էջ 2): Վերնագրված է՝ Մոլիամբաղի: Վերին ձախ անկյունում Ախվերդյանը մատիտով նշել է՝ «կայ»: Այսինքն՝ խաղը կա երգչի Դավթարում: Պակասում է բնագրի չորրորդ տունը: Հրապարակված է մեր կողմից «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում (1976, № 2, էջ 131—32):

15. Գտնվում է Կ. Կեկելիձեի անվան մրացական ձեռագրերի ինստիտուտի S 2385 ձեռագիր տաղարանում (էջ 61 ր): Վրացատառ է: Խաղի վերջում վրացերեն գրված է՝ «Անվարտվեց մոխանրաղը»: Հրապարակվում է առաջին անգամ:

16. Գտնվում է Գ. Ախվերդյանի կազմած «Հայ աշուղներ և երգիչներ» ձեռագիր ժողովածուում (Մատենադարան, ձեռ. № 3751, էջ 716): Պակասում է առաջին տան «Անվարտվեց մոխանրաղը»: Հրապարակվում է առաջին անգամ:

17. Գտնվում է Օհանի ձեռագրի 69 էջում: Պակասում է բնագրի 3-րդ տունը: Տարբերակի նախավերջին տունը հրապարակել է Գ. Ասատուրը «Աղզադրական հանդեսում» (գիրք 10, էջ 110, հմմտ. ԳԼ, 171): Ամբողջական տարբերակը հրապարակվում է առաջին անգամ:

18. Գտնվում է Օհանի ձեռագրի 71 էջում: Պակասում են բնագրի երրորդ և հինգերորդ տները: Հրապարակվում է առաջին անգամ:

19. Գտնվում է Օհանի ձեռագրի 61ա էջում: Հրապարակվում է առաջին անգամ:

20. «Յար, թիզ իսկի զավալ շըլի» խաղի այս տարբերակը գտնվում է Օհանի ձեռագրի 64 էջում: Բացակայում է առաջին տողը, որի փոխարեն ներմուծված է տարբերակի 4-րդ տողը: Հրապարակվում է առաջին անգամ:

21. Գտնվում է Օհանի ձեռագրի 68 էջում: Պակասում է բնագրի երրորդ տունը: Տարբերակի 3-րդ և 4-րդ տները հրապարակել է Գ. Ասատուրը «Աղզադրական հանդեսում» (գիրք 10, էջ 109), որտեղից դրանք արտատպվել են Գ. Լևոնյանի ժողովածուում (ԳԼ, 163—164): Ամբողջական տարբերակը հրապարակվում է առաջին անգամ: Տե՛ս նաև 43-րդ խաղի ծան.:

22. Գտնվում է Օհանի ձեռագրի 67 էջում: Հրապարակվում է առաջին անգամ:

23. Գտնվում է Օհանի ձեռագրի 66ա էջում: Պակասում է բնագրի երկրորդ տունը: Առաջին անգամ հրապարակել է Գ. Ասատուրը «Աղզադրական հանդեսում» (գիրք 10, էջ 108—109), որտեղից արտատպվել է Գ. Լևոնյանի ժողովածուում (ԳԼ, 167): Հրապարակում ենք մեր վերծանությունը:

24. Գտնվել է Գ. Լևոնյանի անձնական գրադարանի մի աշուղական ձեռագիր երգարանում: Հրապարակել է Լևոնյանը իր ժողովածուի ծանոթագրությունների րաժնում (ԳԼ, 167): Վերջին տան երկրորդ տողը պակասել կամ անընթեհունելի է եղել, և Լևոնյանը լրացրել է ըստ Օհանի տարբերակի:

25. Գտնվում է Գ. Ախվերդյանի կազմած «Հայ աշուղներ և երգիչներ» ձեռագիր ժողովածուում (Մատենադարան, ձեռ. № 3751, էջ 714): Հրապարակվում է առաջին անգամ:

26. Գտնվում է Գ. Ախվերդյանի արխիվում (№ 56—1-ին, էջ 5): Տարբերակի առաջին և երկրորդ տները համապատասխանում են «Պատկիրբոտ զայամով քաշած» երգի առաջին և չորրորդ տներին, իսկ վերջին տունը՝ «Գուն էն գլխեն» երգի երկրորդ քառատողին: Հրապարակված է մեր կողմից «Բանբեր Հայաստանի արխիվներին» հանդեսում (1976, № 2, էջ 135):

27. Գտնվում Օհանի ձեռագրի 63ա էջում: Հրապարակվում է առաջին անգամ:

28. Գտնվում է Գ. Ախվերդյանի արխիվում (№ 56—1-ին, էջ 3): Վրացատառ է: Վերին ձախ անկյունում Ախվերդյանը մատիտով նշել է՝ «չխայ», այսինքն՝ խաղը չկա երգչի Դավթարում, իսկ այն անկյունում նշել է՝ «Առայթ-Նովայ»: Մ. Հասրաթյանի կաթիճով այս տարբերակը Ախվերդյանը ձեռք է բերել իր կազմած ժողովածու «սպազրելուց հետո, այլ կերպ, կղետեղեր ժողովածուի մեջ» (ՄՀ, 249): Մինչդեռ, ինչպես

ցույց է տալիս Ախվերդյանի ձեռագրերի ուսումնասիրությունը, այս խաղը մինչև ժողովածուի հրատարակությունը եղել է նրա ձեռքի տակ, սակայն, քանի որ Ախվերդյանը հրատարակել է միայն Դավթարում եղած խաղերը, ուստի և իր գրքում չի զետեղել ինչպես այս, այնպես էլ իրեն հայտնի մի քանի այլ խաղեր, որոնք չկան երգչի ձեռագրում:

Աղավաղված է հատկապես տարբերակի վերջին տունը, որի 1-ին և 3-րդ տողերը սերում են «Պասկիրբտ ղալամով քաշած» խաղի վերջին տան համապատասխան տողերից: Ուշագրավ է տարբերակի 7-րդ տողը, որն ավելի մոտ է Բելում բնագրին (հմտ. խաղ 52, տող 7):

Առաջին անգամ հրապարակել է Գ. Ասատուրը «Գրական թերթում» (1934, № 17). ալգսեղից արտասուված է «Վեմ»-ում (1934, հուլիս-օգոստոս), որտեղից և այն մերտեղ է Ռ. Արարհամյանի կազմած ժողովածուի մեջ: Սույն տարբերակը նշանակալից արժեք է ներկայացնում, քանի որ խաղի հեղինակային բնագիրը չի պահպանվել, այլ հասել է Օհանի արտագրությանը, որ նույնպես աղավաղված է ու պակասավոր: Տարբերակի մեր վերծանությունը հրապարակել ենք «Բանբեր Հայաստանի արխիվներում» (1976, № 2, էջ 133):

29. Գտնվում է Օհանի ձեռագրի 57ա էջում: Այստեղ էլ թուրքերեն կիսատողեր ենրկայացնում ենք Մ. Հասրաբյանի թարգմանությամբ, ընդգծելով հայերեն հատվածները: Տարբերակի երրորդ տան առաջին երկու տողերն ամբողջությամբ հայերեն են, որ աղավաղման արդյունք է: Հրապարակվում է առաջին անգամ:

30. «Բարավոր իս» հրդի միակ ամբողջական տարբերակն է, որի հիման վրա հնարավոր է եղել առավել լրիվությամբ ու ճշտությամբ վերականգնել այդ գեղեցիկ սիրերգը: Գտնվում է Մաշտոցյան Մատենադարանի № 10293 ձեռագրում (էջ 27ր—28ա): Առաջին անգամ հրապարակել է Ասատուր Մնացականյանը «Գրական թերթում» (1966, № 51): Այս և մյուս տարբերակների միջոցով Աս. Մնացականյանը նույն համարում ենրկայացրել է նաև խաղի իր վերակազմությունը (տե՛ս աստ ծան. 59): Սույն տարբերակի 15-րդ տողը Աս. Մնացականյանը վերծանել է այսպես. «Կող մարդու նման կաղօվերեզ ծիկ է՛ու տա, տակիով կու հանն»: Մյուս զեպերում մեր վերծանությունը առանձնապես չի շեղվում:

31. Այս թերի ու աղավաղված տարբերակը հրապարակել է Գ. Տեր-Աղեքսանյանը իր «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» գրքում (էջ 39): Նույնը տե՛ս նաև «Արձագանք» 1885, № 1, էջ 4: Ըստ հրատարակչի, սույն տարբերակը նույնությամբ ընդօրինակված է աշուղական երգեր պարունակող մի ձեռագրից:

32. Գտնվում է Գ. Ախվերդյանի կազմած «Հայ աշուղներ և երգիչներ» ձեռագիր ժողովածուում (Մատենադարան, ձեռ. № 3751, էջ 421): Հրապարակել է Ասատուր Մնացականյանը ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագրում» (1947, № 5, էջ 87): Ձեռագրում այս տարբերակին հաջորդում է մի բառատող «Աջաբ բու սիրտն ո՞վ շինից» խաղից: Այդ բառատողը Աս. Մնացականյանը սխալմամբ ընդգրկել է սույն տարբերակի կազմում, մինչդեռ ձեռագրում էլ դրանք իրարից անջատ են արտագրված:

33. «Գին ու շորանք» խաղի այս թերի տարբերակը հրապարակել է Սկանդար-Նովան «Կովկասի լուսեր» թերթում (1912, № 36): Այստեղից արտասուված է Գ. Լեոնյանի ժողովածուի ծանոթագրություններում (ԳԼ, 175):

34. Տպագրված է «Բազմավեպում» (1893, էջ 207): Խաղի վերջում նշված է՝ «Ժողովրդական երգիչ Սայադնով»:

35. Սույն տարբերակը հրապարակել է Գ. Տեր-Աղեքսանդրյանցը «Խիֆլիսեցոց մտավոր կյանքը» գրքում (էջ 39—40): Նույնը տե՛ս նաև «Արձագանք» 1885, № 1, էջ 3—4: «Արձագանքում» հրապարակված տարբերակը մի փոքր շեղվում է «Խիֆլիսեցոց մտավոր կյանքը» գրքում տպագրվածից: Այսպես, տարբերակի 12-րդ տողը «Արձագանքում» տպագրված է՝ «էրկթե կրկալը մենգալ կախ կոնիմ, փուրումա կու խցկիմ ժանգոտ խանջալը»: Մյուս տարբերություններն էական չեն: Խաղի վերջում փակագծերի մեջ գրված է՝ Բեշնիս: Սույն տարբերակը անփոփոխ ձևով ղետեղվել է Գ. Լևոնյանի ժողովածուի մեջ (խաղ ԾԶ):

36. Գտնվում է Գ. Ախվերդյանի կազմած «Հայ աշուղներ և երգիչներ» ձեռագիր ժողովածուում (Մատենադարան, ձև. № 3751, էջ 926): Հրապարակել է Աս. Մնացականյանը («Տեղեկագիր» 1947, № 5, էջ 89):

37. Գտնվում է ՀՍՍՀ Կենտրոնական արխիվում պահվող մի ձեռագիր պիեսի մեջ (Փոնդ № 2, գործ № 2446): Հայտնաբերել և հրապարակել է Գ. Հարությունյանը («Էջմիածին», 1947, մալիս-հունիս, էջ 55—56):

Ար-աբ—ջուր, ջուր (արցունք իմաստով), էրկու աշկես էրկու այլք էրկու բեն (աբ-աբ-53)

Աբով—պատճառով, հույսով (70)

Աբրեշում—մետաքս

Ագուր—թրծած աղյուս (51)

Աղաբ—համեստություն, բարեկրթություն (14, 19, 27)

Աղալաթ—1. արդարություն, արդարադատություն; 2. նեխիմ ու դադաստան չըկա, մե դրուստ աղալաթ չըկա (39);

2. Արդար, անաշատ: է՛յ աղալաթ ճուֆմի-նեխիմ, սուլըս ի՞նչ է, ասա ինձի (62)

Աղա—տանջանք, շարշարանք (35)

Ազիզ—սիրելի, թանկագին

Արամի գալ—աղամորդի, մարդ (22)

Ալ—կարմիր, ծիրանի: Ալ անիլ-կարմիր ներկել (44)

Ալալ—փոքրիկ գիշատիչ թռչուն: Յիս բլբուլ իմ, վարքս փալից ալալն (58)

Ալամ—զրոշակ: Ման իս գալի ալամի պես (41)

Ալավ—կրակ (169)

Ալի—ալիք (5)

Ալիֆլամա—այբբենաշար ոտանավոր (տ՛ն խաղ 53)

Ալմաս—աղամանդ

Ախար—հանդերձյալ կլանք, անդրաշխարհ (63)

Ակնակապ—ականակոտ, ականազարդ (24)

Ակոա—ատամ (հոգն. ակոեֆ, ակըոֆնիր)

Անի—ահեղ: Անի շար-ահեղ օրենք, ահեղ դատաստան (4): Գուցե ե՛ (արար.) շնորհալի, երևելի

Անվալ—զրույթյուն, վիճակ (70)

Անուգար—ախ ու վախ, հեծեծանք: Է՛լ յիս կու փաշիմ էս դուսեն՝ բուղլի ահուգար ունենամ (6): Անուգար փաշիլ—հառաշել, հեծեծալ: Անուգար իմ փաշում, ամա՛ն (4),

Աղա—տեր, պարոն: Աղերումեն—տերերից (46)

Աղու—թույն (62)

Ամա—համար:

Ամա—բայց, սակայն

Ամագ—հրախտիք (68)

Աման—զուլթ հայցող բացականչություն

Ամարաթ—ապարանք, դղյակ (40)

Ամբ—ամպ

Ամբար—ամրա, բուրկեն, մոմանման թանկարժեք անուշահոտ նյութ, որ ստացվում է կաշալոտի (վիշապաձուկ, ամբեր) մարսողության մնացորդներից, այժմ էլ օգտագործվում է որպես խառնուրդ օծանելիքի արտադրության մեջ (31)

Ամբարշա—պարանոցի զարդ (59, 71)

Այան—հայտնի, պարզ: Այստեղ՝ սովորական, անտարբեր: Ով ֆիզի այան մտիկ տա, Արեւիկն Կայան մտիկ տա (38)

Այար—եթե: Դլուխս մատաղ կոնիմ՝ դարուլ անիս, յա՛ր, այար (60)

Այիբիմ—այբուբեն (54)

Այիբ—այբ

Այնաբանդ—հայելադարդ, հայելապատ
(4)

Այնում գալ—ուշադրութեան արժանաց-
նել, կարեւորութիւն տալ: Կազմված է
արաբերեն այն (աչք) և հայերեն ում ներ-
գոյական հոլովածէի վերջավորութիւնից:
Օձով այնումո չէ գալիս (33)

Այվան—պատշգամբ, սրահ (1, 59)

Անբան—անխոս, անաւարկելի. զուցե և՛
չբանեցրած: Անբան օսկու ռախտ իս,
գո՛գալ (33)

Անբարի—ոչ բարի, չար

Անգալ—Անաղնիվ, ստոր, բանսարկու
(38, 42, 47)

Անգան կալիլ—լսել, ականջ դնել (19,
55)

Անգոռձիլ—անձեռագործ, հրաշալի (25)

Անգրծակի—հանկարծ, հանկարծակի
(55)

Անդազա—առած, ասացվածք: Եւն-
անդազ—շահական խոսք (6)

Անեղ—աղեղ: Անեղի լարն կտրւիլ է
(37)

Անգարնիշ—առանց ոսկե դրվադի,
առանց ոսկե նիշի: Կազմված է հայե-
րեն ան ժխտական նախածանցից և
պարսկերեն զարնիշ (ոսկենիշ) բառից:
Անդալամ, անգարնիշ քաշած օսկու պես է
փայլում ունփտ (31)

Անխաւը—անծախս, ծախս չպահանջող:
Կազմված է հայերեն ան ժխտական նա-
խածանցից և արաբերեն խաւը (ծախս)
բառից (25)

Անհնամալու—չհնացող, շմաշվող

Անդալամ—նկարչի վրձին շտեսած,
անձեռակերտ: Կազմված է հայերեն ան
ժխտական նախածանցից և արաբերեն
դալամ (գրիչ, վրձին) բառից (31)

Անդամ—անհոգ, անվիշտ: Կազմված է
հայերեն ան ժխտական նախածանցից և
արաբերեն դամ (հոգս, վիշտ) բառից
(33)

Անդալիդ—տառնց նալակի: Կազմված
է հայերեն ան ժխտական նախածանցից և

արաբերեն դալիդ (նալակ) բառից (60)

Անմաս անիլ—առանց հաղորդութեան,
անօրին սպանել (21)

Անջալ—հաղիվ, միայն թե: Անջալ
զցիս էշխի մեշն (2)

Անց կենալ—դրժել, հրաժարվել: Անց
մի՛ կենա, քե հալալ իս (4)

Անհաւար—անաւի, աւից հոռու: Կազ-
մված է հայերեն ան ժխտական նախա-
ծանցից և արաբերեն հաւար (աւի, եղբ)
բառից (60)

Աշկարա—բացահայտ, ակնհայտ (64)

Աչար—արդիւր

Աչալ—օրհաս, մահ (44, 64)

Աշալիք—զարմանալի, անսման (6,
26)

Առակալուր—առակով ասված, փո-
խաբերական իմաստով (17)

Առաշ—նախ, սկզբում (1)

Առուտեման—առաւիտայան: Առուտեմե-
առաւիտովանից: Առուտվան—առաւիտյան,
վաղորդյան

Ասլ—աղնիվ, աղնվացեղ. բարեկիրթ
(36, 47)

Ասլգալա—քաշատոհմիկ. աղնվացեղ,
բարեկիրթ (44)

Ասկ—1. ազգ, տոհմ: Ասկա ասկերումն
զոված (20): 2. Բարեկամ, ազգական:
Էյրիբարըն վիրացիլ է, ասկ ու բարեկամ
չրկա, չէ (62)

Ասմալուր—Հայսմալուրք, համաբրիս-
տոնական և աղգալին սրբերի վարք-
կենսագրութիւններ պարունակող ծիսա-
կան ժողովածու (11, 41)

Ավազ—երգ, ձայն մեղեդի, հնչուն:

Ավազ անիլ—երգել, քաղցր խոսել (71)

Ավալ—նախ, առաջ (3)

Ավարա—անգործ, թափառական (64)

Ավիլի—որսորդ (60)

Ավտալ—հավատալ

Ատլաս—կերպաս, սնդուս

Ար—ամոթ, ինքնասիրութիւն (14, 19)

Արալիշ—հարդարումն-կտրելով (21,
60)

Արբաբ — տեր || տիրական, բռնակալ, իշ-
խող, տանջող (7, 8, 20)

Արգ — խնդրանք, աղերսագիր: Արգ
անիլ — խնդրել, աղերսանքով հայտնել (11)

Արիւն — արյուն

Արիւկակալ — արեւ առած, արեւատեր (4)

Արիւ — առու (59)

Արմանալու — զարմանալի, հրաշալի (49)

Արբ — իրավունք, իշխանություն (6)

Բաբ — համեմատ, համասպասանան:

Բաբ անիլ — համեմատել (20)

Բաբալ — տեսակ, ձև (3, 11)

Բաղա — անտեղի կորուստ (67)

Բազա — բազե (35)

Բազի — ոմն, ոմանք, աշխարհի (15)

Բալաւն — մեղրի խորիսիս (72)

Բալա, բալաւ — գուցե, թերեւ (26,

37)

Բանար — զարուհ (71)

Բաղար — ալգեստան (30, 40)

Բաղման — ալգեստան, նույնն է՝ բաղ-
մանի

Բանգ — հաշիշ, թմրադեղ

Բանդ — կապ, հանգուց: Բանդ անիլ —
կապել, կաշկանդել (12)

Բանդա — ստորուկ, գերի (11)

Բանդիվան — անտեր, անճարակ (71)

Բանդիվար — կապված, սիրահարված
(71)

Բանգ — խոսք, ասույթ, ասացվածք

Բաշ — գլխավոր, գերադաս (34)

Բաշտան — գլխից, սկզբից

Բառնալ — տանել, կրել (55)

Բաս — բա, հապա, իսկ

Բաս — դրույց, վեճ, խոսակցություն
(25, 29): Փխբ. աշուղի մրցավեճի գոր-
ծիք: Քիզ ինձնից ո՞վ կանա խլի, աշուղի

բասն իս, բամա՛նջա (1): Բաս բռնիլ-
վիճել: Քիզիդ բաս ո՞վ կանա բռնի (11)

Բալրա — հաղուստի եղբրբը փակող
կրիզը (71)

Բարգ — բարկ, վառ, թեժ

Բարբար — հավասար, նման (4, 26, 30)
Բարիքավոր — արեւելյան քնարերգու-
թյան մէջ երկար բանաստեղծության ձև
(4)

Բարիշիլ — հաշտվել, համաձայնել (64)
Բարիլակալ — բարեւ ընդունող, բարեւ
առնող (4)

Բափա — հավատարմություն, խոստումի
պահպանում (14, 15, 46)

Բեղամաղ — անտրամադիր, վշտացած,
նեղացած

Բեղասլ — անագնիվ, անկիրթ (36, 44,
47)

Բեզարիլ, բեզրիլ — հոգնել, ձանձրանալ

Բեիդրա — ուխտադանց, երդմնադանց

Բեիւսափ — անգութ, անխիղճ (63)

Բելլու — հայտնի, նշանավոր (47): Բել-
լու շան — անդադ — նշանավոր շահական
խոսք (6)

Բեհիշտ — դրախտ (72)

Բեհուբազար — առևտուր, սակարկութ-
յուն (2)

Բեմուվար — անխիղճ, անգութ

Բերեի — բերաններ (13)

Բեհարա — անօգուտ, անպետք (60)

Բինա — բնակավայր (65)

Բինաղան — հիմքից, սկզբից (70)

Բիրչան անել — խորովել (6)

Բհամ — բհամ դալ — ծագել, սերել, աճել:

Շիմշատի ծառ՝ բհամ էլած (49)

Բոզա — թունդ խմիչք կորեկից (35)

Բալրիլ — բոլորածեղ դառնալ, կլորանալ

Բուր — բուրեղ, բուրեղապակե աման
(12, 31)

Բուրի-բուրի — շարան-շարան (50)

Բուրա — սիրած, կուրք (32)

Բուխալ — կղակ (56)

Բունիար — շինության հիմք (20)

Գալ անիլ — մեռնողին այցելել, գուցե
և՛ (արաբ.) գալ (ողբ, կոծ), անել

Գամ — անգամ (40, 65)

Գանա — արդյոք, միթե

Գարդան — պարանոց, վիզ (69, 70)

Կարդիշ—սլտուլտ, զրոսանք: Կարդիշ տալ—դրոսնել (12)

Կարնան շունչ—գարնան սկիզբ, գարնանամուտ (12, 47)

Կափ—զվարճախոսություն, խրախճանք (14, 46)

Դեք—մեղք, հանցանք, վնաս (43, 47)

Դեմի—նալ (14, 27, 60)

Դիդ—գետ

Դիմխա—գոտու տեսակ (") (71)

Դոգալ—գեղաշյա, գեղեցկուհի

Դուլ—լճակ (30)

Դովհար—դոհար, անդին քար (5)

Դրանք—գրքեր (27)

Դուլ—վարդ

Դուլարարին—ռակկել (71)

Դուլարդան—վարդադրի սրվակ (49)

Դուլար—գեղին վարդ (72)

Դուլբադ—վարդաստան, ծաղկանոց (40)

Դուլգազ—վարդանման կարմիր (գերմաստի գույն)

Կուլգալագ—կատակ, զվարճախոսություն (71)

Դուլիշ—մեխի գլուխ (33)

Դուդ—գող (59)

Դուլանգ—վարդած (60)

Կուլզան—վարդաստան (70, 72)

Կուման—ենթադրություն. այստեղ նման, նմանություն. Գլգելից ուրիշ շունիմ գուման (4): Կուման ածիլ—նմանեցնել: Մե գաղ շրկա՝ գուման ածիմ, ասիմ է՛ն նման է՛ գուման (31)

Գունք—գույն, տեսք (31)

Դեբադ—կաշեգործ (4)

Դարանգ—դիվանար, խնկադար՝ դիվանա-դարանգ կապակցություն մեջ (45)

Դադ—դատ

Դադա—մեծ վարպետ, իմաստուն (9, 53)

Դար—ցածր: Դագարտ արա դա ու այլք բո (դար-54)

Դալ—ճյուղ: Սալբու դալ բովուն (30):

Դալ—առաջին կաթ: Մի մար ծծած, մի մոր դալ իս (4)

Դադ—խարան, ալովածք, վերք: Դադ անիլ—այրել, խարանել

Դամ—ուրախ ժամանց, զվարճություն (62): Դամ անիլ—ուրախանալ, ուրախ ժամանակ անց կացնել (14, 25)

Դամ—դամբ, ցանց, որոգայթ: Դամ անիլ—ցանցի, որոգայթի մեջ գցել. փխր. մոլորեցնել, խելքահան անել: Շամամ—նիւտ դամ իս անում (4)

Դամ—միայն դամ քաշիլ արտահայտություն մեջ: Պղնձն ամանի վրա կրակ շարել, սրպենդի խուփի տակ հավաքված շուրջ նորից գոլորշիանալ և ծծվի փլավի մեջ: Կու դեին փալումն՝ կու քաշին դամն (66)

Դամադ—քիմք. փխր. տրամադրություն, ոգևորություն: Խաք Էու դամադն շաղ ըլի (19)

Դաման—փեշ, բղանցք (56)

Դամբ—ուռական, ցանց. փխր. որոգայթ, դարան Սատանեն մե դամբ է դրի Արամի վարն վուրալուն (44)

Դանգ—շատ փոքր կշռաչափ (քառորդ մասիս). փխր. չնչին, փոքրագույն մաս: Էս դարդեն օշով չքաշե, վուր մե դանգին չի դիմանա (32)

Դաստա—փունջ, կապուկ: Դաստա—դաստա—փունջ—փունջ

Դաստամագ—մագափունջ, հյուսք: Կադմըված է պարսկերեն դաստա (փունջ) և հայերեն մագ բառերից

Դաստառնիհան—փունջ ռահան. փխր. ռահանի փնջի պես անուշահոտ մագեր (56)

Դաստուր—վայել, պատշաճ (11)

Դավ տալ—գավազել, դեմ դուրս գալ (20)

Դավա—ղեղ, ճար, միջոց (54)

Դավրար—դիրք, մատչան, երգարան

Դար—դժվարություն, նեղություն, տանապանք

Դարդիման—կարեկից, վշտակցող (62)
 Դարձ գալ—քալել, խոստովանել (66)
 Դափ—դահիրա, կիսաթմբուկ (14)
 Դեղա—մայր (26, 55)
 Դեվեր—ներքե, ցածր. փխբ. խոնարհ,
 հասարակ: Խոնարհութիւն արա կանց
 Էիգ դեվերիս (19)
 Դիար—երկիր, կողմ, վայր (5)
 Դիրա—դիպակ, մետաքսն գործվածք
 (5)
 Դիդար—տեսք, պատկեր, գեղեցկու-
 րյուն: Դիդարեո կարոտ մնացի (22):
 Փլար. սիրեցյալ, սիրած էակի կատարե-
 լատիպ: Շիրինի պես Փանրադի դիդարն
 իմ (27)
 Դիվ—դև, շարք. փխբ. շար միտք:
 Միտկտ դիվաց շրտեսնել (3)
 Դիվան—դատ, դատաստան: Դիվան
 անիլ—դատ անել (4)
 Դիվանա—խկացնոր, խենթ (19, 45)
 Դիվանի—արեկլան երգի տեսակ (2, 3)
 Դիջնալ—հանգստանալ, անվրդով լի-
 նել
 Դուդու—ճշմարիտ, իսկական (11ա)
 Դուշմա—հատակ (33)
 Դուստ—մտերիմ, բարեկամ: Դուստ
 անիլ—բարեկամ դարձնել (32)
 Դովա—աղերասնք, աղաչանք: Դովա
 անալ—աղերսել (11)
 Դովաբ—հարստություն, ունեցվածք
 (44, 46)
 Դովրան—շրջան, ժամանակաշրջան
 (62): Դուս ու դովրան—ուրախ ժամանց,
 հաճելի վայրկյան (4)
 Դուշա—դրոշակ (41)
 Դուզուն—1. ուռուցք, չրացված վերք,
 խորը խոց (31, 42): 2. հարան, դրոշ-
 մըվածք՝ շիկացած երկաթով վերքի վրա
 (18, 37)
 Դուշման—թշնամի
 Դուրգար—հյուսն (36)
 Դուրան—խանութ (13)
 Ելֆան—նափի առաքառտ (45)

Ենգիդունիա—սպիտակ բլազ, ամրի-
 կա (5, 13)
 Զադ—առարկա, բան (31)
 Զար—սերունդ, ցեղ, զարմ
 Զալում—դաժան, անգութ
 Զախ—վերք: Զախ անիլ—խոցել, վի-
 րավորել (42)
 Զաման—ժամանակ, դարաշրջան (63)
 Զայ—վնասված, խանգարված, փշացած:
 Զայ կամ զայի անիլ—փշացնել, քանդել,
 բաժանել (4, 21)
 Զայար—կորուստ. այստեղ՝ կորցրած
 (60)
 Զայան—կորուստ, վնաս (21)
 Զայան—բառախաղ. կազմված է արա-
 բերեն զայ (քաղցր) և Անա (Աննա)
 բառերից: Յիս կանչում իմ զայանին
 (21)
 Զանգին—հարուստ, ունեւոր (13)
 Զանջալիլ—կոճղապղպղի (իմբիր)
 մշակված արմատը (13, 26)
 Զավալ—Դժբախտություն (41)
 Զար—ոսկի, ոսկեթել գործվածք
 Զարա—ծովալին ծաղիկ (16)
 Զարաբ—վնաս, կորուստ (13, 27)
 Զարբար—ոսկեկար մետաքսն գործ-
 վածքեղեն (7, 5, 8)
 Զարգանալ—աճել, ամբողջանալ, բաց-
 լիկ (5)
 Զարդ—դեղին, Զարդ անիլ—դեղնաց-
 նել, խոնացնել փխբ. մաշել, կիրք ու
 բոխ զարդ իս առի (11)
 Զարու—ոսկեզարդ (21, 71)
 Զարեիլ, զարեշան—ոսկենիշ, ոսկե-
 զարդ. փխբ. գեղեցիկ, շքեղ
 Զարուզարբաբ—ոսկեկար մետաքսյա
 կտորից պատրաստված (41)
 Զարուր—կարիք, փափագ (26)
 Զափունգ—բրբուս շաֆրան բույսից
 ստացվող համեմունք (13)
 Զինջիրլամա—աշուղական ոտանավորի
 տեսակ, որի մեջ տունը կամ տողը սկզբ-
 վում է նախորդ տողի վերջին բառով

կամ բառարմատով (սլատասխանի)
(տե՛ս խաղ 4, 60, 61)

Ձող—խնջույք, խրախճանք (1, 46, 62)

Ձուրխար—զարմ, սևրունդ (4)

Ձուֆա—զարդ ու զարդարանք (26, 45)

էդիվն—հտեից (1)

էդնեն—հետո (2)

էլ—ավելի: է՛լ վաղ-ավելի շուտ (3)

էյթիբար—վատահույս, հավատ

էնդուր—այն պատճառով

էնտիդենն—այնտեղից (29)

էշխ—սեր, սիրո զգացում: էշխի

ննգնիլ—սիրել, ոգեշնչել

էրիտ—ամից

էրկար—բամանշայի երկաթի հենակը՝

պոշուկը (1)

Թարաղ—մեծ հարթ ափսի (31)

Թաբիբ—բժիշկ (4)

Թազա—չոր, թարմ

Թահր, քահար—կերպ, կերպարանք, տեսակ, տեսք: Թահր ունենալ—տեսք ունենալ, տեսքով զրավել (1)

Թաղ—սլատուհան (46)

Թաղա—գետնատարած բույսի հյուղերը և նրա թուփը (23)

Թաղար—ուժ, թափ (69)

Թաղչա—սլատի մեջ փոքրված դարակ (12, 72)

Թամամ—բովանդակ, ամբողջ

Թամաշա—տեսարան, տեսարժան բան (4)

Թալգուլ—ծաղկեփունջ (4, 39, 41)

Թաշ—թաղ (48, 49)

Թասլիբ—աշուղական ոտանավորի տեսակ, կարճ սողերով և կրկնակ-կրկնեղբերով (7, 9, 10, 28—30, 48, 50)

Թասլիբ—մովսալիվ—աշուղական բարդ ոտանավորի տեսակ՝ մովսամմաղի և թասլիբի միակցումով (22)

Թավազա—մատուցում, հյուրասիրություն (66)

Թարգանալ—հեռանալ, բաժանվել (35)

Թարիփ—գողթ, մեծարանք (5, 9)

Թաֆալուր—1. միավոր, 2. մեկ օր (թաֆալուր), 3. Թե որ գա (թաֆալուր), 4. թաղավոր (55)

Թեշնիս—բառախաղով կաղմված աշուղական ոտանավոր (21, 54, 60)

Թիլ—թել

Թիլա—ոսկի (4, 13)

Թիղ—նետի սուր ծայրը, սլաք (37)

Թոփ—գնդաձև, ամփոփ (21)

Թիրման շալ—ձեռագործ թանկագին շալ (34)

Թուլա—կտավը սպիտակեցնող սոդալաշուր (36)

Թովուլ—սիրամարդ. էն քովուլի բմբուլի պես (35): Թովուլի քախտ—հնդկական մոզոլի հայտնի գահը, որը ավարի մատնեց նադիր շահը. փխք. գեղեցիկ, ընտիր կերտվածք (33)

Թուրի զուշ—թուլթակ (34)

Թուղլի—թող որ, թեկուղ

Թուրա—բուրա—տեսակ-տեսակ (35)

Թուրլու—տեսակ, դանդաղան (11, 30)

Իմամ—հետո

Իլաշ—միջոց, ճար (48)

Իլիմազ—խնդրանք, աղաչանք (4, 6)

Իխտիար—իրավունք, արտոնություն (4, 6)

Իխտիլար—զրույց, ժամանց (71)

Իզրալ—բարեբախտություն, հաջողություն (64)

Իդրա—խոստում (4, 25, 48, 61, 63)

Իման—հավատ, համոզմունք: Իդրա-իման—երդմամով հաստատված խոստում (4)

Ինքիզար—կարոտով սպասում (32, 40)

Ինչու—մինչև (36, 46)

Ինսափ—մարդ, մարդկություն (62)

Ինֆար—ժխտում, ուրացում (36)

Իշարա—հասույթ, կապալ (43)

Լալ—թանկագին քար, սուտակ, բուրբն

Լալ—համբ: Լալ անիլ—լոնցնել, համ-
բացնել (21, 44)

Լալա—կակաշ (30)

Լալա—դայակ, դաստիարակ, ծառա-
յապետ: Շահ-Աբասի լալի նքման (52)

Լալանին—լալ (թանկագին քար) Անին
(Աննային)

Լամգ—հաճելի խոսվածք: Լամգով
խոսիլ—հաճելի, անուշ խոսել (16)

Լալիդ—արժանի, վաշել (8)

Լանգ—լանգ անիլ—օրորվել, ճոճվել
(45)

Լիրաս—ղզևստ, Սիվ ու սուֆ լիրաս—
բահանայի զգևստ (62)

Լիլի—դառնություն (36)

Լիլևուր—լողորդ (58)

Լուլա—փարա—շարարեղենի տեսակ (71)

Լունի սաղ—լուսաստղ, Արուսյակ (41,
47)

Լուր—լոր թռչունը (32)

Խարա—լուր, տեղեկություն

Խաղինա—դանձ, հարստություն (8)

Խարա—փորձանք: «Խե ու ալիբ րոն-
խար, խարա (54)

Խարարանդ—նախշադարդ սրահ (4, 40)

Խարիբ, Խարի—հարգանք, պատիվ

Խարբամ—վատահ, ապահով (40, 47)

Խարուխալ—գեղեցիկ դիմագիծ (5,
11, 12)

Խալար—պարզև (թանկարժեք հա-
գուստ)

Խալիս—մաքուր, անխառն (53)

Խալիս—ժողովուրդ

Խալվար—մեկուսացված, գաղտնի (64)

Խում—հասարակ կտոր (34)

Խում—անփորձ, անվարժ (15)

Խայար—դերձակ (60)

Խայան—ուխտադանց, դավաճան, նաև
խարդախ, նենգ

Խան—երբեմն (15)

Խաս—ընտիր, նուրբ (գործվածք)

Խար—փուշ

Խար—ստոր, անարգ: Խար անիլ—
անարգել, ստորացնել (2)

Խարա—մետաքսյա ընտիր կտոր (15)

Խալիանդ—լուսամուտների եղեգնյա
ծածկոց, որ պարանի միջոցով իջեցնում,
բարձրացնում են: Խալիանդ անիլ—վա-
րագույրի նման արձակել, ծածկել (45,
60)

Խեշ—խաշ

Խալիով—խարելով, խաբկանքով (14)

Խիալ—միտք, մտածություն (4—6, 9)

Խիլ—խե, խենթ: Խիլանալ—խենթա-
նալ

Խոնրկար—թափափոր (43)

Խշալար—ամոթ, պատկառանք (40)

Խուղ—հող (14)

Խուլի—արյունոտ: Խուլի ջիգար—ար-
յունոտ, վիրավոր սիրտ (28, 64)

Կաւով—իմ կամքով, հոժարակամ (53,
54, 64)

Կալի—մաղերի հյուսք, խոսքույից աչ-
տերի շուրջը (21, 60)

Կերած—մաշված, սպառված (42)

Կրիճիլնձալ—կաղկանձակ (65)

Կլալիտոն—մետաքսաթելի վրա հյուս-
ված արծաթաթել (8)

Կոկուր—կոկոն (4)

Կրկալ—անասունների վզի օղակ (65)

Կուղի—պոռ (1)

Կուռ—ձեռք բազուկ, Կունեմեն—ձեռքից,
կողմից

Կուր—կույր

Հաղիդ—երկաթե դաղդահ՝ մետաղալար
բաշխու համար (5, 56)

Հազ—հաճույք, բավականություն: Հազ
անիլ—ախորժել, ցանկանալ (4): Հազ
չունիմ—հաճելի չեմ, սիրված չեմ (4)

Հազար—սոխակ: Հազարին հազար պի-
տի (11ա)

Հազիր—պատրաստ: Հազիր շինիլ—
անառարկելիորեն ընդունել (47)

Հալ—վիճակ, դրություն

Հալա—դեռ, դեռևս
Հալալ—արժանի, անխարդախ, ար-
դար, հարադատ (4, 19, 53)

Հալքաք—երևի, դուցե
Հալիլա—հայելի (4)
Հալս—վարձ, դին, (6, 4)
Համ—հոգս, վիշտ, տխրություն։ Համ
անիլ—տխրեցնել, վիշտ պատճառել։ Էտ
փրսանդով համ իս անում (4)։ Համով-
հոգսով, վշտով, դժվարությամբ (36)

Համամ—բաղնիք (71)
Համան—անընդհատ, անվերջ (23, 35,
54)

Համաշա—միշտ, շարունակ
Համդ—փառք, փառաբանություն (20)
Համդամ—խոսակից, սրտակից, ընկեր
(30, 40, 61, 62)

Համֆ—համ, բավականություն (44)
Հայա—ամոթ, պատկառանք (19)
Հայալու—համեստ, ամոթխած, նամու-
սով (14)

Հանսծ—նկարած, Հանսծ ծառ է, էշ-
խով վառ է (4)

Հաշ—ուխտատեղի։ Ղարիբ դավիշ իմ
հաշ չունիմ (48)

Հասրաք—կարոտ (17, 26)
Հավաշովա—դառնահամ դեղարույս,
դառնիճ (11)

Հավաս—ցանկություն, սեր (26)
Հարա—օգնության կանչ (37)
Հարանց վարք—վարքադրական ժողո-
վածու, «կարք սրբոց» (19, 36)

Հարգան—Միշտ, շարունակ (63)
Հեյրաք, հեյրաք մեալ—երկյուղով
պատել (հիացմունքից), ապշել (5)

Հեյրան—արմանք, զարմանք (30)։
Հեյրան անիլ—զարմացնել, ապշեցնել,
(4, 6)

Հենչաֆ—միայն, այնքան։ Հենչաֆ ըլի—
միայն թե, այնքան որ

Հենց—այնպես, այն կերպով։ Հենց
իմացի—այնպես համարիք Հենց զիդիս—
կարծում եմ

Հեսար—հաշիվ։ Հեսար անիլ—որևէ
մեկի տեղ ընդունել, համարել (20)

Հեստի—այնպիսի, այնպես (2, 13)
Հեֆալ—արձան, կոռուցվածք։ Ջնադ
հեֆալ—կիսանդրի (49)

Հեֆիմ—բժիշկ (27, 35, 37)
Հեֆիմ—դատավոր, իշխանավոր։ Հեֆիմ
ու դադաստան շկա (39)։ Տե՛ս նաև հուֆ-
մի—հեֆիմ

Հիդ—հետ, միասին
Հիդ—1 սուր, սրածայր։ Խե դուն էշխի
հիդ մանգալըն հարցնիս (15)։ 2. Կա-
տաշի։ էշխիտ չուրըն հիդ է, զալում (41)
Հիդֆաշած—վերստին, ստուգելով կը-
շոված (33)

Հիդֆեաժ—կրկին բերձված (42)
Հիզ—հեղ։ Հիզնից—հեղից, հեղ մար-
դուց (43)

Հիմանալ—հիմնավորվել, ամրապնդվել
(11, 34)

Հնպարտուրին—հպարտություն (19)
Հոֆուց—հոգոց (30)

Հալ—խանկապին բար, որ պահվում էր
հեբրաիկային օձի բերանում (41)

Հում կարնալիք—հում կաթնակեր. փխբ.
մարդ, աղամորդի (15, 22, 46)

Հուշրա—արկղ, դարակ (13, 31)
Հուսան—հոսանք, ձնհալ, գարնան
անձրև (43)

Հուտով, հուտովին—հոտավետ (24, 28)
Հուր—հուր (11)

Հուրի—ջրահարս, հավերժահարս (14)
Հուրիզադա—հավերժահարսի զարմից,
դիցուհի (33, 58)

Հուրյան—բիրյան անիլ—խորովել, տան-
ջամահ անել (11)

Հուֆ—իշխանություն, ուժ (47)
Հուֆմի—հեֆիմ—իշխանավոր, դատավոր
(20, 32, 37, 62)

Ջար—ծիու պոչի մաղք, որից քաման-
չալի ճիպոտն են պատրաստում (1)

Ղարբու—համաձայն (58)։ Ղարբու անիլ, ղարբու կենալ, ղարբու ունենալ—համաձայնել (14, 53, 60)

Ղաղա—շալի, մեծություն (42)

Ղաղա—ցավ, հիվանդություն։ Ղաղեն անիլ—ցավը տանել (15, 16)։ Ղաղետ տանիլ—ցավը տանել (30)

Ղաղանգ—աղեղ։ Ղաղանգ անիլ—աղեղի լարը ձգել։ Վիսբ. տանջել, շարշարել։ Ումբրիս լարքն ձրիլ— ղաղանգ իս արի (60)

Ղաղիմի—հին, անտիկ։ Խոսիլքն ղաղիմի շինիլ—հին աշխարհի իմաստունի պես խոսել (53)

Ղազա—դատավոր (66)

Ղազար—բարկություն, պատուհաս. ալստեղ՝ դատ, դատաստան, պատիժ։ Ղազար անիլ—դատաստան անել, պատժել (20)

Ղազալի—գալի, արեւելյան ոտանավորի տեսակ։ Կա նաև աշուղական ղազալի. որի մի տարատեսակն է Սալաթ-Նովալի գործածած գալելը (1, 5, 6, 24—26, 31—49)

Ղալ—վեճ, աղմուկ, խոսք ու զրույց (6, 18)

Ղալամ—գրիչ, վրձին

Ղալալբաշ—գրչահատ, ղմիլին (34)

Ղալամբաշ—ընտիր տեսակի տպածո շիթ (4, 5, 9)

Ղամ—վիշտ, ցավ, հոգս (15—40)

Ղամար—հասակ, մարմնի կեցվածք (8)

Ղամզա—նաղ, նազանք (12, 16)

Ղամիշ—եղեգ

Ղամբաշ—վշտակիր, ախ բաշոզ (62)

Ղաշիմ—ամուր, պինդ (15)

Ղանդ—շարարի տեսակ (բաց վարդացույն)

Ղանու—արյունոտ, վիրավոր (56)

Ղաստ—ջանք։ Ղաստ անիլ—ջանք թափել, ջանալ (1, 13, 32)

Ղավ—արեթ (48)

Ղավար-ղավար—ցաք ու ցրիվ։ Ղա-

վար-ղավար անիլ—դեռ ու դեռ գցել, թափառական դարձնել (56)

Ղարսնեջա—աշուղական երգի տեսակ, որի հանգ փակող բառերը գրվում են առանձին տառերի այբբենական անուններով։ Որպես կանոն ունեն ծածկագրեր (53, 54)

Ղարսնիլ—մեխակ (26)

Ղարավաշ—աղախին (71)

Ղարար—1. կարգադրություն, հրաման (61)։ 2. ներդաշնակություն (31, 67)

Ղարի—շար կին, վհուկ (8, 47, 53)

Ղարիբ—պանդուխտ

Ղարդարա—ձկնկուլի տեսակ՝ զեղեցիկ վզով (56)

Ղարդղամիշ—աղնիվ տեսակի եղեգ (41)

Ղափա—սուրճ (1)

Ղափազա—թռչնավանդակ (6)

Ղափիա—աշուղական ոտանավորի տեսակ (14—19)

Ղափիլ—անսպասելի, անակնկալ (60)

Ղիմեթ—արժեք, հարգ (1, 4, 9)

Ղիմիշ, ղիմիշ անիլ—զոհաբերել, շխանալել, շափսոսալ (11, 49)

Ղոբա—ցանկապատ (37)

Ղվաթ—ուժ (66)

Ղմբզ—կարմիր (ներկ—13)

Ղուրի—տուփ, արկղ (25)

Ղուլ—ծառա, ճորտ, ստրուկ

Ղուլուղ—ծառայություն (11)։ Ղուլտը անիլ—ծառայել (36)

Ղուրաշ—նորր կերպաս

Ղունգ—եղունգ (56)

Ղուշ—թռչուն

Ղուշլու—թռչնային, թռչնազարդ։ Ղուշլու զարբար—թռչնազարդ բեհեզ (7)

Ղուսա—վիշտ, հոգս, տխրություն (6)

Ղարբաճ—մատաղ, զոհ

Ղուրթ—ճշմարտություն, ճիշտ, ճշմարիտ

Ճար—եզիպտացորենի հաց։ Ճարիս քն ու ալիք լո (նար—54)

ձաղ—1. Եկեղեցու ջահ (51): 2. Աշտանակ, մոմակալ (31)

ձար—գետ, վտակ: Սայար-նովեն ասաց՝ դարդս կանց մե նարբն շատացիլ է (46)

ձիպուտ—ձիպոտ, քամանչայի աղեղը (1)

ձիդ—վիդ, պարանոց (3, 43, 64, 65)

Մաղան—հանք (58)

Մազա—քաղցրավենիք, աղանդեր (35, 66)

Մար—մար շինիլ—դարմացնել, ասլշեցնել (34)

Մարան—ապրանք, ընտիր իր (13, 40)

Մարլաբա—խոր ավախ (66)

Մալ—ունեցվածք, հարստություն: Մալ անիլ—հարստություն կուտակել (44)

Մալուլ—հիվանդ, վիրավոր (68)

Մալում—հայտնի, ծանոթ, ճանաչելի (10): Մալում անիլ—իմանալ, հասկանալ (11)

Մախուլս—Մեծ սլասի օրերին գործածվող կերակուր, որի մեջ օդատաքործվում է մախոյի բույսը (66)

Մակամ—միթև, արդյոք

Մակաբ—նույնն է՝ մակամ (11ա)

Մանանգ—փորձաքար (մետաղի համար): Մանանգ անիլ—փայլ տալ (45)

Մահ-ջամալ—լուսնեբեր (5)

Մաչիլ մնալ—հիանալ, սքանչանալ (60)

Մանգալ—մանդաղ (15, 59)

Մանգանա—մամլիլ (43)

Մանդիլ—թաշկինակ, դիւաշոր (25)

Մաշում—անուշաբույր քաղցրավենիք (21)

Մաս—հաղորդություն, ճաշակ, նշխարք: Թեվուր լալով զխնամ անիս՝ անմա—նացքն մասն կու տան (36): Մնացի սրկու մասեմեն (38)

Մաս—ալմաս: Յիս կանչում իմ մասանին: Ես կանչում եմ ալմաս (անգին քար) Աննային (21)

Մաս անիլ—բաժանել, Սե ու այլիք

մաս անին:—Ս(ալաթին) և Ա(ննային) բաժանում են (21)

Մասալա—առակ, ալարերակա՛ն խոսք (17)

Մաստ, մաստ անիլ—հարբեցնել (24):

Մաստ եկած—հարբած (38)

Մավրուլ—մետաղալար (5)

Մար—մարում, հանգչելը: Էրած, խորված ման իմ գալի. մի տիղ շկա մար ունենամ (42)

Մարա—անդին քար առասպելական վիշապօձի գլխին (16)

Մարալ—եղնիկ

Մարդ—կտրի՛ւ, քաշ, խոսքի տեր (11)

Մարիվար—շնորհք, քաղաքավարություն (13, 33)

Մարմաշ—շղարշ, մուսլին (34)

Մարշան—թանկադին քար, բուստ (34)

Մեբաշ—միանգամից (66)

Մենման—հյուր (72): Մենման անիլ—հրավիրել, հյուրասիրել (11)

Մենմանդար—հյուրընկալ (26)

Մեյդան—ասպարեզ (52)

Մեջլիս—հանդես, հավաքույթ

Մեալի—միասին (66)

Մեբանին—1. մեր Աննային, 2. մերան (մակարդ, սկզբնապատճառ) -ին (21)

Մեբած—մակարդված (42)

Միգան—կշեռք (43)

Միգիդ—մեզ հետ, մեզնից

Մինա—սևադ, արծնապակի (24, 70, 71)

Մինրանա—կանացի երկար շրջագոբոստ (71)

Մնիլամ—դեղ, սպեղանի

Մոդանալ—մոտենալ, հասնել (4): Մոդ անիլ—մոտեցնել, շուրջը խմբել (71)

Մոնա—ծառա, սպասավոր (51)

Մսիլալ—կշռաշափ. հավասար է կես գրամի (33)

Մուդդ—վարձատրություն, արժանի հատուցում (40)

Մուլալի տալ—ժամանակ տալ, սպասել (65)

Մովսամմազ—հինգտողյա տներով ոտա-
նալոր (11, 12, 13)

Մունաշար—ցանկապատ, բազրիր (21,
30)

Մովայիշ—վարսակալ, ժապավեն (21)

Մում—մոմ

Մունաք, մունաք ֆաշել—սեփեհա լինել,
ամաշել (13)

Մուստազար—աշուղական ոտանավորի
տեսակ (8)

Մուտ—1. մտի՛ր: Մո՛տ բաղչեն նագով
(30): 2. Մայրամուտ: Ո՞վ կոսե, քե յիս
կու ապրիմ առուտեմեն ինչու մուտըն
(46)

Մուռախառ—խուլտուլոթյուն՝ որևէ տեղ
մուտք դործելու համար (4)

Մուրասա (մուրասամ)—նկարված, նը-
կարեն (49)

Մուրվար—մեծահոգություն, գուլի,
խիղճ (5, 9, 12)

Մուրվար—թանթրվենի, սպիտակ ծա-
ղիկներով բույի (71)

Յա—կամ (17)

Յադ—օտար, անծանոթ

Յախա—օձիք (12, 47, 71)

Յախա—գոտիկ կախված ծալրի աղնիվ
մետաղյա մասը (71)

Յադի—թշնամի: Կոստիրբս դուշման
ին դառի, յաղեհումեն բեզարիլ իմ
(46)

Յադար—թանկադին քար, հակինթ (9,
49)

Յաման—հոռադաթ, փայլ (71)

Յանա-յանա—ալրվիով, տոշորվելով
(28, 41)

Յաշիլ—նայել (49)

Յաշվիլ—համեմատվել (16)

Յաշիլ խարա—ընտիր կանաչ կերպաս
(71)

Յար—սիրեկան, սիրուհի, բնկեր

Յարա—վերք, խոց: Յար անիլ—վերք
բացել (21)

Յարալու—վիրավոր

Յարանա—սիրածին նվիրված երգ (14,
18)

Յարանին—յար Աննային (21)

Յիգիդ—հիգիդ. փխբ. անհավատ, հե-
թանոս (14, 28)

Յիդ—յուզ (37)

Յիրգնային—երկնային, երկնքի (30)

Յիփուր—երբ որ

Յոխսուլ—աղբատ, տնանկ, չունեոր (63)

Նաբար—անհամապատասխան, ան-
կապ, անհեթեթ (53)

Նաբար—սառը շաբար (9, 39)

Նաբարեն—նաբաթից պատրաստած (40)

Նագ—կոկեխուլիտ, պլանք: Նագ
անիլ—կոտրատվել: Նագով—նագանքով:
Նուշեն է՛ նագ ու դամգով: Նագեից-նա-
զից

Նագանի—նուրբ, վայելչակազմ

Նագիր—պալատական պաշտոնյա Արե-
վելքում (47)

Նազլու—նազելի, նազ ունեցող (9)

Նաքիշ—արդյունք. հետևանք: Նաքի-
շում—վերջում, դրա հետևանքով (61)

Նալ—պայտ (12, 71)

Նալար—անեծք

Նալաշ—նկարիչ. յայտեղ՝ նաղշ-նկար,
դարդանկար (34, 49)

Նաղշ—նկար, զարդանկար, պատկեր
(26, 35)

Նաղաշար—նկարիչ (34, 40)

Նամ—խոնավություն: Նամ անիլ—բը-
ջել, խոնավացնել (4), Նամ դիբշիլ—
թրջվել, խոնավանալ (5): Նամ-նամ—
շատ խոնավ (59)

Նամագ—աղ (12)

Նանա—մայրիկ (58)

Նաշտուր—վերահատական սուր դա-
նակ (34, 56, 58)

Նաշար—ատաղձագործ: Նովաբու նա-
շար—արվեստագետ ատաղձագործ (21)

Նարդ—նարդի խաղը (67): Նարդ
անիլ—խաղայիք դարձնել (11)

Նաբագ—ստոր, չնչին (1)

Նիգեից—նիգակից (43)

Նճախ—իզուր, անտեղի, անիրավացի
(20, 21, 35)

Նճգիր—բնկեր (43)

Նճգնիլ—բնկենի

Նովաբու—աղնիք, բնտիր: Նովաբու
Նաջար—բնտիր, արվեստագետ ատաղ-
ձագործ (21)

Նովափար—նունուֆար (45)

Նոֆար—ծառա

Նովախտ—զգվանք, փայլալանք (33)

Նուգբար—առաջին պտուղ (5)

Նուղլ—շաքարով նուշ (25)

Նուղուլ—տե՛ս նուղլ (70)

Նուր—նոր, նուրիլ—վերանորոգել (51)

Նուր—լույս (33)

Նուրմեկ, նուրմեկանց—կրկին, դարձ-
յալ (20, 31)

Շաբանգ—դալալ: Շաբանգ անիլ—
դալալանի (45)

Շաղա—շարան (5, 34): Շաղա—շաղա—
շարան—շարան (13)

Շախ—մաս-մաս արված, բղկտված
(64)

Շան—օգուտ: Ինչի՞ն է շան—օգուտ
չունի (44)

Շան—պարսկական թաղավոր

Շան-անդալ—շահական խոսք (6)

Շանգաղա—արքայադուռ (67)

Շանիր—բանաստեղծ (72)

Շադիլ—միտքը շիրթենի (18)

Շադմաղիլ—շողշողալ, փայլիլ (49)

Շամամ, շամամա—սեխանման փոք-
րիկ անուշահոտ պտուղ

Շամշ ու դամար—արև ու լուսին (7,
34)

Շանգ—գեղեցիկ, շնորհալի (45)

Շունց տալ—ցույց տալ (27, 59, 65)

Շառ—1. փորձանք, շարիր (65): 2.
Ձրպարտություն (41):

Շավարդան—բազն (35)

Շար—արդարություն, օրենք, դատաս-
տան (4, 13, 19)

Շարբար—նորք մետաքսային (7, 8,
53)

Շարբար—օշարակ

Շարք, շարքին—անշալ մեղր (8,
17)

Շարք—պայման (61)

Շարիփ—խշխան, կուսակալ (32)

Շափաղար—ցուր, կայծ (13)

Շիմաատ—տոսախ ծառ

Շիրմայի—առյուծածուկ, որի ոսկորնե-
րից իրեր են պատրաստում, փղոսկր (1):
Շիրվանի—աշուղական հրդի տեսակ
(27)

Շնուխ—շնորհ (62)

Շնուֆ—նույն է՝ շնուխ (12, 35)

Շուղ—շող, լույս (13, 60)

Շուխի—կատակ, զվարճություն (45)

Շուխի—շողք, փալ: Շուղի տալ—ճա-
ռադալ (3)

Շուշա—շիշ, սրվակ, սպակի

Շոտ գալ—ման գալ, զրոհել

Շուրեղեն—շորեղեն (16)

Շիար—դարդ, պերճանք, ինչք (36,
46, 49)

Ջալ—պուտ-պուտ: Ջալ անիլ—զույնը-
զույն ներկել (44)

Ջալմախ—հրահան, կայծքար (48)

Ջաղ—զվարթ, լավ տրամադրություն
Թաֆ Բու դամաղըն շաղ քի (25): Ջաղ
անիլ 1. թևժացնել, արժարձել, էտ կրա-
կըն շաղ մի՛ անի (4): 2. Ամրացնել:
Հիմքով վերստին նուրեցին, շաղ աբին,
Մոլոնու սուրի Գեվուր (51)

Ջայ—գետ: Ջայի անիլ—գետի պե-
վարար դարձնել: Սրտասուցք տալի
անիս, շայու ջուր իս (4)

Ջայիր—չիման—մարգագետին (4)

Ջանգ—ճանկ, մագիլ (15)

Ջանգ—երաժշտական գործիք, նվագա-
րան (4, 18): Ջանգ անիլ—երաժշտա-
կան հնչյուններ արձակել: Ջուֆստ շն-
գուր շանգ իս անում (45)

Զարա—ճար, միջոց
 Զարա—շարդալի—վրան, ծածկ (40)
 Զարխ—անիվ, ճախարակ (34): Փա-
 րակի շարխ (Երկնքի անիվ, բախտի
 անիվ, 44)
 Զարդար—մետաքսյա կարմիր ծած-
 կոց (71)
 Զավար—ցանկապատ (37, 39): Զա-
 վարիլ—փշե ցանկապատով ծածկել (24)
 Զավիլ—գնալ: Ճանփա շավիլ—իր
 ճանապարհով գնալ (52)
 Զավով—հերդաշնակ, չափած-ձևած
 (14)
 Զեքուլ—լիթոգից (52)
 Զիման—մարդագետին. տե՛ս շալիհ-չի-
 ման
 Զիմի տա—չեմ տա (50)
 Զինար—սոսի. չինարի
 Զինի—չինական: Զամ իս չինի (4)
 Զխեռած—սլուղ շտված (42)
 Զրաղ—ճրագ. փխբ. տան ծառա, մեկի
 կողմից հովանավորված, մարդ դարձած
 (6)
 Զուն, շունֆի—որովհետև, քանի որ:
 Զուտ—չոտ, հիվանդության տեսակ: Աչ-
 կի լուս, մուր իմ ասի, շու՛ն չիմ ասի
 (38)
 Պանելով անիլ—խնամել, հոգ տանել
 (5)
 Պատոնցեիլ—նախանձով լցնել, բար-
 կացնել (66)
 Պատվիրեմ պանիլ—պատվերը կատա-
 րել (61)
 Պիտնա—դադձ (66)
 Պտիլ—փնտրել, որոնել (5, 10)
 Պունգունա—կակաշ (39, 52)
 Ջաղմար—կախարդ, փերի (4, 17)
 Ջազա—պատիժ (35, 66): Ջազ անիլ—
 պատժել (71)
 Ջալալ—մեծություն, հզորություն (56)
 Ջալլ—արագ, շտապ (25)

Զալլար—դահիճ
 Զանկարդար—դաժակոսյան (69)
 Զամ—1. գինու թաս (62): 2. կաթսա
 (61, 66)
 Զամ—լավորակ ապակի. հախճապա-
 կի: Զամ իս չինի (4) Զամ-հալիլա—ըն-
 տիր ապակուց հալելի (4)
 Զամալ—գեղեցկություն, գեղեցիկ պատ-
 չեր (60): Ման-ջամալ—լուսերես (5)
 Զան—հոգի, շունչ, կյանք, մարմին:
 Զան զալ—առողջ լինել: Զան տալ—տանջ-
 վել մաշվել: Զանը հանիլ—տանջել, շար-
 չարել
 Զանում—հոգիս, սիրելիս
 Զառ—զորաշար, շրախումբ (43): Զառ
 բացարած—շքերթ բացած (41)
 Զավահիր—գոհար
 Զավահիրչի—գոհարավաճառ (13)
 Զարա—վերաբույժ, բժիշկ (27, 44)
 Զափա—ենդություն, զրկանք: Զափա
 քաշիլ—ենդություն կրել (18)
 Զելյան—եղջերու
 Զեր—անգամ: Մե զեր—մեկ անգամ
 (48)
 Զիզար—լյարդ, թոք. փխբ. հոգի,
 սիրտ, սրտակից
 Զիդա—թագի վրա դրվող սյսակ, որի
 վրա ամրացվում էին փետուրներ (49)
 Զիլիդա—արծաթե բարակ թիթեղ (45)
 Զիռանալ—չեկանալ (40)
 Զնադ—անրակ. Զնադ հեֆալ—կիսան-
 քրի (49)
 Զուհար—գոհար. փխբ. փայլ, աչքի
 լույս (42)
 Զուհարդար—գոհարակերպ, գոհարա-
 կիր, փայլուն (34)
 Զուդար—մերժում: Զուդար անիլ—
 մերժել, զրկել (20)
 Զուդար տալ—պատասխան տալ (61)
 Զունուն—սիրուց խենթացած
 Զուրար (չուրա)—տեսակ (5): Զու-
 րա-չուրա—տեսակ-տեսակ (35)

Ջուֆամ—վնաս, կորուստ: Ջուֆամ
ֆաշիլ—վնասվել (6)

Ռադ—հեռու, մի կողմ: Ռադ անիլ—
հեռացնել, մի կողմ քշել (13)

Ռազա—սողնակ (35, 66)
Ռախտ—գարդարանք, հանդերձանք
(33)

Ռախտար—Մարսատան ծառայող (43)
Ռանմ—կարեկցություն, գուլթ: Ռանմ
անիլ—գթալ, ողորմել (9, 14, 28)

Ռադամ—հրամանագիր (50)
Ռադիփ—խոշընդոտ, խանդարիչ (18,
50)

Ռանգ—գույն, լիալլ: Ռանգե ռանգ—
գույնզգույն, բազմերանգ (45)

Ռանգ—խարդախություն, նենգություն
Ռադիփեն էկալ միգ էս ռանգիրեն մե-
մեկ (18)

Ռաշ—առասպելական նժույգ (1, 34)
Ռափա—անդորր, հանգստություն (1)
Ռաստ, ռաստ գալ—հանդիպել, պա-
տահել

Ռիշխանդ—ծաղր: Ռիշխանդ անիլ—հեգ-
նել, ծաղրել (12)

Ռուբայի—բառատող ոտանավոր
Ռուխսար—խրավունք, թույլտվություն
(62)

Ռուֆա—գործվածքի նրբահյուս ծոպ,
զարդափուռ: Ռանգ ու ռուֆա—գունա-
վոր, փալլուն զարդափուռ: փխր. ըն-
տիր, երենիլ (25)

Սարաբ—պատճառ: Սարաբ անիլ—
պատճառ բռնել (20, 53)

Սարբ—համբերություն (19)
Սադա—1. մարտ, անխառն (33), 2.
աղնիվ, ընտիր ապրանք (44)

Սադադ—կապարճ (37, 41)
Սազ—նվագարան: Սազ անիլ—նվա-
գել, երգել (4)

Սազ րիլ, սազ գալ—հարմար լինել,
ենդրդաշնակել

Սազա—սազական. համապատասխան
(35)

Սազանդար—երաժիշտ (26)
Սալամ—ողջույն (41)

Սալբի, սալբու—նոճի, կիպարիս, Սալ-
բու-շինար—նոճի, սոսի. փխր. սլացիկ
հասակ

Սալիլ—ղենք: Սալիլ սադադ—ենտ ու
աղնի (41)

Սախար—հաշմանդամ. փխր. սխալ,
թյուր (53)

Սախտ—վիշտ (33)
Սահար—ժամ, սլահ (35)

Սադ—1. ողջ, կենդանի (1, 22, 33),
2. ամբողջ, լրիվ (12)

Սադա—պատից գուրս ցցված աղյուս՝
ճրագը դնելու համար (12)

Սադրի ֆուշեր—կանաչ սեկից կարված
կոշիկներ (71)

Սամանդար—օվկիանոս, ծով. փխր.
ծով աշեր (26)

Սալ—աղ—հաշվիր (60)
Սալադ—որսկան (60)

Սան—հարգանք, պատիվ: Սան անիլ—
հարգանք մատուցել (4)

Սանդալ—սանդալ ծառի փայտից
պատրաստած (51)

Սանբուր—արեւելյան լարային գործիք
(4, 14, 45)

Սաջուր—ծառ, թուփ (21, 25, 30)
Սաս—ձայն: Անգան կալա. շիմացա
ինչ հա՛ սաս է (54)

Սար—գլուխ (13)
Սարալ—պալատ, զղյակ (71)

Սարդար—զորապետ (47)
Սարխսար—կերպասի տեսակ, որի մեջ
ռոկե թելեր են անցնում (49)

Սարսարի—թափառական, մոլորված
(56)

Սափա—ուրախություն, ուրախ ժամանակ
(1, 18, 62)

Սկալ—հեղեղ (20)
Սեյրան—1. գրոսանք (30): 2. Դիտե-

լու արժանի բան, սքանչելիք (24): Սեյ-
րան անիլ—գրոսնել (49), ցուցադրել
(4): Սեյրան էնալ—զրոսանրի գնալ (5)

Սեյր, սեյր անիլ—հիացմունքով նայել,
դմալլել (30)

Սեյրանգան—զրոսաւայր (33)

Սեադա—սն ննրի (44)

Սիրամ—բռնութիւն, ճնշում: Սիրամ
անիլ—1. բռնանալ, ստիպել խափեցիւն,
րն օգրն էր արաւ սիրամ (61): 2. Պատ-
ժնէ: Սիրամ արից սեւրն էլ, բշից դրալս-
սեն (61)

Սիլա—սիլա—լիքը-լիքը (13)

Սիմ—մետաղաւար, նվադարանի լար
(1, 7)

Սիրասիրմ—սիրո սերմ (16)

Սիրմա—արծաթ, արծաթաթիւն (5, 11):
Սիրմա անիլ—արծաթի նման փայլեցնել:
Մագիրքտ սիրմա իս անում (27)

Սկի—սկիհ, հաղորդութիւն թաս: Մը-
նացի սրկու մասեմեն (38)

Սղոցիլ—ուտել (66)

Սոյրաք—քաղցր գրույց (8, 36)

Սովդա—առնտուր փխր. սիրային կապ.
սիրո տանջանք (53)

Սովդաքար—վաճառական (5)

Սվրա—ամենասկզբում (61)

Սուն—սլուն (51): Քարա սուն-բարե
սլուն, փխր. շիրմաքար: Սա՛յար-նովա.
տարիտ էլալ բարա սուն (54)

Սուշ—մեղք, հանցանք (20, 24, 35)

Սուշա—ղալար, շիտակ, ձիգ (72)

Սուրաք—գեմք, կերպարանք

Սիուր—սզաւոր, վշտահար (42)

Վադ—վատ, չար—(38, 62): Վադիր—
վատ, չար մարդիկ (18)

Վադա—ժամանակ (5)

Վասն—համար (57)

Վար—ինչք, հարստութիւն. փխր. հա-
րուտու: Վարի ձեռնեմեն դադ կոնիմ (63)

Վար անիլ—շենացնել, ճորացնել: Թե-
վուր քաղաք տիգ հանլիրիս, կու քանդիս
վար շիս անի (2)

Վարակ—տե՛ս վարադ (43)

Վարակած—տե՛ս վարադնած (11)

Վարադ—նուրբ ոսկեթիւն, որով պատում
են առարկաները (40, 41)

Վարադնած—ոսկու շերտով պատած,
ոսկեզօծված (1, 31, 40)

Վարիլ—կառավարել, ղեկավարել (4)

Վարիլ—վայրեր, արոտավայրեր (39)

Վարսալ—արեւելյան ոտանավորի տե-
սակ (17)

Վեզիր—բարձրագոյն պալատական
պաշտոնյա Արեւելում (47)

Վեր ածիլ—թափել. հեղեղ (4, 18):

Վեր գալ—ջնջվել (43), իջնել, հանդեմ
գալ (1): Վեր քու՞ իլ—խոթուել, խստաց-
նել (47)

Վեհիլ—փոխանորդ. տեղապահ (37,
47)

Վի կենալ—հանդես գալ, այցելել (11,
37)

Վունց—1. ինչպես, ինչպես որ: 2. ոչ
վունցուր—ինչպես որ

Տալ—կտրել (20)

Տալա—ալիք (60): Տալա տալ—
ալեկոծել (27)

Տակոի—արմատ (59)

Տար—օտար (19)

Տարբ—տարիք (62)

Տերիվակալ—տերակալած, տերեւ-
շատ (4)

Տիդ ունեալ—գնահատվել, արժեք ու-
նենալ (13)

Տիդացեմ—տեղերից (13)

Տիսալով—տեսնելուն (17)

Տուրուն—ընտիր մուգ կարմիր ներկ
(51)

Տուգ—աղ (12)

Տուլ—շղարշ, տյուլ (41)

Տուխտ—տուղտ, երկարակայաց բույս,
մանր գեղեցիկ ծաղիկներով (16)

Տուսալ—բանտարկյալ. գերի (6, 12)

Բովուն—սահուն քայլող, ճկուն, դիւ-
րաթեք: Սալրու դալ բովուն (30)

Բու—առու, զետակ: Բե բուն Յո ցամ-
ֆիլ է (54)

Ումբր—կյանք

Ումիկ—հույս (42)

Ումնոր—ում որ (16, 22)

Ուլլամա—երեքնակ, բանաստեղծության
ձև, որտեղ տողերի մեջ շեշտվում են
Լրեք տարբեր բառեր (19)

Ուտադ—վարպետ, ուսուցիչ (44)

Ուտաֆար—վարպետ, ուսուցիչ (18)

Ուստի—որտեղից (10)

Ուսուլով—կամաց, զգուշությամբ (65)

Ուս ու տես—տեսնել և սովորելը (4)

Ուրդան—ալեկոծում, փոթորիկ (6)

Փաղիշան—թագավոր (32)

Փազա—աճեցում, ավելացում: Փազա
տալ—աճեցնել, ավելացնել (66)

Փարաթ—փունջ (26)

Փալ—գուշակություն, հմայություն (11):

Փալ անիլ—հմայել, գիր անել (44)

Փալազ—երկիր: Փալազի շարխ—եր-
կրեքի անիվ, ճակատագիր (44)

Փանմ—խմացություն, ըմբռնում (18)

Փալի անիլ—բաժանել, բաժին անել
(4)

Փանդ—հնարք, հնարագիտություն: Փել
ու փանդով—կախարդանքով ու հնարքով
(4, 12)

Փանջարա—1. շրջանակ (1): 2. Պա-
տուհան (46)

Փաշա—փաղիշահ, թագավոր (8, 33)

Փաշազադա—արքայազն (33)

Փար—փայլուն, շքեղ, հոխ (24, 42)

Փարա—նույն է՝ փար (16)

Փարա—կտոր, մաս: Փարա անիլ—կը-
տոր-կտոր անել (64) Փարա-փարա—կը-
տոր-կտոր (27)

Փարադար—հանգիստ կերպով, անվի-
ճելիորեն (13)

Փարզալ—կարկին (49)

Փարզ, փարզ անիլ—ճախրել, թռչել
(11)

Փարշահնգ—սիրամարգ

Փարշա—ընտրի կտորի տեսակ: Փար-
շայի խալալ—թանկարժեք կտորից նը-
շեր (13)

Փարսեկար—ֆարսերեն, պարսկերեն
(34)

Փարվազ անիլ—փարվել, շուրջը պը-
տույտ պալ (71)

Փարվան—թիթեռ (71)

Փաֆ—ահ, երկյուղ (33)

Փել—նույն է՝ փալ (4, 12)

Փելվանդ—պատվաստ (18)

Փիալա—հախճապակյա փոքրիկ թա-
ս (34, 56, 72)

Փիանդազ—ուղեգործ (6, 59): Փիա-
դազ անիլ—ոտքի տակ փռել (5)

Փիլ—փիղ (5)

Փիր—ծերունի, խմաստուն: Փիր ու-
տադ—փորձված վարպետ, ուսուցչապետ
(18, 44)

Փիրյադ—օգնության աղաղակ, գանդա-
տ (62)

Փիֆր—միտք, մտածմունք (63)

Փնջան—սուրճի ըմպանակ, բաժակ (23,
24, 34)

Փոքով—տերև (12, 59)

Փռանգի—ելքոսական, ֆրանսիական

Փստա—պիստակ (30)

Փրսանդ—մոտեցում, վարվելակերպ (4)

Փուզով—մեզ, մառախուղ (47)

Քարաբ—խորոված: Քարաբ անիլ—աշ-
քել, տոշորել (20)

Քալազ—զվաճալանք (18)

Քաղեբումեն—բաղնիկ (46)

Քամ—նվազ, նեղ (61)

Քամալ—խելք, միտք (64)

Քաման—աղեղ (28, 56)

Քամանդար—նետածիգ (47)

Քաշիլ—նկարել (12)

Քաշկա—կրանի թև (3)

Քասա—լայն բերանով կավե աման
(38)

Քար—ւոգոտ, արդյունք: Քար անիլ—
օքսիդիլ (2)

Քարած—թանկարժեք քարերով պատած
(1)

Քարամ—վեհանձնութուն, աղնութուն
(62)

Քարափ—քարաժայռ (20)

Քարզան—ջուհակի դադգահ կամ նրա
վրա անցկացված կտորը՝ ասեղնադորձելու
համար (5, 13)

Քարխանա—արհեստանոց (35, 40)

Քիզիդ—քեզ հետ

Քիզիֆիզ—քեզ-քեզ, ինքդ քեզ (64)

Քոշիլ—դղյակ, ապարանք (40, 71)

Քովա—ջրի կամ գինու մեծ աման:

Ղուրբան իմ ֆովուն (30)

Քրին—վարձ (25)

Քուլիչ—քսանյակ, դյուծին (33)

Վուրա-ֆուրա—քուրայի, հնոցի պես
վառ (35)

Սգուրվամա—խրատական բովանդակու-
թյամբ ոտանավոր (15)

Օրախ—սենյակ (64)

Օրիվալսլ—ամեն օր, հաճախակի (4)

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Աբել—բիբլիական նախահայր Ադամի երկրորդ որդին, որին սպանեց նրա ավագ եղբայր Կայենը (38)

Աբամ (Ադամ)—ըստ Աստվածաշնչի, առաջին մարդը, որին ստեղծեց աստված (22, 44, 46, 61)

Ահարոն—բիբլիական առաջին քահանայնորդ (51)

Արար—Արարիա (20, 26)

Արարստան—նույնն է՝ Արար (40)

Արագ—Արաքս (6)

Արուրին—Սայաթ-նովայի անունը (64)

Բաղեշխան—Հինդուստանի լեռներում գտնվող շրջան, որ հայտնի է լալ-ի (ռուբին) հանքերով: Լալ-Բաղեշխան—Բաղեշխանի լալ (21, 24, 58)

Դադստան (26)

Եվա—ըստ Աստվածաշնչի Ադամի կողմից ստեղծված առաջին կինը (61)

Էյլի—նշանավոր «Էյլի-Մեջնուն» սիրավեպի հերոսուհին (9, 17, 22, 28, 30, 60)

Լոդմալի ճեփիմ (Լոդման հեքիմ)—արևելյան տառապելական իմաստուն բըժիշկ (31, 37)

Խոսրով—Սասանյան զահակալ Խոսրով Անուշիրվան 1-ին (351—579), որի շուրջ հյուսվել են վիպական պատումներ, հատկապես զեղեցկուհի Շիրինի սիրավեպը: Ըստ ավանդության, նրան է պատկանում հնդկական մողոլի սիրամարգյա զահը (33):

Խորասան—նահանգ Իրանի հյուսիս-արևելյան մասում (40):

Կայան—Կայեն, բիբլիական նախահայր

Ադամի տղորանիկ որդին, որը սպանեց իր եղբայր Աբելին: Նախանձի, չարության խորհրդանիշ (38)

Կարապիտ—Կարապետ, քրիստոնեական կրոնի նշանավոր գործիչ Հովհաննես Մկրտչի մականունը: Համարվել է երգի, երաժշտության հովանավորը (33, 57)

Հաբաշ—Հարեշտուն, Եթովպիա (20, 34, 40)

Հինդ—Հնդկաստան (45, 13, 20, 26, 34, 40, 49, 51)

Հնդստան—նույնն է՝ Հինդ (25, 26, 56)

Հորդանան—գետ Պաղեստինում (57, 61)

Հարիր—«Առուղ Ղարիր» սիրավեպի հերոսը (32)

Հրիմ (26)

Մեջլում—Մեջնուն. (քառացի՝ խենթ), «Էյլի-Մեջնուն» սիրավեպի հերոսը: Մեծ և անդամաճան սիրո խորհրդանիշ (8, 17, 28, 29, 49, 60)

Մողնու Սուրի Գեվուրֆ—հին հայկական եկեղեցի Թբիլիսիում (51)

Մուշ—Արեմոյան Հայաստանի բաղաձայնից, որի մոտ գտնվող սուրբ Կարապետի վանքը (Գլավա վանք) հայտնի ուխտատեղի է եղել (57)

Նոյ—նոյ նահապետ, որն, ըստ Աստվածաշնչի, իր գեղդաստանով փրկվեց ջրհեղեղի ժամանակ (60)

Շան-Աբրաու—պարսկական նշանավոր զահակալ (1557—1628)—(52)

Շահանամ—«Աշուղ Ղարիբ» սիրա-
վեպի հերոսուհին (32)

Շահրադեկ—Շահր-ա-Դեկ—Դեկի քաղա-
քը (40)

Շիրազ—քաղաք Պարսկաստանում (4,
40, 71)

Շիրին—հոսրով Անուշիրվանի կինը,
որին կոչում էին «Հայաստանի թագուհի»:
Ըստ արևելյան սիրավեպի ինքնասպան
եղավ Ֆահրադի սիրուց (8, 27, 47, 52)

Ովհաննես—Հովհաննես Մկրտիչ, նույնն
է՝ սուրբ Կարապետ (57)

Չինումաշին (Չին-Մահաշին)— Հյուսի-
սային և Հարավային Չինաստանը (13)

Ռոստոմ—Ձալ—«Շահ-Նամեհ» գլխավոր
հերոսներից. Ձալի որդին (15, 20, 49,
52)

Սկանդարի Զուլլար—Ալեքսանդր Մա-
կեդոնացի (մ. թ. ա. 356—323), նշանա-
վոր դահակալ, զորավար (49)

Սիպտա դիվ—«Շահ-Նամեհում» քեչ
Քավուսի դեմ ելած հսկա դե, որին սպա-
նեց Ռոստոմ-Ձալը (տարբերակ 28)

Սողոմոն—Հրեաստանի ամենանշանա-
վոր թագավորը, որը ստացել է Իմաստուն
մականունը (33)

Ունիյեկ—բիրլիական Ուոնա Հեբուսա-
ցին, որի կալը գնեց Դավիթ թագավորը
և տեղում տաճար կառուցեց (44)

Ուրումեկ—Արևելյան Հոռոմ, Բյուզան-
դիա (26)

Փահլու—վիպական թագավոր, որ հրա-
ժարվել է իր հարստությունից, դարձել
թափառաշրջիկ, իմաստություն «վաճա-
ռող»։ Ստացել է դիվանա (խենթ) մա-
կանունը (35)

Փահրադ—Ֆահրադ, «Ֆահրադ և Շի-
րին» սիրավեպի հերոս։ Անձնվեր սիրո
տիպար (8, 27, 47, 52)

Փռանգ, Փռանգստան—Եվրոպա, Ֆրան-
սիա (16, 25, 26)

Քալար—գյուղաքաղաք Խորասանում
(40)

Քիրման—Իրանի հարավային քաղաք-
ներից, հայտնի էր ընտիր բրդյա գործ-
վածքներով (8)

1. Ամեն մե մտիկ տալով . . .	96	33. Իղրար ու ամառ շունեցող . . .	95
2. Ամեն սաղի մեջն գոված . . .	19	39. Ինձ սիրեցիր, էշին ննգար . . .	52
3. Այիբ Աստված սիրիս . . .	85	40. Ինձ ու իմ սիրեկան յարին . . .	72
4. Այլբբիմ կարթացիլ իմ դասն- դաս . . .	85	41. Ինչ կոնիմ հեքիմն . . .	54
5. Անգաճ արա բարիքավուր . . .	22	42. Խաբար գնաց բլբուլի մոդ . . .	83
6. Անգին ակն վրետ շարած . . .	62	43. Խմեցորտ ձեռիտ Բասեմեն . . .	67
7. Աշխարհմեն բեզարիլ իմ . . .	94	44. Խոսկիրտ մալում իմ արի . . .	34
8. Աշխարս մե փանջարա է . . .	77	45. Կիսամուրազ մի սպանի . . .	79
9. Աշխարումս ախ չիմ բաշի . . .	51	46. Հիմքտ վերստին նուրեցին . . .	82
10. Աչկ ու ունքտ վեր իս թողի . . .	78	47. Հնգու քաղաքեմեն հանած . . .	50
11. Աշկիրտ օսկե փիալա . . .	105	48. Զենտ քաղցր ունիս . . .	40
12. Աջաբ քա՞նի ժամանակ է . . .	53	49. Մաղիր ունիս դաստառահան . . .	87
13. Աջաբ բու սիրտն ո՞վ շինից . . .	73	50. Մախուլն ու ուլլի միսն . . .	93
14. Առանց քիզ ի՞նչ կոնիմ . . .	42	51. Մե խոսկ ունիմ իլթիմազով . . .	61
15. Աստուծ խիալ արից . . .	92	52. Մեջլումի պես կորա՛վ յարս . . .	56
16. Արի ինձ անգաճ կալ . . .	43	53. Մշու սուլթան սուրի Կարապիտ . . .	88
17. Արի համով դուրուդ արա . . .	65	54. Մոդտ նստողն կու հարիի . . .	64
18. Բեղասլին վուր խոսեցնիս . . .	74	55. Մտա էշխի քուրեն . . .	84
19. Բլբուլի հիդ լաց իս էլի . . .	29	56. Յարի ձեռնեմեն դադ կոնիմ . . .	101
20. Բլբուլի պես ձայն է տալի . . .	104	57. Յար, քիզ իսկի զավալ լըլի . . .	71
21. Գնլն ու շոբանն . . .	97	58. Յար, բու կարուտն քաշում իմ . . .	102
22. Գուղիմ ումբրս հենց անց կաց- նիմ . . .	37	59. Յիս կուրնում իմ լալունին . . .	45
23. Դաստամազտ սիմ ու շարբար . . .	48	60. Յիս մե դարիբ բլբուլի պես . . .	28
24. Դարդ մի անի, ջան ու ջիգար . . .	21	61. Յիս մե դարիբ բլբուլի պես, դուն մե գուլշան . . .	103
25. Դիրա ու ենգիդունիա . . .	27	62. Յիս բու դիմեթն չիմ գիդի . . .	32
26. Դուն էն գլխն իմաստուն իս . . .	44	63. Շատ մարթ կոսե . . .	41
27. Դուն էն հուրին իս . . .	38	64. Շատ սիրուն իս . . .	20
28. Էնգուր աշկս չէ ցամաքում . . .	69	65. Զիս ասում քե լաց իս էլի . . .	49
29. Էշխմեն էնպես վառվիլ իմ . . .	57	66. Պատկիրրտ դալամով քաշած . . .	76
30. Էշխմետ անդանակ էլա . . .	70	67. Սուսան-սմբուլ դաստամազտ . . .	91
31. Էշխմետ հիվանդացիլ իմ . . .	66	68. Վունցոր վուր դարիբ բլբուլն . . .	69
32. Էշխն վառ կրակ է . . .	39	69. Տղևն ու ախլիկն . . .	99
33. Էս ի՞նչ էլավ ինձ հիդ . . .	39	70. Ուստի՞ գուքաս, դարիբ բլբուլ . . .	33
34. Էսօր իմ յարին տեսա . . .	36	71. Փահրադն միռած . . .	31
35. Թամամ աշխար պտուտ էկա . . .	63	72. Քանի վուր ջան իմ . . .	58
36. Թարավուր իս, դիվանս արա . . .	90		
37. Թեկուդ բու քաշն մարբրիտ տան . . .	81		

Առաջ տրան 5

Բնագրեր

1. Ամեն սաղի մեշն գոված	19
2. Շատ սիրուն իս	20
3. Դարդ մի անի, ջան ու ջիգար	21
4. Անգամ արա բարիթավուր	22
5. Դիբա ու ենգիդունիա	27
6. Յիս մե զարիր բլրուլի պես	28
7. Բլբուլի հիդ լաց իս էլի	29
8. Փահրադն միտած	31
9. Յիս բու դիմեթն շիմ պիդի	32
10. Ուստի՞ գուբաս, զարիր բլրուլ	33
11. Խոսկիրտ մալում իմ արի	34
12. Էսօր իմ յարին տեսա	36
13. Դուզիմ ումբրս հինց անց կաց- նիմ	37
14. Դուն էն հուրին իս	38
15. Էշին վառ կրակ է	39
16. Զենտ քաղցր ունիս	40
17. Շատ մարթ կոսն	41
18. Առանց քիդ ի՞նչ կոնիմ	42
19. Արի ինձ անգամ կալ	43
20. Դուն էն գլխեն խմաստուն իս	44
21. Յիս կանչում իմ լալանին	45
22. Դաստամազու սիմ ու շարբար	46
23. Զիս ասում թե լաց իս էլի	49
24. Աշխարումս ախ շիմ քաշի	51
25. Ինձ սիրեցիր, էշին ննդար	52
26. Աջար քանի ժամանակ է	53
27. Ի՞նչ կոնիմ հեթմն	54
28. Մեջլումի պես կորալ յարս	56
29. Էշիգեմեն էնպես վառվել իմ	57
30. Քանի վուր ջան իմ	58
31. Վունցոր վուր զարիր բլրուլն	60
23. Մե խոսի ունիմ իլթիմազուլ	61
33. Անդին ակն վրետ շարած	62
34. Թամամ աշխարս պոտու էկա	63
35. Մոզտ նատուլն կու հարփի	64
36. Արի համով դուլուդ արա	65
37. Էշինեմտ հիվանդացիլ իմ	66
38. Խմիցուր ձեռիտ թասանեն	67

39. Էնդուր աշկս չէ ցամաքում	69
40. Էշինեմտ անդանակ էլա	70
41. Յար, քիդ իսկի դավալ չլի	71
42. Ինձ ու իմ սիրեկան յարին	72
43. Աջար քու սիրտն ո՞վ շինից	73
44. Բեդասլին վուր խոսեցինս	74
45. Պասկիրբտ դալամով քաշած	76
46. Աշխարս մե փանջարա է	77
47. Աշկ ու ունքտ վեր իս թողի	78
48. Կիսամուրադ մի սպանի	79
49. Հնդու քաղաքեմեն հանած	80

Ա. Հավելված

1 (50). Թեգուլ քու քաշն մարբրիտ տան	81
2 (51). Հիմքտ վերստին նուրեցին	82
3 (52). Խարար գնաց բլբուլի մոդ	83
4 (53). Մտա էշխի բուրեն	84
5 (54). Այիր Աստված սիրիս	85
6 (55). Մյիրբիմ կարթացիլ իմ դասեղաս	86
7 (56). Մազիր ունիս դաստառե- հան	87
8 (57). Մշու սուլթան սուրի Կա- րապիտ	88
9 (58). Էս ի՞նչ էլավ ինձ հիդ	89

Բ. Հավելված

1 (59). Թարավուր իս, ղիվանս արա	90
2 (60). Սուսան-սմբուլ դաստա- մազա	91
3 (61). Աստուձ խիալ արից	92
4 (62). Աշխարեմեն բեղարիլ իմ	94
5 (63). Իզրար ու ամագ շունեցող	95
6 (64). Ամեն մե մտիկ տալով	96
7 (65). Դեյն ու շորանն	97
8 (66). Մախուլին ու ռխլի միսն	98
9 (67). Տղեն ու արշիկն	99
10 (68). Յարի ձեռնեմեն դադ կոնիմ	101

11 (69).	Յար, բու կարոտն քաշում	
	իմ	102
12 (70).	Յիս մն դարիբ բլբուլի	
	պես, դուն մն գուլշան . . .	103
13 (71).	Բլբուլի պես ձայն է տալի	104
14 (72).	Աշկիրտ օսկե փիալա . . .	105

Տ ա ր Ե ր ա կ ն Ե ր

Մանորագրություններ և բանասիրա- կան դիստոգրություններ . . .	136
Բ ա ա ր ա ն	223
Հատուկ անունների բառարան . . .	240
Խաղերի ալբրենական ցանկ . . .	242

Սայաթ-Նովա

ՀԱՅԵՐԵՆ ԽԱՂԵՐ

Հրատ. խմբագիր Ս. Ա. Անաստասյան
Գեղ. խմբագիր Հ. Ն. Գործակալյան
Տեխ. խմբագիր Հ. Մ. Մանուշարյան
Սրբագրիչ Է. Գ. Վասիլյան

Հանձնված է շարվածքի 1. 02. 1983 թ.: Ստորագրված է տպագրության 19. 01. 1984 թ.:
ՎՖ 04523: Չափը 60X84¹/₁₆: Թուղթ № 1: Տպատեսակ «գրքի սովորական», բարձր
տպագրություն: Պայմ. 28,83 ներկ մամուլ, տպագր. 15,25: Հրատ. հաշվարկ. 12,66 մա-
մուլ: Տպաքանակ 15000: Հրատ. № 5854: Պատվեր № 116: Դիմել 2 ո. 40 կողմ:

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.:

Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна, 24.



16665



